Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

Ի. ՍՏԱԼԻՆ

ԱՋԳԱՅԻՆ ՀԱՐՑ

ՀՈԴՎԱԾՆԵՐ, ՃԱՌԵՐ.

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ, 1927

Ի. ՍՏԱԼԻՆ

323.1
Ա

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 Թ.

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑ

ՀՈԴՎԱԾՆԵՐ, ՃԱՌԵՐ.

ԽՍՀՄ ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴ· ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ 1927

A II/6827

Главлит № 64099 Тираж 4000

Тип. Госиздата „Красный Пролетарий“ Москва, Пименовская, 1/16.

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑ

Ի. ՍՏԱԼԻՆ

ՑԱՆԿ

Եջ

Հայերեն թարգմանության առթիվ VII

* * * 3

Մարքսիզմ յեվ ազգային հարցը 9

1. Ազգություն 12
2. Ազգային շարժում 23
3. Հարցի դրումը 33
4. Ազգային ավտոնոմիա 42
5. Բունդ, նրա նացիոնալիզմը, նրա սեպարատիզմը . . 56
6. Կովկասցիներ, լիկվիդատորների կոնֆերենցիան . . 72
7. Ազգային հարցը Ռուսաստանում 86

Հոկտեմբերյան հեղաշրջումը յեվ ազգային հարցը . . 95

1. Փետրվարյան հեղափոխությունը և ազգ. հարցը . . 95
2. Հոկտեմբերյան հեղափոխությունը և ազգ. հարցը . . 98
3. Հոկտեմբերյան հեղաշրջման համաշխարհային նշանակությունը 104

Խորհրդային Իշխանության քաղաքականությունը ազգային հարցում 108

Ազգային հարցի ձեվակերպման առթիվ 123

Զեկուցումն ազգային հարցի մասին (ՌԿԿ X համագումարին, 1921 թ. մարտ). 132

Ազգային մոմենտները կուսակցական յեվ պետական շինարարության մեջ. (Համ. Կ. Կ. (բ) II համագումարին արած զեկուցումը, 1923 թ. ապրիլ 23) . 150

Լենինիզմ յեվ ազգային հարցը 187

Ազգային հարցը Հարավ-Սլավիայում 201

Դարձյալ ազգային հարցի շուրջը (Ընկ. Սեմիչի հոդվածի առթիվ) 209
Արևելքի Աշխատ. Կոմունիստական Համապատարանի (КУТВ) խնդիրները Արևելքի գաղութային ու կախյալ յերկրների նկատմամբ . . . 221
Չինաստանի հեղափոխության հեռանկարները . . . 231
1. Չինաստանի հեղափոխության բնույթը 232
2. Իմպերիալիզմը և իմպերիալիստական ինտերվենցիան Չինաստանում 234
3. Հեղափոխական բանակը Չինաստանում 236
4. Չինաստանի ապագա իշխանության բնույթը . . 239
5. Գյուղացիական հարցը Չինաստանում 243
6. Պրոլետարիատը և պրոլետարիատի հեգեմոնյան Չինաստանում 247
7. Յերիտասարդության հարցը Չինաստանում . . . 249
8. Մի քանի հետևություններ 250
ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ 251

---

*
* *

Ընկ. Ստալինի հոդվածների այս ժողովածուն ձրգտում է տալ ազգային հարցի նկատմամբ մեր կուսակցության ունեցած քաղաքականության ամփոփ պատկերը։

Առաջին յերեք հոդվածները արտացոլում են ազգային հարցի լուծման կարևորագույն շրջանները՝ մեր կուսակցության շարքերում։

Այդ յերեք հոդվածների մասին ահա թե ինչ է գրում ընկ. Ստալինը.

«Առաջին հոդվածը («Մարքսիզմ և ազգային հարցը», տես «Просвещение» հանդեսը, 1913 թ.) արտացոլում է ազգային հարցին վերաբերյալ սկզբունքային դիսկուսիաների պերիոդը Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատիայի շարքերում՝ կալվածատիրական - ցարիստական ռեակցիայի եպոխայում (մեկ ու կես տարվա ընթացքում մինչ իմպերիալիստական պատերազմը), Ռուսաստանում բուրժուական դեմոկրատական հեղափոխության աճման եպոխայում։ Այն ժամանակ մրցում եյին ազգի յերկու թեորիա և, դրանց համապատասխան, յերկու ազգային ծրագիր—*ավստրիական*ը, վորը պաշտպանում եյին Բունդն ու մենշևիկները, և *ռուսական*ը, *բոլշևիկյան*ը։ Այդ յերկու հոսանքների բնույթագիրը ընթերցողը կգտնի հոդվածի մեջ։ Հետագա դեպքերը, մանավանդ իմպերիալիստական պատերազմն ու Ավստրո-Վենգրիայի բաժան-բաժան լինելը ազգային ան-

ջատ պետությունների, ակնհայտ ցույց տվին թե ճշմարտությունը ում կողմն է։ Այժմ, յերբ Շպրինգերն ու Բաուերը[1]) իրենց ազգային ծրագրի կոտրած տաշտակի քով են նստած, հազիվ թե կարելի յե կասկածել, վոր պատմությունը դատապարտել է «ավստրիական շկոլան»։

Նույնիսկ Բունդը ստիպված եր խոստովանելու, վոր կապիտալիստական հասարակարգի շրջանակում առաջադրված «ազգային-կուլտուրական ավտոնոմիայի պահանջը (այսինքն՝ ավստրիական ազգային ծրագրի—Ստ.) սոցիալիստական հեղափոխության պայմաններում կորցնում է իր իմաստը» (տես Բունդի XII կոնֆ., 1920 թ.)։ Բունդը չի յել կասկածում, վոր հենց դրանով ինքը ընդունեց (պատահաբար ընդունեց) ավստրիական ազգային ծրագրի թեորետիք հիմունքների սկզբունքային սնանկությունը, ազգության ավստրիական թեորիայի սկզբունքային սնանկությունը։

Յերկրորդ հոդվածը («Հոկտեմբերյան հեղափոխությունը և ազգային հարցը»,—տես «Жизнь национальностей», 1918 թ.) արտացոլում է Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո սկսված պերիոդը, յերբ Խորհրդային Իշխանությունը, հաղթելով հակահեղափոխությունը կենտրոնական Ռուսաստանում, իրեն զգաց ծայրանահանգների բուրժուական նացիոնալիստական պետությունների դիմաց, վորպես հակահեղափոխության բների, յերբ Անտանտան, յերկյուղելով Խորհրդային Իշխանության՝ իր (Անտանտայի) գաղութների վրա ունեցած աճող ազդեցությունից, սկսեց բացարձակ աջակցել բուրժուական - նացիոնալիստական պետություններին Խորհրդային Ռուսաստանը խեղդելու համար, յերբ բուրժուական նացիոնալիստական պետությունների դեմ մղած հաղթական կռվի ընթացքում մեր առաջ գործնական հարց ծագեց՝ շրջա-

1) Տես գրքիս վերջում, ծանոթ. № 3 և 4։

նային խորհրդային ավտոնոմիայի կոնկրետ ձևերի մասին, յերկրի ծայրամասերում Խորհրդային ավտոնոմ հանրապետություններ կազմակերպելու մասին, Խորհրդային Ռուսաստանի ազդեցությունը Արևելքի կեղեքված յերկրների վրա տարածելու մասին, Ռուսաստանի արևելյան ծայրամասերի միջոցով Արևմուտքի և Արևելքի միասնական հեղափոխական ճակատ ստեղծելու մասին՝ ընդդեմ համաշխարհային իմպերիալիզմի։ Հոդվածը շեշտում է ազգային հարցի անխզելի կապը իշխանության վերաբերյալ հարցի հետ և ազգային քաղաքականությունը մեկնաբանում է վորպես մի մասն կեղեքված ազգերի և գաղութների վերաբերյալ ընդհանուր հարցի, այսինքն հենց այն, վորի դեմ սովորաբար առարկում էին «ավստրիական շկոլան», մենշևիկները, ռեֆորմիստները, II Ինտերնացիոնալը, և վորը հետագայում հաստատվեց դեպքերի ամբողջընթացքով։

Յերրորդ հոդվածը («Խորհրդային Իշխանության քաղաքականությունը ազգային հարցի նկատմամբ»,— տես «Жизнь национальностей», հոկտեմբեր 1920 թ.) վերաբերում է Ռուսաստանի ադմինիստրատիվ վերաբաժանման (շրջանային խորհրդային ավտոնոմիայի սկզբունքով) ներկա, դեռևս չավարտված պերիոդին, ծայրանահանգներում ադմինիստրատիվ կոմունաների և Խորհրդային ավտոնոմ հանրապետությունների (իբրև ՌՍՖԽՀ բաղկացուցիչ մասերի) կազմակերպման պերիոդին։ Հոդվածի ծանրության կետն է՝ Խորհրդային ավտոնոմիայի փաստական իրագործման հարցը, այսինքն կենտրոնի և ծայրամասերի միջև հեղափոխական դաշինքի ապահովման հարցը, վորպես յերաշխիք՝ իմպերիալիզմի ինտերվենցիական ձեռնարկումների հանդեպ։ Կարող է տարորինակ թվալ, վոր հոդվածը վճռականապես ժխտում է ծայրամասերի՝ Ռուսաստանից անջատվելու պահանջը, իբրև հակահեղափոխական ձգտում։ Բայց դրանում ըստ էության վոչ մի

տարորինակ բան չկա։ Մենք կողմնակից ենք Հնդկաստանի, Արաբիայի, Յեգիպտոսի, Մարոկկոյի և այլ գաղութների՝ Անտանտայից անջատվելուն, վորովհետև այդ դեպքում անջատումը նշանակում է այդ կեղեքված յերկրների ազատագրումն իմպերիալիզմի լծից, իմպերիալիզմի դիրքերի թուլացումն, հեղափոխության դիրքերի ուժեղացումն։ Մենք դեմ ենք, վոր ծայրանահանգները Ռուսաստանից անջատվեն, վորովհետև անջատումն այդ դեպքում նշանակում է իմպերիալիստական ստրկացումն ծայրանահանգների համար, Ռուսաստանի հեղափոխական կորովի թուլացումն, իմպերիալիզմի դիրքի ուժեղացումն։ Այդ է պատճառը, վոր Անտանտան, պայքարելով Հնդկաստանի, Յեգիպտոսի, Արաբիայի և այլ գաղութների անջատման դեմ, միաժամանակ պայքարումե, վոր Ռուսաստանից նրա ծայրամասերը անջատվեն։ Դրա համար է, վոր կոմունիստները, պայքարելով գաղութների՝ Անտանտայից անջատման համար, չեն կարող միաժամանակ չպայքարել, վոր Ռուսաստանից նրա ծայրամասերը չանջատվեն։ Ակներև է, վոր անջատման հարցը վճռվում է՝ նայած թե դա ինչ չափով կախում ունի միջազգային կոնկրետ պայմաններից, հեղափոխության շահերից։

Առաջին հոդվածից կարելի յեր դուրս ձգել մի քանի տեղեր, վորոնք լոկ պատմական հետաքրքրություն են ներկայացնում, բայց նկատի առնելով հոդվածի դիսկուսիոն բնույթը, հարկ յեղավ լիովին և անփոփոխ տպագրելուայն»։

Մյուս հոդվածները տպագրվում են նույնպես առանց փոփոխության*)։

---

*) Գրքում փակագծի մեջ առնված թվանշաններով նշանակված մոքերի ու անունների բացատրությունը տված ենք գրքի վերջում՝ ծանոթություններում։ ԽՄԲ.

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ.

Ընկ. Ստալինի հոդվածների և ճառերի այս ժողովածուն առանձին տեղ է գրավում տեսական այն գրականության մեջ, որ ստեղծվել է Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո ազգային խնդրի առթիվ։ Հոդվածներից մեկը միայն վերաբերում է 1913 թվին—այն շրջանին, երբ Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատիայի շարքերում վեճ էր մղվում երկու հիմնական տեսությունների շուրջը։ Ընկ. Ստալինի այդ հոդվածը («Մարքսիզմ և ազգային հարցը») վճռական դատափետման է ենթարկում այսպես կոչված «ավստրիական դպրոցի» տեսակետը, և միաժամանակ բնութագրում է մեծամասնական հոսանքի տեսակետը։

Ժողովածուի մնացյալ նյութերը վերաբերում են Հոկտեմբերյան հեղափոխության զանազան շրջաններին։

Հոկտեմբերյան հեղափոխության հենց առաջին որերից ընկ. Ստալինը մանրակրկիտ կերպով կանգ է առել ազգային խնդրի տարբեր կողմերի քննության և լուսաբանության վրա։ Ընկ. Լենինի հետ միասին ընկ. Ստալինը առանձին շեշտով ընդգծել է ա՛յն միտքը, որը ինքը «ազգային հարցը» սերտորեն կապված է իշխանության հարցի հետ։

Հոկտեմբերյան հեղափոխության պրակտիկան անառարկելի կերպով հաստատել է այդ մոտեցման իրավացիությանը։ Միանգամայն նոր լույս սփռելով ազգությունը-

ների խնդրի վրա, լենինիզմը, հակառակ սոցիալ-դեմոկրատիային, նոր կերպ է մոտենում նաև գաղութային յերկրների, գաղութային Ասիայի և Աֆրիկայի, մանր ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումներին։ Նա դեն է նետում Յերկրորդ Ինտերնացիոնալի ոպպորտյունիստական, սոցիալ-դեմոկրատական տրադիցիոն մոտեցումը, և յելնելով պրոլետարիատի և գյուղացիության դաշինքի անհրաժեշտությունից, մշակում է միանգամայն նոր, հեղափոխական քաղաքականություն՝ ճնշված և մանր ժողովուրդների նկատմամբ։

Պետք է նկատել, վոր լենինիզմի այդ մոտեցումը Հոկտեմբերյան հեղափոխության սկզբնական շրջանում առաջ եր բերել առանձին կատաղություն սոցիալ-դեմոկրատիայի շարքերում։ Յերկրորդ Ինտերնացիոնալի հետևողները ասիական և աֆրիկական ժողովուրդներին միշտել համարել են «յերկրորդ կարգի» և «վայրենի» ժողովուրդներ։

Մենք չենք կարող մոռանալ գերման սոցիալ-դեմոկրատիայի շարքերում ստեղծված արտասովոր իրարանցումը Բագվում գումարված արևելյան ժողովուրդների համագումարի առթիվ։

Յելնելով Յերկրորդ Ինտերնացիոնալի «հիմնական սկզբունքներից» գերմանական նույնիսկ այսպես կոչված «անկախ սոցիալ-դեմոկրատները» բացասաբար եյին վերաբերվում արևելյան ժողովուրդների ազատագրական շարժումներին և միևնույն ձևով եյին լուսաբանում Արևելքը, ինչպես իր ժամանակ արել եր Վիլհելմը Չինաստանի նկատմամբ։ «Դեղին» Չինաստանը նկարագրվում եր յեվրոպացի բռնակալների կողմից, վորպես «վայրենի» և համաշխարհային քաղաքակրթության դեմ ուղղված մի բռունցք։ Յեվ յելնելով այդ տեսակետից, իմպերիալիստական պետությունները իրավունք եյին համարում չինական ժողովրդի

դեմ ուղղել յեվրոպական թնդանոթները և ռազմանավերը, և ավերի ու կոտորածի մատնել չին բանվորներին և գյուղացիներին։ Ցելնելով միևնույն այդ տեսակետից, «քաղաքակիրթ» բռնակալները ներկայումս շահագործում են գաղութային Արևելքը և բռնի միջոցներով ամրացնում արևելյան ժողովուրդների գերության շղթաները։ Իսկ Ցերկրորդ Ինտերնացիոնալի հետևողներն ել իրենց «սոցիալ-դեմոկրատական» և կեղծ-կուլտուրական արգումենտներով ոգնում և ոժանդակում են իմպերիալիստ բռնակալներին։

Միևնույնն են անում նաև մեր տնաբույս «ազգային» այն «սոցիալիստները», վորոնք փախել են Կովկասից և գործում են ներկայումս կողք-կողքի՝ Խորհրդային Իշխանության վոխերիմ հակառակորդների հետ։

Դաշնակ և հնչակյան թափթփուկները, որինակ, վոչ մեկ առիթ բաց չեն թողնում ապացուցելու համար, վոր իրենք ներկայումս կարել Մարքսի «իսկական ուսմունքի» իսկական հետևողներն են, և վոր հենց յելնելով «մարքսիզմի» հիմունքներից նրանք հակառակ են թե՛ Արևելքի ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումներին, և թե՛ առանձնապես թյուրք ժողովրդի կողմից մղված պայքարին միջազգային իմպերիալիզմի դեմ։ Այդ կողմից շատ բնորոշ է ա՛յն, վոր միևնույն կեղծ-մարքսիստական ֆրազների ոգնությամբ հայ ռազմական նացիոնալիզմի հետևողներից շատերը հիմնավորվում և սրբագործում են իրենց վայրենի ազգատյացությունը, և թրքատյացությունը։

Այլ խոսքով, կրկնվում է սովորական պատմությունը։

Այնպես, ինչպես արեվմտյան սոցիալ-դեմոկրատիան աղճատված մարքսիզմի միջոցով արդարացնում է բուրժուազիայի և իմպերիալիզմի գործելակերպը գաղութային ժողովուրդների նկատմամբ, ճիշտ այնպես և հայ բուրժուական մտավորականությունը միևնույն ձևով հուսահատական ճիգեր է անում հիմնավորելու իր նացիոնալիստա-

կան քաղաքականությունը։ Չի կարելի ասել, որ այդ պրոպագանդը անհետևանք է մնում միշտ և բոլոր պարագաներում։ Ավելի միամիտներին, տեսական խնդիրների նկատմամբ անփույթ և անտարբեր վարվող—առանձին աշխատավորներին աղավաղված մարքսիզմի և բացարձակ նացիոնալիզմի այդ հյուսվածքը կարող է խաբել։ Ահա ինչու մեր տեսակետի, մեծամասնական, լենինյան տեսակետի կտրուկ սահմանազծումը «սոցիալ-դեմոկրատական» տեսակետից այսոր ավելի քան անհրաժեշտ է։ Լենինիզմի թե՛ թեորիան, և թե՛ պրակտիկան ազգային խնդրի լուծման նկատմամբ պետք է լայնագույն մասսաների առաջ նորից և նորից պարզաբանվի ամենամանրակրկիտ կերպով, բացատրվի և մեկնաբանվի առաջին և անմիջական աղբյուրների հիման վրա։

Առաջին անգամ հայերեն լույս տեսնող, և ընկ. Վ. Աբրամյանի կազմած և խմբագրած այս ժողովածուն պետք է դառնա ամեն մի ուսանողի և կոմյերիտականի ձեռքին անհրաժեշտ ուսումնասիրության առարկա, վորովհետև լինելով անմիջական աղբյուրներից մեկը, ընկ. Ստալինի հոդվածները տալիս են լենինիզմի թե տեսական և թե՛ գործնական հայացքների ամփոփումը ազգային խնդրի մասին։

Ա. ԿԱՐԻՆՅԱՆ

ՄԱՐՔՍԻԶՄ ՅԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԸ.

Հակահեղափոխության շրջանը Ռուսաստանում առաջ բերեց վոչ միայն «շանթ ու կրակ», այլ և շարժման նկատմամբ հիասթափություն, թերահավատություն դեպի ընդհանուր ուժերը։ Հավատ եյին տածում դեպի «պայծառ ապագան», և մարդիկ կռվում եյին միասին, անկախ այն հանգամանքից, թե ինչ ազգության են պատկանում։ Ամենից առաջ՝ ընդհանուր հարցերը. սրտերը կասկած ընկավ, և մարդիկ սկսեցին ցրվել իրենց ազգային բնակարանները.—յուրաքանչյուրը թող միայն իր վրա հույս դնի։ Ամենից առաջ՝ «ազգային պրոբլեմը»։

Միաժամանակ յերկրում կատարվում եր տնտեսական կյանքի լուրջ բեկումն։ 1905 թիվը զուր չանցավ.—ճորտական ինացորդները կենցաղավարության մեջ գյուղում դարձյալ մի հարված ստացան։ Սովին հաջորդող առատ հունձի տարիները, և ապա վրա հասնող արդյունաբերական վերելքը առաջ մղեցին կապիտալիզմը։ Շերտավորումը գյուղում և քաղաքների աճումը, առևտրի և հաղորդակցության ճանապարհների բարգավաճումը խոշոր քայլ արին դեպի առաջ։ Այս առանձնապես ճիշտ է ծայրանահանգների վերաբերմամբ։ Սակայն այդ չեր կարող չարագացնել Ռուսաստանի ազգությունների տնտեսական համաձուլման պրոցեսը։ Այո, ազգությունները պետք է վոր շարժվեյին։

Ազգությունների արթնացման նույն ուղղությամբ եր գործում այդ միջոցին հաստատված «սահմանադրական ռեժիմը»։ Լրագրների և առհասարակ գրականության ծաղկումը, մամուլի և կուլտուրական հիմնարկությունների վորոշ ազատությունը, ժողովրդական թատրոնների աճումը և այլն, անկասկած նպաստում եյին «ազգային զգացմունքների ուժեղացման»։ Դուման իր ընտրողական պայքարով և քաղաքական խմբավորումներով նոր հնարավորություններ ընձեռեց ազգությունների աշխուժացման, նոր լայն ասպարեզ՝ վերջիններիս մոբիլիզացիայի համար։

Իսկ վերևից գլուխ բարձրացնող մարտնչող նացիոնալիզմի ալիքը, մի շարք ճնշումներ «իշխանական անձանց» կողմից, վորոնք վրիժառու եյին լինում ծայրանահանգներին նրանց «ազատասիրության» համար—առաջ բերին նացիոնալիզմի ալիք ներքևից, վոր մերթ փոխարկվում եր գռեհիկ շովինիզմի։ Սիոնիզմի(1) ուժեղացումը հրեյաների մեջ, աճող շովինիզմը Լեհաստանում, պանիսլամիզմը Թուրքերի մեջ, նացիոնալիզմի ուժեղանալը հայերի, վրացիների, ուկրայինցիների մեջ, քաղքենու ընդհանուր հակումը դեպի անտիսեմիտիզմը(1a)—այս բոլորը հանրածանոթ փաստեր են։

Նացիոնալիզմի ալիքը ավելի ու ավելի ուժեղ եր գրոհ տալիս, սպառնալով գրավելու բանվորական մասսաները։ Յեվ քանի նվազում եր ազատագրական շարժումը, այնքան ավելի եյին փթթում նացիոնալիզմի ծաղիկները։

Այդ դժվար մոմենտին սոցիալ-դեմոկրատիայի վրայեր ընկնում վսեմ միսսիա—հակահարված տալ նացիոնալիզմին, պաշտպանել մասսաները «համաճարակից», քանի վոր սոցիալ-դեմոկրատիան և միմիայն նա կարող եր անել այդ՝ նացիոնալիզմին հակադրելով ինտերնացիոնալիզմի փորձված գենքը, դասակարգային պայքարի միասնականությունն ու անբաժանելիությունը։ Յեվ քանի ուժեղ եր

գրոհ տալիս նացիոնալիզմի ալիքը, այնքան ավելի՛ հուժկու պետք է հնչեր սոցիալ-դեմոկրատիայի ձայնը հանուն Ռուսաստանի բոլոր ազգությունների պրոլետարների յեղբայրության և միության։ Ընդ ամին հատուկ տոկունություն էր պահանջվում ծայրանահանգների սոցիալ-դեմոկրատներից, վորոնք անմիջականապես ընդհարվում էին նացիոնալիստական շարժման հետ։

Սակայն վո՛չ բոլոր սոցիալ-դեմոկրատներն իրենց կոչման բարձրության վրա գտնվեցին և ամենից առաջ՝ ծայրանահանգների սոցիալ-դեմոկրատները։ Բունդը(2), վոր առաջ ընդհանուր խնդիրների վրա յեր շեշտում, այժմ սկսեց առաջին պլանի վրա դնել իր հատուկ, զուտ նացիոնալիստական նպատակները.—բանը այնտեղ հասավ, վոր «շաբաթ որվա տոնելը» և «ժարգոնի ճանաչումը» նա իր ընտրողական կամպանիայի մարտական կետեր հայտարարեց[1])։ Բունդին հետևեց Կովկասը.—Կովկասի սոցիալ-դեմոկրատների մեծ մասը, վոր առաջ Կովկասի ՄԵՑՅԱԼ սոցիալ-դեմոկրատների հետ միասին ժխտում էր «ազգային կուլտուրական ավտոնոմիան», այժմ դա առաջադրում է իբրև հերթական պահանջ[2])։ Մենք այլևս չենք խոսում լիկվիդատորների կոնֆերենցիայի մասին, վոր դիպլոմատիորեն սանկցիա յե տալիս ազգայնական յերերումներին[3])։

Դրանից հետևում է, վոր ռուսական սոցիալ-դեմոկրատների հայացքները ազգային հարցի մասին դեռ բոլոր սոցիալ-դեմոկրատների համար պարզ չեն։

Ինչպես յերևում է, անհրաժեշտ է ազգային հարցը լուրջ և բազմակողմանի քննել։ Հարկավոր է հետևողական սոցիալ-դեմոկրատների համերաշխ և անխոնջ աշխատանք՝ ընդդեմ նացիոնալիստական մշուշի, վորտեղից էլ նա գալու լինի։

---

1) Տես „Извещ. IX конф. Бунда“.

2) » „Извещ. август. конф“.

3) Նույն տեղը։

1. ԱԶԳՈՒԹՅՈՒՆ.

Ի՞նչ է ազգությունը։

Ազգությունը—դա ամենից առաջ՝ հանրություն, մարդկանց վորոշ հանրություն է։

Այդ հանրությունը ցեղական չէ, և վոչ էլ տոհմական։ Իտալական այժմյան ազգությունը ստեղծվել է հռովմայեցիներից, գերմանացիներից, ետրուսկներից, հույներից, արաբներից և այլն։ Ֆլանսիական ազգությունը կազմվել է գալլերից, հռովմայեցիներից, բրիտներից, գերմանացիներից և այլն։ Նույնը պիտի ասել և անգլիացիների, գերմանացիների և այլոց մասին, վորոնք ազգություններ են կազմել տարբեր ցեղերի և տոհմերի մարդկանցից։

Այսպես ուրեմն, ազգությունը—մարդկանց վոչ թե ցեղական կամ տոհմական, այլ պատմականորեն կազմակերպված հանրություն է։

Մյուս կողմից, անկասկած է, վոր Կյուրոսի կամ Աղեքսանդրի մեծ պետությունները չեյին կարող ազգություն կոչվել, թեև գոյացել են պատմականորեն, գոյացել են տարբեր տոհմերից և ցեղերից։ Դրանք վոչ թե ազգություններ եյին, այլ պատահական և նվազ շաղկապված խմբավորությունների կոնգլոմերատներ, վորոնք լուծվում եյին կամ համախմբվում, նայած թե ինչ չափով եյին կախված այս կամ այն նվաճողի հաջողություններից կամ պարտությունից։

Յեվ այսպես, ազգությունը վոչ պատահական և վոչ էլ անհարատև կոնգլոմերատ չէ, այլ մարդկանց հաստատուն հանրություն։

Սակայն վո՛չ ամեն հաստատուն հանրությունն է ազգ ստեղծում։ Ավստրիան և Ռուսաստանն ևս հաստատուն հանրություններ են, սակայն վոչ վոք նրանց ազ-

գությունն չի կոչում։ Ինչո՞վ է տարբերվում ազգային հանրությունը պետական հանրությունից։ Իմիջի այլոց նրանով, վոր ազգային հանրությունը մտածելի չէ առանց ընդհանուր լեզվի, մինչդեռ պետության համար ընդհանուր լեզուն պարտադիր չէ։ Չեխական ազգությունը Ավստրիայում և լեհականը՝ Ռուսաստանում անհնարին կլինեին, առանց նրանց համար ընդհանուր լեզվի, մինչդեռ Ռուսաստանին և Ավստրիային չի խանգարում մի շարք լեզուների գոյությունը նրանց մեջ։ Հարցը, իհարկե, վերաբերում է ժողովրդի խոսած լեզուներին, այլ վոչ թե գրասենյակային-պաշտոնական լեզուներին։

Ուրեմն լեզվի հանրությունն ազգության բնորոշ հատկանիշներից մեկն է։

Այդ, իհարկե, չի նշանակում, վոր տարբեր ազգությունները միշտ և ամենուրեք խոսում են տարբեր լեզուներով, և կամ բոլոր միևնույն լեզվով խոսողները անպայման մի ազգություն են կազմում։ Ընդհանուր լեզուն յուրաքանչյուր ազգության համար, բայց վոչ անպայման տարբեր լեզուներ—տարբեր ազգությունների համար։

Չկա ազգություն, վոր միաժամանակ տարբեր լեզուներով խոսելիս չլինի, բայց այդ դեռ չի նշանակում, վոր չի կարող լինել յերկու ազգություն, վորոնք միևնույն լեզվով խոսելիս լինեն։ Անգլիացիք և հյուսիսային ամերիկացիք նույն լեզվով են խոսում և սակայն նրանք միևնույն ազգություն չեն կազմում։ Նույնը պետք է ասել և նորվեժցիների ու դանեմարքացիների, անգլիացիների և իռլանդացիների մասին։

Իսկ ինչո՞ւ, որինակ, անգլիացիք և հյուսիսային ամերիկացիք մի ազգություն չեն կազմում, չնայած ընդհանուր լեզվին։

Նախ նրա համար, վոր նրանք միատեղ չեն ապրում, այլ տարբեր տերրիտորիաների վրա։ Ազգությունը կազ-

մվում է հարատև և ռեգուլյար առնչությունների հետևանքով, մարդկանց սերնդից-սերունդ միատեղ ապրելու հետևանքով։ Իսկ հարատև, միատեղ ապրուստ անհնարին է առանց ընդհանուր տերրիտորիայի։ Անգլիացիք և ամերիկացիք առաջ միևնույն տերրիտորիայի վրա էին ապրում—Անգլիայում, և մի ազգություն էին կազմում։ Հետո անգլիացիների մի մասը Անգլիայից գաղթեց նոր տերրիտորիայի վրա—Ամերիկա և այնտեղ նոր տերրիտորիայի վրա ժամանակի ընթացքում կազմվեց նոր՝ հյուսիսային-ամերիկական ազգությունը։

Տարբեր տերրիտորիաներ նպաստեցին տարբեր ազգությունների առաջ գալուն։

Այսպես ուրեմն, տերրիտորիաների հանրությունը—ազգության բնորոշ հատկանիշներից մեկն է։

Սակայն այդ դեռ բոլորը չէ։ Տերրիտորիայի հանրությունը ինքնին դեռ ազգություն չի ստեղծում։ Դրա համար, բացի վերոհիշյալից, հարկավոր է ներքին տնտեսական կապ, վոր ի մի յե զոդում ազգության առանձին մասերը։

Անգլիայի և Հյուսիսային Ամերիկայի միջև այդպիսի կապ չկա, ուստի և նրանք յերկու տարբեր ազգություններ են կազմում։ Բայց հյուսիսային ամերիկացիներն ևս առանձին ազգություն չեյին համարվի, յեթե Հյուսիսային Ամերիկայի առանձին անկյունները իրար հետ շաղկապված չլինեյին իբրև մի տնտեսական ամբողջություն, շնորհիվ աշխատանքի բաշխման իրար մեջ, հաղորդակցության ճանապարհների զարգացման և այլն։

Վերցնենք, որինակ, Թեկուզ Վրաստանը։ Մինչ բարեկարգումի ժամանակի վրացիները ապրում եյին ընդհանուր տերրիտորիայի վրա և խոսում եյին մի լեզվով, այնուամենայնիվ, իսկն ասած, նրանք մի ազգություն չեյին կազմում, քանի վոր նրանք բաժանված լինելով մի

շարք՝ իրարից անջատված իշխանությունների, անկարող եյին ընդհանուր տնտեսական կյանքով ապրելու, դարերով կռիվներ եյին մղում իրար դեմ և միմյանց ավերում՝ սրա-նրա վրա սադրելով պարսիկներին ու տաճիկներին։ Իշխանությունների վաղանցուկ և պատահական միավորումն, որ յերբեմնակի հաջողվում եր վորևե բարեբախտ թագավորի, լավագույն դեպքում լոկ մակերեսորեն գրավում եր վարչական սֆերան և արագ քայքայվում, շնորհիվ իշխանների քմայքների և գյուղացիների անտարբերության։ Այլ կերպ ել չեր կարող լինել, քանի վոր կար Վրաստանի տնտեսական ջլատումը։ Վրաստանը, իբրև ազգություն, յերևան յեկավ XIX դարի լոկ յերկրորդ կեսին, յերբ ճորտատիրության անկումն և յերկրի տնտեսական կյանքի բարգավաճումն, հաղորդակցության ճանապարհների զարգացումն և կապիտալիզմի առաջ գալը սահմանեցին աշխատանքի բաշխումն Վրաստանի շրջանների միջև, իվերջո խախտեցին իշխանությունների տնտեսական մեկուսացումը և նրանց ի մի շաղկապեցին։

Նույնը կարելի յե ասել և մյուս ազգությունների մասին, վորոնք անցել են ֆեոդալիզմի շրջանն և զարգացրել են իրենց մոտ կապիտալիզմը։

Այսպես ուրեմն, տնտեսական կյանքի հանրությունը, տնտեսական հարակցությունը ազգության բնորոշ առանձնահատկություններից մեկն է։

Բայց այս ել դեռ բոլորը չե։ Բացի այս բոլոր սահմաններից, պետք է նկատի առնել ազգության մեջ միավորված մարդկանց նաև հոգեկան կերպարանքի առանձնահատկությունները։ Ազգությունները տարբերվում են իրարից վոչ միայն իրենց կյանքի պայմաններով, այլև իրենց հոգեկան կերպարանքով, վոր արտահայտվում է ազգային կուլտուրայի առանձնահատկությունների մեջ։ Յեթե միևնույն լեզվով խոսող Անգլիան, Հյուսիսային-Ամերիկան և

Իռլանդիան այնուամենայնիվ յերեք տարբեր ազգություններ են կազմում, ապա դրանում քիչ դեր չի խաղում այն յուրատեսակ հոգեկան կազմը, վոր մշակվել է նրանց մոտ սերնդից-սերունդ՝ գոյության տարբեր պայմանների հետևանքով։

Իհարկե, հոգեկան կազմն ինքնին, կամ ինչպես այդ կոչում են այլ կերպ, «ազգային բնույթը» դիտողի համար մի տեսակ անըմբռնելի բան է, բայց ինչ չափով վոր դա արտահայտվում է ամբողջ ազգի կուլտուրայի յուրատեսակության մեջ, նա ըմբռնելի յե և չի կարող անտես առնվել։

Կարիք չկա ասելու, վոր «ազգային բնույթը» մի մշտական տվյալ չե, այլ փոփոխվում է կյանքի պայմանների հետ. բայց ինչ չափով վոր նա գոյություն ունի ամեն մի տվյալ մոմենտին,—նա իր կնիքն է դնում ազգի կերպարանքի վրա։

Յեվ այսպես, հոգեկան կազմի հանրությունը, վոր արտահայտվում է կուլտուրայի հանրության մեջ,—բնորոշ հատկանիշներից մեկն է։

Այսպիսով մենք սպառեցինք ազգության բոլոր նշանները։

Ազգությունը—դա պատմականորեն կազմակերպված կայուն հանրություն է—լեզվի, տերիտորիայի, տնտեսական կյանքի, հոգեկան կազմի—վոր արտահայտվում է կուլտուրայի հանրության մեջ։

Ըստ վորում, ինքնին հասկանալի յե, վոր ազգությունը ինչպես և պատմական ամեն մի յերևույթ, յենթակա յե փոփոխության որենքին, ունի իր պատմությունը, սկիզբն ու վերջը։

Անհրաժեշտ է շեշտել, վոր հիշած նշաններից և վոչ մեկը առանձին վերցրած, բավական չե՝ ազգությունը բնորոշելու համար։ Ավելին, բավական է այդ նշաններից մեկի բացակայությունը, վորպեսզի ազգությունը դադարի ազգություն լինելուց։

Կարելի է յերևակայել մարդկանց ընդհանուր՝ ազգային բնույթով, բայց և այնպես չի կարելի ասել, վոր նրանք մի ազգություն են կազմում՝ յեթե նրանք տնտեսապես անջատված են, ապրում են տարբեր տերրիտորիաների վրա, խոսում են տարբեր լեզուներով։ Այդպես են, որինակ, ռուսական, գալիցիական, ամերիկական, վրացական, լեռնական հրեյաները, վորոնք, մեր կարծիքով, միասնական ազգություն չեն կազմում։

Կարելի է յերևակայել մարդկանց՝ տերրիտորիայի և տնտեսական կյանքի միասնականությամբ, բայց այնուամենայնիվ նրանք մի ազգություն չեն կազմի՝ յեթե լեզուն և «ազգային բնույթը» ընդհանուր չեն։ Այդպես են, որինակ, Բալթիքի յերկրում ապրող գերմանացիները և լատիշները։

Վերջապես նորվեժցիները և դանիացիները խոսում են միևնույն լեզվով, բայց նրանք մի ազգություն չեն կազմում՝ շնորհիվ մյուս հատկանիշների բացակայության։

Միմիայն բոլոր հատկանիշների ներկայությունն է, վոր իմի առած՝ բնորոշում է ազգությունը։

Կարող է թվալ, վոր «ազգային բնույթը» հանդիսանում է վոչ թե հատկանիշներից մեկը, այլ ազգության միակ եյական հատկանիշը, ըստ վորում մնացած բոլոր հատկանիշները իսկապես կազմում են ազգության զարգացման պայմանները, և վոչ թե նրա հատկանիշները։ Այդ տեսակետի վրա յեն կանգնած, որինակ, Ավստրիայում ազգային հարցի հայտնի թեորետիկներ—սոց.-դեմ. Ռ. Շպրինգերը(3) և մանավանդ Ո. Բաուերը(4)։

Փնտրենք ազգության նրանց թեորիան։

Ըստ Շպրինգերի[1])՝ «ազգությունը—միակերպ մտածող և միակերպ խոսող մարդկանց դասինքն է»։ Դա—«ժամա-

[1]) Տես „Национальн. проблемы“ Р. Шпрингера, стран. 43, издание „Общ. П.“. 1909 г.

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ

նակակից մարդկանց խմբավորությունների կուլտուրական հանրությունն է, որ կապված չէ հողի հետ». (ընդգծումը մերն է)։

Եվ այսպես, միակերպ մտածող և միակերպ խոսող մարդկանց դաշինքը՝ ինչ կերպ էլ որ նրանք անջատված լինեն իրարից, որտեղ էլ ապրելիս լինեն նրանք։

Բաուերն ավելի հեռու չէ գնում։

«Ի՞նչ է ազգությունը—հարցնում է նա, — արդյոք լեզվի հանրությո՞ւն, որ մարդկանց միավորում է ազգության մեջ։ Բայց անգլիացիք և իռլանդացիք խոսում են... մի լեզվով, սակայն մի ազգություն չեն կազմում. հրեյաներն ընդհանուր լեզու չունեն, բայց այնուամենայնիվ ազգություն են կազմում»[1])։

«Ուրեմն ի՞նչ բան է ազգությունը։

«Ազգությունը — բնույթի հարաբերական հանրությունն է[2])։

Սակայն ի՞նչ է բնույթը, ներկա դեպքում—ազգային բնույթը։

Ազգային բնույթը—դա «գումարն է այն հատկանիշների, որոնք տարբերում են մի ազգության մարդկանց մյուս ազգության մարդկանցից. ֆիզիքական և հոգեկան հատկությունների կոմպլեքսն է, որ տարբերում է մի ազգությունը մյուսից»[3])։

Բաուերն, ինարկե, գիտե, որ ազգային բնույթը յերկնքից չի վայր ընկնում, ուստի և նա ավելացնում է.— «մարդկանց բնույթը ուրիշ վոչնչով չի բնորոշվում, քան միայն նրանց ճակատագրով», և որ ...«ազգությունը վոչ այլ ինչ է, քան ճակատագրի հանրություն», որ իր հերթին բնորոշվում է «այն պայմաններով, որոնց մեջ

[1]) Տես „Национальный вопрос и социал-демократия". О. Бауэр. Изд. „Серп". 1909 г., եջ 1—2.

[2]) Տես նույն տեղը, եջ 6.

[3]) Տես նույն տեղը, եջ 2.

մարդիկ արտադրում են իրենց ապրուստի միջոցները և բաշխում են իրենց աշխատանքի արդյունքները»[1]։

Այսպիսով մենք հասանք ազգության ավելի «լրիվ» (ինչպես արտահայտվում է Բաուերը) վորոշման։ «Ազգությունը—դա ամբողջ գումարավորումն է մարդկանց, վորոնք իրար հետ կապված են քարակտերի հանրության, ճակատագրի հանրության հիման վրա»[2]։

Այդպես ուրեմն, ազգային քարակտերի հանրություն, ճակատագրի հանրության հիմքի վրա՝ լեզվի, տնտեսական կյանքի և տերրիտորիայի հանրության պարտադիր կապից անկախ։

Ուրեմն այդ դեպքում էլ ի՞նչ է մնում ազգությունից։ Ազգային էլ ի՞նչ հանրության մասին կարող է խոսք լինել այն մարդկանց նկատմամբ, վորոնք տնտեսապես իրարից անջատված են, զանազան տերրիտորիաների վրա յեն ապրում և տարբեր լեզուներով են խոսում։

Բաուերը հրեյաների մասին խոսում է վորպես ազգության մասին, թեև «նրանք ամենևին ընդհանուր լեզու չունեն»[3]. Բայց ի՞նչ «ճակատագրի հանրության» և ազգային հարակցության մասին կարող է խոսք լինել, որինակ, վրացական, Դաղստանի, ռուսական և ամերիկական հրեյաների նկատմամբ, վորոնք իրարից բոլորովին անջատված են, զանազան տերրիտորիաների վրա յեն ապրում և տարբեր լեզուներով խոսում։

Հիշած հրեյաները, անկասկած, ապրում են ընդհանուր տնտեսական և քաղաքական կյանքով, վրացիների, դաղստանցիների, ռուսների, ամերիկացիների հետ, նրանց հետ ընդհանուր կուլտուրական միջավայրում. այդ հան-

---

1) Տես նույն տեղը, եջ 24—25.
2) Տես նույն տեղը, եջ 139.
3) Նույն տեղը, եջ 2.

գամանքը չի կարող իր կնիքը չդնել նրանց ազգային բնույթի վրա. յեթե կա մի ընդհանուր բան, որ մնացել է նրանց մոտ, դա—կրոնն է, ընդհանուր ծագումն և ազգային բնույթի մի քանի մնացորդներ։ Այս բոլորը անկասկած է։ Սակայն ի՞նչպես կարելի յե լուրջ ասել, որ կրոնական քարացած ծեսերը և հոգեբանական փոփոխվող մնացորդները հիշված հրեյաների «ճակատագրի» վրա ավելի ուժեղ են ազդում, քան նրանց շրջապատող կենդանի, սոցիալ-տնտեսական և կուլտուրական միջավայրը։ Չե՞ որ միայն այդ տեսակ յենթադրությամբ կարելի յե խոսել, առհասարակ, հրեյաների մասին, որպես միասնական ազգության մասին։

Ել ինչո՞վ է տարբերվում այդ դեպքում Բաուերի ազգությունը սպիրիտուալիստների(5) միստիքական և ինքնաբավ «ազգային վոգուց»։

Բաուերն անանցանելի սահմանագիծ է քաշում ազգության «տարբերող հատկանիշի» (ազգային բնույթի) և նրանց կյանքի «պայմանների» միջև, նրանց իրարից անջատելով։ Սակայն ինչ է ազգային բնույթը, յեթե վոչ՝ որպես կյանքի պայմանների արտացոլումն, յեթե վոչ, որպես շրջապատող միջավայրից ստացված տպավորությունների խտացումն։ Ի՞նչպես կարելի յե սահմանափակվել լոկ ազգային բնույթով, մեկուսացնելով և անջատելով նրան արտադրող հիմքից։

Այնուհետև՝ ինչո՞վ եր իրոք տարբերվում անգլիական ազգությունը հյուսիսային-ամերիկականից XVIII դարի վերջում և XIX-ի սկզբում, յերբ Հյուսիսային Ամերիկան դեռևս «Նոր Անգլիա» եր կոչվում։

Իհարկե, վո՛չ ազգային բնույթով, քանի որ հյուսիսային ամերիկացիք դուրս եյին յեկել Անգլիայից, նրանք բերել եյին իրենց հետ Ամերիկա, բացի անգլիական լեզվից, նաև անգլիական ազգային բնույթը, և, իհարկե, չե-

յին կարող այդպես շուտ վատնել այդ, թեև նոր պայմանների ազդեցության տակ նրանք յերևի մշակեցին իրենց համար հատուկ բնույթ։ Ցեվ այնուամենայնիվ, չնայած բնույթի շատ թե քիչ հանրության, նրանք արդեն այն ժամանակ Անգլիայից տարբեր ազգություն եյին կազմում։ Ակներև ե, «Նոր Անգլիան» վորպես ազգություն՝ այն ժամանակ տարբերվում եր Անգլիայից, վորպես ազգությունից՝ վո՛չ հատուկ ազգային բնույթով կամ վոչ այնքան ազգային բնույթով, վորքան Անգլիայից տարբեր միջավայրով, կյանքի պայմաններով։

Այդպիսով, պարզ ե, վոր ազգության վոչ մի յեզակի վորոշիչ հատկանիշ իրապես գոյություն չունի։ Գոյություն ունի միայն հատկանիշների գումար, վորոնցից, ազգությունները հակադրելիս, ավելի ցայտուն աչքի յե ընկնում մերթ մի հատկանիշը (ազգային բնույթը), մերթ մյուսը (լեզուն), մերթ յերրորդը (տերրիտորիան, տընտեսական պայմանները)։ Ազգությունը ներկայացնում ե բոլոր հատկանիշների զուգորդումը՝ միասին վերցրած։

Բաուերի տեսակետը, վոր նույնացնում ե ազգությունը և ազգային բնույթը, կտրում ե ազգությունը հիմքից և դարձնում ե այն ինչ վոր ինքնամփոփ մի ույժ։ Ստացվում ե վոչ թե ազգություն, կենդանի և գործող, այլ ինչ վոր միստիքական, անըմբռնելի և հանդերձյալ մի բան։ Վորովհետև, կրկնում եմ, այդ ի՞նչ ազգություն ե, որինակ, հրեական ազգությունը, վոր բաղկացած ե վրացական, Դաղստանի, ռուսական, ամերիկական և այլ հրեաներից, վորի անդամները իրար չեն հասկանում (խոսում են տարբեր լեզուներով), ապրում են յերկրագնդի զանազան մասերում, յերբեք իրար չեն տեսնի, յերբեք միասին չեն դուրս գա՝ վոչ խաղաղ և վոչ ել պատերազմական ժամանակ։ Վոչ, այդ տեսակ թղթի վրայի «ազգություններին» համար չե, վոր սոցիալ - դեմոկրատիան

կազմում է իր ազգային ծրագիրը։ Նա կարող է հաշվի առնել լոկ իրական, կենդանի, ընդհանուր ազգային կյանքով ապրող ազգություններին, վորոնք հարկադրում են հաշվի առնել իրենց։

Բաուերը շփոթում է պատմական կատեգորիա հանդիսացող ազգությունը՝ ազգագրական կատեգորիա հանդիսացող ցեղի հետ։

Ասենք, Բաուերը ինքն էլ յերևի զգում է իր հենակետի թուլությունը, իր գրքի սկզբում վճռականապես հայտարարելով հրեաների՝ վորպես ազգության՝ մասին[1])։ Բաուերը գրքի վերջում ուղղում է իրեն, պնդելով, վոր «կապիտալիստական հասարակությունը առհասարակ թույլ չի տալիս նրանց (հրեաներին) գոյություն պահպանել վորպես ազգություն»[2]), ձուլելով նրանց մյուս ազգությունների հետ։

Դուրս է գալիս, պատճառն այն է, վոր «հրեաները չունեն գաղութային առանձնացված շրջան»[3]), մինչդեռ այդպիսի շրջան ունեն, որինակ, չեխերը, վորոնք և, ըստ Բաուերի, պետք է պահպանեն իրենց գոյությունը, վորպես ազգություն։

Կարճ ասած, պատճառն ընդհանուր տերրիտորիայի բացակայությունն է։

Այդպես դատելով, Բաուերը ցանկացել է ապացուցել, վոր հրեա բանվորները[4]) չեն կարող պահանջել ազգային ավտոնոմիա, բայց դրանով նա ինքը պատահաբար տապալել է իր սեփական թեորիան, վոր ժխտում է տերրիտորիայի հանրությունը, վորպես ազգության հատկանիշներից մեկը։

---

1) Տես նրա գրքի եջ 2.
2) Տես նույն տեղը, եջ 389.
3) Տես եջ 398.
4) Տես եջ 396.

Բայց Բաուերն ավելի հեռու յե գնում։

Իր գրքի սկզբում նա վճռականապես հայտարարում է, վոր «հրեյաներն ամենևին չունեն մի ընդհանուր լեզու, բայց այնուամենայնիվ ազգություն են կազմում»[1]։ Բայց դեռ հարյուր յերեսուներորդ յերեսին չհասած, արդեն ճակատափոխ է լինում՝ նույնքան վճռականորեն հայտարարելով.—«անկասկած է, վոր վոչ մի ազգություն անհնարին և առանց ընդհանուր լեզվի»[2]. (ընդգծումը մերն է)։

Բաուերն այստեղ ցանկացել է ապացուցել, վոր «լեզուն—մարդկանց հարաբերության կարևորագույն գործիքն է»[3]), բայց նա միաժամանակ պատահաբար ապացուցել է այն, ինչ նա մտադիր չի յեղել ապացուցելու, այսինքն՝ անանկությունը ազգության իր սեփական թեորիայի, վոր ժխտում է լեզվի հանրության նշանակությունը։

Այդպես է ինքն իրեն հերքում իդեալիստական թելերով կարած թեորիան։

2. ԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄ.

Ազգությունը վոչ միայն պարզապես պատմական կատեգորիա յե, այլ վորոշ դարաշրջանի, վերյելնող կապիտալիզմի դարաշրջանի պատմական կատեգորիա։ Ֆեոդալիզմի լիկվիդացիայի և կապիտալիզմի զարգացման պրոցեսը միաժամանակ հանդիսանում է մարդկանցից ազգություն կազմելու պրոցես։ Այդպես է կատարվում, որինակ, Արևմտյան Յեվրոպայում։ Անգլիացիք, ֆրանսիացիք, գերմանացիք, իտալացիք ազգություն կազմեցին

---

1) Տես եջ 2։
2) Տես եջ 130.
3) Տես եջ 130.

շնորհիվ ֆեոդալիզմի ջլատման վրայով հաղթական կապիտալիզմի հանդիսավոր ընթացքի։

Սակայն ազգության կազմակերպումն այնտեղ միևնույն ժամանակ նշանակում եր նաև նրանց վերածումն ինքնուրույն ազգային պետության։ Անգլիական, ֆրանսիական և այլ ազգությունները միաժամանակ անգլիական և այլ պետություններ են կազմում։ Այդ պրոցեսից դուրս մնացած Իռլանդիան ընդհանուր պատկերը չի փոխում։

Փոքր ինչ այլ կերպ ե բանը կատարվում Արևելյան Եվրոպայում։ Մինչդեռ Արևմուտքում ազգությունները փոխակերպվում եյին պետությունների, Արևելքում կազմակերպվում եյին միջազգայնական պետություններ՝ բաղկացած մի քանի ազգություններից։ Այդպես են՝ Ավստրո-Վենգրիան, Ռուսաստանը։ Ավստրիայում՝ քաղաքականապես ամենազարգացածը հանդիսացան գերմանացիք, ուստի և նրանք ստանձնեցին ավստրիական ազգությունների՝ պետության մեջ միացնելու գործը։ Վենգրիայում՝ պետական կազմավորման համար ամենից պատրաստ հանդիսացան մադյարները—Վենգրիայի ազգությունների միջուկը, վորոնք և միավորեցին Վենգրիան։ Ռուսաստանում ազգությունների միավորման դերը վերցրին վելիկորոսները, վորոնց գլուխ եր կանգնած ուժեղ և սերտ կազմակերպված ազնվական բյուրոկրատիան։

Այսպես եր—Արևելքում։

Պետությունների կազմակերպման այդ յուրատեսակ ձևը կարող եր տեղի ունենալ միմիայն դեռևս վերջնականապես լիկվիդացիայի չենթարկված ֆեոդալիզմի պայմաններում, թույլ զարգացած կապիտալիզմի պայմաններում, յերբ վերջին պլանի վրա յետ մղած մանր և հետամնաց ազգությունները դեռևս միջոց չեյին ունեցել, ամբողջապես չեյին ի մի ձուլվել ամփոփ ազգությունների։

Սակայն կապիտալիզմը սկսում է զարգանալ նաև արևելյան պետություններում։ Բարգավաճում են առևտուրն և հաղորդակցության ճանապարհները։ Առաջ են գալիս խոշոր քաղաքներ։ Ազգությունները տնտեսապես կապակցվում են իրար հետ։ Յետ մղած ազգությունների խաղաղ կյանքի մեջ ներխուժող կապիտալիզմը տեղահան է անում և շարժում նրանց։ Մամուլի և թատրոնի զարգացումը, Ռայխսրատի (Ավստրիայում) և Դումայի (Ռուսաստանում) գործունեությունը նպաստում են «ազգային զգացմունքների» ուժեղանալուն։ Առաջ յեկող ազգային ինտելլիգենցիան խմորվում է «ազգային գաղափարով» և նույն ուղղությամբ ել գործում...

Սակայն ինքնուրույն կյանքի համար արթնացած այդ յետ մղված ազգությունները այլևս անկախ ազգային պետություններ չեն կազմում.—իրենց ճանապարհին նրանք հանդիպում են ամենախիստ դիմադրության՝ պետության դլուխ անցած իշխող ազգությունների ղեկավարող տարրերի կողմից։ Ուշացել եք!...

Այդպես են ազգություն կազմում—Ավստրիայում՝ չեխերը, լեհերը և այլն. Վենգրիայում՝ խորվատները, ռումինները և այլն. Ռուսաստանում՝ լատիշները, լիտովցիները, ուկրաինցիները, լեհերը, հայերը և այլն։ Այն, ինչ Արևմտյան Յեվրոպայում (Իռլանդիա) բացառություն եր, Արևելքում կանոն դարձավ։

Արևմուտքում՝ Իռլանդիան բացառիկ դրությանը պատասխանեց ազգային շարժումով։ Արևելքում՝ արթնացած ազգությունները պետք է նույն պատասխանը տային։

Այսպես եյին բարդվում Յեվրոպայի արևելքում չահել ազգություններին կռվի մղող հանգամանքները։

Կռիվը սկսվեց և տաքացավ, իսկապես, վոչ թե ամբողջ ազգությունների միջև, այլ ղեկավարող և յետ մղված ազգությունների ու գերիշխող դասակարգերի միջև։ Կռիվ

սովորաբար մղում են կամ քաղաքի ճնշված ազգության մանր բուրժուազիան խոշոր բուրժուազիայի դեմ (չեխերն և գերմանացիք), կամ ճնշված ազգության գյուղական բուրժուազիան կալվածատերերի դեմ (ռուսիններ և լեհեր), կամ թե ամբողջ «ազգային» բուրժուազիան՝ իշխող ազգության դեկավարող ազնվականության դեմ (Լեհաստան, Լիտվա, Ուկրաինա և Ռուսաստան)։

Բուրժուազիան—գլխավոր գերակատարն է։

Զահել բուրժուազիայի հիմնական հարցը—շուկան է։ Վաճառել իր ապրանքներն ու հաղթող դուրս գալ այլ ազգության բուրժուազիայի հետ մրցելիս—ահա նրա նպատակը։ Դրանից և բղխում է նրա ցանկությունը—ապահովել իր համար «սեփական», «հարազատ» շուկա։ Շուկան—առաջին գպրոցն է, ուր բուրժուազիան սովորում է նացիոնալիզմ։

Սակայն, սովորաբար, բանը շուկայով չի սահմանափակվում։ Կռվի մեջ և խառնվում գերիշխող ազգության կիսաֆեոդալական, կիսաբուրժուական բյուրոկրատիան՝ «կլանել» և «ձեռքից բաց չթողնել» իր մեթոդներով։

Իշխող ազգության բուրժուազիան—միևնույն է, լինի նա մանր թե խոշոր—հնարավորություն է ստանում «ավելի արագ» և «ավելի վճռականապես» ջախջախելու իր մրցակցին։ «Ուժերը» միանում են և «այլազգի» բուրժուազիայի դեմ սկսում են գործ դրվել մի շարք սահմանափակիչ միջոցներ, որ ապա փոխվում են ճնշումների։ Կռիվը տնտեսական սֆերայից փոխադրվում է քաղաքականի։ Յերթևեկության ազատության սահմանափակում, լեզվի ճնշում, ընտրողական իրավունքների սահմանափակում, դպրոցների կրճատում, կրոնական նեղումներ և այլն, անընդհատ թափվում են «մրցակցի» գլխին։ Իհարկե, այդպիսի միջոցները հետամուտ են լինում վոչ միայն իշխող ազգության բուրժուական դասակարգերի շահերին, այլև

ղեկավարող բյուրոկրատիայի, այսպես ասած, սպեցիֆիկ կաստային նպատակներին։ Բայց հետևանքների տեսակետից այդ բոլորովին նույնն է—բուրժուական դասակարգերն ու բյուրոկրատիան ներկա դեպքում ձեռք-ձեռքի տված են ընթանում, միևնույն է՝ հարցը Ավստրո-Վենգրիային թե՞ Ռուսաստանին վերաբերելիս լինի։

Ճնշված ազգության՝ ամեն կողմից նեղված բուրժուազիան բնականաբար շարժվում է։ Նա կոչ է անում «հարազատ ստորադասներին» և սկսում է աղաղակել «հայրենիքի» մասին, իր սեփական գործը ցուցադրելով որպես համաժողովրդական գործ։ Նա իր համար «հայրենակիցներից» բանակ է կազմում հանուն...«հայրենիքի»։ Ցավ «ստորադասները» միշտ չե՛, որ անտարբեր են մնում այդ կոչերին.—վերևից գործ դրվող ռեպրեսիաները դիպչում են նաև նրանց և դժգոհություն առաջացնում։

Այսպես և սկսվում ազգային շարժումը։

Ազգային շարժման ուժը վորոշվում է ազգության լայն խավերի, պրոլետարիատի և գյուղացիության, նրա մեջ ունեցած մասնակցության չափով։

Պրոլետարիատը կկանգի՞ արդյոք բուրժուական նացիոնալիզմի դրոշակի տակ—այդ կախված է դասակարգային հակասությունների զարգացման աստիճանից, պրոլետարիատի գիտակցությունից և կազմակերպված լինելուց։

Գիտակից պրոլետարիատն իր սեփական փորձված դրոշն ունի և նա կարիք չունի բուրժուազիայի դրոշի տակ կանգնելու։

Ինչ վերաբերում է գյուղացիներին, նրանց մասնակցությունն ազգային շարժման մեջ ամենից առաջ կախված է ճնշումների քարակտերից։ Եթե ճնշումները «հողային» հարցեր են շոշափում, ինչպես այդ տեղի ունեցավ Իռլանդիայում, ապա գյուղացիության լայն մասսա-

ներն անմիջապես անցնում են ազգային շարժման դրոշակի տակ։

Մյուս կողմից, յեթե, որինակ, Վրաստանում փոքրիշատե լուրջ հակառուսական նացիոնալիզմ չկա, այդ նախ և առաջ շնորհիվ այն հանգամանքի, վոր այնտեղ չկան ռուս կալվածատերեր կամ ռուս խոշոր բուրժուազիա, վորոնք կարող եյին այդ տեսակ նացիոնալիզմին սնունդ տալ մասսաներում։ Վրաստանում կա հակահայկական նացիոնալիզմ, վորովհետև այնտեղ կա հայկական խոշոր բուրժուազիա, վորը հաղթելով վրացական մանը, դեռ չուժեղացած բուրժուազիային, վերջինիս հրում է դեպի հակահայկական նացիոնալիզմը։

Ազգային շարժումը, նայած թե ինչ չափով է կախված այդ գործոններից, ընդունում է կամ մասսայական բնույթ՝ հետզհետե ավելի ու ավելի ծավալվելով (Իռլանդիա, Արևմտյան Գալիցիա), կամ նա դառնում է մանր ընդհարումների մի շղթա, այլասերվելով ու վերածվելով սկանդալների ու «վիվեսկային կռվի»։ (Բոհեմիայի մի քանի մանր քաղաքներում)։

Ազգային շարժման բովանդակությունն, իհարկե, չի կարող ամեն տեղ միատեսակ լինել.—նա ամբողջովին վորոշվում է շարժման առաջադրած զանազան պահանջներով։ Իռլանդիայում շարժումն ագրարային բնույթ է կրում, Բոհեմիայում—«լեզվական», այստեղ պահանջում են քաղաքացիական հավասար իրավունք և դավանանքի ազատություն, այնտեղ—«իրենց» պաշտոնյաներին կամ իրենց սեյմը։ Բազմազան պահանջներում հաճախ թափանցում են զանազան հատկանիշներ (լեզու, տերրիտորիա և այլն), վորոնք ընդհանրապես բնորոշում են ազգությունը։ Ուշադրության արժանի յե, վոր վոչ մի տեղ չենք հանդիպում Բաուերյան հանրաբովանդակ «ազգային քարակտերի» պահանջին։ Ցեվ այդ հասկանալի յե.—«ազգային քարակ-

տերն», ինքնին վերցրած, անընմբռնելի յե, և ինչպես ուզիղ նկատել է Ի. Շտրասսերը(6), «չես կարող դրանից պոլիտիկա սարքել»[1]։

Ահա սրանք են, ընդհանրապես, ազգային շարժման ձևերն ու քարակտերը։

Վերը ասածից պարզ է, որ վերյելնող կապիտալիզմի պայմաններում ազգային կռիվը ներկայանում է վորպես բուրժուական դասակարգերի փոխադարձ կռիվ։ Ցերբեմն բուրժուազիային հաջողվում է գրավել ազգային շարժման մեջ պրոլետարիատին, և այն ժամանակ ազգային կռիվը արտաքուստ «համաժողովրդական» քարակտեր է ստանում, բայց այդ լոկ արտաքուստ է։ Ըստ էության նա մնում է բուրժուական, գլխավորապես բուրժուազիայի համար շահավետ և հաճելի։

Բայց դրանից յերբեք չի հետևում, որ պրոլետարիատը չպետք է մաքառի ազգությունների կեղեքման քաղաքականության դեմ։

Ազատ տեղափոխության սահմանափակումը, ընտրողական իրավունքներից զրկումն, լեզվի ճնշումն, դպրոցների կրճատումը և այլն ռեպրեսիաները—բանվորներին դիպչում են վոչ պակաս չափով, յեթե վոչ ավելի, քան բուրժուազիային։ Այդ տեսակ դրությունը կարող է միայն արգելք հանդիսանալ կեղեքված ազգությունների պրոլետարիատի հոգեկան ուժերի ազատ զարգացման գործին։ Չի կարելի խոսել թուրք կամ հրեյա բանվորի հոգեկան ձիրքերի լիակատար զարգացման մասին, յերբ նրան չեն թույլատրում ժողովներին և դասախոսություններին ոգտվել մայրենի լեզվով, յերբ փակում են նրանց դպրոցները։

Բայց ազգային ռեպրեսիաների քաղաքականությունը վտանգավոր է պրոլետարիատի գործի համար նաև մյուս կողմից։ Նա հեռացնում է լայն խավերի ուշադրությունը

1) Տես նրա «Der Arbeiter und die Nation», եջ 33. 1912 թ.։

սոցիալական հարցերից, դասակարգային պայքարի հարցերից՝ դեպի ազգային հարցերը, դեպի այն հարցերը, որոնք «ընդհանուր են» պրոլետարիատի և բուրժուազիայի համար, իսկ դա պարարտ հող է պատրաստում «շահերի ներդաշնակության» կեղծ քարոզի համար, պրոլետարիատի դասակարգային շահերը մթագնելու համար, բանվորներին հոգեպես ստրկացնելու համար։ Հենց այդպիսով լուրջ խոչընդոտ է դրվում բոլոր ազգությունների բանվորների միավորման գործի առաջ։ Յեթե մինչև այժմ լեհ բանվորների բավական մեծ մասը միջազգային բանվորական շարժումից դուրս է մնում, յեթե նա դեռևս լեհական բուրժուազիայի մոտ հոգեկան գերության մեջ է գտնվում,— այդ գլխավորապես նրա համար է, որ հինավուրց հակալեհական՝ «իշխողների տիրապետություն» քաղաքականությունն այդպիսի գերության համար հող է պատրաստում, դժվարացնում է բանվորների ազատագրումը այդ գերությունից։

Սակայն ռեպրեսիաների քաղաքականությունը դրանով չի բավականանում։ Կեղեմնաև «սիստեմից» նա հաճախ անցնում է ազգությունները իրար դեմ լարելու սիստեմին, Ջարդերի և կոտորածի «սիստեմին»։ Իհարկե, այս վերջինը ոչ ամեն տեղ և ոչ էլ միշտ հնարավոր է լինում, բայց այնտեղ, ուր նա հնարավոր է,—տարբերական ազատությունների բացակայության պայմաններում,— այնտեղ նա հաճախ սոսկալի ծավալ է ստանում, ապառնալով արյան և արցունքի մեջ խեղդելու բանվորների կապակցման գործը։ Կովկասը և Ռուսաստանի Հարավը քիչ. որինակներ չեն տալիս։ «Բաժանիր և տիրեցիր» — ահա ազգությունների միմյանց դեմ լարելու քաղաքականության նպատակը։ Յեվ քանի որ այդ քաղաքականությունը հաջողվում է, նա պրոլետարիատի համարներկայացնում է ամենամեծ չարիք, ամենալուրջ խոչընդոտ՝

պետության բոլոր ազգությունների բանվորների կապակցության գործի համար։

Սակայն բանվորները շահագրգռված են, որպեսզի իրենց բոլոր ընկերները լիովին ձուլվեն միջազգային միասնական բանակի մեջ, շտապ և վերջնականապես ազատվեն բուրժուազիայի հոգևոր գերությունից և լիակատար ու ազատ զարգացումն ստանան իրենց յեղբայրակիցների հոգևոր ուժերը, ինչ ազգության էլ որ նրանք պատկանելիս լինեն։

Ուստի և բանվորները մաքառում են և մաքառելու են ազգությունները կեղեքելու քաղաքականության դեմ, ինչպես նաև ազգությունները միմյանց դեմ լարելու ամեն տեսակի քաղաքականության դեմ։

Ուստի և բոլոր յերկրների սոցիալ - դեմոկրատիան հայտարարում է ազգությունների ինքնորոշման իրավունքը։

Ինքնորոշման իրավունք, այդ նշանակում է, որ միայն ազգությունն ինքը իրավունք ունի իր վիճակը անորինելու, այդ նշանակում է, որ ոչ ոք իրավունք չունի բռնի խառնվելու ազգության կյանքի մեջ, քանդելու նրա դպրոցներն ու այլ հիմնարկությունները, թեկանելու նրա բարքերն ու սովորությունները, ձնշելու նրա լեզուն, կրճատելու նրա իրավունքները։

Իհարկե, այդ չի նշանակում, որ սոցիալ-դեմոկրատիան պաշտպանելու յե ազգության ամեն մի սովորություն և հիմնարկություն։ Մաքառելով ազգության նկատմամբ գործ դրած բռնության դեմ, նա պաշտպանելու յե լոկ ազգության իրավունքն իր վիճակը անորինելու, միաժամանակ ագիտացիա մղելով այդ ազգության վնասակար հիմնարկությունների և սովորությունների դեմ, որպեսզի հնարավորություն տա տվյալ աշխատավորներին ազատվելու նրանցից։

Ինքնորոշման իրավունք—այդ նշանակում է, որ ազգը կարող է ըստ իր ցանկության բարեկարգվել, այդ նշանակում է, որ նա իրավունք ունի իր կյանքը բարեկարգելու ավտոնոմիայի սկզբունքով, նա իրավունք ունի մյուս ազգությունների հետ ֆեդերատիվ հարաբերություններ հաստատելու, նա իրավունք ունի բոլորովին անջատվելու։

Ազգությունը սուվերեն է, և բոլոր ազգերը իրավահավասար են։

Այդ, իհարկե, չի նշանակում, որ սոցիալ-դեմոկրատիան պաշտպանելու է ազգի ամեն մի պահանջը։ Ազգը իրավունք ունի նույնիսկ հին կարգերին վերադառնալու, բայց այդ դեռ չի նշանակում, որ սոցիալ-դեմոկրատիան կստորագրի ազգության արած այդպիսի որոշման տակ։ Այլ բան է՝ պրոլետարիատի շահերը պաշտպանող սոցիալ-դեմոկրատիայի պարտականությունները և այլ բան է՝ տարբեր դասակարգերից բաղկացած ազգության իրավունքները։

Մաքառելով ազգության ինքնորոշման իրավունքի համար, սոցիալ-դեմոկրատիան իրեն նպատակ է դնում վերջ տալու ազգը կեղեքելու քաղաքականության, անհնարին դարձնելու այն և այդպիսով վերջ տալու ազգերի կռվին, բթացնելու այն, մինիմումի հասցնելու այն։

Գիտակից պրոլետարիատի քաղաքականությունը դրանով եյականապես տարբերվում է ազգային կռիվը խորացընել և արծարծել ջանող, ազգային շարժումը շարունակող և սրող բուրժուազիայի քաղաքականությունից։

Հենց այդ պատճառով գիտակից պրոլետարիատը չի կարող բուրժուազիայի «ազգային» դրոշակի տակ մնալ։

Հենց այդ պատճառով Բաուերի առաջարկած, այսպես կոչված, եվոլյուցիոն-ազգային քաղաքականությունը չի կարող պրոլետարիատի քաղաքականությունը դառնալ։

«Ազգային-եվոլյուցիոն» և «արդի բանվոր դասակարգի»[2]) քաղաքականությունը նույնացնելու Բաուերի արած փորձը հանդիսանում է բանվորների դասակարգային կռիվը ազգությունների կռվին հարմարեցնելու մի փորձ։

Ազգային շարժման վիճակը, վոր ըստ էության բուրժուական է, բնականաբար կապված է բուրժուազիայի վիճակի հետ։ Ազգային շարժման վերջնական անկումը հնարավոր է լոկ բուրժուազիայի անկման հետ։ Միայն սոցիալիզմի արքայության մեջ հնարավոր կլինի կատարյալ խաղաղություն հաստատելու։ Բայց ազգային շարժումը մինիմումի հասցնել, արմատից կտրել, հնարավոր յեղածի չափ անվնաս դարձնել պրոլետարիատի համար— կարելի յե և կապիտալիզմի շրջանակում։ Դրան ապացույց են Թեկուզ հենց Շվեյցարիայի և Ամերիկայի որինակները։ Դրա համար հարկավոր է դեմոկրատացնել յերկիրը և ազգերին ազատ զարգանալու հնարավորություն տալ։

3. ՀԱՐՑԻ ԴՐՈՒՄԸ.

Ազգը իրավունք ունի ազատորեն տնորինելու իր վիճակը։ Նա իրավունք ունի այնպես բարեկարգելու իրեն, ինչպես ինքն է ցանկանում, իհարկե, առանց վոտնատակ տալու մյուս ազգերի իրավունքները։ Այդ անվիճելի յե։ Բայց ինչպե՞ս պետք է բարեկարգի իրեն, ինչպիսի՞ ձևվեր պետք է ստանա նրա ապագա սահմանադրությունը՝ յեթե նկատի առնենք ազգության մեծամասնության և ամենից առաջ ամբողջ պրոլետարիատի շահերը։

Ազգությունն իրավունք ունի ավտոնոմ կերպով կարգավորվել։ Նա իրավունք ունի նույնիսկ անջատվել։ Բայց այդ դեռ չի նշանակում, վոր նա այդ պետք է անի ամեն տեսակ պայմաններում, և վոր ավտոնոմիան կամ անջա-

1) Տես Բաուերի գիրքը, եջ 166։

տումը միշտ և ամենուրեք ոգտավետ կլինի ազգության համար, այսինքն՝ նրա մեծամասնության համար, այսինքն՝ աշխատավոր խավերի համար։ Անդրկովկասի թուրքերը, վորպես ազգություն, կարող են հավաքվել, յենթադրենք, իրենց սեյմին և հնազանդվելով իրենց աստվածների ու մոլլաների ազդեցության, վերականգնել իրենց մոտ հին կարգերը, վճիռ կայացնել անջատվելու պետությունից. ինքնորոշման կետի իմաստի հիման վրա նրանք կատարյալ իրավունք ունեն այդ անելու։ Բայց դա արդյոք թուրք ազգության աշխատավոր խավերի համար ոգտավե՞տ կլինի։ Կարո՞ղ է արդյոք սոցիալ-դեմոկրատիան անտարբեր նայել, թե ինչպես աստվածներն և մոլլաները իրենց հետևից են տանում մասսաներին՝ ազգային հարցը վճռելու գործում։ Չպե՞տք է խառնվի արդյոք սոցիալ-դեմոկրատիան այդ բանում և վորոշակի ազդեցություն գործ դնի ազգության կամքի վրա։ Արդյո՞ք նա չպետք է հանդես դա հարցի լուծման՝ թուրք մասսաների համար ամենաոգտակար կոնկրետ մի պլանով։

Սակայն վո՞ր վճիռն է աշխատավոր մասսաների շահերին ավելի համապատասխան. ավտոնոմիա, ֆեդերացիա թե՞ սեպարացիա (անջատում)։

Այս բոլորը—հարցեր են, վորոնց վճիռը կախված է տվյալ ազգությունը շրջապատող պատմական կոնկրետ պայմաններից։

Դեռ ավելին։ Պայմաններն, ինչպես և ամեն ինչ, փոփոխվում են, և մի վճիռ, վոր ներկա մոմենտի համար ուղիղ է, կարող է բոլորովին անընդունելի լինել մի ուրիշ մոմենտին։

XIX դարի կեսին Մարքսը ռուսական Լեհաստանի անջատման կողմնակից էր, և նա իրավացի յեր, վորովհետև այն ժամանակ հարցը վերաբերում էր սորին կուլտուրայի շնորհիվ քայքայվող բարձր կուլտուրայի ազատու-

թյանը։ Եվ հարցն այն ժամանակ վոչ միայն տեսականապես կամ ակադեմիորեն եր դրված, այլ գործնականապես...

XIX դարի վերջը լեհական մարքսիստներն արդեն Լեհաստանի անջատման դեմ եյին, և նրանք էլ նույնպես իրավացի եյին, վորովհետև վերջին 50 տարվա ընթացքում մեծ փոփոխություններ տեղի ունեցան հոգուտ Ռուսաստանի և Լեհաստանի տնտեսական և կուլտուրական մերձեցման։ Բացի դրանից, անջատվելու հարցը այդ ժամանակամիջոցում գործնական առարկա լինելուց փոխվեց ակադեմիական վեճերի առարկայի, վոր հուզում եր գրեթե միմիայն արտասահմանյան ինտելլիգենտներին։ Իհարկե դա չի ժխտում վորոշ ներքին և արտաքին կոնյունկտուրների հնարավորությունը, վորոնց ներկայությամբ Լեհաստանի անջատման հարցը նորից կարող է հերթական դառնալ։

Դրանից հետևում է, վոր ազգային հարցի լուծումը հնարավոր է միմիայն պատմական պայմանների՝ իրենց զարգացման մեջ վերցրած առնչությամբ։

Տվյալ ազգությունը շրջապատող եկոնոմիական, քաղաքական և կուլտուրական պայմանները—ահա այս է միակ բանալին վճռելու համար այն հարցը, թե ինչպե՞ս պետք է բարեկարգվի այս կամ այն ազգը, ինչպիսի՞ ձևեր պետք է ընդունի նրա ապագա սահմանադրությունը։ Ըստ վորում շատ կարելի յե, վոր յուրաքանչյուր ազգության համար հարցի հատուկ լուծումն կհարկավորվի։

Եթե կա մի տեղ, ուր անհրաժեշտ է հարցի դիալեկտիք դրումն, այդ հենց այստեղ է, ազգային հարցում։

Այդ ի նկատի առնելով մենք վճռականապես պետք է դեմ լինենք ազգային հարցի «լուծման» մի շարք տարածված և շատ ընդհանուր ձևին, վոր իր սկիզբն առնում է Բունդից։ Մենք խոսում ենք Ավստրիայի և

հարավային սլավյանների[1]) սոցիալ-դեմոկրատիայի վրա հիմնվելու հեշտ մեթոդի մասին, վորը (սոցիալ-դեմոկրատիան) իբր արդեն լուծել է ազգային հարցը և վորից ռուս սոցիալ-դեմոկրատները ուղղակի պետք է փոխ առնեն այդ լուծումն։ Ըստ վորում յենթադրվում է, վոր այն բոլորն, ինչը, որինակ, ուղիղ է Ավստրիայի համար, ուղիղ է նաև Ռուսաստանի համար։ Ներկա դեպքում աչքաթող է անվում ամենակարևորն ու ամենավճռականը— պատմական կոնկրետ պայմանները Ռուսաստանում առհասարակ, և Ռուսաստանի սահմաններում յուրաքանչյուր առանձին ազգության կյանքում, մասնավորապես։

Լսեցեք, որինակ, հայտնի բունդական Վ. Կոսովսկուն.

«Յերբ Բունդի IV համագումարում քննվում եր հարցի սկզբունքային կողմը (խոսքը վերաբերում է ազգային հարցին. Հ. Ս.),— համագումարի անդամներից մեկի առաջարկը՝ հարցը լուծել հարավային-սլավյանների սոցիալ-դեմոկրատական կուսակցության ռեզոլյուցիայի վոգով՝ընդհանուր հավանություն առաջ բերեց։ Ի վերջո «Համագումարը միաձայն ընդունեց...ազգային ավտոնոմիան»[2]։

Միմիայն այդ! վոչ ռուսական իրականության անալիզ, վոչ հրեյանների՝ Ռուսաստանում ունեցած կյանքի պայմանների պարզաբանություն. նախ փոխ առան հարավային-սլավյանների սոցիալ-դեմոկրատական կուսակցության վճիռը, հետո «հավանություն տվին», իսկ հետո «միաձայն ընդունեցին»! այսպես են դնում և «վճռում» բունդականներն ազգային հարցը Ռուսաստանում...

Այն ինչ Ավստրիան և Ռուսաստանը բոլորովին տարբեր պայմաններ են ներկայացնում։ Դրանով է բացատրվում, վոր Բրյուննում (1899 թ.) հարավ-սլավյանների սոցիալ-դեմոկրատական կուսակցության ռեզոլյուցիայի

1) Հար.-սլավ. սոց.-դեմոկրատիան գործում է Ավստրիայի հարավում։
2) «Ազգության հարցեր»—Վ. Կոսովսկիյ, եջ. 16—18. 1907 թ.։

վոգով (ճիշտ է, մի քանի չնչին ուղղումներով) ազգային ծրագիրն ընդունած ավստրիական սոցիալ-դեմոկրատիան, բոլորովին, այսպես ասած, ռուսավարի չի մոտենում հարցին և, իհարկե, ռուսավարի էլ չի վճռում այն։

Նախ և առաջ՝ հարցի դրումը։ Ի՞նչպես են դնում հարցը ազգային ավտոնոմիայի ավստրիական թեորետիկները, Բրյուննյան ազգային ծրագրի և հարավ-սլավյանների սոցիալ-դեմոկրատական կուսակցության ռեզոլյուցիայի մեկնաբանները՝ Շպրինգերն ու Բաուերը։

«Մենք անպատասխան ենք թողնում այստեղ,—ասում է Շպրինգերը,—այն հարցը, թե արդյոք հնարավո՞ր է առհասարակ ազգությունների մի պետություն, և հարկադրվա՞ծ են, արդյոք, մասնավորապես, ավստրիական ազգությունները քաղաքական մի ամբողջություն կազմելու. այդ հարցերը մենք վճռված ենք համարում։ Ով համաձայն չե հիշյալ հնարավորության և անհրաժեշտության հետ, նրա համար մեր հետախուզությունը, ի հարկե, անհիմն կլինի։ Մեր թեման ասում է.—տվյալ ազգությունները ստիպված են միատեղ գոյություն ունենալ. իրավական ինչպի՞սի ձևեր հնարավորություն կտան նրանց ամենաշավ կերպով ապրելու». (ընդգծումը Շպրինգերինն է[1]).

Այդպես ուրեմն, Ավստրիայի պետական ամբողջությունն ընդունված է վորպես յելակետ։

Նույնն է ասում և Բաուերը։

Լսենք նրան.

«Մենք յելնում ենք այն յենթադրությունից, վոր ավստրիական ազգությունները մնալու են նույն պետական դաշինքում, վորի մեջ այժմ ապրում են նրանք, և հարցնում ենք, թե այդ դաշինքի սահմաններում ի՞նչպես կլինեն ազգությունների փոխադարձ հարաբերությունները

1) Տե՛ս „Нац. проблемы," Շպրինգերի. եջ 13։

և այդ ազգությունները բոլորը միասին ինչպիսի հարաբերության մեջ կլինեն պետության նկատմամբ»[1]։

Դարձյալ—Ավստրիայի ամբողջությունն ամենից առաջ։

Կարո՞ղ է արդյոք հարցն այդպես դնել ռուսական սոցիալ-դեմոկրատիան։ Վո՛չ, չի կարող։ Յեվ չի կարող նրա համար, որ սկզբից արդեն նա կանգնած է ազգությունների ինքնորոշման տեսակետի վրա, որի հիման վրա ազգությունն իրավունք ունի անջատվելու։ Նույնիսկ բունդական Գոյլդբլատը ռուսական սոցիալ-դեմոկրատիայի յերկրորդ համագումարին ընդունեց, որ վերջինս չի կարող հրաժարվել ինքնորոշման տեսակետից։ Ահա թե ի՞նչ է ասում Գոյլդբլատը.—

«Ինքնորոշման իրավունքի դեմ վոչինչ չի կարելի առարկել։ Այն դեպքում, յերբ որևե ազգություն կռվում է իր ինքնուրույնության համար, չի կարելի ընդդիմանալ դրան։ Յեթե Լեհաստանը չցանկանա կապվել Ռուսաստանի հետ «որինական ամուսնությամբ» մենք չպետք է նրան խանգարենք»։

Այդ բոլորն այդպես է։ Սակայն դրանից հետևում է, որ ավստրիական և ռուսական սոցիալ-դեմոկրատների յելակետերը վոչ միայն նույնանման չեն, այլ, ընդհակառակն, ուղղակի հակադիր են։ Կարելի՞ յե արդյոք սրանից հետո խոսել ավստրիացիների ազգային ծրագիրը փոխառնելու հնարավորության մասին։

Այնուհետև. Ավստրիացիք մտածում են «ազգությունների ազատությունն» իրականացնել մանր բարենորոգումների միջոցով, դանդաղ քայլերով։ Առաջարկելով ազգային ավտոնոմիա, որպես գործնական մի միջոց, նրանք ամենևին հույս չեն դնում արմատական փոփոխության վրա, դեմոկրատիկ-ազատագրական շարժման վրա, որ բացակայում է նրանց պերսպեկտիվում։ Մինչդեռ ռուսական

1) Տես „Нац. вопрос и социал-демократия“ եջ 339. Ռ. Բաուեր։

մարքսիստներն «ազգությունների ազատության» հարցը կապում են հավանական արմատական փոփոխության, դեմոկրատիկ-ազատագրական շարժման հետ, բարենորոգումների վրա հույս դնելու հիմք չունենալով։ Իսկ դա իսկապես փոխում է դրությունը՝ Ռուսաստանի ազգությունների հավանական վիճակի իմաստով։

«Հասկանալի յե, ասում է Բաուերը, վոր դժվար է մտածել, թե ազգային ավտոնոմիան կարող է առաջ գալ վորպես հետևանք մի մեծանուն վճռի, համարձակ վճռական գործողության։ Ավստրիան քայլ առ քայլ ընթանալու յե դեպի ազգային ավտոնոմիան, դանդաղ և ցավագին պրոցեսով, ծանր կռվով, վորի շնորհիվ որենադրությունն ու վարչությունը պարբերական անդամալուծման դրության մեջ են լինելու։ Վոչ, մի մեծանուն որենադրական ակտի միջոցով չե, վոր ստեղծվելու յե նոր պետական իրավային հասարակակարգ, այլ բազմաթիվ զատ-զատ որենքների միջոցով, վոր հրատարակվելու են առանձին շրջանների, առանձին համայնքների համար»[1]։

Նույնն է ասում և Շպրինգերը։

«Յես շատ լավ գիտեմ,—գրում է նա,—վոր նման հաստատությունները (ազգային ավտոնոմիայի որգանները, Հ. Ս.) մեկ կամ տասնյակ տարվա ընթացքում չե վոր ստեղծվում են։ Միայն պրուսական վարչության վերակազմումը յերկարատև ժամանակ պահանջեց։ Պրուսիային պետք յեկան յերկու տասնյակ տարիներ՝ իր հիմնական վարչական մարմինների վերջնական կարգավորման համար։ Ուստի և թող չկարծեն թե յես չգիտեմ, թե վորքան ժամանակ է հարկավորվելու և վորքան դժվարություններ առաջ պիտի կանգ առնի Ավստրիան»[2]։

---

1) Տես «Нац. вопрос» Բաուերի, եջ 422.

2) Տես «Нац. проблемы», Շպրինգերի, եջ 261—282.

Այդ բոլորը շատ վորոշ է։ Սակայն կարո՞ղ են արդյոք ռուսական մարքսիստներն ազգային հարցը «համարձակ վճռական գործողությունների» հետ չկապել։ Կարո՞ղ են արդյոք նրանք հույս դնել մասնավոր բարենորոգումների վրա, «բազմաթիվ զատ-զատ որենքների» վրա, վորպես «ազգությունների ազատությունը» նվաճելու միջոցի վրա։ Իսկ յեթե նրանք չեն կարող և չպետք է անեն այդ, ապա պարզ չե՞ այդտեղից, վոր ավստրիացոց և ռուսների կռվի մեթոդներն և հեռանկարները բոլորովին տարբեր են։ Ինչպե՞ս կարելի յե այդպիսի դրության մեջ սահմանափակվել ավստրիացոց միակողմանի և ազգային թերատ ավտոնոմիայով։ Յերկուսից մեկը.—կամ փոխառնության կողմնակիցները հույս չեն դնում վճռական և համարձակ գործողությունների վրա, կամ հույս են դնում նրանց վրա, բայց «չգիտեն թե զինչ գործեն»։

Վերջապես, Ռուսաստանն ու Ավստրիան բոլորովին տարբեր հերթական խնդիրների առաջ են կանգնած, վորի շնորհիվ և ազգային հարցի վճռի տարբեր մեթոդ է թելադրվում։ Ավստրիան ապրում է պարլամենտարիզմի պայմաններում, առանց պարլամենտի ներկա պայմաններում այնտեղ անկարելի յե վորևե զարգացում։ Բայց պարլամենտական կյանքն ու Ավստրիայի որենդրությունը հաճախ բոլորովին ընդհատվում են շնորհիվ ազգային կուսակցությունների սուր բաղխումների։ Դրանով է բացատրվում և այն պարբերական կրիզիսը, վորով վաղուց հիվանդ է Ավստրիան։ Այդ պատճառով ազգային հարցն այնտեղ կազմում է քաղաքական կյանքի սռնակը, գոյության հարցը։ Ուստի և զարմանալի չե, վոր ավստրիական ս.-դ. քաղաքագետները չանում են ամենից առաջ վճռել ազգությունների բաղխումների հարցը, վճռել, իհարկե, արդեն գոյություն ունեցող պարլամենտարիզմի հիման վրա, պարլամենտական միջոցով...

Նույնը չե Ռուսաստանում։ Ռուսաստանում, նախ և առաջ, «փառք Աստծու, պարլամենտ չկա»։ Ցերկրորդ, և այդ ե գլխավորը—Ռուսաստանի քաղաքական կյանքի սրունակը ազգային հարցը չե կազմում, այլ հողային հարցը, ագրարային հարցը։

Ուստի և ռուսական հարցի բախտը, հետևաբար և ազգերի «ազատագրման» հարցի բախտը Ռուսաստանում կապվում ե հողային հարցի վճռի հետ, այսինքն՝ ճորտության մնացորդների վոչնչացման հետ, այսինքն՝ յերկրի դեմոկրատիզացիայի հետ։ Դրանով ե բացատրվում վոր Ռուսաստանում ազգային հարցը առաջ ե գալիս վոչ իբրև ինքնուրույն և վճռական, այլ վորպես յերկրի ազատագրության ավելի կարևոր և ընդհանուր հարցի մի մասը։

«Ավստրիական պարլամենտի անպտուղ լինելը,—գրում ե Շպրինգերը,—«միայն նրանից ե առաջ գալիս, վոր ամեն մի բարենորոգում ազգային կուսակցությունների ներսը հակասություններ ե ստեղծում, վորոնք քայքայում են նրանց միաձույլությունը, ուստի և կուսակցությունների պարագլուխները խուսափում են այն ամենից, ինչից վոր բարենորոգումների հոտ ե գալիս։ Ավստրիայի հառաջադիմությունն առհասարակ հնարավոր ե միայն այն դեպքում, յերբ ազգություններին իրավական անկապտելի դիրքեր կտրվեն։ Դա կազատի նրանց պարլամենտում հարատև մարտական ջոկատներ պահելու անհրաժեշտությունից և հնարավորություն կտա նրանց դիմելու տնտեսական և սոցիալական հարցերի լուծման»։

Նույնն ե ասում Բաուերը.—

«Ազգային հաշտությունն անհրաժեշտ ե նախ և առաջ պետությանը։ Պետությունն ամենևին չի կարող հանդուրժել, վոր որենադրությունն ընդհատվի լեզվի ամենատրխմար հարցի պատճառով, վորևե ազգային սահմանի վրա

գրգռված մարդկանց հարուցած մանր վեճի պատճառով, ամեն մի նոր դպրոցի պատճառով»[1]։

Այդ բոլորը հասկանալի է։ Բայց վոչ պակաս հասկանալի է, վոր Ռուսաստանում ազգային հարցը բոլորովին այլ մակարդակի վրա է դրված։ Վոչ թե ազգային, այլ հողային հարցն է վճռելու Ռուսաստանի առաջդիմության բախտը։ Ազգային հարցը—ստորադրյալ է։

Այդպես ուրեմն, հարցի տարբեր ձևակերպումն, տարբեր հեռանկարներ և կռվի տարբեր մեթոդներ, հերթական տարբեր խնդիրներ—միթե պարզ չե՞, վոր իրերի այդ տեսակ դրության մեջ Ավստրիայից որինակ վերցնել և ծրագրի փոխառությամբ զբաղվել կարող են միայն թղթազբաղ մարդիկ, վորոնք ազգային հարցը վճռում են «տարածությունից և ժամանակից դուրս»։

Դարձյալ կրկնում ենք—պատմական կոնկրետ պայմանները, վորպես յելակետ, հարցի դիալեկտիկ ձևակերպումն՝ վորպես միակ ուղիղ ձևակերպումն,—ահա ազգային հարցի լուծման բանալին։

4. ԱԶԳԱՅԻՆ ԱՎՏՈՆՈՄԻԱ.

Վերև մենք խոսում եյինք ավստրիական ազգային ծրագրերի ձևական կողմի մասին, մեթոդոլոգիական հիմունքների մասին, վորոնց շնորհիվ ռուսական մարքսիստները չեն կարող պարզապես որինակ վերցնել ավստրիական սոցիալ-դեմոկրատիայից և նրա ծրագիրը իր ծրագիրը դարձնել։

Խոսենք այժմ բուն ծրագրի մասին ըստ եյության։

Ուրեմն, ի՞նչ է ավստրիական սոցիալ-դեմոկրատների ծրագիրը։

Նա արտահայտվում է յերկու խոսքով.—ազգային ավտոնոմիա։

---

[1]) Տես „Нац. воп." Բաուերի. եջ 401.

Այդ նշանակում է, նախ և առաջ, որ ավտոնոմիան տրվում է, ասենք, ոչ թե Չեխիային կամ Լեհաստանին, ուր գլխավորապես ապրում են չեխերն ու լեհերը, այլ առհասարակ չեխերին և լեհերին, տերրիտորիայից անկախ, միևնույն է, Ավստրիայի որ տեղն էլ նրանք ապրելիս լինեին։

Ուստի և այդ ավտոնոմիան կոչվում է ազգային և ոչ տերրիտորիական։

Յերկրորդ, այդ նշանակում է, որ Ավստրիայի զանազան անկյուններում ցրված չեխերը, լեհերը, գերմանացիք և այլն, անհատապես վերցրած, որպես առանձին անհատներ, ամբողջական ազգություններ են կազմակերպում և որպես այդպիսիք՝ մտնում են ավստրիական պետության կազմը։ Այդ դեպքում Ավստրիան ներկայացնելու է ոչ թե ավտոնոմ շրջանների միություն, այլ ավտոնոմ ազգությունների միություն՝ տերրիտորիայից անկախ կազմակերպված։

Յերրորդ, այդ նշանակում է, որ համազգային հիմնարկությունները, որ պետք է ստեղծվեին այդ նպատակով լեհերի, չեխերի համար և այլն, տնորինելու են ոչ թե «քաղաքական», այլ միայն կուլտուրական հարցեր։ Սպեցիֆիք քաղաքական հարցերը կենտրոնացած են լինելու համաավստրիական պարլամենտում (ռայխսռատում)։

Ուստի և այդ ավտոնոմիան կոչվում է նաև կուլտուրական, կուլտուրական-ազգային։

Ահա և ավստրիական սոցիալ-դեմոկրատիայի 1899-ին Բրյունի կոնգրեսում ընդունած ծրագիրը[1])։

Հիշատակելով, որ «ազգային վեճերն Ավստրիայում քաղաքական հառաջադիմության խոչընդոտ են հանդիսա-

1) Դրա համար քվեարկել են նաև հարավ-սլավյանների ս.-դ. կուսակցության ներկայացուցիչները։ Տես «Дебаты по национальному вопросу на Брюнном партайтаге», եջ 72. 1906 թ.։

նում», վոր «ազգային հարցի վերջնական լուծումն ամենից առաջ կուլտուրական անհրաժեշտություն է», վոր «լուծել կարելի յե միայն իսկական դեմոկրատիկ հասարակության մեջ, վորը կառուցված կլինի ընդհանուր, ուղիղ, և հավասար ընտրողական իրավունքի հիման վրա»,— ծրագիրը շարունակում է.

«Ավստրիայի ժողովուրդների ազգային առանձնահատկությունների պահպանումն յեվ զարգացումը[1]) հնարավոր է միայն կատարյալ հավասարության և ամեն տեսակ կեղեքման բացակայության դեպքում։ Ուստի և ամենից առաջ պետք է ժխտվի պետական բյուրոկրատիկ կենտրոնացման սիստեմը, ինչպես նաև առանձին հողամասերի ֆեոդալական արտոնությունները։

Այս և միմիայն այս պայմաններում կարող է փոխանակ ազգային վեճերի, ազգային կարգ ու կանոն հաստատվել Ավստրիայում և այն ել հետևյալ հիմունքների վրա.—

1. Ավստրիան պետք է վերակազմվի, վորպես ազգությունների դեմոկրատիկ միություն կազմող պետություն։

2. Փոխանակ պատմական տերունական հողերի, պետք է կազմվեն ազգայնապես-սահմանածիր ինքնավար կորպորացիաներ, վորոնց յուրաքանչյուրի մեջ որենդրությունն և վարչությունը ընդհանուր, ուղիղ և հավասար քվեարկության հիման վրա ընտրված ազգային պալատների ձեռքին պետք է գտնվեն։

3. Միևնույն ազգության ավտոնոմ շրջանները միասին կազմում են ազգային-միասնական միություն, վորը

---

1) Մ. Պանինի ռուսերեն թարգմանության մեջ (տես Բաուերի գիրքը Պանինի թարգմանությամբ) փոխանակ «ազգային առանձնահատկությունների» ասված է «ազգային անհատականությունների»։ Պանինը ճիշտ չի թարգմանել այդ տեղը։ Գերմաներեն բնագրում չկա «անհատականություն» խոսքը. այնտեղ ասված է «Nationalen Eigenart», այսինքն առանձնահատկությունների մասին, վոր ամենևին նույնը չե։ Հ. Ս.

բոլորովին ինքնագլուխ է վճռում իր ազգային գործերը։

4. Ազգային փոքրամասնությունների իրավունքները ապահովացվում են հատուկ որենքով, որ հրատարակում է կայսերական պարլամենտը։

Ծրագիրն ավարտվում է Ավստրիայի բոլոր ազգություններին ուղղված համերաշխության կոչով[1])։

Դժվար չէ նկատել, որ այս ծրագրում «տերրիտորիալիզմի» որոշ հետքեր են մնացել, բայց ընդհանրապես նա ներկայացնում է իբրև ազգային ավտոնոմիայի ձևակերպումն։

Զուր չէ, որ ազգային ավտոնոմիայի առաջին ագիտատոր Շպրինգերը վոգևորված է դիմավորում նրան[2])։ Բաուերն էլ դա ընդունում է՝ ազգային ավտոնոմիայի «թեորետիկ հաղթություն» կոչելով այդ[3]). միայն ավելի պարզության համար նա առաջարկում է 4 կետ ավելի պարզորոշ ձևակերպումով փոխարինել, որ խոսելիս լինի դպրոցական և այլ կուլտուրական գործերը վարելու համար՝ «յուրաքանչյուր ինքնավար շրջանի ներսը ազգային փոքրամասնությունների հասարակական-իրավական կորպորացիա կազմելու» անհրաժեշտության մասին[4])։

Ահա այս է ավստրիական սոցիալ-դեմոկրատիայի ազգային ծրագիրը։

Փնտենք նրա գիտական հիմքերը։

Տեսնենք թե ինչպես է հիմնավորում ավստրիական սոցիալ-դեմոկրատիան իր քարոզած ազգային ավտոնոմիան։

Դիմենք վերջինիս թեորետիկներին—Շպրինգերին ու Բաուերին։

---

1) Տես «Vorhandlungen des Gesamtparteitages» Բրյուննում, 1899 թ.
2) Տես «Национальн. пробл.» Շպրինգերի, եջ 256.
3) Տես «Нац. вопрос», եջ 549.
4) Տես «Нац. вопр.» եջ 556.

Ազգային ավտոնոմիայի յելակետն և ազգության գաղափարը, որպես մարդկանց մի միություն՝ որոշ տերրիտորիայից անկախ։

«Ազգությունն, ըստ Շպրինգերի, ոչ մի եյական կապ չունի տերրիտորիայի հետ. ազգություններն անհատական ավտոնոմ միություններ են»[1])։

Բաուերը նմանապես ազգության մասին խոսում է որպես «անհատական հանրության» մասին, որին «բացառիկ իշխանություն չի տրված որևե որոշ շրջանում»[2])։

Սակայն ազգություն կազմող մարդիկ միշտ միահամուռ մասսայով չեն ապրում—նրանք հաճախ բաժանվում են խմբավորումների և այդ ձևով ներսխուժում ոտար ազգային որգանիզմների մեջ։ Կապիտալիզմն է, որ հալածում է նրանց դեպի զանազան շրջաններ և քաղաքներ վաստակի համար։ Սակայն մտնելով ոտար ազգային շրջաններն և այնտեղ փոքրամասնություն կազմելով, այդ խմբավորումները տուժում են տեղական ազգային մեծամասնություններից՝ լեզուն, դպրոցները և այլն նեղելու իմաստով։ Այդտեղից ծագում են ազգային բաղխումները։ Այդտեղից յերևում է տերրիտորիական ավտոնոմիայի «անպետքությունը»։ Այդ դրությունից միակ յելքն է, ըստ Շպրինգերի և Բաուերի — պետության զանազան տեղերում ցրված տվյալ ազգության փոքրամասնություններից կազմել մի ընդհանուր միջդասակարգային ազգային միություն։ Միմիայն այդ տեսակ միությունը կարող կլինի, նրանց կարծիքով, պաշտպանել ազգային փոքրամասնությունների կուլտուրական շահերը, միմիայն նա ընդունակ կլինի վերջ դնելու ազգային պառակտումներին։

---

1) Տես «Нац. пробл.» Շպրինգեր, եջ 74.

2) Տես «Нац. вопр.», եջ 19.

«Անհրաժեշտ է,—ասում է Շպրինգերը,—ազգություններին կանոնավոր կազմակերպություն տալ, շնորհել նրանց իրավունքներ և պարտականություններ»[1]։

Իհարկե, «որենք ստեղծելը հեշտ է, սակայն արդյոք այն ազդեցությո՞ւնն է գործում, ինչ վոր սպասում են նրանից»...«Եթե ուզում են ազգության համար որենք ստեղծել, ապա ամենից առաջ պետք է այդ ազգությունները ստեղծել»[2]։ «Առանց ազգությունները կազմակերպելու, անհնարին է ազգային իրավունք ստեղծել և ազգային պառակտումները վերացնել»[3]։

Նույն վոգով է խոսում և Բաուերը, յերբ նա առաջարկում է վորպես «բանվոր դասակարգի պահանջ»՝ «փոքրամասնություններ կազմակերպել իբրև հասարակական-իրավային կորպորացիաներ անհատականության սկզբունքի հիման վրա»[4]։

Բայց ի՞նչպես կազմակերպել ազգությունները։ Ի՞նչպես վորոշել, թե այս կամ այն անձը վո՞ր ազգության է պատկանում։

«Այս կամ այն ազգության պատկանելը վորոշվում է, ըստ Շպրինգերի, ազգային մատրիկուլներով։ Շրջանում յուրաքանչյուր ապրող պարտավոր է հայտարարելու թե ինքը վոր ազգության է պատկանում»[5]։

«Անհատականության սկզբունքը, ասում է Բաուերը, յենթադրում է, վոր ազգաբնակչությունը բաժանվելու յե ըստ ազգությունների՝ չափահաս քաղաքացիների ազատ հայտարարությունների հիման վրա», վորի համար և «պետք է պատրաստվեն ազգային ցանկեր»[6]։

---

1) Sku «Нац. вопрос», եջ 286.
2) Sku «Нац. вопрос», եջ 552.
3) Sku «Нац. воп.», եջ 88—89.
4) Sku «Нац. воп.», եջ 89.
5) Sku «Нац. пробл», եջ 226.
6) Sku «Нац. воп.», եջ 368.

«Բոլոր գերմանացիք, ասում է Բաուերը, ազգային միապաղաղ-շրջաններում և բոլոր գերմանացիք, վորոնք ցուցակագրված կլինեն յերկվորյակ շրջանների ցանկերում, կազմում են գերմանական ազգություն և ընտրում են ազգային խորհուրդ»[1]։

Նույնը պետք է ասել նաև չեխերի, լեհերի և ուրիշների համար։

«Ազգային խորհուրդն, ըստ Շպրինգերի, կուլտուրական-ազգային պարլամենտ է, վորը պետք է հաստատի հիմունքներ և հավանություն տա ազգային դպրոցական գործի, ազգային գրականության և գիտության, ակադեմիաների, մուզեյների, թանգարանների, թատրոնների և այլն կազմակերպման համար անհրաժեշտ միջոցներին»[2]։

Այս է ազգության կազմակերպությունը և նրա կենտրոնական հիմնարկությունը։

Այդ տեսակ միջդասակարգային հաստատություններ ստեղծելով, ավստրիական սոց.-դեմ. կուսակցությունը ձգտում է, Բաուերի կարծիքով, այն բանին, վորպեսզի «ազգային կուլտուրան... ամբողջ ժողովրդի սեփականությունը դարձնվի և այդ միակ հնարավոր միջոցով ազգի անդամներին ազգային կուլտուրական հաևորության մեջ զոդի»[3]. (ընդգծումը մերն է)։

Կարելի յե կարծել, վոր այս բոլորը վերաբերում է միայն Ավստրիային։ Սակայն Բաուերը համաձայն չե դրա հետ։ Նա վճռականապես պնդում է, վոր ազգային ավտոնոմիան պարտադիր է նաև ուրիշ պետություններում, վորոնք Ավստրիայի նման բաղկացած են մի քանի ազգություններից։

«Ունևոր դասակարգերի ազգային քաղաքականությանը, ազգությունների՝ պետության մեջ իշխանությունը

---

1) Տես «Нац. воп.», եջ 375.
2) Տես «Нац. пробл.», եջ 234.
3) Տես «Нац. воп.», եջ 553.

գրավելու քաղաքականությանը բոլոր ազգությունների պրոլետարիատը հակադրում է, Բաուերի կարծիքով, ազգային ավտոնոմիայի իր պահանջը»[1]։

Այնուհետև աննկատելի կերպով ինքնորոշումը փոխարինելով ազգային ավտոնոմիայով, շարունակում է. «Այդպիսով ազգային ավտոնոմիան, ազգերի ինքնորոշումը, անխուսափելիորեն դառնում է այն բոլոր ազգերի պրոլետարիատի սահմանադրական ծրագիրը, որոնք ապրում են ազգությունների պետության մեջ»[2]։

Բայց նա ավելի հեռու յե գնում։ Նա խորապես հավատում է, որ իր և Շպրինգերի «կազմակերպած» միջդասակարգային «ազգային միությունները» իբրև նախատիպ են ծառայելու ապագա սոցիալիստական հասարակության։ Վորովհետև նա գիտե, որ «սոցիալիստական հասարակության կազմը... մարդկությունը բաժանելու յե ազգային-սահմանածիր հասարակությունների»[3], որ սոցիալիզմի ժամանակ տեղի կունենա «մարդկության խըմբավորումն ազգային ավտոնոմ հասարակությունների»[4], որ այդպիսով սոցիալիստական հասարակությունն, անկասկա՛ծ, կներկայացնի իրանով ազգային միությունների և տերրիտորիական կորպորացիաների խայտաբղետ մի պատկեր»[5], որ, հետևաբար, «ազգության սոցիալիստական սկզբունքը ազգային սկզբունքի և ազգային ավտոնոմիայի բարձրագույն սինթեզն է կազմում»[6]։

Կարծեմ բավական է...

Այսպես են ահա հիմնավորում ազգային ավտոնոմիան Բաուերն ու Շպրինգերը իրենց յերկերում։

---

1) Sb. «Нац. воп.», եջ 337.
2) Sb. «Нац. воп.», եջ 333.
3) Sb. «Нац. воп.», եջ 555.
4) Sb. «Нац. воп.», եջ 556.
5) Sb. «Нац. воп.», եջ 543.
6) Sb. «Нац. воп.», եջ 542.

Ամենից առաջ աչքի յե ընկնում ազգությունների ինքնորոշման բոլորովին անհասկանալի և վոչնչով չարդարացնելի կեղծումը՝ ազգային ավտոնոմիայով։ Ցերկուսից մեկը.—կամ Բաուերը չի հասկացել ինքնորոշումը, կամ նա հասկացել ե, բայց ինչ-ինչ պատճառով դիտմամբ անձուկ ե դարձնում։ Վորովհետև անվիճելի յե, վոր ազգային ավտոնոմիան յենթադրում ե ազգությունների պետության ամբողջությունը, իսկ ինքնորոշումը դուրս ե գալիս այդ ամբողջության շրջանակից։ Ցեվ վոր ինքնորոշումը ազգության ե հանձնում լիակատար իրավունքներն, իսկ ազգային ավտոնոմիան—լոկ «կուլտուրական» իրավունքներ։ Նախ այս։

Ցերկրորդ, շատ հնարավոր ե ապագայում արտաքին և ներքին կոնյունկտուրների այնպիսի զուգորդություն, վորի ժամանակ այս կամ այն ազգությունը կվճռի ազգությունների պետությունից դուրս գալ, թեկուզ հենց Ավստրիայից,—չե՞ վոր այսպես հայտարարեցին ռուսինների սոցիալ-դեմոկրատներն իրենց պատրաստականությունը Բրյունների պարտայտագին՝ իրենց ազգության «յերկու մասերը» մեկ ամբողջի մեջ միացնելու[1]. իսկ ի՞նչ պետք ե անել այն ժամանակ «բոլոր ազգությունների պրոլետարիատի համար անխուսափելի» ազգային ավտոնոմիայի հետ։

Հարցի այդ ի՞նչ «լուծումն ե», վոր մեքենաբար սեղմում ե ազգությունները պետության ամբողջության պրոկրուստյան մահճի (?) մեջ։ Այնուհետև։ Ազգային ավտոնոմիան հակասում ե ազգությունների զարգացման ամբողջ ընթացքին։ Նա ազգությունները կազմակերպելու լոզունգ ե տալիս, բայց մի՞թե կարելի յե արհեստականորեն ձուլել նրանց՝ յեթե կյանքը, յեթե տնտեսական զարգացումը անջատում ե նրանից ամբողջ խմբավորումներ և ցրում ե նրանց զանազան շրջաններում։ Կասկած չկա,

1) Տե՛ս „Дебаты по нац. вопр. на Брюнск. партайтаге“, եջ 48.

վոր կապիտալիզմի առաջին ստադիաներում ազգություն-
ները սերտ կապակցվում են, բայց անկասկած է և այն,
վոր կապիտալիզմի բարձր ստադիաներում սկսվում է ազ-
գությունների ցրման պրոցեսը, ազգություններից մի
շարք խմբավորումների անջատման պրոցեսը, վորոնք հե-
ռանում են վաստակի համար, իսկ հետո նույնիսկ բոլո-
րովին գաղթում պետության ուրիշ շրջանները, ըստ վո-
րում գաղթողները կորցնելով հին կապերը և ձեռք բե-
րելով նորերը նոր տեղերում, յուրացնում են սերնդից-
սերունդ նոր բարքեր ու ճաշակներ և դուցե, նույնիսկ
նոր լեզու... Հարց ենք տալիս.—հնարավո՞ր է արդյոք
միավորել իրարից այդպես մեկուսացած խմբավորումներն
ազգային միասնական միության մեջ։ Ո՞ւր են այն հրա-
շագործ կապերը, վորոնց ոգնությամբ կարելի կլիներ
միացնելու անմիանալին։ Ցերևակայելի՞ յե արդյոք «ի մի
ազգություն ձուլել», որինակ, բալթիական և անդրկով-
կասյան գերմանացիներին։ Իսկ յեթե այդ բոլորը անյե-
րևակայելի յե և անհնարին, ուրեմն ի՞նչով է տարբերվում
այդ դեպքում ազգային ավտոնոմիան՝ պատմության անիվը
յետ շրջել չանացող հին նացիոնալիստների ուտոպիայից։

Բայց ազգության միությունն ու կապակցությունը
թուլանում է վոչ միայն շնորհիվ զանազան կողմեր
գաղթելուն։ Նա թուլանում է նաև ներքուստ, շնորհիվ
դասակարգային պայքարի սուր կերպարանք ստանալուն։
Կապիտալիզմի առաջին ստադիաներում դեռևս կարելի յե
խոսել պրոլետարիատի և բուրժուազիայի «կուլտուրական
հանրության» մասին։ Բայց խոշոր ինդուստրիայի զար-
գացումից և դասակարգային պայքարի սուր կերպարանք
ստանալուց հետո «հանրությունը» սկսում է հալվել։ Չի
կարելի լուրջ խոսել ազգության «կուլտուրական հան-
րության» մասին, յերբ նույն ազգության սեփականատե-
րերն ու բանվորները դադարում են իրար հասկանալուց։

Ի՞նչ «ճակատագրի հանրության» մասին կարող է խոսք լինել, յերբ բուրժուազիան պատերազմ է փափագում, իսկ պրոլետարիատը «պատերազմին պատերազմ» է հայտարարում։ Կարելի՞ յե արդյոք այդպիսի հակադիր տարրերից միասնական միջդասակարգային ազգային միություն կազմել։ Կարելի՞ յե արդյոք սրանից հետո խոսել «ազգության բոլոր անդամների ազգային - կուլտուրական հանրության մեջ ձուլելու» մասին[1])։ Պարզ չե՞ սրանից, վոր ազգային ավտոնոմիան հակասում է դասակարգային պայքարի ամբողջ ընթացքին։

Սակայն մի բոպե յենթադրենք, վոր «կազմակերպիր ազգություն» լոզունգը իրականացնելի լոզունգ է։ Թերևս հասկանալի յե, յերբ բուրժուական նացիոնալիստ պարլամենտարիյները աշխատում են «ազգություն» կազմակերպել ավելորդ քվեներ ստանալու համար։ Բայց յերբվանի՞ց են սկսել սոցիալ-դեմոկրատները ազգության «կազմակերպումով», ազգությունների «սահմանադրումով», ազգություններ «ստեղծելով» զբաղվել։

Այդ ի՞նչ սոցիալիստներ են, վոր դասակարգերի պայքարի ամենասուր կերպարանք ստանալու միջոցին միջդասակարգային միություններ են կազմակերպում։ Մինչև այժմ ավստրիական, ինչպես և ամեն մի այլ սոցիալ-դեմոկրատի նպատակն եր—կազմակերպել պրոլետարիատին։ Բայց այդ նպատակն, ինչպես յերևում է, «հնացել է». այժմ Շպրինգերն ու Բաուերը «նոր», ավելի հետաքրքիր նպատակ են դնում—«ստեղծել, կազմակերպել ազգություն»...

Ասենք լոգիկան պարտավորեցնում է.—ով ընդունել է ազգային ավտոնոմիան, պետք է ընդունի նաև այդ «նոր» նպատակը, իսկ ընդունել այս վերջինը, նշանա-

1) Տես «Нац. вопр.» Բաուերի, եջ 553.

կում է իջնել դասակարգային դիրքից, կանգնել նացիոնալիզմի ուղիյի վրա։

Շպրինգերի և Բաուերի ազգային ավտոնոմիան նացիոնալիզմի նուրբ տեսակն է։

Ցեվ այդ ամենևին պատահական չէ, վոր ավստրիական ս.-դ. ազգային ծրագիրը պարտավորեցնում է հոգ տանել «ժողովուրդների ազգային առանձնահատկությունների պահպանման յեվ զարգացման մասին»։ Մեկ լավ մտածեցեք.—«պահպանել» Անդրկովկասի թուրքերի այնպիսի «ազգային առանձնահատկություններ», ինչպիսին է «շախսեյ-վախսեյ» տոնի ժամանակ ինքնախարազանումը։ Զարգացնել Վրաստանում այնպիսի ազգային առանձնահատկություններ, ինչպիսին է «վրեժի իրավունքը»։

Այդպիսի մի կետ պատեհ է թունդ բուրժուա-նացիոնալիստական ծրագրում, և յեթե նա հանդես է գալիս ավստրիական ս.-դ. ծրագրում, այդ նրա համար է, վոր ազգային ավտոնոմիան հանդուրժում է այդպիսի կետեր, նա չի հակասում նրանց։

Սակայն ներկայիս համար անպետք ազգային ավտոնոմիան ավելի ևս անպետք է ապագա սոցիալիստական հասարակության համար։

Բաուերի մարգարեությունը «մարդկության՝ ազգայնապես-սահմանածիր հասարակությունների բաժան-բաժան լինելու» մասին հերքվում է ժամանակակից մարդկության զարգացման ամբողջ ընթացքով։ Ազգային պատնեշները վոչ թե ամրանում են, այլ քանդվում են և ընկնում։ Դեռ քառասնական թվականներին Մարքսն ասում էր, վոր «ազգային մեկուսացումն և զանազան ժողովուրդների շահերի հակադրությունն այժմ արդեն ավելի և ավելի անհայտանում են», վոր «պրոլետարիատի տիրապետությունն ավելի կարագացնի նրանց անհայտանալը»[1])։ Մարդկության հե-

[1]) Տես այս գլխի սկիզբը։

տագա զարգացումն իր կապիտալիստական արդյունաբերության հսկայական աճումով, իր ազգությունների միախառնությամբ և մարդկանց ավելի ու ավելի ընդարձակ տերիտորիաների վրա միացմամբ, վճռական կերպով հաստատում են Մարքսի միտքը։

Սոցիալիստական հասարակությունը վորպես «անհատական ազգային միությունների և տերիտորիական կորպորացիաների խայտաբղետ պատկեր» ներկայացնելու Բաուերի ցանկությունը յերկչոտ փորձ է հանդիսանում մարքսյան սոցիալիզմի կոնցեպցիան Բակունինի բարենորոգված կոնցեպցիայով փոխարինելու։ Սոցիալիզմի պատմությունը ցույց է տալիս, վոր բոլոր նման փորձերն անխուսափելի կրախի տարրեր են պարունակում իրենց մեջ։

Մենք դեռ չենք խոսում Բաուերի գովաբանած ինչ վոր «ազգության սոցիալիստական սկզբունքի» մասին, վորը, մեր կարծիքով, դասակարգային պայքարի սոցիալիստական սկզբունքի փոխարինումն է «ազգության» բուրժուական սկզբունքով։ Յեթե ազգային ավտոնոմիան այդ տեսակ կասկածելի նացիոնալիստական սկզբունքից է յելնում, ապա անհրաժեշտ է ընդունել, վոր նա բանվոր դասակարգին միայն վնաս կարող է բերել։

Ճշմարիտ է, Բաուերի ավտոնոմիայի նացիոնալիզմը հմտորեն դիմակավորված է սոցիալիստական ֆրազներով, բայց դրանով ավելի ևս վնասակար է պրոլետարիատի համար։

Բացարձակ նացիոնալիզմի ճարը կարելի յե տեսնել,— նրան ճանաչելը դժվար չե։

Շատ ավելի դժվար է պայքարել դիմակավորված և իր դիմակի տակ անճանաչելի դարձած նացիոնալիզմի հետ։ Քողարկվելով սոցիալիզմի զրահով, նա ավելի սակավ խայթելի յե և ավելի կենսունակ է։ Իսկ ապրելով բանվորների միջև նա թունավորում է մթնոլորտը՝ փոխադարձ

անվտահության և մեկուսացման փաստակար գաղափարներ տարածելով։

Սակայն ազգային ավտոնոմիայի բացասական հատկությունները դրանով չեն սպառվում։ Նա հող է պատրաստում վոչ միայն ազգությունների մեկուսացման համար, այլև բանվորական միասնական շարժման ջլատման համար։ Ազգային ինքնավարության գաղափարը հոգեբանական նախադրյալներ է ստեղծում միասնական բանվորական կուսակցությունը բաժանելու ըստ ազգությունների կազմված առանձին կուսակցությունների։ Կուսակցությունից հետո ջլատվում են միությունները և ստացվում է կատարյալ մեկուսացում։ Այսպես է ահա բաժան-բաժան լինում դասակարգային միասնական շարժումը ազգային զատ-զատ վտակների։

«Ազգային ավտոնոմիայի» հայրենիք Ավստրիան այդ յերևույթի ամենատխուր որինակն է ներկայացնում։ Ավստրիական ս.-դ. կուսակցությունը, յերբեմն միասնական, դեռ 1897 թվից սկսեց բաժան-բաժան լինել առանձին կուսակցությունների (Վիմբերգի պարտայտագը)։ Բրյունի պարտայտագից (1899) հետո, ուր ընդունվեց ազգային ավտոնոմիան, ջլատումն ավելի ևս ուժեղացավ։ Վերջապես բանն այնտեղ հասավ, վոր փոխանակ միասնական միջազգային կուսակցության, այժմ գոյություն ունեն վեց ազգային կուսակցություններ, վորից չեխական ս.-դ. կուսակցությունը նույնիսկ վոչ մի գործ չի ուզում ունենալ գերմանական ս.-դ. հետ։

Սակայն կուսակցության հետ կապված են արհեստակցական միությունները։ Ավստրիայում, թե մեկում և թե մյուսում, գլխավոր աշխատանքը վարում են միևնույն ս.-դ. բանվորները։ Ուստի և կարելի յեր յերկյուղ կրել, վոր սեպարատիզմը կուսակցության մեջ՝ կհանգի սեպարատիզմի՝ միությունների մեջ, վոր միությունները ել

կհերձվեն։ Այդպես եղավ.—միությունները եղ բաժանվեցին ըստ ազգությունների։ Այժմ հաճախ բանն այնտեղ է հասնում, որ չեխ բանվորները վիժեցնում են գերմանական բանվորների գործադուլը, կամ չեխերի բուրժուաների հետ միասին դուրս են գալիս գերմանական բանվորների դեմ մունիցիպալիտետի ընտրությունների ժամանակ։

Այս է ահա ազգային ավտոնոմիայի հունձը։

5. ԲՈՒՆԴ, ՆՐԱ ՆԱՑԻՈՆԱԼԻԶՄԸ, ՆՐԱ ՍԵՊԱՐԱՏԻԶՄԸ.

Վերև մենք ասում էինք, որ Բաուերը չեխերի, լեհերի և այլոց համար ազգային ավտոնոմիա անհրաժեշտ համարելով, այնուամենայնիվ ընդդեմ է նույն տեսակ ավտոնոմիայի՝ հրեաների համար։ Այն հարցին, թե «հրեական բանվոր դասակարգը պե՞տք է արդյոք ավտոնոմիա պահանջի հրեական ժողովրդի համար», Բաուերը պատասխանում է, որ «ազգային ավտոնոմիան չի կարող հրեական բանվորների պահանջը լինել»[1]։ Պատճառը, Բաուերի կարծիքով, նրանումն է, որ «կապիտալիստական հասարակությունը հնար չի տալիս նրանց (հրեաներին, Հ. Ս.) իրենց գոյությունը պահպանել որպես ազգություն»[2]։

Կարճ ասած, հրեական ազգությունը դադարում է գոյություն ունենալ—հետևաբար էլ կարիք չկա պահանջելու ազգային ավտոնոմիա,—հրեաներն ասիմիլյացիայի են ենթարկվում։

Հրեաների, որպես ազգության, վիճակի վերաբերյալ այդ կարծիքը նոր չե։ Այդ արտահայտել է Մարքսը դեռևս քառասնական թվականներին[3]), ինկատի ունենալով

---

1) Տես «Нац. воп.», եջ 331 և 396.

2) Տես «Нац. воп.», եջ 389.

3) Տես նրա «Еврейский вопрос». 1906 թ.

գլխավորապես գերմանական հրեյաներին։ Այդ կրկնել է Կաուցկին, 1903 թվին[1]), ինկատի ունենալով ռուսական հրեյաներին։ Այժմ այդ կրկնում է Բաուերը ավստրիական հրեյաների վերաբերմամբ, միայն այն տարբերությամբ, որ նա ժխտում է հրեական ազգության վոչ թե ներկան, այլ ապագան։

Հրեյաների, վորպես ազգության, պահպանելու անկարելիությունը Բաուերը բացատրում է նրանով, որ «հրեյաները կոլոնիզացիոն պարփակ հողաշրջան» չունեն[2])։

Այդ բացատրությունը հիմամբ ուղիղ է, սակայն չի արտահայտում ամբողջ ճշմարտությունը։ Ամենից առաջ բանը նրանումն է, որ հրեյաները չունեն հողի հետ կապված լայն կայուն խավ, որը բնական կերպով ամրացնում է ազգությունը վոչ միայն վորպես ազգության կմախք, այլև վորպես «ազգային» շուկա։ Ռուսական 5—6 միլիոն հրեյաներից միայն 3—4 տոկոսն են այս կամ այն կերպ կապված գյուղատնտեսության հետ։ Մնացած 96 տոկոսը զբաղված են առուտուրով, արդյունաբերությամբ՝ քաղաքային հիմնարկություններում, առհասարակ ապրում են քաղաքներում և ցրված լինելով ամբողջ Ռուսաստանում, վոչ մի նահանգում մեծամասնություն չեն կազմում։

Այդպիսով, ներարկված լինելով այլազգային շրջաններում, վորպես ազգային փոքրամասնություն, հրեյաները սպասավորում են գլխավորապես «ոտար» ազգություններին և թե՛ արդյունաբերողները, թե՛ առևտրականները և թե ազատ պրոֆեսիայի մարդիկ բնականաբար հարմարվում են «ոտար» ազգություններին լեզվի կողմից և այլն։ Այս բոլորը, ազգությունների հետզհետե աճող միախառնման հետ կապված, որ հատուկ է կապիտալիզմի

---

1) Տես նրա „Кишиневская резня и еврейский воп.“, 1906 г.

2) Տես «Нац. воп.», եջ 333։

զարգացած ձևերին, նպաստում է հրեյաների ասիմիլյացիային։ «Մշտաբնակության սահմանի» վոչնչացումը միայն կարող է արագացնել այդ ասիմիլյացիան։

Այդ պատճառով ռուսական հրեյաների համար ազգային ավտոնոմիայի հարցը մի տեսակ ծիծաղելի բնավորություն է ստանում.—ավտոնոմիա յեն առաջարկում մի ազգի համար, վորի ապագան ժխտում են, վորի գոյությունը դեռ պետք է ապացուցել!

Այնուամենայնիվ, Բունդն այդ ծիծաղելի և խախուտ դիրքի վրա կանգնեց, ընդունելով իր VI համագումարին (1905) «ազգային ծրագիրն»՝ ազգային ավտոնոմիայի իմաստով։

Ցերկու հանգամանք դրդում եյին Բունդին այդ քայլն անելու.

Առաջին հանգամանքը, դա—Բունդի գոյությունն է, վորպես հրեական ս.-դ. բանվորների կազմակերպություն, և միմիայն հրեական։ Դեռ մինչև 1897 թ. հրեական բանվորների մեջ գործող ս.-դ. խմբավորումներն իրենց նպատակ եյին դնում «հատուկ հրեական բանվորների կազմակերպություն» ստեղծելու[1]։ 1898 թ. նրանք ստեղծեցին այդպիսի կազմակերպություն, համախմբվելով Բունդի մեջ։ Այդ դեռ այն ժամանակն եր, յերբ ռուսական սոց.-դեմոկրատիան, վորպես ամբողջություն, փաստորեն գոյություն չուներ։ Այդ ժամանակից Բունդն անընդհատ աճում և լայն ծավալ եր ստանում, ավելի ու ավելի աչքի ընկնելով ռուսական սոցիալ-դեմոկրատիայի անգուն որերի ֆոնի վրա... Բայց ահա վրա յեն հասնում ինտուիտական թվականները։ Սկսվում է բանվորական մասսայական շարժում։ Մեծանում է լեհական ս.-դ. և հրեական բանվորներին ներս է գրավում մասսայական պայքարի մեջ։ Մեծանում է ռուսական ս.-դ. և իր կողմն է գրավում «Բուն-

[1]) Տես II համագումարի արձանագրությունները, եջ 176.

դական» բանվորներին։ Բունդի ազգային շրջանակը տերրիտորիական բազայից զրկված, նեղ է դառնում։ Բունդի առաջ հարց է ծագում.—կամ լուծվել ընդհանուր միջազգային ալիքի մեջ, կամ պաշտպանել իր ինքնուրույն գոյությունը՝ որպես եքստերրիտորիալ կազմակերպություն։ Բունդն ընտրում է վերջինը։

Այսպես է ստեղծվում Բունդի, որպես «հրեական պրոլետարիատի միակ ներկայացուցչի» թեորիան։

Սակայն այս տարրորինակ «թեորիան» մի կերպ արդարացնել՝ ուղղակի անկարելի յե դառնում։ Անհրաժեշտ է որևե «սկզբունքային» աստառ, «սկզբունքային» արդարացում։ Ցեվ այդպիսի աստառ է դառնում ազգային ավտոնոմիան։ Բունդը բռնում է նրա փեշից, դա փոխառնելով ավստրիական սոցիալ-դեմոկրատիայից։ Եթե ավստրիացիք այդ տեսակ ծրագիր չունենային, Բունդը կհնարեր այն, որպեսզի «սկզբունքով» արդարացներ իր ինքնուրույն գոյությունը։

Այդպիսով, 1901 թվի յերկչոտ փորձից հետո (IV համագումար) Բունդը վերջնականապես ընդունում է «ազգային ծրագիրը» 1905 թ. (VI համագումար)։

Յերկրորդ հանգամանքը—դա հրեաների հատուկ դրությունն է, որպես առանձին ազգային փոքրամասնության, որ գտնվում է ամբողջացրած շրջաններում ապրող այլազգիների կոմպակտ մեծամասնությունների մեջ։

Մենք արդեն ասել ենք, որ այդպիսի դրությունը խախտում է հրեաների գոյությունը որպես ազգության, ասիմիլյացիայի ուղիի վրա կանգնեցնելով նրանց։ Բայց դա—ոբյեկտիվ պրոցես է։ Սուբյեկտիվ կերպով, հրեաների գլուխներում, նա ռեակցիա յե առաջ բերում և հարց է հարուցում ազգային փոքրամասնության իրավունքների յերաշխավորության մասին, ասիմիլյացիայի դեմ յերաշխավորության մասին։

Հրեական ազգության կենտրոնակությունը քարոզելով, Բունդը չեր կարող «յերաշխավորման» տեսակետի վրա չկանգնել։ Իսկ կանգնելով այդ տեսակ դիրքի վրա, նա չեր կարող չընդունել ազգային ավտոնոմիան։ Վորովհետև, յեթե կա մի ավտոնոմիա, վորի փեշից կարող եր բռնել Բունդը, դա միայն ազգային ավտոնոմիան է, այսինքն՝ կոլտուրական-ազգային ավտոնոմիա, հրեաների տերրիտորիալ-քաղաքական ավտոնոմիայի մասին խոսք անգամ չեր կարող լինել, ի նկատի առնելով այն հանգամանքը, վոր հրեաները մի վորոշ ամբողջացրած տերրիտորիա չունեն։

Բնորոշ է, վոր Բունդը հենց սկզբից շեշտում եր ազգային ավտոնոմիայի բնույթը, վորպես ազգային փոքրամասնությունների իրավունքների յերաշխավորում, վորպես ազգությունների «ազատ զարգացման» յերաշխավորում։ Պատահական չե և այն, վոր ռուսական ս.-դ. II համագումարում Բունդի ներկայացուցիչ Գոյլդբլատը ազգային ավտոնոմիան ձևակերպում է վորպես «նրանց (ազգություններին, Հ. Ս.) կուլտուրական զարգացման լիակատար ազատություն յերաշխավորող հիմնարկություն»[1])։

Նույն առաջարկությունն արին նաև չորրորդ դումայի ս.-դ. ֆրակցիայում Բունդի դաղափարներին կողմնակիցները...

Այդպես կանգնեց Բունդը հրեաների ազգային ավտոնոմիայի ծիծաղաշարժ դիրքի վրա։

Վերև մենք քննեցինք ազգային ավտոնոմիան ընդհանրապես։ Քննությունը ցույց տվեց, վոր ազգային ավտոնոմիան դեպի նացիոնալիզմն է տանում։ Ստորև մենք կտեսնենք, վոր Բունդը նույն վախճանին է հասնում։ Սակայն Բունդը ազգային ավտոնոմիան քննում է հա-

---

1) Տես «Формы национ. движения», Կաստելյանսկու խմբագրությամբ, եջ 772.

տուկ տեսակետից, ազգային փոքրամասնությունների իրավունքների յերաշխավորման տեսակետից։ Քննենք հարցը այդ հատուկ տեսակետից։ Այդ առավել ևս անհրաժեշտ է, քանի վոր ազգային փոքրամասնությունների հարցը—և վոչ միայն հրեական—ս.-դ.-յի համար լուրջ նշանակություն ունի։

Նշանակում է ուրեմն,—«ազգություններին կուլտուրական զարգացման լիակատար ազատություն յերաշխավորող հիմնարկություն» (ընդգծումը մերն է, Հ. Ս.)։

Իսկ այդ ի՞նչ «յերաշխավորող» և այլն հիմնարկություն է։

Դա ամենից առաջ Շպրինգերի-Բաուերի «ազգային խորհուրդն» է, մի տեսակ սեյմ՝ կուլտուրական գործերի համար։

Սակայն կարո՞ղ են արդյոք այդ հիմնարկությունները յերաշխավորել ազգության «կուլտուրական զարգացման լիակատար ազատություն»։ Կարո՞ղ են արդյոք կուլտուրական գործերի վորևե սեյմերն ազգություններին ապահովել նացիոնալիստական ռեպրեսիաներից։

Բունդը յենթադրում է, վոր կարող են։

Սակայն պատմությունը հակառակն է ասում։

Ռուսական Լեհաստանում մի ժամանակ գոյություն ուներ սեյմ, քաղաքական սեյմ, և նա, ինքնին, աշխատում եր յերաշխավորել լեհերի «կուլտուրական զարգացման» ազատությունը, բայց նրան վոչ միայն չհաջողեց այդ, այլ ընդհակառակն, ինքը զոհ գնաց Ռուսաստանի համաքաղաքական պայմանների դեմ մղած անհավասար կռվում։

Ֆինլանդիայում վաղուց գոյություն ունի սեյմը, վոր նույնպես աշխատում է պաշտպանել ֆիններին ազգությունը «հարձակումներից», բայց թե վորքան է հաջողվում նրան այդ անել—բոլորը տեսնում են։

Ինքնին, տարբեր տեսակի սեյմեր են լինում, և դեմոկրատիկ կազմ ունեցող ֆինլանդական սեյմին այնպես

հեշտ չե հաղթել, ինչպես վոր լեհական արիստոկրատ սեյմին։ Սակայն վճռական նշանակություն ունի վոչ թե ինքը սեյմը, այլ Ռուսաստանի ընդհանուր կարգերը.—յեթե այժմ Ռուսաստանում նույն գռեհիկ ասիական հասարակական-քաղաքական կարգերը լինեյին, ինչպես անցյալում, լեհական սեյմի վերացման տարիներում, ֆինլանդական սեյմի համար շատ ավելի վատ կլիներ։ Բացի դրանից, «Ֆինլանդիայի վրա հարձակվելու» քաղաքականությունը սատկանում է, և չի կարելի ասել, վոր այդ քաղաքականությունը պարտություն կկրի...

Յեթե այդպես է հին, պատմականորեն առաջ յեկած հիմնարկություններին, քաղաքական սեյմերի դրությունը, առավել ևս չեն կարող ազատ զարգացումն յերաշխավորել ազգություններին յերիտասարդ սեյմերը, յերիտասարդ հիմնարկությունները, և այն ել այնպիսի թույլ, ինչպիսին են «կուլտուրական» սեյմերը։

Ակներև է, վոր բանը «հիմնարկությունների» մեջ չե, այլ յերկրի ընդհանուր կարգերի մեջ։ Չկա յերկրում դեմոկրատիզացիա—չկա և «ազգային զարգացման» յերաշխավորումն։ Վատահ կարելի յե ասել, վոր քանի ավելի դեմոկրատիկ է յերկիրը, այնքան ավելի քիչ են «ազգությունների ազատության» վերաբերմամբ «հալածանքները», այնքան ավելի յերաշխավորումն կա «հալածանքների» դեմ։

Ռուսաստանը—կիսա-ասիական յերկիր է և այդ պատճառով «հալածանքների» քաղաքականությունը հաճախ ամենակոպիտ ձևեր է ընդունում, ջարդերի ձևեր։ Ավելորդ է ասել, վոր «յերաշխավորումները» Ռուսաստանում հասցրած են մինիմումին։

Գերմանիան—արդեն Յեվրոպա յե, ավել կամ պակաս քաղաքական ազատությամբ,—զարմանալի չե, վոր «հալածանքների» քաղաքականությունն այնտեղ յերբեք ջարդի ձև չի ստանում։

Ֆրանսիայում, իհարկե, «յերաշխավորումները» շատ ավելի յեն, վորովհետև Ֆրանսիան ավելի դեմոկրատիկ է, քան Գերմանիան։

Մենք չենք խոսում դեռ Շվեյցարիայի մասին, ուր, շնորհիվ իր բարձրաստիճան, թեև բուրժուական դեմոկրատության, ազգությունները ազատ են ապրում—միևնույն է, մեծամասնություն թե՞ փոքրամասնություն են կազմում նրանք։

Այդպես ուրեմն, Բունդը սխալ ուղիի վրա յե կանգնած, պնդելով, վոր «հիմնարկությունները» ինքնին կարող են ազգությունների կուլտուրական զարգացումն յերաշխավորել։

Կարող են նկատել, վոր ինքը Բունդը Ռուսաստանի դեմոկրատիզացիան համարում է նախնական պայման «հիմնարկություններ ստեղծելու» և ազատության յերաշխավորման համար։ Բայց այդ ճիշտ չե։ «Բունդի 8-րդ կոնֆերենցիայի տեղեկագրից» յերևում է, վոր Բունդը մտադիր է «հիմնարկություններ» ձեռք բերելու Ռուսաստանի ներկա կարգերի հիման վրա, հրեական համայնքի բարենորոգման միջոցով։

«Համայնքը,—ասում եր այդ կոնֆերենցիային Բունդի լիդերներից մեկը,—կարող է ապագա կուլտուրական-ազգային ավտոնոմիայի միջուկը կազմել։ Կուլտուրական-ազգային ավտոնոմիան ազգության ինքնասպասավորման ձևն է, ազգային պետքերի բավարարման ձևը։ Համայնքի ձևի տակ նույն բովանդակությունն է թաքնված։ Դրանք նույն շղթայի ողակներն են, նույն եվոլյուցիայի ետապները»[1])։

Ցելնելով դրանից, կոնֆերենցիան վճռեց, վոր պետք է պայքարել «հրեական համայնքի բարեկորոգման յեվ դա որենսդրական ճանապարհով դեմոկրատիկ ձևով

[1]) Տես «2-ой Отчет о VIII конференции Бунда», 1911 թ. եջ 62.

կազմակերպած աշխարհիկ հիմնարկություն դարձնելու համար»[1]). (ընդգծումը մերն է, Հ. Ս.)։

Պարզ է, որ Բունդը Ռուսաստանի դեմոկրատիզացիան չէ, որ յերաշխավորման պայման է համարում, այլ հրեյաների ապագա «աշխարհիկ հիմնարկությունը», որ ստացվելու յե «հրեական համայնքի բարենորոգման» միջոցով, այսպես ասած, «որենսդրական կարգով», դումայի միջոցով։

Բայց մենք արդեն տեսել ենք, թե «հիմնարկությունները» ինքնին, առանց դեմոկրատիկ կարգերի՝ ամբողջ պետության մեջ, չեն կարող իբրև «յերաշխավորություն» ծառայել։

Լավ, իսկ ի՞նչպես կլինի ապագա դեմոկրատիկ կազմի ժամանակ. կարիք չի՞ լինելու գոնե հատուկ «կուլտուրական» հիմնարկությունների, որոնք «յերաշխավորեն» և այլն։ Դա ի՞նչպես է, որինակ, դեմոկրատիկ Շվեյցարիայում։ Կա՞ն արդյոք այնտեղ հատուկ կուլտուրական հիմնարկություններ, ինչպես, որինակ, Շպրինգերի «ազգային խորհուրդը»։ Այդպիսիները այնտեղ չկան։ Իսկ այդ պատճառով չե՞ն վնասվում, որինակ, այնտեղ փոքրամասնություն կազմող իտալացիների կուլտուրական շահերը։ Վոչինչ չի լսվում այդ մասին։ Յեվ այդ հասկանալի յե։ Շվեյցարիայում դեմոկրատիան ավելորդ է դարձնում ամեն մի հատուկ կուլտուրական՝ իբր «յերաշխավորող» և այլն՝ «հիմնարկություն»։

Այդպես ուրեմն—ներկայում անզոր, ապագայում ավելորդ—այդպես են կուլտուրական ազգային ավտոնոմիայի «հիմնարկությունները», այդպես է ազգային ավտոնոմիան։

Բայց նա արդեն վնասակար է դառնում, յերբ այդ կապում են մի «ազգության» վրին, որի գոյությունն ու ապագան կասկածի յե յենթարկվում։ Այդպիսի դեպքերում, ազգային ավտոնոմիայի կողմնակիցները ստիպված են լի-

[2]) Տես „2-ой Отчет о VIII конф. Бунда“, եջ 83—84.

նում պաշտպանել և պահպանել «ազգության» բոլոր առանձնահատկությունները, ոչ միայն ոգտակարը, այլ և վնասակարը,—միայն թե «փրկեն» ազգը ասիմիլյացիայից։

Բունդն անխուսափելիորեն պետք եր այդ վտանգավոր ուղիի վրա կանգներ։

Յեվ նա իրոք կանգնեց։ Մենք ինկատի ունենք Բունդի վերջին կոնֆերենցիայի վճիռները «շաբաթի», «ժարգոնի» մասին և այլն։

Սոցիալ-դեմոկրատիան ձգտում է ձեռք բերելու ժողովրդական լեզվի իրավունք բոլոր ազգությունների համար, իսկ Բունդը դրանով չի բավականանում,—նա պահանջում է, վորպեսզի «առանձին համառությամբ պաշտպանեն հրեյական լեզվի իրավունքները» (ընդգծումը մերն է, Հ. Ս)[1]) և ինքը Բունդը IV Դումայի ընտրությունների ժամանակ «գերադասում է նրանց (այսինքն պատվիրակներին, վորոնք պարտավորվում են հրեյական լեզվի իրավունքը պաշտպանել»[2])։

Վոչ թե մայրենի լեզվի ընդհանուր իրավունքն, այլ հրեյական լեզվի, ժարգոնի առանձնակի իրավունքը! Թող զանազան ազգությունների բանվորներն ամենից առաջ իրենց լեզվի համար կռվեն—հրեյանները՝ հրեյական, վրացիները՝ վրացական լեզվի համար և այլն։ Ամբողջ ազգության ընդհանուր իրավունքի համար մղվող կռիվը—յերկրորդական բան է։ Դուք կարող եք չընդունել, վոր բոլոր կեղեքված ազգությունները մայրենի լեզվով խոսելու իրավունք ունենան, բայց յեթե դուք ընդունում եք ժարգոնի իրավունքը, իմացած յեղեք, վոր Բունդը ձեզ քվե կտա, Բունդը ձեզ կգերադասի։

Ապա ուրեմն, ել ինչո՞վ է տարբերվում Բունդը բուրժուական նացիոնալիստներից։

---

1) Տես «Отчет о VIII конференции Бунда», եջ 85.

2) Տես «Отчет о IX конференции Бунда». 1912 թ. եջ 42.

Սոցիալ-դեմոկրատիան ձգտում է սահմանել տալ շաբաթական պարտադիր հանգստի մի որ։ Բայց Բունդը դրանով չի բավականանում. նա պահանջում է, վորպեսզի «որենսդրական կարգով հրեական պրոլետարիատին ապահովված լինի շաբաթը տոնելու իրավունքը, վերացնելով նաև հետևյալ որն էլ տոնելու հարկադրությունը»[1])։

Պետք է յենթադրել, վոր Բունդը ելի «մի քայլ առաջ» կանի և կպահանջի բոլոր հին-հրեական տոները տոնելու իրավունքը։ Իսկ յեթե, ի դժբախտություն Բունդի, հրեական բանվորները հրաժարվեին նախապաշարմունքներից ու չցանկանան տոնել, ապա Բունդը «շաբաթի իրավունքի» իր ագիտացիայով նրանց կհիշեցնի շաբաթի մասին, կմբշակի նրանց մեջ, այսպես ասած, «շաբաթի վոգի»...

Ուստի և շատ հասկանալի յե հռետորների «բոցավառ ճառերը» Բունդի VIII կոնֆերենցիայում, յերբ նրանք պահանջում եյին «հրեական հիվանդանոցներ», հիմնավորելով այդ պահանջը նրանով, վոր «հիվանդն ավելի լավ է զգում իրեն իրայիններին շրջանում», վոր «հրեա բանվորն իրեն վատ է զգում լեհ բանվորների շրջանում, նա իրեն լավ է զգալու հրեա մանրավաճառների միջև»[2])։

Պահպանել բոլոր հրեականը, պահել հրեաների ազգային բոլոր առանձնահատկությունները, նույնիսկ պրոլետարիատի համար ակներև վնասակար հատկանիշները, հրեաներին պաշտպանել բոլոր վոչ հրեականից, նույնիսկ առանձին հիվանդանոցներ հիմնել—ահա թե ինչ ատիճանի է իջել Բունդը։

Հազարապատիկ իրավացի եր ընկ. Պլեխանովը(8), յերբ ասում եր, վոր «Բունդը սոցիալիզմը հարմարեցնում է նացիոնալիզմին»։ Իհարկե, Վլ. Կոսովսկին և իր նման բունդականները կարող են հայհոյել Պլեխանովին «դեմա-

---

1) Տես «Отчет о VIII конф. Бунда». եջ 83.

2) Տես «Отчет о VIII конф. Бунда». եջ 68.

գոգ» կոչելով[1]),—թուղթն ամեն ինչ համբերում է,— սակայն ով ծանոթ է Բունդի գործունեությանը, նրա համար դժվար չէ հասկանալ, վոր այդ քաջերն ուղղակի վախենում են ճշմարտությունն ասելու իրենց մասին, քողարկվելով «դեմագոգիայի» մասին թունդ խոսքերով...

Սակայն Բունդը ազգային հարցում կանգնելով այդպիսի դիրքի վրա, կազմակերպչական հարցում բնականաբար պետք է կանգներ հրեական բանվորների մեկուսացման ուղիյի վրա, սոցիալ-դեմոկրատիայում ազգային կուրիաների ուղիյի վրա։ Այդպես է ազգային ավտոնոմիայի լոգիկան։

Ցեվ, իսկապես, Բունդը «յեզակի ներկայացուցչության» թեորիայից անցնում է բանվորների «ազգայնական սահմանաբաժանման» թեորիային։ Բունդը պահանջում է Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատիայից, վորպեսզի նա «իր կազմակերպչական կառուցվածքում մտցնի սահմանաբաժանում ըստ ազգությունների»[2])։

«Սահմանաբաժանումից» ել «մի քայլ առաջ» է անում դեպի «մեկուսացման» թեորիան։ Զուր չե, վոր Բունդի VIII կոնֆերենցիայում ճառեր եյին լսվում այն մասին, վոր «ազգային գոյությունը—մեկուսացման մեջ է կայանում»[3])։

Կազմակերպչական ֆեդերալիզմը պարունակում է իր մեջ նեխման և սեպարատիզմի տարրեր։ Բունդը դեպի սեպարատիզմ է ընթանում։

Ցեվ իրոք, նա ուրիշ տեղ ել չունի գնալու։ Հենց իր գոյությունը, վորպես եքստերրիտորիալ կազմակերպություն, մղում է նրան դեպի սեպարատիզմի ուղին։ Բունդը վորոշ ամբողջական տերրիտորիա չունի. նա դեգերում է «ոտարների» տերրիտորիաների վրա, մինչդեռ նրա հետ

---

1) Տես «Наша Заря», 1912 թ. №№9—10. եջ 120.

2) Տես «Извещение о VII С'езде Бунда». եջ 7.

3) Տես «Отчет о VIII конф. Бунда». եջ 72.

շփվող լեհական, լատվիական և Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատները հանդիսանում են «վորպես ինտերնացիոնալ-տերրիտորիական կոլլեկտիվներ։ Իսկ դա հասցնում է այն բանին, վոր այդ կոլլեկտիվների ամեն մի ընդլայնումն, Բունդի համար նշանակում է «կորուստ», նրա գործունեության ասպարիզի սղումն։ Ցերկուսից մեկը—կամ Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատիան պետք է վերակազմվի ազգայնական-ֆեդերալիզմի սկզբունքով,—և այն ժամանակ Բունդը հնարավորություն է ստանում իր համար «ապահովել» հրեական պրոլետարիատը, կամ թե այդ կոլլեկտիվների տերրիտորիական-ինտերնացիոնալ սկզբունքն իր ուժի մեջ է մնում և այն ժամանակ Բունդը վերակառուցվում է միջազգայնության սկզբունքով, ինչպես այդ տեղի ունի լեհական և լատվիական սոցիալ-դեմոկրատիաներում։

Դրանով է բացատրվում, վոր Բունդը հենց սկզբից պահանջում է «Ռուսաստանի ս.-դ. վերակազմումն ֆեդերատիվ հիմքերի վրա»[1])։

1906 թ. Բունդը գիջելով ստորին խավերում տեղի ունեցող միաբանական ալիքի առաջ, միջին ուղի ընտրեց, մտնելով Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատիայի մեջ։ Բայց ի՞նչպես մտավ նա այնտեղ։ Այն ժամանակ, յերբ լեհական և լատվիական ս.-դ. մտան միահամուռ համերաշխ գործունեության համար, Բունդը մտավ ֆեդերացիայի ոգուն մարտնչելու համար։ Բունդականների լիդեր Մեդեմն(9) այդպես էլ ասում էր այն ժամանակ.

«Մենք մտնում ենք վոչ թե իդիլլիայի, այլ պայքարի համար։ Իդիլլիա չկա, և ապասել նրան մոտ ապագայում կարող են միայն Մանիլովները(10)։ Բունդը պետք է մտնի կուսակցության մեջ վոտից գլուխ զինված»[2])։

---

[1]) Տես «К вопросу о нац.авт. и преобразовании рос. соц.-демократии на федеративных началах». հրատ. Բունդի։

[2]) Տես «Наше Слово» № 3. եջ 21. Վիլնա. 1906 թ.

Սխալ կլիներ տեսնել դրա մեջ Մեղեմի չար կամքը։ Բանը չար կամքի մեջ չէ, այլ Բունդի առանձին դիրքի մեջ, վորի շնորհիվ նա չի կարող չպայքարել Ռուսաստանի ինտերնացիոնալ սկզբունքներով կառուցված սոցիալ-դեմոկրատիայի դեմ։ Իսկ դրա դեմ պայքարելով, Բունդը բնականաբար խախտեց միասնականության շահերը։ Վերջապես բանն այնտեղ է հասնում, վոր Բունդը պաշտոնապես անջատվում է Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատիայից, խախտելով կանոնադրությունը և IV Դումայի ընտրությունների ժամանակ միանալով լեհական նացիոնալիստներին, ընդդեմ լեհական ս.-դ.-յի։

Բունդը յերևի գտավ, վոր անջատվելը իր ինքնագործունեության ամենալավ ապահովությունն է։

Այդպիսով ուրեմն, կազմակերպչական «սահմանաբաժանման» «սկզբունքը» հասցրեց սեպարատիզմի կատարյալ անջատման։ Հին «Իսկրայի»(11) (Կայծ) հետ ֆեդերալիզմի մասին բանակռվելով, Բունդը միաժամանակ գրում եր.—«Իսկրան» ուզում է մեզ հավատացնել, վոր Ռուսաստանի ս.-դ. հետ ունեցած ֆեդերատիվ հարաբերությունները պետք է թուլացնեն նրանց մեջ յեղած կապերը։ Մենք չենք կարող հերքել այդ կարծիքը՝ մատնացույց անելով Ռուսաստանի պրակտիկայի վրա, այն պարզ պատճառով, վոր Ռուսաստանի ս.-դ. վորպես ֆեդերատիվ միավորումն գոյություն չունի։ Սակայն մենք կարող ենք հենվել ս.-դեմոկրատիայի չափազանց խրատական փորձի վրա Ավստրիայում, վորը, համաձայն 1897 թ. պարտայտագի վորոշման, ֆեդերատիվ բնույթ ստացավ[1]։

Այդ գրված եր 1902 թ.

Իսկ այժմ 1913 թիվն է։ Մենք այժմ ունենք և Ռուսական «պրակտիկա» և «Ավստրիայի սոց.-դեմոկրատիայի փորձը»։

---

1) Տես «К вопросу о нац. автономии» 1902 թ. եջ 17, հրատարակություն Բունդի։

Ի՞նչ են ասում նրանք։

Սկսենք «Ավստրիայի ս.-դ. չափազանց խրատական փորձից»։ Դեռ 1896 թվից առաջ Ավստրիայում գոյություն ուներ միասնական ս.-դ. կուսակցություն։ Այդ թվին չեխերն առաջին անգամ առանձին ներկայացուցչություն են պահանջում Լոնդոնի միջազգային կոնգրեսին և ստանում են այն։

1897 թվին, Վիեննայի պարտայտագին (Վիմբերգում) միասնական կուսակցությունը ձևականապես լիկվիդացիայի յե յենթարկվում և դրա փոխարեն հաստատվում է վեց ազգային ս.-դ. խմբերի ֆեդերատիվ միություն։ Այնուհետև այդ «խմբերը» փոխվում են ինքնուրույն կուսակցությունների։ Կուսակցությունները փոքր առ փոքր կտրում են փոխադարձ կապերը։ Կուսակցություններից հետո ցրվում է պարլամենտական-ֆրակցիան՝ գոյանում են ազգային «ակումբներ»։ Այնուհետև գալիս են միությունները, որ նույնպես բաժան-բաժան են լինում ըստ ազգությունների։ Բանը հասնում է նույնիսկ կոոպերատիվներին, որոնց բաժանման համար կոչ են անում բանվորներին չեխական սեպարատիստները[1])։ Մենք դեռ չենք խոսում այն մասին, որ սեպարատիստական ագիտացիան թուլացնում է բանվորների մեջ համերաշխության զգացմունքը, մղելով հաճախ նրանց դեպի շտրեյկբրեխերության ուղին։

Այդպես ուրեմն՝ «Ավստրիայի սոց.-դեմոկրատիայի» չափազանց խրատական փորձը խոսում է ընդդեմ Բունդի և հոգուտ հին «Իսկրայի»։ Ավստրիական կուսակցության մեջ ֆեդերալիզմը հասցրեց ամենատգեղ սեպարատիզմի, միասնական բանվորական շարժման քայքայման։

Մենք վերևը տեսանք, որ Ռուսաստանի «պրակտիկան» նույնն է ասում։ Բունդական սեպարատիստները,

---

[1]) Տես «Documente des Separatismus» խոսք՝ Բաշեկի բրոշյուրից, եջ 29։

ինչպես նաև չեխերինը, անջատվեցին ընդհանուր ռուսական սոցիալ-դեմոկրատիայից։ Ինչ վերաբերում է միություններին, բունդական միություններին, նրանք հենց սկզբից արդեն կազմակերպված էին ազգայնական սկզբունքներով, այսինքն կտրված էին ուրիշ ազգությունների բանվորներից։

Լիակատար մեկուսացումն, լիակատար անջատումն— ահա թե ինչ է ցույց տալիս ֆեդերալիզմի «ռուսական պրակտիկան»։

Զարմանալի չէ, վոր իրերի այդ դրությունն ազդում է բանվորների վրա, նրանց համերաշխության զգացմունքը թուլացնելով և բարքերը զեղծելով, ըստ վորում դա թափանցում է նաև Բունդի մեջ։ Մենք ինկատի ունենք հետզհետե ավելի հաճախ կրկնվող բաղխումները հրեական և լեհական բանվորների միջև՝ անգործության պատճառով։ Ահա թե ինչ ճառեր էին լսվում այդ առթիվ Բունդի 9-րդ կոֆերենցիային.—

...«Մենք մեզ նեղող լեհական բանվորների վրա նայում ենք, վորպես պոգրոմշչիկների, վորպես դեղինների վրա, չենք աջակցում և վիժեցնում ենք նրանց գործադուլները։ Յերկրորդ, նեղումին պատասխանում ենք նեղումով,—հրեա բանվորներին գործարաններում չընդունելուն, մենք պատասխանում ենք լեհ բանվորներին ձեռքի դազգահների մոտ թողնելով։ Յեթե այդ գործը մեր ձեռքը չվերցնենք, բանվորները ուրիշների յեսեվից կգնան»[1]). (ընդգծումը մերն է, Հ. Ս.)։

Բունդի կոնֆերենցիայում այսպես են խոսում համերաշխության մասին։

Այս «սահմանաբաժանման» և «մեկուսացման» մեջ ավելի հեռուն գնալ անկարելի յե։ Բունդը հասավ իր նպատակին.—նա այնպես է սահմանաբաժան անում զանա-

1) Տես «Отчет о IX конференции б.», եջ 19։

զան ազգությունների բանվորներին, վոր բանը հասնում է մինչև ծեծը, մինչև շարեյկբրեխերությունը։ Այլ կերպ անկարելի յե։ «Եթե մենք այդ գործը մեր ձեռքը չվերցնենք, բանվորներն ուրիշների հետևից կգնան»։

Բանվորական շարժման դեզորգանիզացիա, դեմորալիզացիա սոցիալ-դեմոկրատիայի շարքերում—ահա ուր է հանգնում բունդական ֆեդերալիզմը։

Այդպիսով, ազգային ավտոնոմիայի գաղափարը և այն մթնոլորտը, վոր ստեղծում է նա, ավելի փնասակար դուրս յեկավ Ռուսաստանում քան թե Ավստրիայում։

6. ԿՈՎԿԱՍՑԻՆԵՐ, ԼԻԿՎԻԴԱՏՈՐՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱՆ.

Վերև մենք խոսում եյինք կովկասյան սոցիալ-դեմոկրատների մի մասի յերերումների մասին, վորը չեր կարողացել դեմ կենալ նացիոնալիստական «ցավ»-ին։ Այդ յերերումները արտահայտվում եյին նրանում, վոր հիշյալ սոց.-դեմոկրատները—վորքան ել տարորինակ չթվա այդ—Բունդի հետքերով գնացին, հայտարարելով կուլտուրական-ազգային ավտոնոմիա։

Շրջանային ավտոնոմիա ամբողջ Կովկասի համար և կուլտուրական-ազգային ավտոնոմիա Կովկասի կազմի մեջ մտնող ազգությունների համար—այդպես են ձևակերպում իրենց պահանջներն այդ սոցիալ դեմոկրատները, վորոնք—ի դեպ ասած—հարում են ռուսական լիկվիդատորներին։

Լսենք նրանց ճանաչված լիդերին, վոչ այնքան անհայտ Ն.-ին.

«Բոլորին հայտնի յե, վոր Կովկասը խորապես տարբերվում է կենտրոնական նահանգներից թե իր ազգաբնակության ցեղական կազմով և թե տերրիտորիայով և գյուղատնտեսական կուլտուրայով։ Այդպիսի յերկրի եքսպլոատացիան և նյութական զարգացումը պահանջում են տե-

ղական գործիչները, տեղական առանձնահատկությունները գիտցողները, վորոնք ընտելացած են տեղական կլիմային ու կուլտուրային։ Անհրաժեշտ է, վորպեսզի տեղական տերրիտորիայի եքսպլոատացիային վերաբերող որենքները հենց տեղում հրատարակվեին և տեղական ուժերով ել գործադրվեին։ Հետևաբար, Կովկասյան ավտոնոմիայի կենտրոնական մարմնի ինքնավարությանը պետք է թողնել տեղական հարցերի վերաբերյալ որենքների հրատարակությունը։ Այդպիսով, Կովկասյան կենտրոնի ֆունկցիաները կայանում են այնպիսի որենքներ հրատարակելու մեջ, վորոնք հետապնդում են տեղական տերրիտորիայի տնտեսական շահագործման նպատակները, յերկրի նյութական բարգավաճման նպատակները»[1])։

Այդպես ուրեմն—Կովկասի շրջանային ավտոնոմիա։

Յեթե անտես առնենք Ն.-ի մի փոքր խառնաշփոթ պատճառաբանությունը, պետք է խոստովանել, վոր նրա յեզրակացությունը ուղիղ է։ Համապետական սահմանադրության շրջանակում գործող Կովկասի շրջանային ավտոնոմիան, իրոք, անհրաժեշտ է (մի բան, վոր Ն. ինքն ել չի ժխտում), ինկատի առնելով վերջինիս կազմի և կենցաղային պայմանների առանձնահատկությունները։ Այդ ընդունել է և Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատիան, վորը II համագումարին հայտարարել է «շրջանային ավտոնոմիա այն ծայրանահանգների համար, վորոնք իրենց կենցաղային պայմաններով և ազգաբնակչության կազմով տարբերվում են ռուսական շրջաններից»։

Այդ կետը 2-րդ համագումարի քննության դնելով, Մարտովն(12)այդ պատճառաբանում եր նրանով, վոր «Ռուսաստանի ահագին տարածությունը և մեր կենտրոնացած վարչության փորձը մեզ առիթ են տալիս անհրաժեշտ և

---

1) Տես վրացերեն որաթերթը «Զվեն ի Ցխովրեբա» (Մեր Կյանքը). 1912 թ. № 12։

նպատակահարմար համարելու շրջանային ավտոնոմիայի գոյությունն այնպիսի խոշոր միավորների համար, ինչպիսին են Ֆինլանդիան, Լեհաստանը, Լիտվան և Կովկասը»։

Բայց Ն. ավելի հեռուն է գնում։ Նրա կարծիքով՝ Կովկասի շրջանային ավտոնոմիան «հարցի միայն մի կողմն» է գրավում։

«Մինչև այժմ մենք խոսում էինք միայն տեղական կյանքի նյութական զարգացման մասին։ Սակայն յերկրի տնտեսական զարգացմանը նպաստում է վոչ միայն տնտեսական գործունեությունն, այլ և հոգևոր, կուլտուրականը»... «կուլտուրապես ուժեղ ազգությունն ուժեղ է նաև տնտեսական սֆերայում»... «Բայց ազգությունների կուլտուրական զարգացումը հնարավոր է միայն տվյալ ազգի լեզվով»... «Ուստի և այն բոլոր հարցերը, վորոնք կապված են մայրենի լեզվի հետ, կուլտուրա-ազգային հարցեր են։ Այդպես են՝ լուսավորության, դատավարության, յեկեղեցու, գրականության, գեղարվեստի, գիտության, թատրոնի և այլն հարցերը։ Յեթե յերկրի նյութական զարգացման գործը միացնում է ազգություններին, ապա ազգային-կուլտուրային գործերը բաժանում են նրանց, առանձին ասպարեզների վրա դնելով նրանցից յուրաքանչյուրին։ Առաջին տեսակի գործունեությունը կապված է վորոշ տերրիտորիայի հետ»... «Ուրիշ բան են՝ կուլտուրա-ազգային գործերը։ Նրանք կապված են վոչ թե վորոշ տերրիտորիայի հետ, այլ վորոշ ազգության գոյության հետ։ Վրացերեն լեզվի վիճակը միատեսակ հետաքրքրում է վրացուն, վորտեղ էլ նա ապրելիս լինի։ Մեծ տգիտություն կլիներ կարծել, վոր վրացական կուլտուրան վերաբերում է լոկ Վրաստանում ապրող վրացիներին։ Վերցնենք, որինակ, հայոց յեկեղեցին։ Նրա գործերը վարելուն մասնակից են զանազան տեղերի

և պետությունների հայերը։ Այստեղ տերրիտորիան վոչ մի դեր չի խաղում։ Կամ, որինակ, վրացական մուզեյ ստեղծելու հարցում շահագրգռված են թե թիֆլիզեցի վրացին և թե բագվեցի, քութայիսեցի, պետերբուրգցի և այլն վրացիները։ Նշանակում է, բոլոր կուլտուրա-ազգային գործերի ղեկավարությունը պետք է վերապահել հենց իրենց՝ շահագրգռված ազգություններին։ Մենք հայտարարում ենք կովկասյան ազգությունների համար կուլտուրական-ազգային ավտոնոմիա»[1])։

Կարճ ասած, վորովհետև կուլտուրան տերրիտորիա չէ, իսկ տերրիտորիան—կուլտուրա չէ, ապա անհրաժեշտ է կուլտուրական-ազգային ավտոնոմիա։ Այս է բոլորը, ինչ վոր կարող է ասել Ն. հոգուտ վերջինիս։

Մենք այստեղ նորից չենք շոշափի ազգային-կուլտուրական ավտոնոմիան ընդհանրապես. վերև մենք արդեն խոսել ենք նրա բացասական բնույթի մասին։ Մենք կցանկանայինք լոկ նկատել, վոր առհասարակ անպետք լինելով կուլտուրա-ազգային ավտոնոմիան, բացի այդ, անմիտ և խելառ է թվում Կովկասյան պայմանների տեսակետից։

Ցեվ ահա թե ինչու։

Կուլտուրական-ազգային ավտոնոմիան յենթադրում է շատ թե քիչ զարգացած ազգություններ, զարգացած կուլտուրայով, գրականությամբ։ Առանց այդ պայմանների այդ ավտոնոմիան կորցնում է ամեն մի միտք, փոխվում է անհեթեթության։ Իսկ Կովկասում կան մի շարք ազգություններ՝ նախնական կուլտուրայով, առանձին լեզվով, բայց առանց մայրենի գրականության, և այն ել անցողական ազգություններ, մասամբ՝ ձուլվող, մասամբ՝ ավելի զարգացող։ Ի՞նչպես հարմարեցնել նրանց կուլտուրական-ազգային ավտոնոմիան։ Ի՞նչ պետք է անել այդ-

1) Տես „Զվեն Ցխովրեբա", 1912 թ. № 12.

պիսի ազգությունների հետ։ Ի՞նչպես «կազմակերպել» նրանց վորպես առանձին կուլտուրա-ազգային միություններ, վորն, անշուշտ, յենթադրվում է կուլտուրա-ազգային ավտոնոմիայով։

Ի՞նչ պետք է անել մինգրելցիների, աբխազցիների, աջարցիների, սվանների, լեզգիների հետ և այլն, վոր խոսում են տարբեր լեզուներով, բայց սեփական գրականություն չունեն։ Վո՞ր ազգություններին վերագրել նրանց։ Հնարավո՞ր է արդյոք «կազմակերպել» նրանց վորպես ազգային միություններ։ Վո՞ր «կուլտուրական գործերի» շուրջը կազմակերպել նրանց։

Ի՞նչ անել ոսերի հետ, վորոնցից Կովկասյան ոսերը ձուլվում են (թեև դեռ վոչ ամենևին) վրացիների հետ, իսկ առաջավոր Կովկասի ոսերը մասամբ ձուլվում են ռուսների հետ, մասամբ զարգանալով առաջ գնում, ստեղծելով սեփական գրականություն։ Ի՞նչպես դրանց «կազմակերպել», վորպես միասնական ազգային միություն։

Ազգային վո՞ր միության վերագրել աջարցիներին, վոր խոսում են վրացերեն լեզվով, բայց ապրում են տաճկական կուլտուրայով և դավանում են իսլամը։ Զը «կազմակերպե՞լ» արդյոք նրանց վրացիներից առանձին, կրոնական գործերի հիմքի վրա։ Իսկ կոբուլետցինե՞ը, իսկ ինգուշնե՞ը, իսկ ինգուլոյցնե՞ը։

Այդ ի՞նչ ավտոնոմիա յե, վոր մի շարք ազգություններ ցանկից դուրս է թողնում։

Սակայն յենթադրենք անյենթադրելին, վոր պարոն Ն.-ի ազգային-կուլտուրական ավտոնոմիան իրականացավ։ Ինչ հետևանքների կհասցնի նա։ Վերցնենք, որինակ, Անդրկովկասյան թուրքերին, իրենց գրագիտության մինիմալ տոկոսով, իրենց դպրոցներով, վորոնց գլուխ են կանգնած ամենագոր մոլլաները՝ կրոնական հոգով թափանցված իրենց կուլտուրայով... Դժվար չե հասկանալ,

վոր կազմակերպել նրանց վորպես կուլտուրա-ազգային միություն—այդ նշանակում է նրանց գլուխ կանգնեցնել մոլլաներին, այդ նշանակում է հանձնել նրանց ռեակցիոներ մոլլաներին լափելու համար, այդ նշանակում է նոր բաստիոն(13) ստեղծել թուրքական մասսաների հոգևոր ստրկության համար՝ վերջիններիս ամենավոխերիմ թշնամիների կողմից... Այդ յերբվանի՞ց է, վոր սոցիալ-դեմոկրատները ռեակցիոներների ջրաղացի վրա ջուր են ածում։

Սահմանածիր անել անդրկովկասյան թուրքերին, վորպես կուլտուրական-ազգային միություն, վոր մասսաներին ստրուկ է դարձնում ամենավոխերիմ ռեակցիոներների ձեռքին—մի՞թե ավելի լավ բան չեյին կարող «հայտարարել» կովկասյան լիկվիդատորները...

Վոչ, դա ազգային հարցի լուծումը չե։

Ազգային հարցը Կովկասում կարող է լուծվել ստանալ միմիայն հեռամնաց ազգությունների յեվ ժողովուրդների բարձր կուլտուրայի ընդհանուր հոսանքում գրավելու իմաստով։ Միայն այդպիսի լուծումն կարող է հառաջադեմ և ընդունելի համարվել սոցիալ-դեմոկրատիայի համար։ Կովկասի շրջանային ավտոնոմիան հենց նրա համար է ընդունելի, վոր նա գրավում է հետամնաց ազգերին ընդհանուր կուլտուրական զարգացման հոսանքում, նա ոգնում է նրանց դուրս գալու իրենց մանր-ազգայնական կղզիացման կճեպից, նա մղում է նրանց դեպի առաջ և հեշտացնում է նրանց համար բարձր կուլտուրայի բարիքների ճաշակումը։ Այնինչ կուլտուրական-ազգային ավտոնոմիան ներգործում է ուղղակի-հակառակ ուղղությամբ, վորովհետև նա գոցում է ազգություններին հին կճեպների մեջ, կապում է նրանց կուլտուրայի ստորին աստիճանների վրա և արգելք լինում հասնելու կուլտուրայի բարձր աստիճաններին։

Հենց դրանով ազգային ավտոնոմիան անդամալուծում է շրջանային ավտոնոմիայի դրական կողմերը, գերադասելի է հավասարեցնում նրան։

Հենց այդ պատճառով էլ անպետք է ավտոնոմիայի նաև այն խառն տիպը, բաղկացած ազգային-կուլտուրականի և շրջանայինի խառնուրդից, վոր առաջարկում է Ն.։ Այդ հակաբնական միավորումը գործը չի լավացնում, վորովհետև նա, բացի նրանից, վոր յետ է պահում հետամնաց ազգությունների զարգացումը, այլև ազգային միություններ կազմած ազգությունների ընդհարման ասպարեզ է դարձնում շրջանային ավտոնոմիան։

Այդպիսով, ընդհանրապես անպետք, կուլտուրական-ազգային ավտոնոմիան Կովկասում կփոխվեր մի անմիտ ռեակցիոն հերյուրանքի։

Կանե՞ն արդյոք Կովկասյան լիկվիդատորները «մի քայլ առաջ» և կհետևե՞ն Բունդին՝ նրա կազմակերպչական հարցում—այդ ցույց կտա ապագան։ Մինչև այժմ սոցիալ-դեմոկրատիայի պատմության մեջ, ֆեդերալիզմը կազմակերպության մեջ միշտ նախընթացել է ազգային ավտոնոմիային՝ ծրագրի մեջ։ Ավստրիական ս.-դ. դեռ 1897 թ. անց ելին կացնում կազմակերպչական ֆեդերալիզմը և միայն յերկու տարուց հետո (1899 թ.) ընդունեցին ազգային ավտոնոմիան։ Բունդականները առաջին անգամ պարզ խոսեցին ազգային ավտոնոմիայի մասին 1901 թ., մինչդեռ կազմակերպչական ֆեդերալիզմը գործադրում ելին արդեն 1897 թվից։

Կովկասյան լիկվիդատորները գործն սկսեցին վերջից, ազգային ավտոնոմիայից։ Յեթե նրանք ավելի հեռու գնան Բունդի քայլերով, նրանք ստիպված կլինեն նախորոք քանդել ներկա ամբողջ կազմակերպչական շենքը, վոր կառուցված է դեռ 90-ական թվականների վերջը՝ ինտերնացիոնալ սկզբունքների վրա։

Սակայն վորքան ավելի հեշտ եր ընդունել բանվորների համար դեռ անհասկանալի ազգային ավտոնոմիան, այնքան ավելի դժվար կլինի քանդել տարիներով կառուցված և Կովկասի բոլոր ազգությունների բանվորների փայփայած ու սնած շենքը։ Բավական է միայն, վոր ձեռնարկեն այդ հերոստրատյան հերյուրանքին, վորպեսզի բանվորներն աչքերը բանան և ըմբռնեն կուլտուրական-ազգային ինքնավարության նացիոնալիստական եյությունը։

Յեթե ազգային հարցը կովկասցիները վճռում են սովորական միջոցով, բանավոր վիճաբանությունների և գրական դիսկուսիայի ճանապարհով, դրա հակառակ՝ լիկվիդատորների համառուսական կոնֆերենցիան բոլորովին արտասովոր միջոց է հնարել դրա համար։ Հեշտ և պարզ միջոց։ Լսեցեք։

«Լսելով կովկասյան դելեգացիայի հաղորդումը... ազգային-կուլտուրական ավտոնոմիայի պահանջը դնելու անհրաժեշտության մասին, կոնֆերենցիան, ըստ եյության կարծիք չհայտնելով այդ պահանջի նկատմամբ, հաստատում է, վոր ծրագրի կետի այդ տեսակ մեկնաբանությունը, վորի հիման վրա յուրաքանչյուր ազգություն ինքնորոշման իրավունք ունի, չի հակասում ծրագրի ճշգրիտ իմաստին»։

Այդպես ուրեմն—«այդ հարցի մասին ըստ եյության կարծիք չհայտնել», իսկ հետո «հաստատել»։ Որիգինալ մեթոդ է...

Իսկ ի՞նչ է հաստատում այդ որիգինալ կոնֆերենցիան։

Այն՝ վոր «ազգային-կուլտուրական ավտոնոմիայի պահանջը» չի հակասում ծրագրի ճշգրիտ իմաստին, վորը ինքնորոշման իրավունք է տալիս ազգին։

Քննենք այդ դրությունը։

Ինքնորոշման վերաբերյալ կետը խոսում է ազգերի իրավունքների մասին։ Այդ կետի հիման վրա ազգերը վոչ միայն ավտոնոմիայի, այլև անջատվելու իրավունք ունեն։ Խոսքը քաղաքական ինքնորոշման մասին է։ Ո՞ւմն էին ցանկանում խաբել լիկվիդատորները, յերբ աշխատում էին խոտորնակի մեկնաբանել ամբողջ միջազգային սոցիալ-դեմոկրատիայի մեջ վաղուց սահմանված՝ ազգերի քաղաքական ինքնորոշման իրավունքը։

Կամ, թերևս, լիկվիդատորները կսկսեն խույս տալ և կպաշտպանվեն սոֆիզմով—իբր թե կուլտուրական-ազգային ավտոնոմիան «չի հակասում» ազգերի իրավունքին։ Այդ նշանակում է, վոր յեթե տվյալ պետության բոլոր ազգերը համաձայնվեն կուլտուրական ազգային ավտոնոմիայի սկզբունքների հիման վրա ապրել, ապա նրանք լիակատար իրավունք ունեն այդ անելու և վոչ վոք չի կարող ընդի կերպով նրանց վրին փաթաթել քաղաքական կյանքի մի այլ ձև։ Թե նոր և թե խելացի։ Մնում է միայն ավելացնել, վոր, առհասարակ, ազգերն իրավունք ունեն իրենց մոտ վերացնելու կոնստիտուցիան, դա փոխարինել կամայականության սիստեմով, վերադառնալ հին կարգերին, քանի վոր իրենք ազգերն և միմիայն ազգերն ունեն իրավունք իրենց սեփական վիճակը վորոշելու։ Կրկնում ենք, այդ իմաստով՝ վո՛չ կուլտուրական-ազգային ավտոնոմիան, վոչ ել վորևե ազգային-ռեակցիոներություն «չի հակասում» ազգի իրավունքներին։

Ա՞յս եր ուզում ասել արդյոք հարգելի կոնֆերենցիան։

Վո՛չ, այդ չեր ուզում ասել։ Նա ուղղակի ասում է, վոր կուլտուրական-ազգային ավտոնոմիան «չի հակասում» վոչ թե ազգերի իրավունքներին, այլ և ծրագրի «ճշգրիտ իմաստին»։ Խոսքը ծրագրի մասին է, և վոչ թե ազգերի իրավունքների մասին։

Եվ այդ հասկանալի է։ Եթե վորևե ազգություն դիմում աներ լիկվիդատորների կոնֆերենցիային, ապա կոնֆերենցիան ուղղակի կհաստատեր, վոր ազգը իրավունք ունի կուլտուրական-ազգային ավտոնոմիա ստանալու։ Սակայն կոնֆերենցիային դիմում արեց վոչ թե ազգությունը, այլ կովկասյան սոցիալ-դեմոկրատների «պատգամավորությունը», ճշմարիտ է, վատ սոցիալ-դեմոկրատների, բայց այնուամենայնիվ սոցիալ-դեմոկրատների, և նրանք հարց էլին տալիս վոչ թե ազգերի իրավունքի մասին, այլ այն մասին, թե կուլտուրական-ազգային ավտոնոմիան չի՞ հակասում արդյոք սոցիալ-դեմոկրատիայի սկզբունքներին, «չի՞ հակասում» արդյոք սոցիալ-դեմոկրատիայի ծրագրի «ճշգրիտ իմաստին»...

Այդպես, ուրեմն, ազգի իրավունքներն և սոցիալ-դեմոկրատիայի ծրագրի «ճշգրիտ իմաստը» միևնույն բաները չեն։

Անշուշտ, կան և այնպիսի պահանջներ, վորոնք չհակասելով ազգերի իրավունքներին, կարող են հակասել ծրագրի «ճշգրիտ իմաստին»։

Որինակ։ Սոցիալ-դեմոկրատիայի ծրագրում կա մի կետ՝ դավանանքի ազատության մասին։ Այդ կետի հիման վրա մարդկանց ամենայն մի խմբավորումն իրավունք ունի դավանելու ինչ կրոն վոր ցանկանա—կաթոլիկություն, ուղղափառություն և այլն։ Սոցիալ-դեմոկրատիան պայքարելու է կրոնական ամեն տեսակ ռեպրեսիաների դեմ, ուղղափառների, կաթոլիկների, բողոքականների նկատմամբ գործ դրած հալածանքների դեմ։ Նշանակո՞ւմ է դա արդյոք, վոր կաթոլիկությունը, բողոքականությունը և այլն, ծրագրի «ճշգրիտ իմաստին չեն հակասում»։ Վոչ, չի նշանակում։ Սոցիալ-դեմոկրատիան միշտ բողոքելու է կաթոլիկության, բողոքականության նկատմամբ թույլ տված հալածանքների դեմ. նա միշտ պաշտպանելու է ազգերի իրավունքը ազատ դավանելու՝ ինչ կրոն վոր ցան-

կանան, բայց միևնույն ժամանակ, յելնելով պրոլետարիատի ուղիղ ըմբռնած շահերից, նա ագիտացիա յե մղելու թե՛ կաթոլիկության, թե՛ բողոքականության և թե՛ ուղղափառության դեմ, վորպեսզի նպաստի սոցիալիստական աշխարհայացքի հաղթանակին։

Յեվ նա անելու յե այդ նրա համար, վոր բողոքականությունը, կաթոլիկությունը, ուղղափառությունը և այլն, անկասկած «հակասում են» ծրագրի «ճշգրիտ իմաստին», այսինքն պրոլետարիատի ուղիղ ըմբռնած շահերին։

Նույնը հարկավոր է ասել նաև ինքնորոշման մասին։ Ազգերն իրավունք ունեն ապրելու իրենց ցանկության համեմատ. նրանք իրավունք ունեն պահպանելու իրենց ազգային ամեն մի հիմնարկությունը, թե՛ ֆեոդալական և թե՛ ոգտակար, և վոչ վոք չի կարող (իրավունք չունի) բռնի կերպով խառնվելու ազգի կյանքի մեջ։ Սակայն այդ դեռ չի նշանակում, վոր սոցիալ-դեմոկրատիան պայքարելու չե, ագիտացիա չի մղելու ազգերի ֆեոդալական հիմնարկությունների դեմ, ազգերի աննպատակահարմար պահանջների դեմ։ Ընդհակառակը, սոցիալ-դեմոկրատիան պարտավոր է այդ տեսակ ագիտացիա մղելու և ազդեցություն գործադրելու ազգի կամքի վրա, վորպեսզի ազգերն ապրեն այն ձևով, վորը ամենից համապատասխան է պրոլետարիատի շահերին։

Ուստի և, հենց դրա համար է, վոր նա պայքարելով հոգուտ ազգերի ինքնորոշման իրավունքի, միևնույն ժամանակ ագիտացիա յե մղելու նաև, որինակ, թե թուրքերի անջատման դեմ, թե կովկասյան ազգերի կուլտուրական-ազգային ավտոնոմիայի դեմ, վորովհետև թե մեկը և թե մյուսը, չհակասելով այդ ազգերի իրավունքներին, այնուամենայնիվ հակասում է ծրագրի «ճշգրիտ իմաստին», այսինքն՝ կովկասյան պրոլետարիատի շահերին։

Պարզ է, վոր «ազգերի իրավունքն» և ծրագրի «ճըշ-

գրիտ իմաստը»—յերկու բոլորովին տարբեր մակարդակներ են։ Մինչդեռ ծրագրի «ճշգրիտ իմաստը» արտահայտում է պրոլետարիատի շահերը, վոր գիտականապես ձեվակերպված են վերջինիս ծրագրում,—ազգերի իրավունքները կարող են արտահայտել ամեն մի դասակարգի շահերը—բուրժուազիայի, արիստոկրատիայի, հոգևորականության և այլն, նայած այդ դասակարգերի ուժին և ազդեցության։ Այնտեղ կան մարքսիստի պարտականություններ, այստեղ տարբեր դասակարգերից կազմված ազգերի իրավունքներ։ Ազգերի իրավունքներն և սոցիալ-դեմոկրատիզմի սկզբունքները նույնպես կարող են «հակասել» կամ «չհակասել» իրար, ինչպես, որինակ, Խեոպսի պիրամիդը(14)—լիկվիդատորների հռչակավոր կոնֆերենցիային։ Երանք պարզապես անհամեմատելի յեն։

Բայց դրանից հետևում է, վոր հարգելի կոնֆերենցիան ամենաաններելի կերպով շփոթել է յերկու բոլորովին տարբեր բաներ։ Ստացվել է վոչ թե ազգային հարցի լուծումն, այլ անմիտ բան, վորի շնորհիվ ազգերի իրավունքները և սոցիալ-դեմոկրատիայի սկզբունքները իրար «չեն հակասում»,—հետևաբար՝ ազգության ամեն մի պահանջը կարելի յե հարմարեցնել պրոլետարիատի շահերին, հետևաբար՝ ինքնորոշման ձգտող ազգերի վոչ մի պահանջ «չի հակասելու ծրագրի «ճշգրիտ իմաստին»...

Այս անմտության հիման վրա յե, վոր կայացել է լիկվիդատորների կոնֆերենցիայի այս որից ի վեր հռչակավոր վճիռը, վորի հիման վրա ազգային-կուլտուրական ավտոնոմիայի պահանջը ծրագրի «ճշգրիտ իմաստին չի հակասում»։

Բայց լիկվիդատորների կոնֆերենցիան խախտում է վո՛չ միայն լոգիկայի որենքները։

Նա ամենավորոշ կերպով խախտում է ծրագրի «ճշգրիտ իմաստը», վորովհետև հայտնի յե, վոր ծրագիրն

ընդունող յերկրորդ համագումարը, վճռականապես մերժեց կուլտուրական-ազգային ավտոնոմիան։ Ահա թե այդ առթիվ ինչ եր ասվում այդ համագումարում։

«Գոյլդբլատ (բունդական).—Յես անհրաժեշտ եմ համարում հատուկ հիմնարկությունների ստեղծումն, վորոնք կապահովեին ազգությունների կուլտուրական զարգացման ազատությունը, ուստի և առաջարկում եմ § 8-ին ավելացնել «յեվ այնպիսի հիմնարկությունների ստեղծումն, վորոնք նրանց ապահովեին կուլտուրական զարգացման ազատությունը» (սա, ինչպես հայտնի յե, կուլտուրական ազգային ավտոնոմիայի բունդական ձևակերպումն է, Հ. Ս.)։

«Մարտինովը մատնացույց է անում նրա վրա, վոր ընդհանուր հիմնարկությունները այնպես պետք է կազմված լինեն, վորպեսզի ապահովեն նաև մասնավոր շահերը։ Հնարավոր չե հիմնել վոչ մի հատուկ հիմնարկություն, վոր ապահովեր ազգությունների կուլտուրական զարգացման ազատությունը»։

«Յեգորով.—Ազգության վերաբերյալ հարցում մենք կարող ենք ընդունել միմիայն բացասական առաջարկներ, այսինքն՝ մենք դեմ ենք ազգությունների ամեն տեսակ նեղելուն։ Սակայն մեզ, սոցիալ-դեմոկրատներիս համար, միևնույն է թե այս կամ այն ազգությունը, վորպես այդպիսին, զարգանո՞ւմ է, թե վոչ։ Դա տարրերային պրոցեսի գործ է»։

«Կոյլցով.— Բունդի պատգամավորները միշտ նեղանում են, յերբ խոսքը վերաբերում է նրանց նացիոնալիզմին. մինչդեռ այն շոկումը, վոր արեց Բունդի պատգամավորը, զուտ նացիոնալիստական քարակտեր է կրում։ Մեզնից պահանջում են զուտ հարձակողական միջոցներ՝ նեցուկ լինելու համար այն ազգություններին, վորոնք մարվում են»։

...«Վերջիվերջո Գոյդրլաֆի շտկումը մերժվում է մեծամասնությամբ, ընդդեմ յերեքի»:

Այդպես, ուրեմն, պարզ է, որ լիկվիդատորների կոնֆերենցիան ծրագրի «ճշգրիտ իմաստի դեմ գնաց»։ Նա խախտեց ծրագիրը։

Այժմ լիկվիդատորներն աշխատում են արդարանալ, հենվելով Ստոկհոլմի համագումարի վրա, որը, իբր թե, անկցիա յե տվել կուլտուրական-ազգային ավտոնոմիայի։ Այսպես, որինակ, Վլ. Կոսովսկին գրում է.—

«Ինչպես հայտնի յե, Ստոկհոլմի համագումարի ընդունած պայմանագրի հիման վրա Բունդին իրավունք եր տրված պահպանելու իր ազգային ծրագիրը (մինչև որ ազգային հարցը կվճռվեր համակուսակցական համագումարում)։ Այդ համագումարն ընդունեց, որ ազգային կուլտուրական ավտոնոմիան, համենայն դեպս, չի հակասում համակուսակցական ծրագրին[1])»։

Այնինչ, Ստոկհոլմի համագումարը մտքով էլ չի անցրել՝ Բունդի ծրագրին սանկցիա տալու—նա լոկ համաձայնվել է միառժամանակ հարցը առկախ թողնել։ Բայց Կոսովսկին արիություն չի ունեցել ամբողջ ճշմարտությունն ասելու։ Սակայն փաստերն իրենք են վկայում իրենց մասին։ Ահա փաստերը—

«Առաջարկվում է Գալինի շտկումը.—«ազգային ծրագրի հարցը բաց է մնում, ինկատի առնելով, որ համագումարը չի քննել այն». (թեր—50 ձայն, դեմ—32 ձայն)։

«Մի ձայն.—Ի՞նչ է նշանակում բաց է մնում»։

«Նախագահ.—Յեթե մենք ասում ենք, որ ազգային հարցը բաց է մնում, այդ նշանակում է, որ Բունդը կարող է պահպանել իր վճիռն այդ հարցի վերաբերմամբ, մինչև հետագա համագումարը[2])»։

---

[1]) Տես «Наша Заря», 1912 թ. № 9—10. եջ 120.

[2]) Տես «Наше Слово» № 8, 1906 թ. եջ 53.

Ինչպես տեսնում եք, համագումարը նույնիսկ «չի քննել» Բունդի ծրագիրը ազգային հարցի մասին—նա ուղղակի «առկախ է թողել» այն, թողնելով վոր Բունդը ինքը վճռի իր ծրագրի վիճակը մինչև հետևյալ համագումարը։ Այլ խոսքերով, Ստոկհոլմի համագումարը հարցից խուսափել է, առանց վորևե գնահատություն տալու կուլտուրական-ազգային ավտոնոմիային։

Այն ինչ, լիկվիդատորների կոնֆերենցիան ամենավորոշակի կերպով գնահատում է հարցը, ընդունելի յե համարում կուլտուրական-ազգային ավտոնոմիան և սանկցիա է տալիս նրան կուսակցության ծրագրի անունով։

Տարբերությունն աչքի յե զարնում։

Այդպիսով, լիկվիդատորների կոնֆերենցիան, չնայած ամեն տեսակ խարդախությունների, վոչ մի քայլ առաջ չտարավ ազգային հարցը։

Բունդի և կովկասյան ազգային-լիկվիդատորների հանդեպ ստորաքարշություն,—ահա այն բոլորը, ինչին նա ընդունակ գտնվեց։

7. ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ.

Մեզ մնում է նկատել ազգային հարցի գրական լուծումը։

Մենք յելնում ենք նրանից, վոր հարցը կարելի յե լուծել՝ դա անքակտելիորեն կապելով այն մոմենտի հետ, վոր ապրում է Ռուսաստանը։

Ռուսաստանն ապրում է անցողական շրջան, յերբ «նորմալ», «սահմանադրական» կյանքը դեռ ևս չի հաստատվել, յերբ կրիզիսը դեռ չի վորոշվել։

Դրանից բղխում է այն շարժումը, ներկա և ապագա շարժումը, վորը իրեն նույն նպատակներն է դնում, ինչ

նպատակները վոր դնում եր առաջին վերելքի տարիներին (1905 թ.)։

Այդ շարժման հետ կապելով, պետք է քննել և ազգային հարցը։

Այդպես, ուրեմն, յերկրի լիակատար դեմոկրատիզացիա—վորպես հիմք և պայման՝ ազգային հարցի լուծման։

Հարցի լուծման ժամանակ պետք է հաշվի առնել վոչ միայն ներքին, այլև արտաքին դրությունը։ Ռուսաստանը գտնվում է Յեվրոպայի և Ասիայի միջև, Ավստրիայի և Չինաստանի միջև։

Իմպերիալիզմի աճումը Յեվրոպայում—պատահական չե։ Յեվրոպան կապիտալի համար սկսում է նեղ դառնալ և սա ձգտում է դեպի ոտար յերկրներ՝ նոր շուկաներ, արժան բանվորներ, նոր ասպարեզներ վնտռելով իր համար։ Բայց դա առաջ է բերում արտաքին բարդություններ և պատերազմ։

Միանգամայն հնարավոր է արտաքին և ներքին կոնյունկտուրների այնպիսի հարակցություն, յերբ Ռուսաստանի այս կամ այն ազդությունը կարևոր կհամարի իր անկախության հարցը բարձրացնել և վճռել։ Յեվ, իհարկե, մարքսիստների գործը չի լինի այդպիսի դեպքերում խոչընդոտ հանդիսանալ։

Իսկ դրանից հետևում է, վոր ռուսական մարքսիստները չեն կարող զոհանալ առանց ազգերի ինքնորոշման իրավունքի։

Այդպես, ուրեմն, ինքնորոշման իրավունքը անհրաժեշտ կետ է՝ ազգային հարցը լուծելու համար։

Այնուհետև։ Ի՞նչ պետք է անել այն ազգերի հետ, վորոնք այս կամ այն պատճառներով կգերադասեն ամբողջի շրջանակում մնալ։

Մենք տեսանք, վոր կուլտուրական-ազգային ավտոնոմիան անպետք է։

Նախ՝ նա արհեստական է և կենսազուրկ, վորովհետև նա ձգտում է արհեստական կերպով հավաքել մի ազգության մեջ այն մարդկանց, վորոնց՝ կյանքը, իսկական կյանքը անջատում է և շպրտում պետության զանազան կողմերը։

Յերկրորդ՝ նա մղում է դեպի նացիոնալիզմը, վորովհետև նա տանում է դեպի մարդկանց ըստ ազգային կուրիաների «սահմանաբաժանման» տեսակետը, «ազգային առանձնահատկությունների» «պահպանման» և մշակման տեսակետը,—մի բան, վոր ամենևին չի սազում սոցիալ-դեմոկրատներին։

Պատահական չե, վոր Մորավիայի սեպարատիստները ռայխստագում, անջատվելով գերմանական ս.-դ. պատգամավորներից, միացան մորավիական բուրժուական պատգամավորների հետ և կազմեցին, այսպես ասած, մորավիական «կոլո»։

Պատահական չե և այն, վոր ռուսական սեպարատիստները Բունդից նացիոնալիզմի մեջ խրվեցին, փառաբանելով «շաբաթն» ու «ժարգոնը»։ Դումայում դեռ բունդական պատգամավորներ չկան, սակայն Բունդի շրջակայքում գոյություն ունի հրեական կղերական-ռեակցիոներ համայնք, վորի «ղեկավարող հիմնարկությունների» մեջ Բունդն, առայժմ, հրեական բանվորների և բուրժուաների «աշնայությունն» է սարքում [1])։ Կուլտուրական-ազգային ավտոնոմիայի լոգիկան արդեն այդպես է։

Այդպես, ուրեմն, ազգային ավտոնոմիան հարցը չի լուծում։

Իսկ ո՞ւր է յելքը։

Միակ ուղիղ լուծումը—շրջանային ավտոնոմիան է այնպիսի վորոշված միավորների համար, ինչպիսին են Լեհաստանը, Լիտվան, Ուկրաինան, Կովկասը և այն։

---

[1]) Отчет «VIII конф. Бунда», համայնքի վերաբերյալ ռեզոլյուցիայի վերջին մասը։

Շրջանային ավտոնոմիայի առավելությունը նախ և առաջ նրանումն է, որ այդ դեպքում դուք գործ ունեք ոչ թե առանց տերրիտորիայի ֆիկցիայի հետ, այլ որոշ տերրիտորիայի վրա ապրող որոշ ազգաբնակչության հետ։

Բացի դրանից, նա չի սահմանաբաժանում մարդկանց ըստ ազգությունների, նա չի ամրապնդում ազգային պատնեշները,—այլ ընդհակառակը, նա միայն քանդում է այդ պատնեշները և ազգաբնակչությունը միավորում է այն նպատակով, որպեսզի այլ տեսակի սահմանաբաժանման ուղի բանա—դասակարգային սահմանաբաժանման։

Վերջապես, նա հնարավորություն է տալիս ամենալավ կերպով ոգտագործելու շրջանի բնական հարստությունները և զարգացնելու արտադրիչ ուժերը, առանց կենդանի վճռին սպասելու—ֆունկցիաներ, որ հատուկ չեն կուլտուրական-ազգային ավտոնոմիային։

Այդպես, ուրեմն—*շրջանային ավտոնոմիան ազգային հարցի լուծման անհրաժեշտ կետերից մեկն է։*

Կասկած չկա, որ շրջաններից և ոչ մեկը ազգային տեսակետից միապաղաղ չեն, որովհետև նրանցից ամեն մեկի մեջ ազգային փոքրամասնություններ կան ներարկված։ Այդպես են հրեյները՝ Լեհաստանում, լատիշները՝ Լիտվայում, ռուսները՝ Կովկասում, լեհերը՝ Ուկրայինայում և այլն։ Ուստի և կարելի է յերկյուղ կրել, որ փոքրամասնությունները կեղեքվելու են ազգային մեծամասնությունների կողմից։ Սակայն, յերկյուղն իրավացի կլիներ միայն այն դեպքում, յեթե յերկրում մնա հին հասարակակարգը։ Յեթե յերկրում լրիվ դեմոկրատիզմ տիրեր—յերկյուղը ոչ մի հիմք չեր ունենա։

Առաջարկում են՝ ցրված փոքրամասնություններից միասնական ազգային դաշինք կազմել։ Սակայն փոքրամասնությունները կարիք ունեն ոչ թե արհեստական դաշինքի, այլ իրական իրավունքների՝ իրենց բնակած տե-

դերում։ Ի՞նչ կարող է տալ այդպիսի դաշինքն առանց կատարյալ դեմոկրատիզացիայի։ Կամ ի՞նչ կարիք կա ազգային դաշինքի՝ կատարյալ դեմոկրատիզացիայի դեպքում։

Ի՞նչն է առանձնապես վրդովում ազգային փոքրամասնություններին։

Փոքրամասնությունը դժգոհ է վոչ թե նրանից, վոր ազգային դաշինք չկա, այլ նրանից, վոր նա մայրենի լեզու բանացնելու իրավունք չունի։ Իրավունք տվեք նրան իր մայրենի լեզվով ոգտվելու,—և դժգոհությունն ինքն իրեն կանցնի։

Փոքրամասնությունը դժգոհ է վոչ թե նրա համար, վոր արհեստական դաշինք չկա, այլ նրա համար, վոր նա մայրենի դպրոցներ չունի։ Տվեք նրան այդպիսի դպրոցներ,—և դժգոհության վոչ մի հիմք չի լինի։

Փոքրամասնությունը դժգոհ է վոչ թե նրա համար, վոր ազգային դաշինք գոյություն չունի, այլ նրա համար, վոր գոյություն չունի խղճի ազատություն, տեղափոխության ազատություն և այլն։ Տվեք նրան այդ ազատությունները—և նա կդադարի դժգոհ լինելուց։

Այսպես, ուրեմն—ազգային իրավահավասարությունը իր բոլոր ձևերով (լեզու, դպրոց յեվ այլն)՝ ազգային հարցի լուծման անհրաժեշտ կետն է։ Յերկրի լիակատար դեմոկրատիզացիայի հիման վրա տրվող համապետական որենք, վոր կարգելի ազգային ամեն տեսակ արտոնություններ՝ առանց բացառության և ամեն տեսակ ճնշումն կամ սահմանափակումն ազգային փոքրամասնությունների իրավունքների—ահա սրանումն է և միմիայն սրանում կարող է լինել ազգային փոքրամասնությունների իրավունքների իսկական, և վոչ թե թղթային յերաշխավորումը։

Կարելի է ժխտել կամ չժխտել կազմակերպչական ֆեդերալիզմի և կուլտուրական-ազգային ավտոնոմիայի

մեջ գոյություն ունեցող լոգիքական կապը։ Սակայն չի կարելի ժխտել այն, որ այդ ավտոնոմիան պատեհ մթնոլորտ է ստեղծում անեզը ֆեդերալիզմի համար, որը փոխարկվում է կատարյալ անջատման, սեպարատիզմի։ Յեթե չեխերն Ավստրիայում և բունդականները՝ Ռուսաստանում, սկսելով գործը ավտոնոմիայից և անցնելով ֆեդերացիային, վերջացրին սեպարատիզմով, դրանում, անշուշտ, խոշոր դեր է կատարել այն նացիոնալիստական մթնոլորտը, որ բնականաբար ստեղծում է ազգային ավտոնոմիան։ Պատահական չէ, որ ազգային ավտոնոմիան և կազմակերպչական ֆեդերալիզմը ձեռք-ձեռքի տված են ընթանում։ Շատ հասկանալի յե։ Թե՛ մեկը և թե՛ մյուսը պահանջում են սահմանաբաժանումն ըստ ազգությունների, թե՛ մեկը և թե՛ մյուսը յենթադրում են կազմակերպություն՝ ըստ ազգությունների։ Նմանությունն անկասկած է։ Տարբերությունը միայն նրա մեջ է, որ այնտեղ սահմանաբաժան են անում ազգաբնակչությունն ընդհանրապես, իսկ այստեղ—ս.-դ. բանվորներին։

Մեզ հայտնի յե, թե ինչ բանի յե հասցնում բանվորներին ըստ ազգությունների սահմանաբաժան անելը։ Միասնական բանվորական կուսակցության քայքայումն, միությունների բաժանումն ըստ ազգությունների, ազգային դժտությունների սուր կերպարանք առնելը, ազգային շտեյկբրեխերություն, կատարյալ դեմորալիզացիա ս.-դ. շարքերում—ահավասիկ կազմակերպչական ֆեդերալիզմի հետևանքները։ Սոցիալ-դեմոկրատիայի պատմությունն Ավստրիայում, և Բունդի գործունեությունը Ռուսաստանում...դրա փայլուն ապացույցներն են։

Դրա դեմ միակ միջոցն է—ինտերնացիոնալ սկզբունքներով կազմակերպություն։

Տեղերում զանազան ազգությունների բանվորների համախմբումը միասնական յեվ ամբողջական կոլլեկտիվնե-

ում, այդպիսի կոլեկտիվների համախմբումը միասնական կուսակցության մեջ—այս է ահա խնդիրը։

Ինքնին հասկանալի է, որ այդ տեսակ կառուցվածքը վոչ թե չի ժխտում, այլ յենթադրում է շրջանների լայն ավտոնոմիա՝ միասնական կուսակցության ներսում։

Կովկասի փորձը ցույց է տալիս այդ տիպի կազմակերպության ամբողջ նպատակահարմարությունը։ Յեթե կովկասցիներին հաջողվել է հաղթել ազգային գժտությունները հայ և թուրք բանվորների միջև, յեթե նրանց հաջողվել է անվտանգ դարձնել ազգաբնակչությունը հնարավոր կոտորածից և հրացանաձգությունից, յեթե Բագվում, ազգային խմբավորումների այդ կալեյդոսկոպում, այժմ արդեն անհնարին են ազգային ընդհարումները, յեթե այնտեղ հաջողվել է բանվորներին դրավել մի հզոր շարժման հոսանքում—դրանում վերջին դեր չի կատարել Կովկասյան սոցիալ-դեմոկրատիայի ինտերնացիոնալ կառուցվածքը։

Կազմակերպության տիպը վո՛չ միայն գործնական աշխատանքի վրա է ազդում։ Նա իր անջնջելի կնիքն է դնում բանվորի ամբողջ հոգեկան կյանքի վրա։ Բանվորն ապրում է իր կազմակերպության կյանքով, նա այնտեղ հոգեպես մեծանում է և դաստիարակվում։ Յեվ ահա իր կազմակերպության մեջ շփվելով և այնտեղ ամեն անգամ հանդիպելով իր այլազգի ընկերներին, նրանց հետ միասին ընդհանուր կոլեկտիվի ղեկավարությամբ ընդհանուր պայքար մղելով,—նա խորապես թափանցվում է այն մտքով, որ բանվորներն ամենից առաջ—միևնույն դասակարգային ընտանիքի, սոցիալիզմի միասնական բանակի անդամներն են։

Իսկ դա չի կարող դաստիարակչական վիթխարի ազդեցություն չունենալ բանվոր դասակարգի լայն խավերի վրա։

Ուստի և կազմակերպության ինտերնացիոնալ տիպը հանդիսանում է ընկերական զգացմունքների դպրոց, ամենամեծ ագիտացիա՝ հոգուտ ինտերնացիոնալիզմի։

Նույնը չեն այն կազմակերպությունները, որոնք կազմված են ըստ ազգությունների։ Կազմակերպվելով ըստ ազգությունների, բանվորները պարփակվում են ազգային կճեպների մեջ, իրարից բաժանվելով կազմակերպչական պատնեշներով։ Շեշտվում է ոչ թե այն, ինչ ընդհանուր է բանվորների միջև, այլ այն, ինչով նրանք տարբերվում են իրարից։ Այստեղ բանվորն, ասենք առաջ, իր ազգի անդամն է՝ հրեա, լեհ և այլն։ Զարմանալի չէ, որ ազգային ֆեդերալիզմը կազմակերպության մեջ բանվորներին դատապարտում է ազգային մեկուսացման վոդով։

Ուստի և կազմակերպության ազգային տիպը հանդիսանում է ազգային անձկության և համառության դպրոց։

Այդպիսով մեր առաջ կան կազմակերպության յերկու սկզբունքային տարբեր տիպեր—ինտերնացիոնալ կապակցության տիպը և բանվորներին ըստ ազգությունների կազմակերպչորեն «սահմանաբաժանելու» տիպը։

Այդ յերկու տիպերն հաշտեցնելու փորձերը մինչև այժմ հաջողություն չեն ունեցել։

Ավստրիական սոցիալ-դեմոկրատիայի՝ 1897 թվին Վիմբերգում մշակած հաշտական կանոնադրությունը ոդում կախված մնաց։ Ավստրիական կուսակցությունը մաս-մաս յեղավ, որի որինակին հետևեցին և միությունները։ «Հաշտությունը» դուրս յեկավ ոչ միայն ուտոպիական, այլև ֆնասակար։ Շտրասսերն(15) իրավացի յե, պնդելով, որ «սեպարատիզմն իր առաջին հաղթանակը տարավ Վիմբերգի պարտայտագում[1])»։

Նույնը և Ռուսաստանում։ Ստոկհոլմի համագումարին կայացած «հաշտությունը» Բունդի ֆեդերալիզմի հետ՝ լիակատար կրախով վերջացավ։ Բունդը քանդեց Ստոկհոլմյան կոմպրոմիսը։ Բունդը Ստոկհոլմից հետո առաջին որից խոչընդոտ հանդիսացավ, որպեսզի տեղերում բանվորները մի միասնական կազմակերպության մեջ ձուլ-

1) Տես նրա «Der Arbeiter und die Nation», 1912 թ.։

վեն, վորը պետք է ընդուներ իր մեջ բոլոր ազգությունների բանվորներին։ Ցեվ Բունդը համառ կերպով շարունակում եր իր սեպարատիստիկական տակտիկան, չնայած վոր 1907 և 1908 թ. Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատիան քանիցս պահանջել եր, վոր բոլոր ազգությունների բանվորների միջև միությունը ներքևից վերջապես իրականացնվի։ Բունդը, սկսելով ազգային-կազմակերպչական ավտոնոմիայից, իրոք անցավ ֆեդերացիային նրա համար, վորպեսզի վերջացնի կատարյալ անջատումով, սեպարատիզմով։ Իսկ անջատվելով Ռուսաստանի սոց.-դեմոկրատիայից, նա խլրտու�և դեմորալիզացիա մտցրեց նրա մեջ։ Մտաբերենք թեկուզ Յագելլոյի(16) գործը։

Այդ պատճառով էլ՝ «հաշտության» ուղին պետք է թողնել, վորպես ուտոպիական և ֆետաական ուղի։

Յերկուսից մեկը.—կամ Բունդի ֆեդերալիզմը—և այդ դեպքում ռուսական սոցիալ-դեմոկրատիան պետք է վերակազմվի բանվորներին ըստ ազգության «սահմանաբաժանելու» սկզբունքների վրա, կամ կազմակերպության ինտերնացիոնալ տիպը, և այն ժամանակ—Բունդը պետք է վերակազմվի տերրիտորյալ ավտոնոմիայի սկզբունքների վրա, կովկասյան, լատվիական և լեհական սոցիալ-դեմոկրատիաների որինակով, ճանապարհ բանալով հրեական բանվորների և Ռուսաստանի այլ ազգությունների բանվորների միջև անմիջական միություն հաստատելու գործի համար։

Միջին ճանապարհ չկա.—սկզբունքները հաղթում են, բայց վոչ «հաշտվում»։

Այդպես ուրեմն—բանվորների ինտերնացիոնալ կապակցության սկզբունքը անհրաժեշտ մի կետ է՝ ազգային հարցը լուծելիս։

Վիեննա, 1913 թ. հունվար։

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԸ ՅԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԸ.

Ազգային հարցը ինքնամփոփ, առմիշտ ձևակերպված հարց չե։ Գոյություն ունեցող կարգը վերափոխելու ընդհանուր հարցի միայն մի մասը հանդիսանալով, ազգային հարցը ամբողջովին վորոշվում է սոցիալական միջավայրի պայմաններով, յերկրի իշխանության բնույթով և առհասարակ հասարակական զարգացման վողջ ընթացքով։ Այս հանգամանքը առանձնապես վառ կերպով դրսևորվում է Ռուսաստանում հեղափոխության շրջանում, յերբ ազգային հարցն ու ազգային շարժումը Ռուսաստանի ծայրամասերում արագ և ամենքի համար ակնբախ փոխում են իրենց բովանդակությունը՝ ըստ հեղափոխության ընթացքի և յելքի։

1.ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԸ.

Ռուսաստանում բուրժուական հեղափոխության շրջանում (1917 թ. փետրվարից) ծայրամասերի ազգային շարժումը բուրժուական-ազատագրական շարժման բնույթ ուներ։ Դարերով ճնշված և «հին ռեժիմից» շահագործված Ռուսաստանի ազգությունները առաջին անգամ իրենց մեջ ուժ զգացին և կռվի նետվեցին իրենց ճնշողների դեմ։ «Ազգային ճնշման լիկվիդացիա»— այս եր շարժման լոզունգը։ Ռուսաստանի ծայրամասերը իսկույն ծածկվեցին «համազգային» հիմնարկություններով։ Շարժման գլուխն եր անցել ազգային բուրժուա-դեմոկրատական ինտելիգենցիան։ «Ազգային խորհուրդները» Լատվիայում, Եստո-

նիայում, Լիտվայում, Վրաստանում, Հայաստանում, Ադրբեջանում, Կովկասի լեռներում, Կիրգիզիայում և Միջին Մերձվոլգյան շրջանում. «Ռադա»-ները Ուկրաինայում և Բելորուսիայում. «Սֆատուլ Ցերիյ»-ն Բեսարաբիայում. «Կուրուլտայը» Ղրիմում և Բաշկիրիայում. «ավտոնոմ կառավարությունը» Թուրքեստանում,—ահա այն «համազգային» հաստատությունները, որոնց շուրջը ուժեր էր հավաքում ազգային բուրժուազիան։ Խոսքը ցարիզմից, իբրև ազգային ճնշման «հիմնական պատճառից», ազատագրվելու և ազգային բուրժուական պետություններ կազմելու մասին էր։ Ազգերի ինքնորոշման իրավունքը մեկնում էին իբրև ազգային բուրժուազիայի իրավունք՝ ծայրամասերում իշխանությունը իր ձեռքը վերցնելու և փետրվարյան հեղափոխությունը ոգտագործելու՝ «սեփական» ազգային պետություն կազմակերպելու համար։ Հեղափոխության հետագա զարգացումը վերոհիշյալ բուրժուական հաստատությունների հաշվի մեջ չեր մտնում և մտնել չեր կարող։ Ընդ սմին աչքաթող էին անում այն, որ ցարիզմին փոխարինելու համար դալիս էր մերկ, դիմակազուրկ իմպերիալիզմը, որ այդ իմպերիալիզմը ազգությունների համար ավելի ուժեղ և ավելի վտանգավոր թշնամի, ազգային նոր ճնշման հիմունք է հանդիսանում։

Սակայն ցարիզմի խորտակումն ու բուրժուական իշխանության յերևան գալն ևս չվոչնչացրեց ազգային ճնշումը։ Ազգային ճնշման հին, կոպիտ ձևը տեղի տվեց Միլնոր, նրբագույն, բայց ավելի ևս վտանգավոր ձևին։ Լվովյուկով-Կերենսկու(17) կառավարությունը վոչ միայն չհրաժարվեց ազգային ճնշման քաղաքականությունից, այլև կազմակերպեց տակավին նոր արշավանք՝ հանդեպ Ֆինլանդիայի (Սեյմի ցրումը 1917 թ. ամառը) և Ուկրաինայի (Ուկրաինայի կուլտուրական հիմնարկությունների ավե-

րումը)։ Ավելին։ Այդ՝ ըստ իր բնության իմպերիալիստական կառավարությունը կոչ արեց ժողովրդին պատերազմը շարունակելու՝ նոր յերկրներ, գաղութներ և ազգեր ստորադրելու համար։ Այս անել դրդում եյին նրան վոչ միայն իմպերիալիզմի ներքին բնությունը, այլև ներկայությունը Արևմուտքի հին իմպերիալիստական պետությունների, վորոնք անվերապահորեն ձգտում եյին իրենց ստորադրել նոր յերկրներ և ազգություններ և դրանով ապառնում եյին սահմանափակել նրա ազդեցության շրջանը։ Իմպերիալիստական պետությունների պայքար՝ մանր ազգություններին հպատակության մեջ պահելու համար, իբրև այդ պետությունների գոյության պայման,—ահա թե ինչպիսի պատկեր բացվեց իմպերիալիստական պատերազմի ընթացքում։

Ցարիզմի խորտակումը և Միլյուկով-Կերենսկու(18) կառավարության հանդես գալը վոչ մի փոփոխություն չմտցրին այս աննախանձելի պատկերի մեջ։ Բնական է, վոր յերկրի ծայրամասերում «համազգային» հաստատությունները ինչ չափով վոր ինքնուրույնության տենդենց եյին ցուցաբերում, այն չափով էլ հանդիպում եյին Ռուսաստանի իմպերիալիստական կառավարության անհաղթելի դիմադրության։ Իսկ ինչ չափով վոր նրանք, հաստատելով ազգային բուրժուազիայի իշխանությունը, խուլ եյին մնում «իրենց» բանվորների և գյուղացիների շահերի նկատմամբ, նրանք այս վերջինների տրտունջն ու դժգոհությունն եյին առաջ բերում։ Այսպես կոչված «ազգային գնդերը» միայն յուղ եյին ավելացնում կրակի վրա.—վերևից յեկող վտանգի դեմ նրանք անզոր եյին, իսկ ներքևի վտանգը նրանք միայն զորեղացնում և խորացնում եյին։ Ինչպես արտաքին հարվածների, այնպես էլ ներքին պայթյունների հանդեպ «համազգային» հաստատությունները անպաշտպան եյին մնում։ Նորաստեղծ

բուրժուական-ազգային պետությունները դեռ չծաղկած սկսում էին թառամել։

Այսպիսով, ինքնորոշման սկզբունքի հին բուրժուա-դեմոկրատական մեկնությունը ֆիկցիա էր դառնում, կորցնում էր իր հեղափոխական իմաստը։ Պարզ է, որ այսպիսի պայմաններում ազգային ճնշման վոչնչացման և. մանր ու ազգային պետությունների ինքնուրույնության մասին խոսք չեր կարող լինել։ Ակներև եր դառնում, որ ճնշված ազգությունների աշխատավոր մասսաների ազատագրումը և ազգային ճնշման վոչնչացումը անհնարին է՝ առանց իմպերիալիզմի հետ կապերը խզելու, առանց «սեփական» ազգային բուրժուազիան տապալելու և իշխանությունը աշխատավոր մասսաների ձեռքով բռնագրավելու։

Սա առանձնապես վառ կերպով արտահայտվեց Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո։

2. ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԸ.

Փետրվարյան հեղափոխությունը իր մեջ կրում եր ներքին անհաշտելի հակասություններ։ Հեղափոխությունը կատարված եր բանվորների և գյուղացիների (զինվորների) ջանքերով, մինչդեռ վորպես հեղափոխության հետևանք՝ իշխանությունը անցավ վոչ թե բանվորներին ու գյուղացիներին, այլ բուրժուազիային։ Բանվորներն ու գյուղացիները հեղափոխություն կատարելով՝ ցանկանում էին վերջ տալ պատերազմին, հաշտություն կայացնել, մինչդեռ իշխանության գլուխն անցած բուրժուազիան ձգտում եր ոգտագործել մասսաների հեղափոխական վոգևորությունը՝ պատերազմը շարունակելու համար։ Տնտեսական փլգումը յերկրում ու պարենավորման ճգնաժամային վիճակը պահանջում էին կապիտալների և արդյունաբերական ձեռնարկների եքսպրոպրիացիա՝ հոգուտ բանվոր-

ների, կալվածատիրական հողերի բռնագրավումն՝ հոգուտ գյուղացիների, մինչդեռ Միլյուկով-Կերենսկու բուրժուական կառավարությունը կալվածատերերի և կապիտալիստների շահերի պաշտպանն ելանում՝ վերջիններին վճռականապես պաշտպանելով բանվորների և գյուղացիների հարձակումներից։ Դա—բուրժուական հեղափոխություն ելր, վոր կատարվել ելր բանվորների և գյուղացիների ձեռքով, հոգուտ շահագործողների։

Մինչդեռ յերկիրը շարունակում ելր հեծել իմպերիալիստական պատերազմի ծանրության տակ՝ տնտեսական փլգումից և պարենավորման քայքայումից։ Ճրոնտը քայքայվում ելր և ցրվում։ Կանգ ելին առնում ֆաբրիկաներն ու գործարանները։ Յերկրում ծայր ելր տալիս սովը։ Դուրս յելավ, վոր փետրվարյան հեղափոխությունը իր ներքին հակասություններով միանգամայն անբավարար ե՝ «յերկիրը փրկելու» համար։ Միլյուկով-Կերենսկու կառավարությունը միանգամայն անընդունակ գտնվեց հեղափոխության հիմնական հարցերը լուծելու։

Անհրաժեշտ ելր նոր, սոցիալիստական հեղափոխություն՝ յերկիրը իմպերիալիստական պատերազմի տուպիկից և տնտեսական փլգումից դուրս բերելու համար։

Այդ հեղափոխությունը տեղի ունեցավ՝ Հոկտեմբերյան հեղաշրջման հետևանքով։

Կալվածատերերի և բուրժուազիայի իշխանությունը տապալելով և նրա տեղը բանվորների և գյուղացիների իշխանություն հաստատելով, Հոկտեմբերյան հեղաշրջումը մի հարվածով լուծեց փետրվարյան հեղափոխության հակասությունները։ Կալվածատիրական - կուլակային միահեծան իշխանությունը վերացվեց և հողը հանձնվեց գյուղի աշխատավոր մասսաներին. ֆաբրիկաները և գործարանները խլվեցին և հանձնվեցին բանվորներին. իմպերիալիզմի հետ կապը խզվեց և վերջ տրվեց կողոպտող

պատերազմին. հրապարակվեցին գաղտնի պայմանագրերը և ուրիշների տերրիտորիաները բռնագրավելու քաղաքականությունը մերկացվեց. վերջապես հայտարարվեց ճնշված ազգերի աշխատավոր մասսաների ինքնորոշումը և Ֆինլանդիայի անկախության ճանաչումը—ահա այն հիմնական խնդիրները, վոր Խորհրդային իշխանությունը լուծեց հեղափոխության ընթացքում։

Դա իսկապես վոր սոցիալիստական հեղափոխություն էր։ Կենտրոնում սկսված հեղափոխությունը չեր կարող յերկար ժամանակ մնալ կենտրոնի սուղ տերրիտորիայի շրջանակներում։ Հաղթելով կենտրոնում, նա անխուսափելիորեն պետք է տարածվեր յերկրի նաև ծայրամասերում։ Յեվ իրոք, հեղաշրջման հենց առաջին որերից հեղափոխական ալիքը հյուսիսից ծայր տվեց ամբողջ Ռուսաստանում, նորանոր ծայրագավառներ գրավելով։ Բայց այստեղ նա հանդիպեց պատվարի, ի դեմս, դեռևս մինչ Հոկտեմբեր կազմակերպված «ազգային խորհուրդների» և շրջանային «կառավարությունների» (Դոն, Կուբան, Սիբիր)։ Բանը նրանումն է, վոր այս «ազգային» կառավարությունները լսել անգամ չեյին ուզում սոցիալիստական հեղափոխության մասին։ Ըստ իրենց բնույթի բուրժուական այդ կառավարությունները բնավ չեյին ուզում խորտակել հին բուրժուական աշխարհը,—ընդհակառակը, նրանք իրենց պարտքն եյին համարում այդ կարգերը բոլոր ուժերով պահպանել և ուժեղացնել։ Ըստ իրենց եության իմպերիալիստական այդ կառավարությունները բնավ չեյին ուզում խզել իմպերիալիզմի հետ,—ընդհակառակը, նրանք յերբեք չեյին հրաժարվի «ուտար» ազգություններից հողամասեր բռնագրավել և իրենց յենթարկել՝ յեթե այդպիսի հնարավորություններ հանդիսանային։ Զարմանալի չե, վոր յերկրի ծայրամասերի «ազգային» կառավարությունները պատերազմ հայտարարեցին կենտրոնի սո-

ցիալիստական կառավարության։ Իսկ պատերազմ հայտարարելով, նրանք բնականաբար դարձան ռեակցիայի ոջախները, որոնք իրենց շուրջն եյին հավաքում այն ամենը, ինչ որ հակահեղափոխական եր Ռուսաստանում։ Վոչ վոքի համար գաղտնիք չե, որ այնտեղ՝ դեպի այդ ոջախները սլացան Ռուսաստանից վտարված բոլոր հակահեղափոխականները, որ այնտեղ, այդ ոջախների շուրջը ձևավորվեցին նրանք, իբրև սպիտակ-բանակային «ազգային» դնդեր։

Սակայն յերկրի ծայրամասերում, բացի «ազգային» կառավարություններից, կան նաև ազգային բանվորներ ու գյուղացիներ։ Դեռևս մինչև հոկտեմբերյան հեղաշրջումը Ռուսաստանի կենտրոնում կազմված սովդեպների որինակով, նրանք իրենց հեղափոխական սովդեպների մեջ կազմակերպված՝ յերբեք կապերը չեյին խզում Հյուսիսի իրենց յեղբայրակիցների հետ։ Նրանք նույնպես ձգտում եյին հաղթել բուրժուազիային, նրանք նույնպես մարտնչում եյին սոցիալիզմի հաղթության համար։ Զարմանալի չե, որ սրանց կոնֆլիկտը «իրենց» «ազգային» կառավարությունների հետ որ-որի աճում եր։ Հոկտեմբերյան հեղաշրջումը միայն ամրացրեց ծայրամասերի բանվորների և գյուղացիների միությունը Ռուսաստանի բանվորների և գյուղացիների հետ՝ սոցիալիզմի հաղթության հավատներընշելով։ «Ազգային» կառավարությունների պատերազմը Խորհրդային իշխանության դեմ այն հետևանքն ունեցավ, որ ազգային բանվորների ու գյուղացիների՝ «իրենց» «կառավարությունների» հետ ունեցած կոնֆլիկտը հասավ դրանց հարաբերությունների վերջնական խզման, այդ բանվորների ու գյուղացիների բացարձակ ապստամբության՝ «իրենց» «կառավարության» դեմ։

Այսպես կազմվեց վողջ Ռուսաստանի բանվորների ու գյուղացիների սոցիալիստական միությունը՝ հանդեպ

Ռուսաստանի ծայրամասերի ազգային բուրժուական «կառավարությունների» հակահեղափոխական միության։

Ցերկրի ծայրամասերի «կառավարությունների» պայքարը վոմանք պատկերացնում են իբրև ազգային ազատագրական պայքար՝ ընդդեմ Խորհրդային իշխանության «անխիղճ կենտրոնացման»։ Բայց դա ճիշտ չե։ Աշխարհում վոչ մի իշխանություն ազգերին չի տվել այնքան լայն ավտոնոմիա, այնպիսի լրիվ ազգային ազատություն, ինչպիսին տվել է Խորհրդային իշխանությունը Ռուսաստանում։ Ռուսաստանի ծայրամասերի «կառավարությունները» յեղել են և կմնան իբրև բուրժուական հակահեղափոխության պայքար՝ ընդդեմ սոցիալիզմի։ Միայն մասսաները խաբելու համար է, վոր խնդրին կցում եյին ազգային դրոշակը, իբրև պոպուլյար, հարմար դրոշակ՝ ազգային բուրժուազիայի հակահեղափոխական միտումները քողարկելու համար։

Բայց «ազգային» և «շրջանային» կառավարությունների պայքարը դուրս յեկավ անհավասար պայքար։ Ցերկու կողմից գրոհի յենթարկված, դրսից—Խորհրդային իշխանության կողմից, և ներսից—«իրենց իսկ սեփական» բանվորների և գյուղացիների կողմից, «ազգային» կառավարությունները պիտի նահանջեյին առաջին իսկ կռիվներից հետո։ Ֆինն բանվորների և տորպարների(19) ապստամբությունը և բուրժուական «Սենատի» փախուստը. Ուկրաինական բանվորների և գյուղացիների ապստամբությունը և բուրժուական «Ռադա»-ի(20) փախուստը. Դոնի, Կուբանի և Սիբիրի բանվորների և գյուղացիների ապստամբությունը և Կալեդինի, Կորնիլովի ու Սիբիրի «կառավարության»(21) կրախը. Թուրքեստանի չքավորության ապստամբությունը և «ավտոնոմ կառավարության» փախուստը(22). ազգային հեղափոխությունը Կովկասում և Վրաստանի, Հայաստանի ու Ադրբեջանի «ազգային խոր-

հուրդների» ծայր անզորությունը,—սրանք են բոլորին հայտնի փաստերը, որ ցուցադրում են ծայրամասերի «կառավարությունների» լիովին կտրված լինելը «իրենց» մասաներից։ Գլխովին ջարդված «ազգային կառավարությունները» «ստիպված եյին» Արևմուտքի իմպերիալիստներից՝ ամբողջ աշխարհի մանր ազգությունների այս դարավոր ճնշողներից և շահագործողներից ոգնություն հայցել «իրենց» բանվորների և գյուղացիների դեմ։

Այսպես սկսվեց ռուսերկրյա միջամտության և ծայրամասերի ոկկուպացիայի շրջանը, մի շրջան, որ ավելորդ անգամ մերկացրեց «ազգային և շրջանային կառավարությունների» հակահեղափոխական բնույթը։

Այժմ միայն բոլորի համար ակներև յեղավ, որ ազգային բուրժուազիան ձգտում է վոչ թե «իր ժողովուրդը» ազգային ճնշումից ազատագրելու, այլ ձգտում է այդ ժողովրդից ոգուտ քաղելու ազատության, ձգտում է իր առանձնաշնորհումների և կապիտալների պահպանման ազատության։

Այժմ միայն պարզվեց, որ ճնշված ազգությունների ազատագրումը անհնարին է՝ առանց իմպերիալիզմից կտրվելու, առանց՝ ճնշված ազգերի բուրժուազիան տապալելու, առանց՝ իշխանությունը այդ ազգերի աշխատավոր մասաների ձեռքն անցնելու։

Այսպես ահա, ինքնորոշման սկզբունքի հին բուրժուական ըմբռնումը, «վոչ թե իշխանությունը ազգային բուրժուազիային» լոզունգով, մերկացվեց և դեն շպրտվեց հեղափոխության յերթի շնորհիվ։ Ինքնորոշման սոցիալիստական ըմբռնումը, «վոչ թե իշխանությունը ճնշված ազգությունների աշխատավոր մասաներին» լոզունգով, ստացավ բոլոր իրավունքներն ու գործադրության հնարավորությունները։

Այսպիսով Հոկտեմբերյան հեղաշրջումը, վերջ դնելով բուրժուական-ազատագրական ազգային շարժման, մի երա

բացեց ճնշված ազգությունների բանվորների և գյուղացիների նոր սոցիալիստական շարժման, վոր ուղղված է ամեն տեսակի—ուրեմն և ազգային—ճնշման դեմ, թե «իր» և թե ոտար բուրժուազիայի իշխանության դեմ, և ընդհանրապես իմպերիալիզմի դեմ։

3. ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՇՐՋՄԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ.

Ռուսաստանի կենտրոնում հաղթելով և մի շարք ծայրամասերին տիրանալով, Հոկտեմբերյան հեղափոխությունը չեր կարող սահմանափակվել Ռուսաստանի տերրիտորիալ շրջանակներով։ Համաշխարհային իմպերիալիստական պատերազմի և ստորին խավերի ընդհանուր դժգոհության մթնոլորտում նա չեր կարող չանցնել հարևան յերկրները։ Իմպերիալիզմի հետ ունեցած կապերի խզումը, Ռուսաստանի ազատագրումը կողոպտող պատերազմից. գաղտնի պայմանագրերի հրապարակումն և ոտար յերկրները բռնագրավելու քաղաքականությունից հանդիսավոր կերպով հրաժարվելը. ազգային ազատության հայտարարումն և Ֆինլանդիայի անկախության ճանաչումը. Ռուսաստանը «Խորհրդային ազգային հանրապետությունների Ֆեդերացիա» հայտարարելն ու Խորհրդային իշխանության՝ վողջ աշխարհին նետած կանչը՝ իմպերիալիզմի դեմ վճռական կռիվ հայտարարելու—այս բոլորը չեր կարող լուրջ ազդեցություն չգործել ստրկացած Արևելքի և արյունածոր Արևմուտքի վրա։

Յեվ իսկապես, Հոկտեմբերյան հեղափոխությունը աշխարհում հանդիսանում է առաջին հեղափոխությունը, վոր խախտեց Արևելքի ճնշված ազգությունների աշխատավոր մասսաների դարավոր քունը և նրանց դուրս բերեց կռվի համաշխարհային իմպերիալիզմի դեմ։ Ռուսաստանի որինակով՝ բանվորա-գյուղացիական խորհուրդների կազմվելը

Պարսկաստանում, Չինաստանում և Հնդկաստանում (23) բավականաչափ համոզեցուցիչ ապացույցներ են դրան։

Հոկտեմբերյան հեղափոխությունը աշխարհում հանդիսանում է առաջին հեղափոխությունը, վոր Արևելքի բանվորների և գինվորների համար կենդանի փրկարար որինակ ծառայեց և ցույց տվեց պատերազմի և իմպերիալիզմի լծից ազատագրվելու իսկական ուղին։ Բանվորների և գինվորների ապստամբությունը Ավստրո-Վենգրիայում և Գերմանիայում, բանվորական և գինվորական պատգամավորների խորհուրդների կազմվելը, Ավստրո-Վենգրիայի թերիրավասուն ազգերի հեղափոխական պայքարը ընդդեմ ազգային ճնշման—բավականին պերճախոսությամբ վկայում են այդ մասին(24)։

Բանը բոլորովին նրանում չէ, վոր այդ պայքարը Արևելքում և մինչև իսկ Արևմուտքում դեռ չէ ազատագրվել բուրժուական-ազգային շերտավորումներից,—բանը նրանումն է, վոր պայքարը իմպերիալիզմի դեմ սկսվել է, և վոր նա շարունակվում է ու անխուսափելիորեն պիտի հասցնվի մինչև իր տրամաբանական վերջը։

«Արտաքին» իմպերիալիստների ոտարերկրյա միջամտությունը և ոկկուպացիոն քաղաքականությունը միայն սրում են հեղափոխական ճգնաժամը, նոր ազգեր քաշելով այդ պայքարի մեջ և լայնացնելով իմպերիալիզմի դեմ մղվող հեղափոխական ընդհարումների շրջանը։

Այսպես, Հոկտեմբերյան հեղաշրջումը կապ հաստատելով յեռամնաց Արևելքի և առաջագույն Արևմուտքի ժողովուրդների միջև, նրանց համախմբում է իմպերիալիզմի դեմ մղվող պայքարի ընդհանուր բանակում։

Այսպես, ազգային հարցը՝ ազգային ճնշման դեմ պայքարելու մասնավոր հարցից դառնում է ազգերի, գաղութների և կիսագաղութների՝ իմպերիալիզմի լծից ազատագրվելու ընդհանուր հարց։

Յերկրորդ Ինտերնացիոնալի(25) և նրա դեկավար կա-ուցկու(26) մահացու մեղքը, ի միջի այլոց կայանում է նրանում, վոր նրանց միշտ մոլորեցրել է ազգային ինքնորոշման բուրժուական ըմբռնումը, նրանք չեն հասկացել ազգային ինքնորոշման հեղափոխական իմաստը, չեն կարողացել կամ չեն ցանկացել ազգային հարցը դնել իմպերիալիզի դեմ բացարձակ պայքարելու հեղափոխական հողի վրա, չեն կարողացել կամ չեն ցանկացել ազգային հարցը կապել գաղութների ազատագրման հարցի հետ։

Ավստրիայի (Բաուերի և Ռենների(27) տիպի) սոցիալ-դեմոկրատների բթամտությունը հենց նրանումն է կայանում, վոր նրանք չհասկացան ազգային հարցի անքակտելի կապը իշխանության հարցի հետ, ջանալով առանձնացնել քաղաքականությունից ազգային հարցը և դա փակել կուլտ-կրթական հարցերի շրջանակում, մոռանալով այնպիսի «չնչին բաների» գոյության մասին, ինչպիսին են իմպերիալիզմն ու սրա կողմից կեղեքված գաղութները։

Ասում են, վոր վերելնող սոցիալիստական հեղափոխության մթնոլորտում դեպքերի ընթացքով վերացված են ինքնորոշման և «հայրենիքի պաշտպանության» սկզբունքները։ Իրոք վերացված են վոչ թե ինքնորոշման և «հայրենիքի պաշտպանությունը», այլ սրանց բուրժուական մեկնաբանությունը։ Հարկավոր է միայն տեսնել ոկկուպացիայի յենթարկված շրջանները, վորոնք հեծում են իմպերիալիզմի լծի տակ և ձգտում են ազատվելու։ Հարկավոր է տեսնել Ռուսաստանը, վորը հեղափոխական պատերազմ է մղում սոցիալիստական հայրենիքը իմպերիալիզմի գիշատիչներից պաշտպանելու համար. բավական է միայն խորհել Ավստրո-Վենգրիայում այժմ կատարվող դեպքերի մասին, բավական է տեսնել ստրկացած գաղութներն ու կիսագաղութները, վորոնք իրենց

մոտ արդեն խորհուրդներ են կազմակերպել (Հնդկաստանը, Պարսկաստանը, Չինաստանը), բավական կլինի դիտել այդ բոլորը, վորպեսզի հասկանալ ամբողջ հեղափոխական նշանակությունը ինքնորոշման պրինցիպի, վերջինիս սոցիալիստական մեկնաբանությամբ։

Հոկտեմբերյան հեղափոխության համաշխարհային մեծ նշանակությունը հենց գլխավորապես նրանումն է կայանում, վոր նա

1. Լայնացրեց ազգային հարցի շրջանակները, ազգային հարցը ազգային ճնշման դեմ պայքարելու մասնավոր հարցից դարձրեց ճնշված ազգերի, գաղութների և կիսագաղութների՝ իմպերիալիզմից ազատագրվելու ընդհանուր հարց։

2. Այդ ազատագրման համար բաց արեց լայն հնարավորություններ և իրական ուղիներ, վորով բավականաչափ դյուրացրեց Արևելքի և Արևմուտքի ճնշված ազգերի ազատագրման գործը, նրանց քաշելով իմպերիալիզմի դեմ տարվող հաղթական կռվի ընդհանուր հունի մեջ։

3. Հենց դրանով կամուրջ ձգեց սոցիալիստական Արևմուտքի յեվ կեղեքված Արևելքի միջև համաշխարհային իմպերիալիզմի դեմ հեղափոխության նոր ճակատ ստեղծելով Արևելքի պրոլետարներից՝ Ռուսաստանի հեղափոխության միջոցով՝ մինչև Արևելքի ճնշված ժողովուրդները։

Հենց դրանով է բացատրվում այն աննկարագրելի ենտուզիազմը, վոր այժմ տածում են դեպի Ռուսաստանի պրոլետարիատը Արևելքի և Արևմուտքի աշխատավոր և շահագործվող մասսաները։

Մեծ մասամբ դրանով է բացատրվում այն գազանային կատաղությունը, վորով վողջ աշխարհի իմպերիալիստական գիշակերները Խորհրդային Ռուսաստանի վրա յեն հարձակվում։

Մոսկվա, 1918 թ., նոյեմբեր։

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑՈՒՄ·

Հեղափոխության և քաղաքացիական կռվի յերեք տարիները Ռուսաստանում ցույց տվին, վոր առանց կենտրոնական Ռուսաստանի և նրա ծայրամասերի փոխադարձ աջակցության հնարավոր չե հեղափոխության հաղթանակը, հնարավոր չե Ռուսաստանի ազատագրությունը իմպերիալիզմի ճանկերից։ Կենտրոնական Ռուսաստանը, համաշխարհային հեղափոխության այդ ոջախը, չի կարող յերկար դիմանալ առանց իր ծայրամասերի ոգնության, վորոնք հարուստ են հում նյութերով, վառելիքով, պարենային արտադրանքներով։ Ռուսաստանի ծայրամասերը իրենց հերթին մատնված են իմպերիալիստական անխուսափելի ճորտության՝ յեթե քաղաքական, ռազմական և կազմակերպչական ոգնություն չստանան ավելի զարգացած կենտրոնական Ռուսաստանից։ Յեթե ուղիղ և այն միտքը, վոր Արևմուտքի ավելի զարգացած պրոլետարիատը չի կարող ջնջել համաշխարհային բուրժուազիային, առանց նվազ զարգացած, սակայն հում նյութերով և վառելիքով հարուստ Արևելքի գյուղացիության ոգնության, ապա ուրեմն նույնքան ուղիղ է և այս միտքն այն մասին, վոր ավելի զարգացած կենտրոնական Ռուսաստանը չի կարող հեղափոխության գործը իր ավարտին հասցնել, յեթե ոգնություն չստանա Ռուսաստանի ծայրամասերից, վորոնք ավելի քիչ են զարգացած, սակայն հարուստ են անհրաժեշտ ռեսուրսներով։

Այդ հանգամանքը, անկասկած, Անտանտան հաշվի առավ Խորհրդային Իշխանության յերևան գալու հենց առաջին որերից, յերբ նա (Անտանտան) անցկացրեց կենտրոնական Ռուսաստանի տնտեսական ողակման իր պլանը, Ռուսաստանից կտրելով նրա ավելի կարևոր ծայրամասերը։ Հետագայում Ռուսաստանի տնտեսական ողակման պլանը անփոփոխ հիմք է մնում Անտանտայի՝ Ռուսաստանի վրա կատարվող բոլոր արշավանքների համար, սկսած 1918 թվից մինչև 1920 թիվը, հաշվելով նաև ներկայումս նրա գործ դրած նենգությունները Ուկրաինայում, Ադրբեջանում, Թուրքեստանում։

Այդպիսով ավելի՛ մեծ անհրաժեշտություն է դառնում՝ Ռուսաստանի կենտրոնի և ծայրամասերի մեջ հաստատուն դաշինքի ապահովությունը։

Այստեղից հետևում է, վոր անհրաժեշտ է Ռուսաստանի կենտրոնի և ծայրամասերի միջև սահմանել վորոշ հարաբերություններ, վորոշ կապեր, վոր ապահովեին սերտ, անխորտակելի միությունը նրանց միջև։

Իսկ ի՞նչպես պիտի լինեն այդ հարաբերությունները, ի՞նչպիսի ձևեր նրանք պետք է ընդունեն։

Այլ կերպ ասած՝ ինչո՞ւմն է կայանում Խորհրդային Իշխանության քաղաքականությունը ազգային հարցի վերաբերմամբ Ռուսաստանում։

Ռուսաստանից ծայրամասերի բաժանման պահանջը, վորպես հարաբերությունների մի ձև՝ կենտրոնի և ծայրամասերի միջև, պետք է մերժվի՝ վո՛չ միայն նրա համար, վոր դա հակասում է կենտրոնի և ծայրամասերի միջև միության սահմանման հարցի դրումին, այլ և, ամենից առաջ, նրա՛ համար, վոր դա արմատապես հակասում է թե՛ կենտրոնի և թե՛ ծայրամասերի ժողովրդական մասսաների շահերին։ Ելնենք խոսում այն մասին, վոր ծայրամասերի բաժանումը կխախտեր հեղափոխական

ուժը կենտրոնական Ռուսաստանի, որը հրահրում է Արևմուտքի և Արևելքի ազատագրական շարժումը, և հենց իրենք՝ բաժանված ծայրամասերը՝ անխուսափելիորեն կընկնեին միջազգային իմպերիալիզմի ճորտության տակ։ Բավական է նայել Ռուսաստանից բաժանված Վրաստանի, Հայաստանի, Լեհաստանի, Ֆինլանդիայի և այլոց վրա, որոնք պահպանել են անկախության լոկ արտաքին տեսքը, իսկ փաստորեն դարձել են Անտանտայի անպայման վասալներ. վերջապես, բավական է հիշատակել Ուկրաինայի և Ադրբեջանի հետ պատահածը մոտիկ անցյալում, յերբ դրանցից առաջինին թալանում եր գերմանական կապիտալիզմը, իսկ յերկրորդին՝ Անտանտան, և հասկանալի կդառնա միջազգային ներկա պայմաններում ծայրամասերի բաժանման պահանջի ամբողջ հակահեղափոխական բնույթը։ Պրոլետարական Ռուսաստանի և իմպերիալիստական Անտանտայի միջև տեղի ունեցող մահացու թեժ պայքարի միջոցին ծայրամասերի համար միայն յերկու յելք կա.

Կամ Ռուսաստանի հետ միասին,—այդ դեպքում ծայրամասերի աշխատավոր մասսաները կազատագրվեն իմպերիալիստական ճնշումից,

Կամ Անտանտայի հետ միասին,—այդ դեպքում անխուսափելի յե իմպերիալիստական լուծը։

Ուրիշ յելք չկա։ Այսպես կոչված անկախությունը այսպես կոչված անկախ Վրաստանի, Հայաստանի, Լեհաստանի, Ֆինլանդիայի և այլն—միայն խաբուսիկ է. դրա տակ թաղնված է դրանց լիուլի կախյալ վիճակը (թող թույլ տրվի ասելու) իմպերիալիստների այս կամ այն խմբավորմանը պատկանող պետություններից։

Իհարկե, Ռուսաստանի ծայրամասերը, ազգերն ու ցեղերը, որոնք բնակվում են այդ ծայրամասերում, ինչպես և բոլոր ուրիշ ազգերը, անկապտելի իրավունք ունեն

Ռուսաստանից բաժանվելու, և եթե այդ ազգություններից մեկն ու մեկը իր մեծամասնությամբ վորոշեր բաժանվել Ռուսաստանից, ինչպես այդ պատահեց Ֆինլանդիայի հետ 1917 թվին, ապա Ռուսաստանը, յերևի, ստիպված կլիներ հաշտվել կատարված փաստի հետ և անկցիա տալ բաժանմանը։ Բայց խոսքը վերաբերում է վոչ թե ազգերի պլանների մասին, վորոնք անժխտելի յեն, այլ ժողովրդական մասսաների շահերի մասին՝ թե՛ կենտրոնի և թե՛ ծայրամասերի ժողովրդական շահերի մասին. խոսքը վերաբերում է ա՛յն ագիտացիայի բնույթի մասին, վոր (բնույթը) վորոշվում է այդ շահերով և վորը (ագիտացիան) մեր կուսակցությունը պարտավոր է տանել, յեթե նա (կուսակցությունը) չի ցանկանում ինքն իրենից կտրվել, յեթե նա ցանկանում է վորոշ ուղղությամբ ազդել ազգությունների աշխատավոր մասսաների կամքի վրա։ Իսկ ժողովրդական մասսաների շահերն ասում են, վոր ծայրամասերի բաժանման պահանջը հեղափոխության տվյալ ստադիայում խորապես հակահեղափոխական պահանջ է։

Նույնպես և պետք է մերժվի այսպես կոչված ազգային-կուլտուրական ավտոնոմիան՝ վորպես Ռուսաստանի կենտրոնի և ծայրամասերի միության ձև։ Ավստրո-Վենգրիայի (ազգային-կուլտուրական ավտոնոմիայի հայրենիքի) պրակտիկան վերջին տասը տարում ցույց տվեց ամբողջ անցողականությունն ու անկենդանությունը ազգային-կուլտուրական ավտոնոմիաների, վորպես միության ձևերի՝ բազմաազգ պետության ազգությունների աշխատավոր մասսաների միջև։ Շպրինգերը և Բաուերը, ազգային-կուլտուրական ավտոնոմիայի այդ ստեղծողները, վորոնք այժմ նատած են իրենց ազգային խորագետ ծրագրի կոտրած տաշտակի քով, դրան կենդանի ապացույց են ծառայում։ Վերջապես, Ռուսաստանում ազգային-կուլ-

տուրական ավտոնոմիայի յերբեմնի հայտնի մունեոիկ Բունդը ինքը վերջերս ստիպված յեղավ պաշտոնապես խոստովանելու ազգային-կուլտուրական ավտոնոմիայի անպետքությունը, հրապարակով այսպես հայտարարելով։

«Ազգային-կուլտուրական ավտոնոմիայի պահանջը, վոր դրվել եր կապիտալիստական հասարակակարգի շրջանակներում, սոցիալիստական հեղափոխության պայմաններում կորցնում է իր իմաստը»։ (Տես «XII Конференция Бунда» стр. 21, 1920 ւ.).

Մնում է ծայրամասերի (վորոնք տարբերվում են իրենց հատուկ կենցաղով ու ազգային կազմով) շրջանային ավտոնոմիան, վորպես կենտրոնի և ծայրամասերի միության միակ նպատակահարմար ձևը, մի ավտոնոմիա, վոր պետք է Ռուսաստանի ծայրամասերը կենտրոնի հետ կապի ֆեդերատիվ կապերով։ Այսինքն՝ Խորհրդային այն ավտոնոմիան, վոր Խորհրդային Իշխանությունն իր յերևան գալու առաջին իսկ որերից հայտարարեց և վորն այժմ անց է կացվում ծայրամասերում ադմինիստրատիվ կոմունաների և Խորհրդային ավտոնոմ հանրապետությունների ձևով։

Խորհրդային ավտոնոմիան սառած, միանգամ ընդմիշտ ձևավորված տվյալ չէ. նա թույլ է տալիս ունենալու իր զարգացման ամենաբազմազան ձևերը և աստիճանները։ Նեղ ադմինիստրատիվ ավտոնոմիայից (Մերձվոլգյան գերմանացիները, չուվաշները, կորելները) նա անցնում է ավելի լայն քաղաքական ավտոնոմիայի (բաշկիրները, Մերձվոլգյան թաթարները, կիրգիզները), լայն, քաղաքական ավտոնոմիայից—դրա ավելի ևս լայնացրած ձևին (Ուկրաինա, Թուրքեստան). վերջապես, ուկրաինական տիպի ավտոնոմիայից անցնում է բարձրագույն ձևի ավտոնոմիայի՝ պայմանագրային հարաբերությունների (Ադրբեջան)։

Խորհրդային ավտոնոմիայի այդ ճկունությունը նրա առավելություններից մեկն է կազմում, քանիվոր այդ ճկունությունը թույլ է տալիս ընդգրկելու բոլոր բազմազանությունը Ռուսաստանի ծայրամասերի, վորոնք գտնվում են կուլտուրական և տնտեսական զարգացման ամենատարբեր աստիճանների վրա։ Ռուսաստանում Խորհրդային Իշխանության՝ ազգային հարցի վերաբերյալ ունեցած քաղաքականության յերեք տարին ցույց տվին, վոր, իրականացնելով խորհրդային ավտոնոմիան իր բազմազան ձևերում, Խորհրդային իշխանությունը կանգնած է ուղիղ ճանապարհի վրա, վորովհետև միմիայն այդպիսի քաղաքականության շնորհիվ է, վոր նրան հաջողվեց իր համար ճամբա բանալ դեպի Ռուսաստանի ծայրամասերի ամենահետամնաց խորքերը, քաղաքական կյանքի համար վոտքի կանգնեցնել ամենահետադեմ ու ազգայնության տեսակետից ամենատարբեր մասսաները, այդ մասսաները կենտրոնի հետ կապել ամենաբազմազան թելերով,—մի խնդիր, վոր վո՛չ միայն չեր լուծում, այլև իրեն չեր առաջադրում (վախենում եյին դնել) աշխարհումս և վոչ մի կառավարություն։ Ռուսաստանի ադմինիստրատիվ բաժանումը՝ խորհրդային ավտոնոմիայի հիմքերի վրա՝ դեռևս ավարտված չե,—հյուսիսային-կովկասցիները, կալմիկները, չերեմիսները, վոտյակները, բուրյատները և ուրիշները դեռ սպասում են հարցի լուծմանը, բայց ինչ տեսք էլ վոր ընդունելու լինի ապագա Ռուսաստանի ադմինիստրատիվ բաժանումը և ինչպես էլ լինեն այդ խնդրում թույլ տրված թերությունները,—իսկ մի քանի թերություններ իրոք թույլ են տրված,—պետք է խոստովանել, վոր Ռուսաստանը, ադմինիստրատիվ բաժանումը կատարելով շրջանային ավտոնոմիայի սկզբունքներով, մի խոշոր քայլ է արել դեպի առաջ՝ ծայրամասերը պրոլետարական կենտրոնի շուրջը համախմբելու ճանապարհին, իշխանությունը

ծայրամասերի ժողովրդական լայն մասսաներին մերձեցնելու ճանապարհին։

Բայց, այս կամ այն ձևի Խորհրդային ավտոնոմիա հայտարարելը, համապատասխան դեկրետներ և վորոշումներ հրատարակելը, նույնիսկ ծայրամասերի կառավարություններ ստեղծելը՝ ավտոնոմ հանրապետությունների շրջանային ժողկոմխորհների ձևով—դեռևս բավական չեն՝ ծայրամասերի և կենտրոնի միջև միությունը ամրապնդելու համար։ Այդ միությունը ամրապնդելու համար ամենից առաջ պետք է լիկվիդացիայի յենթարկել ծայրամասերի այն ոտարացումն ու մեկուսացումը, նահապետականությունն ու անկուլտուրականությունը, դեպի կենտրոնն ունեցած այն անվստահությունը, վորոնք ծայրամասերում ճնացել են վորպես ժառանգություն ցարիզմի գազանային քաղաքականության։ Ծայրամասերում ցարիզմը դիտմամբ եր նահապետական-ֆեոդալական ճնշում պատվաստում, վորպեսզի մասսաներին ճորտության և խավարի մեջ պահի։ Ցարիզմը ծայրամասերի լավագույն անկյունները դիտմամբ բնակեցրեց գաղութային ելեմենտներով, վորպեսզի տեղացիներին քշի վատթարագույն ռայոնները և ուժեղացնի ազգային թշնամությունը։ Ցարիզմը նեղում եր, յերբեմն պարզապես փակում տեղական դըպրոցը, թատրոնը, կրթական հիմնարկությունները, վորպեսզի մասսաներին խավարի մեջ պահի։ Ցարիզմը արգելում և արմատից կտրում եր տեղական ազգաբնակչության լավագույն մարդկանց ամեն մի նախաձեռնություն։ Վերջապես, ցարիզմը սպանում եր ծայրամասերի ժողովրդական մասսաների ամեն մի ակտիվություն։ Այդ ամենով՝ ցարիզմը տեղացիների շրջանում ծնեցրեց խորագույն անվստահություն, վոր յերբեմն փոխվում եր թշնամական վերաբերմունքի դեպի այն ամենը, ինչ ռուսական եր։ Վորպեսզի Կենտրոնական Ռուսաստանի և ծայրամասերի

միջև միությունը ամրապնդվի, հարկավոր է լիկվիդացիայի յենթարկել այդ անվստահությունը, հարկավոր է փոխադարձ հասկացողության և յեղբայրական վստահության մթնոլորտ ստեղծել։ Բայց անվստահությունը լիկվիդացիայի յենթարկելու համար ամենից առաջ անհրաժեշտ է ծայրամասերի ժողովրդական մասսաներին ոգնել՝ ազատագրվելու նահապետական-ֆեոդալական լծից, անհրաժեշտ է վերացնել—վերացնել գործով և ոչ թե թղթի վրա—գաղութային ելեմենտների բոլոր և ամեն տեսակի արտոնությունները, անհրաժեշտ է ժողովրդական մասսաներին հնարավորություն տալ ճաշակելու հեղափոխության նյութական բարիքներից։ Կարճ ասած՝ պետք է մասսաներին ապացուցել, որ կենտրոնական հեղափոխական Ռուսաստանը պաշտպանում է նրան և միայն նրա շահերը, և այդ պետք է ապացուցել ոչ միայն կոլոնիզատորների և բուրժուական նացիոնալիստների վերաբերմամբ լոկ ռեպրեսիվ միջոցներ գործ դնելով, որ հաճախ միանգամայն անհասկանալի յեն մասսաներին, այլ, ամենից առաջ, տնտեսական հետևողական և խելացի քաղաքականությամբ։

Ամենքին հայտնի յե լիբերալների պահանջը՝ ընդհանուր պարտադիր ուսման մասին։ Կոմունիստները ծայրամասերում չեն կարող լիբերալներից ավելի աջ լինել. նրանք պետք է այնտեղ անցկացնեն ընդհանուր ուսում յեթե ցանկանում են Ռուսաստանի կենտրոնն ու ծայրամասերը հոգեպես մերձեցնել։ Բայց դրա համար անհրաժեշտ է բարգավաճել տեղական ազգային դպրոցը, ազգային թատրոնը, ազգային-կրթական հիմնարկությունները, բարձրացնել ծայրամասերի ժողովրդական մասսաների կուլտուրական մակարդակը, որովհետև հարկավ թե կարիք կա ապացուցելու, որ տգիտությունն ու խավարը Խորհրդային իշխանության ամենավտանգավոր թշնամին են։

Մենք չգիտենք, թե այդ ուղղությամբ ինչքան հաջող և առաջ գնում մեր աշխատանքը՝ ընդհանուր առմամբ վերցրած, բայց մեզ տեղեկացնում են, որ կարևոր ծայրամասերից մեկում տեղական Լուսժողկոմը տեղական դրպրոցի վրա ծախսում է իր վարկերի միայն 10%. յեթե այդ ճիշտ է, ապա պետք է խոստովանել, որ այդ խընդրում մենք «հին ռեժիմից», դժբախտաբար, ավելի հեռու չենք անցել։

Խորհրդային իշխանությունը—ժողովրդից կտրված իշխանություն չե. ընդհակառակը, նա իր տեսակի մեջ յեզակի իշխանությունն է, որ դուրս է յեկել ռուսական ժողովրդական մասսաների ծոցից և հարազատ է, նրանց համար մոտ է։ Հենց դրանով էլ բացատրվում է այն չտեսնված ուժն ու առաձգականությունը, որ սովորաբար ցուցադրում է Խորհրդային իշխանությունը կրիտիքական մոմենտներին։ Անհրաժեշտ է, որ Խորհրդային իշխանությունը նույնքան հարազատ ու մոտիկ դառնա Ռուսաստանի ծայրամասերի ժողովրդական մասսաների համար։ Բայց որպեսզի հարազատ դառնա, Խորհրդային իշխանությունը ամենից առաջ պետք է նրանց համար հասկանալի դառնա։ Ուստի անհրաժեշտ է, որ ծայրամասերում խորհրդային բոլոր որգանները՝ դատարանը, ադմինիստրացիան, տնտեսական որգանները, անմիջական իշխանության որգանը (ինչպես նաև կուսակցության որգանները) կազմվեն, ըստ կարելույն, տեղական մարդկանցից, որոնք գիտեն տեղական ազգաբնակչության կենցաղը, բարքերը, սովորությունները, լեզուն. անհրաժեշտ է, որ տեղական մասսայից այդ բոլոր հատատությունների մեջ առնվեն լավագույն մարդկանց, անհրաժեշտ է, որ տեղական աշխատավոր մասսաները մասնակից լինեն յերկրի կառավարման բոլոր բնագավառներում, սրանց թվում նաև ռազմական որգանների գործերում, որպեսզի

մասսաները տեսնեն, վոր Խորհրդային իշխանությունը և նրա որգանները իրենց սեփական ջանքերի գործն է, իրենց ակնկալությունների մարմնացումը։ Միայն ա՛յդ կերպով կարելի յե մասսաների և իշխանության միջև հոգեկան անխորտակելի կապ սահմանել, միայն ա՛յդ կերպով կարելի յե Խորհրդային իշխանությունը ծայրամասերի աշխատավոր մասսաների համար հասկանալի ու մոտիկ դարձնել։

Ավտոնոմ հանրապետությունների վրա (Ռուսաստանում) և առհասարակ խորհրդային ավտոնոմիայի վրա մի շարք ընկերներ նայում են վորպես ժամանակավոր՝ թեկուզ և անհրաժեշտ՝ չարիքի վրա, վոր չեր կարելի թույլ չտալ շնորհիվ մի շարք հանգամանքների, բայց վորի դեմ պետք է մաքառել՝ ժամանակի ընթացքում դա վերացնելու համար։ Հազիվ թե պետք կա ապացուցելու, վոր այդ հայացքը հիմնովին սխալ է և, համենայն դեպս, վոչ մի ընդհանուր կապ չունի Խորհրդային իշխանության՝ ազգային հարցի նկատմամբ ունեցած քաղաքականության հետ։ Խորհրդային ավտոնոմիան աբստրակտ և մտացածին բան չե, մանավանդ վոր այդ չի կարելի համարել մի դատարկ դեկլարատիվ խոստում։ Խորհրդային ավտոնոմիան՝ ծայրամասերը կենտրոնական Ռուսաստանի հետ միացնելու ամենառեալ, ամենակոնկրետ ձևն է։ Վոչ վոք չի ժխտի, վոր Ուկրաինան, Ադրբեջանը, Թուրքեստանը, Կիրգիզիան, Բաշկիրիան, Թաթարիան և ուրիշ ծայրամասերը, այն չափով, ինչ չափով վոր նրանք ձգտում են ժողովրդական մասսաների կուլտուրական և տնտեսական ծաղկման, չեն կարող յոլա գնալ առանց մայրենի դրպրոցի, առանց դատարանի, ադմինիստրացիայի, իշխանության այնպիսի որգանների, վոր կազմված են գլխավորապես տեղական մարդկանցից։ Ավելին. այդ յերկրների իսկական խորհրդայնացումը, դրանց վերածումը խորհրդ-

դային այնպիսի յերկրների, վոր սերտ կապված լինեին կենտրոնական Ռուսաստանի հետ ի մի պետական ամբողջություն,—մտածելի չե առանց տեղական դպրոցների լայն կազմակերպության, առանց տեղական ազգաբնակության կենցաղն ու լեզուն գիտցող մարդկանցից կազմած դատարանի, ադմինիստրացիայի, իշխանության որգանների։ Իսկ դպրոցը, դատարանը, ադմինիստրացիան, իշխանության որգանները կազմել մայրենի լեզվով,—այդ նշանակում է գործով իրականացնել խորհրդային ավտոնոմիան, քանի վոր խորհրդային ավտոնոմիան վոչ այլ ինչ է, յեթե վոչ՝ այդ բոլոր հաստատությունների համագումարը, վորոնք զգեստավորված են ուկրայինական, թուրքեստանյան, կիրգիզյան և այլ ձևերով։

Այս ամենից հետո ինչպե՞ս կարելի յե խոսել խորհրդային ավտոնոմիայի անհարատևության մասին, այդ ավտոնոմիայի դեմ պայքարելու անհրաժեշտության մասին և այլն։

Յերկուսից մեկը։

Կամ՝ ադրբեջանցիների, կիրգիզների, ուզբեկների, բաշկիրների և այլ լեզուները իրենցից ներկայացնում են ռեալականություն, այդ դեպքում այդ շրջաններում, հետևապես, միանգամայն անհրաժեշտ է զարգացնել մայրենի դպրոցը, դատարանը, ադմինիստրացիան, իշխանության՝ տեղական մարդկանցից կազմված որգանները, և այդ դեպքում— խորհրդային ավտոնոմիան այդ շրջաններում պետք է անցկացվի մինչև վերջ, առանց այլևայլության.

Յեվ կամ՝ ուկրայինցիների, ադրբեջանցիների և այլ լեզուները հանդիսանում են մի դատարկ, մոտացածին բան— դպրոցները և այլ հաստատությունները մայրենի լեզվով՝ հետևապես՝ պետք չեն, և այդ դեպքում—խորհրդային ավտոնոմիան պետք է դեն շպրտվի, վորպես մի անպետք բան։

Ուրիշ ճանապարհ փնտռելը՝ արդյունք և գործին անտեղյակության կամ տխուր համբակության։

Ծայրամասերում, խորհրդային ավտոնոմիայի իրականացման ճանապարհին լուրջ խոչընդոտներից մեկն է հանդիսանում տեղական ծագում ունեցող ինտելլիգենտական ուժերի մեծ պակասությունը, հրահանգիչների պակասությունը՝ խորհրդային և կուսակցական աշխատանքի առանց բացառության բոլոր բնագավառներում։ Այդ պակասությունը չի կարող ծայրամասերում արգելք չլինել թե լուսավորական և թե հեղափոխական-շինարարական աշխատանքի համար։ Այդ իսկ պատճառով՝ անմիտ, գործի համար վնասակար բան կլիներ հեռու վանել տեղական ինտելլիգենտների առանց այն էլ սակավաթիվ խմբերին, որոնք, շատ կարելի է, կուզեին ծառայել ժողովրդական մասսաներին, բայց չեն կարող այդ անել գուցե և այն պատճառով, որ նրանք, որպես փոչ-կոմունիստներ, իրենց համարում են անվստահության մթնոլորտով շրջապատված, փախենում են հնարավոր ռեպրեսիաներից։ Այդ խմբերի նկատմամբ հաջողությամբ կարելի կլինի կիրառել խորհրդային աշխատանքին սրանց մասնակից անելու քաղաքականությունը, տնտեսական, հողային, պարենավորման և այլ պաշտոններում այդպիսիներին կարգելու քաղաքականությունը՝ նրանց հետզհետե խորհրդայնացման յենթարկելու նպատակով։ Չե՞ որ հարկավ թե կարելի է պնդել, որ ինտելլիգենտական այդ խմբերը նվազ հուսալի յեն, քան, ասենք, այն գինվորական հակահեղափոխական ապեցները, որոնք, չնայած իրենց հակահեղափոխական լինելուն, բայց և այնպես աշխատանքի դրվեցին և այնուհետև խորհրդայնացման յենթարկվեցին կարևորագույն պաշտոններում։

Բայց ազգային ինտելլիգենտական խմբերն ոգտագործելը դեռևս բավական չե՝ հրահանգիչների պակասությունը

լրացնելու համար։ Ծայրամասերում միաժամանակ պետք է ծավալել կուրսերի և դպրոցների լայն ցանց՝ վարչական բոլոր ընագավառների համար տեղական մարդկանցից հրահանգչական կադրեր պատրաստելու։ Չե՞ վոր պարզ է, վոր առանց այդպիսի կադրերի՝ մայրենի դպրոցի, դատարանի, ադմինիստրացիայի և այլ հաստատությունների կազմակերպությունը մայրենի լեզվով ծայր աստիճան կդժվարանա։

Խորհրդային ավտոնոմիայի իրականացման ճանապարհին յեղած վոչ պակաս լուրջ խոչընդոտ է հանդիսանում այն շտապողականությունը, վոր հաճախ դառնում է կոպիտ անտակտություն, վոր ծայրամասերի խորհրդայնացման գործում յերևան են բերում մի շարք ընկերներ։

Յերբ այդպիսի ընկերները Կենտրոնական Ռուսաստանից մի ամբողջ պաստական դարաշրջանով յետ մնացած յերկրամասերում, միջնադարյան կարգերը դեռ վոչ բոլորովին արմատախիլ արած յերկրամասերում վճռում են իրենց վրա վերցնել «մաքուր կոմունիզմ» անցկացնելու «հերոսական ջանքեր», ապա վստահ կարելի յե ասել, վոր այդպիսի ասպետական արշավից, այդպիսի կոմունիզմից մի լավ բան դուրս չի գա։ Այդ ընկերներին մենք կուզեյինք հիշեցնել մեր ծրագրի հայտնի կետը, ուր ասված է.

«Ռ. Կ. Կ. կանգնած է պատմականորեն դասակարգային տեսակետի վրա, հաշվի առնելով այն, թե իր պատմական զարգացման վո՞ր աստիճանի վրա յե գտնվում տվյալ ազգությունը, միջնադարյան կյանքից դեպի բուրժուական դեմոկրատիա տանող ճանապարհի՞ն, թե՞ բուրժուական դեմոկրատիայից դեպի խորհրդային կամ պրոլետարական դեմոկրատիա տանող ճանապարհին և այլն»։ Այնուհետև՝ «համենայն դեպս, անհրաժեշտ է, վոր ճնշված ազգությունների պրոլետարիատը հատուկ զգուշություն

ունենա և հատուկ ուշադրություն դարձնի ճնշված կամ վոչ լիակատար իրավատեր ազգությունների աշխատավոր մասսաների ազգային զգացմունքների ապրումներին»։(Տես «ՌԿԿ ծրագիրը»)։

Այսինքն՝ յեթե, որինակ, Ադրբեջանում բնակարանների խտացման ուղիղ ճանապարհը մեզնից վանում է Ադրբեջանի մասսաներին, վորոնք բնակարանը, ընտանեկան ոջախը համարում են անձեռնմխելի, սուրբ,—ապա պարզ է, վոր բնակարանները խտացնելու ուղիղ ճանապարհը պետք է փոխել գարտուղիյով, շուրջանակիյով՝ հասնելու համար միևնույն նպատակին։ Մի ուրիշ որինակ ևս. յեթե Դաղստանի՝ կրոնական նախապաշարմունքներով ուժեղ վարակված մասսաները գնում են կոմունիստների յեռևից «շարիաթի հիման վրա», ապա պարզ է, վոր կրոնական նախապաշարմունքների դեմ պայքարելու ուղիղ ճանապարհը այդ յերկրում պետք է փոխվի գարտուղի, ավելի զգույշ ճանապարհների։ Յեվ այլն և այլն։

Կարճ ասած, ժողովրդական հետամնաց մասսաները «անմիջապես խորհրդայնացնելու» ասպետական արշավանքներից անհրաժեշտ է անցնել այդ մասսաները խորհրդային զարգացման ընդհանուր հունի մեջ հետզհետե ներս առնելու շրջահայաց և խելացի քաղաքականության։

Այսպես են, ընդհանուր առմամբ, խորհրդային ավտոնոմիան իրականացնելու այն գործնական պայմանները, վորոնց կիրառումը ապահովում է Ռուսաստանի կենտրոնի և ծայրամասերի հոգեկան մերձեցումն ու հեղափոխական հաստատուն միությունը։

Խորհրդային Ռուսաստանը փոխադարձ վստահության հիմքերի վրա, կամավոր, յեղբայրական համաձայնության հիմքերի վրա, պրոլետարական միասնական պետության շրջանակներում մի շարք ազգությունների ու ցեղերի համակեցության՝ աշխարհում դեռ չտեսնված կազմակերպու-

թյան փորձ է անում։ Հեղափոխության յերեք տարիները ցույց տվին, վոր այդ փորձը հաջողության շանսեր ունի։ Բայց դա, այդ փորձը կարող է լիովին հաջողվել միայն այն դեպքում, յեթե ազգային հարցում մեր ունեցած պրակտիկ քաղաքականությունը տեղերում կհամապատասխանի խորհրդային դեկլարատիվ ավտոնոմիայի (ամենատարբեր ձևերով և ամենատարբեր աստիճանների վրա) պահանջներին, յեթե մեր ամեն մի գործնական քայլը տեղերում կնպաստի ծայրամասերի ժողովրդական մասսաներին մասնակից լինելու պրոլետարական բարձրագույն հոգեկան և նյութական կուլտուրային՝ այդ մասսաների կենցաղին ու ազգային դեմքին համապատասխանող ձևերում։

Դրանումն է կենտրոնական Ռուսաստանի և Ռուսաստանի ծայրամասերի միջև գոյություն ունեցող հեղափոխական միության ամրապնդման գրավականը, այն միության, վորի առաջ փշուր-փշուր են լինում Անտանտայի բոլոր նենգությունները։

1920 թ.

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԻ ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԹԻՎ.

Ազգային հարցի՝ կոմունիստների տված ձևակերպումն յուրահատուկ տարբերվում է այն ձևակերպումից, որ տալիս են յերկրորդ և 2½ Ինտերնացիոնալի(28) գործիչները, բոլոր և ամեն տեսակի «սոցիալիստական», «սոցիալ-դեմոկրատական», «մենշևիկական», «ես-երական» և այլն կուսակցությունները։

Առանձնապես կարևոր է շեշտել չորս հիմնական մոմենտներ, որպես ազգային հարցի նոր ձևակերպման ամենաբնորոշ տարբերիչ հատկանիշներ, որոնք սահման են դնում ազգային հարցի հին և նոր հասկացողության միջև։

Առաջին մոմենտ.—դա ազգային հարցի, որպես մի մասնի, ձուլումն է գաղութների ազատագրման ընդհանուր հարցի հետ, որպես մի ամբողջության։ Յերկրորդ Ինտերնացիոնալի եպոխայում ազգային հարցն առհասարակ շրջանափակվում եր բացառապես «քաղաքակրթված ազգերին» վերաբերյալ հարցերի նեղ ծավալով։ Իռլանդացիներ, չեխեր, լեհեր, ֆիններ, սերբեր, հայեր, հրեյաներ և Յեվրոպայի մի քանի ուրիշ ազգություններ—ահա այն թերիրավասուն ժողովուրդների շրջանը, որոնց վիճակով հետաքրքրվում եր Յերկրորդ Ինտերնացիոնալը։ Ասիական և աֆրիկական տասնյակ և հարյուր միլիոնավոր ժողովուրդները, որոնք յենթակա եյին ազգայնական ամենաժանտ և ամենադաժան կեղեքման, «սոցիալիստների» հայեցաշրջանից սովորաբար դուրս եյին մնում։ Նրանք չեյին վրա-

տահանում իրար կողքի դնել սպիտակներին և սևերին, «անկուլտուրական» նեգրերին և «քաղաքակրթված» իռլանդացիներին, «յեռամնաց» ինդուսներին և «լուսավորված» լեհերին։

Լռելյայն յենթադրվում եր, վոր յեթե կարիք կա պայքարելու յեվրոպական թերիրավասուն ազգությունների ազատագրման համար, ապա «կարգին սոցիալիստներին» ամենևին չի սազում լրջորեն խոսելու «քաղաքակրթությունը» «պահպանելու» համար անհրաժեշտ դաղութների ազատագրման մասին։ Այդ՝ թող թույլ տրվի ասել՝ սոցիալիստները նույնիսկ չեյին յենթադրում, վոր ազգային կեղեքման վոչնչացումն Յեվրոպայում մտածելի չե՝ առանց ազատագրելու Ասիայի և Աֆրիկայի գաղութային ժողովուրդներին իմպերիալիզմի կեղեքումից, և վոր առաջինը որդանապես կապված է յերկրորդի հետ։ Կոմունիստներն առաջինը մերկացրին ազգային հարցի ունեցած կապը գաղութների հարցի հետ, դա հիմնավորեցին տեսականապես և ընդունեցին իրենց հեղափոխական պրակտիկայի հիմք։ Այդպիսով վերացվեց այն պատնեշը, վոր գոյություն ուներ սպիտակների և սևերի միջև, իմպերիալիզմի «կուլտուրական» և «անկուլտուրական» ստրուկների միջև։ Այդ հանգամանքը բավական հեշտացրեց յեռամնաց գաղութների պայքարի և առաջավոր պրոլետարիատի պայքարի համակարգման գործը՝ ընդհանուր թշնամու դեմ, իմպերիալիզմի դեմ։

Յերկրորդ սովետն.—դա ազգերի ինքնորոշման իրավունքին վերաբերյալ ճապաղ լոզունգի փոխարինումն է ազգերի և գաղութների՝ պետականապես անջատվելու և ինքնուրույն պետություն կազմելու իրավունքին վերաբերյալ պարզ և հեղափոխական լոզունգով։ Ինքնորոշման իրավունքի մասին խոսելով, Յերկրորդ Ինտերնացիոնալի գործիչները սովորաբար խոսք անգամ չեյին ասում պե-

տականապես անջատվելու իրավունքի մասին.—ինքնորոշման իրավունքն, ամենալավ դեպքում, մեկնաբանվում եր վորպես առհասարակ ավտոնոմիա ունենալու իրավունք։ Ազգային հարցի «մասնագետներ»՝ Շպրինգերն ու Բաուերը, մինչև այնտեղ հասան, վոր ինքնորոշման իրավունքը դարձրին Յեվրոպայի կեղեքված ազգերի կուլտուրական ավտոնոմիայի իրավունք,—այսինքն սեփական կուլտուրական հիմնարկություններ ունենալու իրավունք՝ ըստ վորում ամբողջ քաղաքական (և տնտեսական) իշխանությունը թողնելով տիրապետող ազգության ձեռքում։ Այլ կերպ ասած՝ թերիրավասուն ազգերի ինքնորոշման իրավունքը փոխակերպված եր տիրապետող ազգերի՝ քաղաքական իշխանությունն իրենց ձեռքին պահելու արտոնության, իսկ պետականապես անջատվելու իրավունքի հարցը բոլորովին վերացված եր։ Յերկրորդ Ինտերնացիոնալի գաղափարական պարագլուխ Կաուցկին, հիմնականում հարեց Շպրինգեր-Բաուերի տված՝ ըստ եության իմպերիալիստական՝ ինքնորոշման մեկնաբանության։ Զարմանալի չե, վոր իմպերիալիստները կռահելով ինքնորոշման՝ այդ իրենց համար հարմար լոզունգի առանձնահատկությունը, հայտարարեցին այն վորպես իրենց սեփական լոզունգ։ Հայտնի յե, վոր իմպերիալիստական պատերազմը, վոր ազգերի ստրկացման նպատակ եր հետապնդում, մղվում եր ինքնորոշման դրոշակի տակ։

Այդպիսով ահա ինքնորոշման ճապաղ լոզունգը ազգերի ազատագրման, ազգերի հավասարության գենքից փոխարկվեց ազգերը ձեռնասուն դարձնելու գենքի, ազգերն իմպերիալիզմին հլու պահելու գենքի։ Իրերի ընթացքն ամբողջ աշխարհում, վերջին տարիներս Յեվրոպայում տեղի ունեցող հեղափոխության լոգիկան, վերջապես, ազատագրական շարժումը գաղութներում՝ պահանջում եյին, վորպեսզի ռեակցիոն դարձած այդ լոգունգը դեն շպրտ-

վեր և փոխարինվեր ուրիշ, հեղափոխական լոզունգով, վոր կարող կլիներ ցրել վոչ կատարյալ իրավունք ունեցող ազգերի աշխատավոր մասսաների՝ դեպի տիրապետող ազգերի պրոլետարիատը տածած անվստահության մթնոլորտը, կարող կլիներ ազգերի հավասարության և այդ ազգերի աշխատավորների միության ուղին հարթել։ Այդպիսի լոզունգ է հանդիսանում կոմունիստների առաջադրած լոզունգը՝ թերիրավասուն ազգերի և գաղութների պետականապես անջատվելու իրավունքի մասին լոզունգը։ Այդ լոզունգի առավելությունը կայանում է նրանում, վոր նա

1. Վոչնչացնում է ամեն մի հիմք, վոր կարող է կասկած հարուցել ուրիշ ազգի աշխատավորների հափշտակիչ ձգտումների վերաբերմամբ, հետևաբար՝ փոխադարձ վստահության և հոժարակամ միաբանության հող է պատրաստում։

2. Մերկացնում է իմպերիալիստների դեմքը, վորոնք կեղծորեն բարբաջում են ինքնորոշման մասին, բայց ճըգնում են իրենց հլու-հպատակ պահել, իրենց իմպերիալիստական պետության շրջանակից դուրս չթողնել թերիրավասուն ազգերին և գաղութները, և այդպիսով հենց խորացնում է վերջիններիս ազատագրական պայքարն իմպերիալիզմի դեմ։

Հազիվ թե կարիք կա ապացուցելու, վոր ռուս բանվորները չեյին գրավելու Արևմուտքի և Արևելքի այլազգի իրենց ընկերների համակրությունը, յեթե նրանք, իշխանությունն իրենց ձեռքն առնելով, չհայտարարեյին ժողովուրդների պետականապես անջատվելու իրավունքը, յեթե նրանք գործով չապացուցեյին իրենց պատրաստակամությունը ժողովուրդների այդ անկապտելի իրավունքը կյանքի մեջ իրականացնելու, յեթե նրանք չհրաժարվեյին, որինակ, Ֆինլանդիայի վրա ունեցած իրենց «իրավունքից» 1917 թ., յեթե նրանք դուրս չբերեյին հյուսիսային Պարսկաստա-

նից իրենց զորքերը (1917 թ.), յեթե նրանք չհրաժարվեին իրենց ունեցած պահանջներից Մոնղոլիայի, Չինաստանի մի մասի վրա և այլն, և այլն։

Նույնչափ անկասկած է, որ յեթե իմպերիալիստների՝ ինքնորոշման դրոշակով հմտորեն քողարկված պոլիտիկան Արևելքում անհաջողություններ է կրում, դա, իմիջի այլոց, նրա համար է, որ այդ պոլիտիկան հանդիպեց այնտեղ հետզհետե ուժեղացող ազատագրական շարժման, որը մնվել էր ժողովուրդների՝ պետականապես անջատվելու իրավունքի լոզունգի վոգով մղած ագիտացիայի հողի վրա։ Այդ բանը չեն հասկանում յերկրորդ և 2½ Ինտերնացիոնալի հերոսները, որոնք այնպես յեռանդուն հայհոյում են Բագվի «Գործողության և Պրոպագանդայի Խորհուրդը» նրա գործած մի քանի անեյական վրիպումների համար, սակայն այդ կհասկանա ամեն մեկը, ով նեղություն կկրի ծանոթանալու հիշած «Խորհրդի» գործընեյության հետ՝ նրա մի տարվա գոյության ընթացքում, նաև ասիական և աֆրիկական գաղութների ազատագրական շարժման հետ՝ վերջին յերկու-յերեք տարվա ընթացքում։

Յերրորդ մոմենտ.—դա ազգային-գաղութական հարցի և կապիտալի իշխանության, կապիտալիզմի անկման, պրոլետարիատի դիկտատուրայի հարցի միջև գոյություն ունեցող կապի, որգանական կապի ի ցույց հանելն է։ Յերկրորդ Ինտերնացիոնալի եպոխայում, ծայր աստիճանի սրղմված ազգային հարցը սովորաբար քննվում էր ինքնին վերցրած, անկախ՝ գալիք պրոլետարական հեղափոխության հետ ունեցած կապից։ Լուելյայն յենթադրվում էր, որ ազգային հարցը կվճռվի «բնականաբար», մինչև պրոլետարական հեղափոխությունը, մի շարք բարենորոգումների ճանապարհով՝ կապիտալիզմի սահմաններում, և որ պրոլետարական հեղափոխությունը կարելի յե իրագործել

առանց ազգային հարցի լուծման հետ համակարգելու, և ընդհակառակն, ազգային հարցը կարելի կլինի լուծել առանց տապալելու կապիտալի իշխանությունը, առանց պրոլետարական հեղափոխության հաղթանակի և մինչև պրոլետարական հեղափոխության հաղթանակը։ Այդ, ըստ էության, իմպերիալիստական հայացքն իրերի վրա կարմիր դծով անցնում է Շպրինգերի և Բաուերի հայտնի աշխատանքներում ազգային հարցի մասին։ Սակայն վերջին տասնամյակն ի ցույց հանեց ազգային հարցի այդ տեսակ ըմբռնման ամբողջ սխալությունը, ամբողջ նեխվածությունը։ Իմպերիալիստական պատերազմը ցույց տվեց, իսկ վերջին տարիների հեղափոխական պրակտիկան ավելորդ անգամ ապացուցեց, որ—

1. Ազգային և գաղութային հարցերն անբաժանելի են կապիտալի իշխանությունից ազատվելու հարցից.

2. Իմպերիալիզմը (կապիտալիզմի գերագույն ձևը) չի կարող գոյություն ունենալ առանց թերիրավասուն ազգերի և գաղութների քաղաքականապես և տնտեսականապես ստրկացման.

3. Թերիրավասուն ազգերն և գաղութները չեն կարող ազատագրվել առանց կապիտալի իշխանությունը խորտակելու.

4. Պրոլետարիատի հաղթանակը չի կարող հաստատուն լինել, յեթե թերիրավասուն ազգերը և գաղութները չազատագրվեն իմպերիալիզմի կեղեքումից։

Յեթե Յեվրոպան և Ամերիկան կարող են սոցիալիզմի և իմպերիալիզմի միջև հիմնական կռիվների ճակատ, ասպարեզ կոչվել, ապա թերիրավասուն ազգերն և գաղութները իրենց հում ապրանքներով, վառելանյութով, մթերքներով, մարդկային պաշարի ահագին քանակությամբ պետք է ճանաչվեն իմպերիալիզմի թիկունք, պահեստ։ Պատերազմը տանելու համար պետք է հաղթել վոչ միայն ճակատում,

այլև պետք է հեղափոխականացնել հակառակորդի թիկունքը, նրա պահեստները։ Ուստի և համաշխարհային պրոլետարական հեղափոխության հաղթանակը միայն այն դեպքում կարելի է ապահովված համարել, եթե պրոլետարիատը կարողանա իր սեփական հեղափոխական պայքարը համակարգել թերիրավասուն ազգերի և գաղութների աշխատավոր մասսաների ազատագրման շարժման հետ՝ հանդեպ իմպերիալիստների իշխանության, պրոլետարիատի դիկտատուրայի համար։ Այս «չնչին» հանգամանքը աչքաթող են արել Յերկրորդ և 2½ Ինտերնացիոնալի գործիչները, անջատելով ազգային-գաղութային հարցը իշխանության հարցից՝ Արևմուտքում աճող պրոլետարական հեղափոխության եպոխայում։

Չորրորդ մոմենտ.—դա ազգային հարցում նոր տարրի ներմուծումն է, ազգությունների հավասարացման (ոգնություն, աջակցություն՝ հետամնաց ազգություններին, վորպեսզի նրանք կարողանան հասնել իրենցից ավելի առաջ գնացած ազգությունների կուլտուրական և տնտեսական մակարդակին) փաստական տարրի (և վոչ միայն իրավային), վորպես հիմնական պայմաններից մեկը՝ տարբեր ազգությունների աշխատավոր մասսաների միջև յեղբայրական աշխատակցություն հաստատելու համար։ Յերկրորդ Ինտերնացիոնալի եպոխայում սովորաբար բավականանում էին «ազգային իրավահավասարություն» հայտարարելով. ամենալավ դեպքում այդպիսի իրավահավասարությունը կյանքի մեջ իրագործելու պահանջից ավելի հեռու չեին գնում։ Սակայն ազգային իրավահավասարությունը, վոր ինքնըստինքյան չափազանց կարևոր քաղաքական նվաճում է, դատարկ հնչյուն մնալու վտանգի յե յենթարկվում, յեթե չկան բավականաչափ միջոցներ և հնարավորություններ՝ այդ չափազանց կարևոր իրավունքն ոգտագործելու համար։ Անկասկած է, վոր հետամնաց ազգերի աշխատա-

վոր մասսաներն անզոր են ոգտագործելու «ազգային իրավահավասարությամբ» նրանց տրված իրավունքներն այն չափով, ինչ չափով վոր կարող են ոգտագործել առաջադեմ ազգությունների աշխատավոր մասսաները.—անցյալից ժառանգած՝ ազգությունների փաստական անհավասարությունը (կուլտուրական, տնտեսական), վոր անկարելի յե վոչնչացնել մեկ-յերկու տարվա ընթացքում, իրեն զգացնել է տալիս։ Այդ հանգամանքն առանձնապես ուժեղ է զգացվում Ռուսաստանում, ուր մի շարք ազգություններ դեռ չեն կարողացել անցնել, իսկ մի քանիսները նույնիսկ չեն էլ մտել կապիտալիզմի շրջանը, չունեն կամ համարյա բոլորովին չունեն իրենց պրոլետարիատը, ուր, չնայած վոր ազգային լիակատար իրավահավասարությունն արդեն իրագործված է, այդ ազգությունների աշխատավոր մասսաները, շնորհիվ իրենց կուլտուրական և տնտեսական յետամնացության, անզոր են բավականաչափ ոգտագործելու իրենց ձեռք բերած իրավունքները։ Այդ անհավասարությունն ավելի խիստ կզգացվի Արևմուտքում, պրոլետարիատի հաղթանակի «հետևյալ որը», յերբ անխուսափելի կերպով հանդես են գալու բազմաթիվ յետամնաց գաղութները և կիսագաղութները, վորոնք զարգացման ամենատարբեր աստիճանների վրա յեն կանգնած։ Ահա հենց դրա համար անհրաժեշտ է, վորպեսզի առաջադեմ ազգերի հաղթական պրոլետարիատը ոգնության գա հետամնաց ազգությունների աշխատավոր մասսաներին՝ նրանց կուլտուրական և տնտեսական զարգացման գործում, վորպեսզի նա ոգնի նրանց՝ զարգացման բարձրագույն աստիճանին հասնելու և առաջ գնացած ազգություններին հավասարվելու։ Առանց այդպիսի ոգնության անհնարին է հաղթել տարբեր ազգերի և ժողովուրդների աշխատավորների այն հաշտ կենակցությունն ու յեղբայրական աշխատակցությունը համաշխարհային միասնական տնտեսության

մեջ, վոր այնպես անհրաժեշտ է սոցիալիզմի վերջնական հաղթանակի համար։

Սակայն դրանից հետևում է, վոր, չի կարելի բավականանալ լոկ «ազգային իրավահավասարությամբ», և վոր անհրաժեշտ է «ազգային իրավահավասարությունից» անցնել ազգությունների փաստական հավասարացման միջոցներին, հետևյալ գործնական միջոցների մշակման և իրագործման.—

1. Յետամնաց ազգությունների և ժողովուրդների տնտեսական դրության, կենցաղի և կուլտուրայի ուսումնասիրության.

2. Նրանց կուլտուրայի զարգացման.

3. Նրանց քաղաքական կրթության.

4. Նրանց աստիճանաբար և անցավագին հաղորդակից անելու տնտեսության բարձրագույն ձևերին.

5. Հետամնաց և առաջադեմ ազգությունների աշխատավորների միջև տնտեսական աշխատակցության հաստատման։

Ահա այն չորս հիմնական մոմենտները, վորոնք բնորոշում են ազգային հարցի՝ կոմունիստների տված նոր ձևակերպումը։

2—V—1922 թ.

ԸՆԿ. ՍՏԱԼԻՆԻ ԶԵԿՈՒՅՈՒՄԸ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ.

(1921 թ. մարտին, Ռ. Կ. Կ. X Համագումարին).

Նախ քան անմիջապես անցնելը կուսակցության՝ ազգային հարցի վերաբերյալ ունեցած հերթական կոնկրետ խնդիրներին, անհրաժեշտ է սահմանել մի քանի նախադրյալներ, առանց վորոնց անկարելի յե ազգային հարցի լուծումը։ Այդ նախադրյալները վերաբերում են ազգի ծագման հարցին, ազգային ճնշման սաղմնավորության, ազգության ճնշման ձևերին՝ պատմության զարգացման ընթացքում և ապա ազգային հարցի լուծման ձևերին՝ զարգացման տարբեր պերիոդներում։

Այդպիսի յերեք պերիոդ կա։

Առաջին պերիոդը—դա Արևմուտքում ֆեոդալիզմի լիկվիդացիայի և կապիտալիզմի հաղթանակի պերիոդն է։ Մարդկանցից ազգություններ կազմվելը վերաբերվում է այդ պերիոդին։ Յես ինկատի ունեմ այնպիսի յերկրներ, ինչպես Անգլիան է (առանց Իռլանդիայի), Ֆրանսիան, Իտալիան։ Արևմուտքում—Անգլիայում, Ֆրանսիայում և մասամբ Գերմանիայում—ֆեոդալիզմի լիկվիդացիայի և մարդկանցից ազգություններ կազմվելու պերիոդը, ըստ ժամանակի, ընդհանուր առմամբ զուգադիպում է կենտրոնացած պետությունների յերևան գալու պերիոդին, վորի պատճառով ազգություններն այնտեղ իրենց զարգացման ընթացքում պետական ձևեր եյին գտնում։ Յեվ ինչ չա-

փով վոր այդ պետութիւնների ներսում չկային ուրիշ փոքր ի շատե աչքի ընկնող ազգային խմբավորումներ, այն չափով էլ այնտեղ չկար և ազգային ճնշում։ Յեվրոպայի արևելքում, ընդհակառակն, ազգութիւնների կազմակերպման պրոցեսը և ֆեոդալական չլատվածութիւն լիկվիդացիան, ըստ ժամանակի, չզուգադիպեց կենտրոնացած պետութիւնների գոյացման պրոցեսի հետ։ Յես ինկատի ունեմ Վենգրիան, Ավստրիան, Ռուսաստանը։ Այդ յերկրներում կապիտալիստական զարգացում դեռ չկար, նաթերևս դեռ նոր եր սաղմնավորվում, մինչդեռ տաճիկների, մոնղոլների և Արևելքի մյուս ազգերի հարձակումներից պաշտպանվելու շահերը պահանջում եյին անհապաղ կազմել կենտրոնացած պետութիւններ, վորոնք ընդունակ լինեյին այդ հարձակումների դրոհին դիմադրելու։ Յեվ, վորովհետև, Յեվրոպայի արևելքում կենտրոնացած պետութիւնների յերևան գալու պրոցեսը ավելի արագ եր ընթանում, քան մարդկանցից ազգութիւններ կազմվելու պրոցեսը, ուստի և այնտեղ կազմվում են խառն պետութիւններ, բաղկացած տարբեր ժողովուրդներից, վորոնք դեռևս իբրև ազգութիւն չեյին կազմակերպվել, սակայն արդեն միավորված եյին ընդհանուր պետութիւնների մեջ։

Այդպիսով առաջին պերիոդը բնորոշվում է ազգութիւնների յերևան գալով՝ կապիտալիզմի արշալույսին, ըստ վորում Յեվրոպայի արևմուտքում սաղմնավորվում են զուտ ազգային պետութիւններ՝ ազգային ճնշումից զերծ, իսկ արևելքում սաղմնավորվում են բազմազգային պետութիւններ, վորի գլուխն է կանգնած մեկ, ավելի զարգացած ազգութիւն, իսկ մյուս ավելի սակավ զարգացած ազգութիւնները քաղաքականապես, իսկ հետո նաև տնտեսապես հպատակվում են գերիշխող ազգութիւն։ Արևելքի այդ բազմազգային պետութիւններն են որոնք հանդիսանում այն ազգային ճնշման, վորը առաջ բերեց ազգային ընդհա-

բուՀեր, ազգային շարժուՀեր, ազգային Հարցը և այդ Հարցի լուծման տարբեր միջոցները։

Ազգային ճնշման և դրա դեմ մաքառելու միջոցների զարգացման յերկրորդ պերիոդը զուգադիպում է իմպերիալիզմի յերևան գալու պերիոդի Հետ, յերբ կապիտալիզմը Հում մթերքների, վառելանյութի և բանվորական արժան ուժի վաճառահանության շուկաներ փնտռելիս, կապիտալի արտահանության պայքարի և յերկաթուղային ու ծովային ուղիների ապահովացման Համար դուրս է ցատկում ազգային պետության շրջանակներից և իր տերրիտորիան լայնացնում է մոտավոր ու Հեռավոր Հարևանների Հաշվին։ Այդ յերկրորդ պերիոդում Արևմուտքի Հին ազգային պետությունները—Անգլիան, Իտալիան և Ֆրանսիան—դադարում են ազգային պետություններ լինելուց, այսինքն, նրանք նոր տերրիտորիաներ գրավելու շնորհիվ, վերակերպվում են բազմազգային, գաղութատիրական պետությունների, և Հենց այդպիսով ասպարեզ Հանդիսանալով այն ազգային և գաղութատիրական ճնշման, վոր առաջ ածդեն գոյություն ուներ Յեվրոպայի արևելքում։ Յեվրոպայի արևելքում այդ պերիոդը բնորոշվում է Հպատակ ազգերի արթնացումով և ուժեղանալով (չեխերի, լեհերի, ուկրայինցիների), վոր իմպերիալիստական պատերազմի շնորհիվ Հանգում է Հին բուրժուական բազմազգային պետությունների քայքայման և, այսպես կոչված, մեծ պետությունների ձեռքին ստրուկ դարձած նոր ազգային պետությունների գոյացման։

Յերրորդ պերիոդը—դա խորՀրդային պերիոդն է, կապիտալիզմի վերացման և ազգային ճնշման լիկվիդացիայի պերիոդը, յերբ գերիշխող ու Հպատակ ազգերի Հարցը, գաղութների և մետրոպոլիայի Հարցը պատմության արխիվն են անցնում, յերբ մեր առաջ Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. տերրիտորիայի վրա վոտքի յեն կանգնում Հավասար իրավունք-

բումներ, ազգային շարժումներ, ազգային հարցը և այդ հարցի լուծման տարբեր միջոցները։

Ազգային ճնշման և դրա դեմ մաքառելու միջոցների զարգացման յերկրորդ պերիոդը զուգադիպում է իմպերիալիզմի յերևան գալու պերիոդի հետ, յերբ կապիտալիզմը հում մթերքների, վառելանյութի և բանվորական արժան ուժի վաճառահանության շուկաներ փնտռելիս, կապիտալի արտահանության պայքարի և յերկաթուղային ու ծովային ուղիների ապահովացման համար դուրս է ցատկում ազգային պետության շրջանակներից և իր տերրիտորիան լայնացնում է մոտավոր ու հեռավոր հարևանների հաշվին։ Այդ յերկրորդ պերիոդում Արևմուտքի հին ազգային պետությունները—Անգլիան, Իտալիան և Ֆրանսիան—դադարում են ազգային պետություններ լինելուց, այսինքն, նրանք նոր տերրիտորիաներ գրավելու շնորհիվ, վերակերպվում են բազմազգային, գաղութատիրական պետությունների, և հենց այդպիսով ասպարեզ հանդիսանալով այն ազգային և գաղութատիրական ճնշման, վոր առաջ ուրդեն գոյություն ուներ Յեվրոպայի արևելքում։ Յեվրոպայի արևելքում այդ պերիոդը բնորոշվում է հպատակ ազգերի արթնացումով և ուժեղանալով (չեխերի, լեհերի, ուկրայինցիների), վոր իմպերիալիստական պատերազմի շնորհիվ հանգում է հին բուրժուական բազմազգային պետությունների քայքայման և, այսպես կոչված, մեծ պետությունների ձեռքին ստրուկ դարձած նոր ազգային պետությունների գոյացման։

Յերրորդ պերիոդը—դա խորհրդային պերիոդն է, կապիտալիզմի վերացման և ազգային ճնշման լիկվիդացիայի պերիոդը, յերբ գերիշխող ու հպատակ ազգերի հարցը, գաղութների և մետրոպոլիայի հարցը պատմության արխիվն են անցնում, յերբ մեր առաջ Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. տերրիտորիայի վրա վոտքի յեն կանգնում հավասար իրավունք-

յենթարկելու համար իմպերիալիստական պետությունների իրար դեմ մղած պատերազմի հարց։ Այդպիսով, ազգային հարցը, վոր առաջ նշանակություն ուներ միայն քաղաքակիրթ յերկրներում, այդ պերիոդում կորցնում է իր մեկուսացած բնույթը և ձուլվում է գաղութների ընդհանուր հարցի հետ։

Ազգային հարցի՝ ընդհանուր-գաղութային հարց դառնալը պատմական պատահական յերևույթ չե։ Այդ փոխակերպումը բացատրվում է նախ նրանով, վոր իմպերիալիստական պատերազմի ժամանակ հենց պատերազմող պետությունների իմպերիալիստական խմբավորումները հարկադրված եյին դիմելու գաղութներին, վորտեղից նրանք դուրս եյին քաշում մարդկային նյութ, վորից և կազմակերպում եյին իրենց զորքերը։ Անկասկած է, վոր այդ պրոցեսը չեր կարող չգարթեցնել այդ ցեղերն ու ժողովուրդները ազատագրվելու համար, պայքարելու համար։ Այնուհետև, յերկրորդ ֆակտորը, վոր նպաստել է ազգային հարցի լայնանալուն և ընդհանուր-գաղութային հարց դառնալուն, վոր տիրել է ամբողջ յերկրագնդին՝ նախ ազատագրական շարժման կայծերով և ապա բոցերով, դա Տաճկաստանը բաժանելու և նրա պետական գոյությանը վերջ դնելու իմպերիալիստական խմբավորումների փորձն է։ Տաճկաստանը, վոր մահմեդական ազգերի մեջ պետական տեսակետից ամենազարգացած յերկիրն է, այդ Տաճկաստանը չեր կարող հաշտվել այդ տեսակ պերսպեկտիվի հետ. նա կռվի դրոշ պարզեց և իր շուրջը խմբեց Արևելքի ժողովուրդներին՝ ընդդեմ իմպերիալիզմի։ Յերրորդ ֆակտորը—դա Խորհրդային Ռուսաստանի յերևանգալն է, վորի պայքարն ընդդեմ իմպերիալիզմի մի շարք հաջողություններ ունեցավ և բնականաբար վոգևորեց Արևելքի ճնշված ժողովուրդներին, արթնացրեց նրանց, կռվի կոչեց նրանց և այդպիսով հնարավորություն տվեց

ճնշված ազգությունների մի ընդհանուր ճակատ կազմելու՝ Իռլանդիայից սկսած մինչև Հնդկաստան։

Ահա այն բոլոր փաստերները, որոնք ազգային ճնշման յերկրորդ ստադիայում հասցրին այն հետևանքի, որ բուրժուական հասարակությունը ոչ միայն չվճռեց ազգային հարցը, ոչ միայն խաղաղություն չհաստատեց ժողովուրդների մեջ, այլ ընդհակառակն, ազգային պայքարի կայծը դարձրեց գաղութների և կիսագաղութների ճնշված ազգերի պայքարի բոց, պայքարի, որ մղվում է ընդդեմ համաշխարհային իմպերիալիզմի։

Ակներև է, որ ազգային հարցը լուծելու ընդունակ միակ ռեժիմը, այսինքն, այն ռեժիմը, որը ընդունակ է ստեղծելու զանազան ժողովուրդների և ցեղերի յեղբայրական աշխատակցությունն ու համերաշխ կենակցությունն ապահովելու պայմանները—դա Խորհրդային իշխանության ռեժիմն է, պրոլետարիատի դիկտատուրայի ռեժիմը։

Հազիվ թե կարիք լինի ապացուցելու, որ կապիտալի իշխանության, դասակարգերի գոյության և արտադրության միջոցների մասնավոր սեփականության ժամանակ անկարելի յե ապահովել ազգությունների հավասարությունը, որ քանի դեռ գոյություն ունի կապիտալի իշխանությունը, քանի դեռ կռիվ է մղվում արտադրության միջոցներին տիրանալու համար, ազգությունների ոչ մի հավասարություն չի կարող լինել, ինչպես և չի կարող լինել ազգերի աշխատավոր մասսաների փոխադարձ աշխատակցություն։ Պատմությունն ասում է, որ ազգային անհավասարության վերացման միակ միջոցը, ճնշված և կիսաճնշված ժողովուրդների աշխատավոր մասսաների յեղբայրական աշխատակցության ռեժիմը հաստատելու միակ միջոցը—դա կապիտալիզմի լիկվիդացիան և խորհրդային իշխանության հաստատումն է։

Այնուհետև պատմությունը ցույց է տվել, որ քանի

վոր առանձին ժողովուրդներին հաջողվում է իրեն ազատել իր ազգային բուրժուազիայից, ինչպես նաև «ոտար» բուրժուազիայից, այսինքն, քանի վոր նրանք իրենց մոտ խորհրդային իշխանություն են հաստատում, նրանք հնարավորություն չունեն իմպերիալիզմի կարգերում առանձին գոյություն ունենալու և հաջողությամբ պաշտպանելու իրենց գոյությունը առանց հարևան հանրապետությունների կողմից տնտեսական և ռազմական ոգնություն ստանալու։ Վենգրիայի որինակը փայլուն ապացույց է, վոր առանց խորհրդային հանրապետությունների պետական միության, առանց նրանց ռազմա-տրնտեսական ուժի ի մի ձուլման անհնարին է դիմադրել համաշխարհային իմպերիալիզմի միացյալ ուժերին, վոչ ռազմական և վոչ էլ տնտեսական ճակատներում։

Խորհրդային հանրապետությունների ֆեդերացիան հանդիսանում է պետական միության այն համր ձևը, վորի կենդանի մարմնացումն է Ռ. Ս. Ֆ. Խ. Հ.։

Ահա, ընկերներ, այն նախադրյալները, վորոնց մասին յես խոսեցի, այսինքն յես ցանկացա այդ նախ և առաջ կրկնել այստեղ նրա համար, վորպեսզի հետո հիմնավորել մեր կուսակցության վորոշ քայլերի անհրաժեշտությունը ազգային հարցի լուծման խնդրում՝ Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. շրջանակում։

Թեև խորհրդային ռեժիմի ժամանակ Ռուսաստանում և Ռուսաստանի հետ կապված հանրապետությունների մեջ չկան այլևս վոչ գերիշխող և վոչ էլ իրավազուրկ ազգություններ, վոչ մետրոպոլիա, վոչ գաղութներ, վոչ շահագործողներ և վոչ էլ շահագործվողներ, այնուամենայնիվ, ազգային հարցը Ռուսաստանում գոյություն ունի։ Ռ. Ս. Ֆ. Խ. Հ.-ի մեջ ազգային հարցի եյությունը կայանում է նրանում, վոր վերացվի ազգությունների այն յեռամնացությունը (տնտեսական, քաղաքական և

կուլտուրական), վոր մենք ժառանգել ենք անցյալից, վորպեսզի հնարավորություն տանք յետամնաց ժողովուրդներին հասնելու կենտրոնական Ռուսաստանին թե՛ պետական, թե՛ կուլտուրական և թե՛ տնտեսական տեսակետից։ Հին ռեժիմի ժամանակ ցարական իշխանությունը չեր ջանում և չեր կարող ջանալ պետականություն զարգացնելու Ուկրայինայում, Ադրբեջանում, Թուրքեստանում և ուրիշ ծայրամասերում. նա ծայրամասերում պայքարում եր պետականության զարգացման դեմ, ինչպես նաև նրանց կուլտուրական զարգացման դեմ, ձգտելով բռնի կերպով ասիմիլյացիայի յենթարկելու ընիկ ժողովրդին։ Այնուհետև, հին պետությունը, կալվածատերերն ու կապիտալիստները, մեզ համար ժառանգություն են թողել այնպիսի խեղճ ժողովուրդներ, ինչպես, որինակ՝ կիրգիզները, չեչենները, ոսերը, վորոնց հողերը ծառայեցնում եյին՝ Ռուսաստանի կազակներին և կուլակային տարրերին այնտեղ բնակեցնելու համար։ Այդ ժողովուրդները դատապարտված եյին անասելի տանջանքների և մահացման։ Այնուհետև, վելիկոռուս ազգության դրությունը, վոր գերիշխող ազգություն եր կազմում, իր ազդեցության դրրոշմն է թողել նույնիսկ ռուս կոմունիստների վրա, վորոնք չգիտեն կամ չեն ցանկանում ավելի սերտ կերպով մոտենալ մյուս ազգությունների մասսաներին, հասկանալ նրանց կարիքը և ոգնել նրանց դուրս գալու յետամնացությունից և անկուլտուրականությունից։ Ցես խոսում եմ ռուս կոմունիստների այն բազմաթիվ խմբերի մասին, վորոնք իրենց աշխատանքի մեջ անտես առնելով ծայրանահանգների կենցաղի և կուլտուրայի առանձնահատկությունները, յերբեմն թեքվում են դեպի ռուսական մեծապետական շովինիզմը։ Այնուհետև, ազգային ճնշում կրած վոչ ռուս ազգությունների դրությունը իր ազդեցության հետքերն է թողել նույնիսկ վոչ-ռուս կոմունիստ-

ների վրա, որոնք յերբեմն չեն կարողանում տարբերել իրենց ժողովրդի աշխատավոր մասսաների դասակարգային շահերը, այսպես կոչված, «համաժողովրդական» շահերից։ Խոսքս այն թեքման մասին է, այն նացիոնալիզմի մասին է, որը յերբեմն նկատվում է տեղական, «այլազգի» կոմունիստների շարքերում և որը Արևելքում արտահայտվում է պանիսլամիզմի և պանթյուրքիզմի մեջ։ Վերջապես, անհրաժեշտ է փրկել մահանալուց կիրգիզներին, բաշկիրներին և մի քանի լեռնական ցեղերին, ապահովել նրանց անհրաժեշտ հողով՝ ի հաշիվ կուլակ-կոլոնիզատորների։ Այս է ահա այն ժառանգության վոչ լրիվ ցանկը, որ ստացել ենք մենք անցյալից և որն անպայման պետք է լիկվիդացիայի յենթարկվի։

Բնորոշելով կուսակցության այս հերթական խնդիրները, յես կցանկանայի անցնել ընդհանուր խնդրին—ծայրանահանգներում մեր կոմունիստական քաղաքականության հարմարեցման խնդրին, տնտեսական դրության այն հատուկ պայմաններին, որ մենք հանդիպում ենք գլխավորապես Արևելքում։

Բանը նրանում է, որ մի շարք, գլխավորապես, թյուրքական ժողովուրդներ, մոտավորապես 30 միլիոն՝ չեն անցել, ժամանակ չեն ունեցել անցնելու արդյունաբերական կապիտալիզմի պերիոդը, ուստի և չունեն կամ համարյա թե չունեն արդյունաբերական պրոլետարիատ, որի շնորհիվ նրանք ստիպված են տնտեսության նախնական ձևերից անցնելու խորհրդային տնտեսության ստադիային, դանց առնելով արդյունաբերական կապիտալիզմը։ Այդ դժվար, սակայն վոչ անհնարին փոխանցումը կատարելու համար, անհրաժեշտ է հաշվի առնել այդ ժողովուրդների տնտեսական դրության, նույնիսկ պատմական անցյալի, կենցաղի և կուլտուրայի բոլոր առանձնահատկությունները. իսկ կիրառել այդ ժողովուրդների տերրիտորիայի վրա այն

միջոցները, որոնք ուժ և նշանակություն ունեին այստեղ, Ռուսաստանի կենտրոնում—միտք չունի և վտանգավոր եւ Պարզ է, որ Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. տնտեսական քաղաքականությունը անցկացնելիս անպայման պետք է ուշադրություն դարձնել տնտեսական դրության, դասակարգային ստրուկտուրայի, պատմական անցյալի այն բոլոր առանձնահատկությունների վրա, որ մենք գտնում ենք ծայրանահանգներում։ Ցես դեռ չեմ խոսում այնպիսի անհեթեթությունների վերացման մասին, ինչպես, որինակ՝ Պարենժողկոմի այն պահանջը, որ ըստ մասնատրբրման, խոզեր պետք է տա Կիրգիզիան, ուր մահմեդական ազգաբնակչությունը խոզեր յերբեք չի ունեցել։ Այդ որինակից յերևում է, թե որ աստիճան չեն ցանկանում հաշվի առնել կենցաղի առանձնահատկությունները, որոնք աչքի յե ընկնում նույնիսկ առաջին ճանապարհորդին։

Ինձ այս բոլորին մի տոմս տվին, որի մեջ խրնդրում են պատասխան տալ ընկեր Չիչերինի հոդվածներին։ Ընկերներ, իմ կարծիքով Չիչերինի հոդվածները, որ յես ուշադրությամբ կարդացի, բացի յիտերատուրշչինացից ուրիշ վոչինչ չեն ներկայացնում։ Այնտեղ կա չորս սխալ, կամ չորս թյուրիմացություն։ Նախ, ընկ. Չիչերինը հակումն ունի ժխտելու իմպերիալիստական պետությունների միջև գոյություն ունեցող հակասությունները, գերագնահատելով իմպերիալիստների ինտերնացիոնալ միավորումը և աչքաթող անելով, թերագնահատելով իմպերիալիստական խմբավորումների և պետությունների միջև այն ներքին հակասությունները, որոնք գոյություն ունեն և պատերազմ են առաջ բերում (Ֆրանսիա, Ամերիկա, Անգլիա, Ցապոնիա և այլն)։ Նա գերագնահատում է իմպերիալիստական բարձունքների միավորման մոմենտը և թերագնահատում այն հակասությունները, որ գոյություն ունեն այդ տրեստի ներսը։ Մինչդեռ այդ հակասություն-

ները կան և նրանց վրա յե հիմնված Արտգործժողկոմատի գործունեությունը։ Այնուհետև ընկ. Չիչերինը յերկրորդ սխալն ե գործում։ Նա թերագնահատում ե այն հակասությունները, վոր գոյություն ունեն գերիշխող մեծ պետությունների և վերջերս գոյացած ազգային պետությունների միջև (Չեխո-Սլովակիա, Լեհաստան, Ֆինլանդիա և այլն), վորոնք ֆինանսական և ռազմական կախումն ունեն այդ մեծ պետություններից։ Ընկ. Չիչերինը բոլորովին աչքաթող ե անում, վոր չնայած այդ ազգային պետությունների՝ մեծ պետություններից ունեցած կախման, կամ ավելի ճիշտ, շնորհիվ այդպիսի կախման, մեծ պետությունների և նրանց մեջ կան հակասություններ, վորոնք յերևան յեկան, որինակ, Լեհաստանի, Եստոնիայի և ուրիշների հետ ունեցած բանակցությունների ժամանակ։ Արտգործժողկոմատի գոյության իմաստը կայանում ե հենց նրանում, վոր այդ բոլոր հակասությունները հաշվի առնի, նրանց վրա հիմնվի և գործի այդ հակասությունների սահմաններում։ Զարմանալի յե, վոր ընկեր Չիչերինը թերագնահատում ե այդ մոմենտը։ Ընկեր Չիչերինի յերրորդ սխալն այն ե, վոր նա չափազանց շատ ե խոսում ազգային ինքնորոշման մասին, վորը, իրոք, դատարկ լոզունգի յե փոխվել և դա հեշտությամբ ոգտագործում են իմպերիալիստները։ Ընկեր Չիչերինը տարորինակ կերպով մոռացել ե, վոր մենք արդեն յերկու տարի յե, ինչ հրաժեշտ ենք տվել այդ լոզունգին։ Մեր ծրագրում այդ լոզունգը այլևս չկա։ Մեր ծրագրում խոսվում ե վոչ թե ազգային ինքնորոշման մասին—այդ բոլորովին ճապաղ լոզունգի մասին—այլ ավելի պարզորոշ և կտրուկ լոզունգի մասին—ազգերի պետականապես անջատվելու իրավունքի մասին։ Դրանք տարբեր բաներ են։ Ընկեր Չիչերինը իր հոդվածներում տարորինակ կերպով հաշվի չի առնում այդ մոմենտը և դրա շնորհիվ ճապաղ դարձած լոզունգի դեմ նրա բոլոր

առարկությունները փուչ պայթյունի բնույթ են կրում, որովհետև՝ վոչ յես իմ թեզիսներում և վոչ էլ կուսակցության ծրագիրը վոչ մի խոսքով չենք հիշատակում «ինքնորոշման» մասին։ Այնտեղ ասված է միմիայն ազգերի պետականապես անջատվելու իրավունքի մասին։ Բայց այդ լոզունգը մեզ համար, ներկայումս, գաղութներում բռնկող ազատագրական շարժման մոմենտին, հեղափոխական լոզունգ է դառնում։ Ինչ չափով վոր խորհրդային պետությունները կառավարության սկզբունքով միանում են մի ֆեդերացիայի մեջ, նույն չափով էլ անջատման իրավունքը մնում է չոգտագործված ըստ այն ազգերի կամքի, վոր մտնում են Ռ. Ս. Ֆ. Խ. Հ.-ի մեջ։ Քանի վոր մենք գործ ունենք այն գաղութների հետ, վորոնք գտնվում են Անգլիայի, Ֆրանսիայի, Ամերիկայի, Յապոնիայի ճանկերում, քանի վոր մենք գործ ունենք այնպիսի հպատակ ժերկրների հետ, ինչպես՝ Արաբիա, Միջագետք, Տաճկաստան, Հնդկաստան, այսինքն այն ժերկրների հետ, վորոնք Անտանտի գաղութներն են կազմում—ազգերի անջատման իրավունքի լոզունգը հեղափոխական լոզունգ է դառնում և հրաժարվել նրանից—նշանակում է Անտանտի ոգտին խաղալ։ Զորրորդ թյուրիմացությունը—դա ընկեր Զիչերինի հոդվածներում գործնական ցուցմունքների բացակայությունն է։ Հոդված գրելը, ինարկե, հեշտ է, բայց վորպեսզի նրանց տալ այսպիսի վերնագիր՝ «Ընկեր Ստալինի թեզիսների դեմ»—հարկավոր է վորևե լուրջ, գոնե գործնական հակա-առաջարկներ առաջ բերել։ Այնինչ, վոչ մի գործնական առաջարկ, վորին ականջ դնել արժենար, յես չգտա նրա հոդվածների մեջ։

Յես վերջացնում եմ, ընկերներ։ Մենք հանգեցինք հետևյալ յեզրակացություններին.—բուրժուական հասարակությունը վոչ միայն անընդունակ հանդիսացավ ապ-

գային հարցը վճռելու համար, այլ ընդհակառակը, վճռելու իր փորձերի շնորհիվ նա ազգային հարցը փքեցրեց և դարձրեց գաղութային հարց ու իր դեմ ստեղծեց նոր ճակատ, որը ձգվում է Իռլանդայից մինչև Հնդկաստան։ Միայակ պետությունը, որ ընդունակ է դնել և վճռել ազգային հարցը,—դա այն պետությունն է, որը հենված է արտադրության միջոցների և գործիքների կոլեկտիվ սեփականատիրության վրա — դա խորհրդային պետությունն է։ Խորհրդային ֆեդերատիվ պետության մեջ չկան այլևս ոչ ճնշված ազգություններ, ոչ գերիշխողներ. ազգային ճնշումը վոչնչացված է, բայց շնորհիվ հին, բուրժուական կարգերից ժառանգած փաստական անհավասարության (կուլտուրական, տնտեսական, քաղաքական), որ տեղի ունի ավելի կուլտուրական և պակաս կուլտուրական ազգությունների միջև, ազգային հարցը ստանում է մի ձև, որը պահանջում է նախաձեռնել այնպիսի միջոցներ, որոնք կնպաստեն յետամնաց ազգերի աշխատավոր մասսաներին դյուրացնելու իրենց տնտեսական, քաղաքական և կուլտուրական բարգավաճումը, հնարավորություն կտան նրանց՝ հասնելու առաջդեմ կենտրոնական պրոլետարական Ռուսաստանին։ Այստեղից բղխում են այն գործնական առաջարկները, որոնք կազմում են ազգային հարցի վերաբերմամբ իմ առաջարկած թեզիսների յերրորդ մասի բովանդակությունը։

ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆԻ ՑԵՉՐԱՓԱԿՄԱՆ ԽՈՍՔԸ.

Ընկերնե՛ր! Այս համագումարի համար ազգային հարցի վերաբերյալ դիսկուսիայում ամենից բնորոշն այն է, որ մենք ազգային հարցի մասին արած դեկլարացիայից՝ Ռուսաստանի ադմինիստրատիվ վերաբաժանման միջոցով՝ անցանք հարցի պրակտիկ ձևակերպմանը։ Հոկտեմբերյան

հեղափոխության սկզբում մենք բավականացանք ժողովուրդների անջատման իրավունքների դեկլարացիայով։ 1918 և 1920 թվերին մենք աշխատանք տարանք Ռուսաստանի ադմինիստրատիվ վերաբաժանման գծով՝ ըստ ազգայնական հատկանիշի, հոգուտ յեռամնաց ժողովուրդների աշխատավոր մասսաների մերձեցմանը Ռուսաստանի պրոլետարիատի հետ։ Իսկ այժմ, մենք այս համագումարում հարցը դնում ենք զուտ գործնական հողի վրա—թե ի՞նչպես պետք է լինի կուսակցության քաղաքականությունը աշխատավոր մասսաների և մանր-բուրժուական ելեմենտների նկատմամբ՝ Ռուսաստանի հետ կապված ավտոնոմ շրջանների և անկախ հանրապետությունների ներսում։ Ուստի և ընկ. Զատոնակու այն հայտարարությունը, որ ձեզ առաջարկված թեզիսները աբստրակտ բնույթ են կրում—ինձ զարմացրեց. յես ձեռքիս տակ չունեմ նրա սեփական թեզիսները, որոնք նա, չգիտեմ ինչու, չառաջարկեց համագումարի ուշադրությանը, ուր (թեզիսներում) և վոչ մի գործնական առաջարկ յես չկարողացա գտնել, բացառությամբ, ի դեպ, մի առաջարկի՝ այն մասին, որ «Ռ. Ս. Ֆ. Խ. Հ.» փոխարինվի «արևելա-յեվրոպական» բառով, իսկ ռուսաստանյան (российское) բառը—ռուսական կամ վելիկոռուսական բառով։ Ուրիշ գործնական առաջարկություններ այդ թեզիսներում յես չգտա։

Այժմ յես անցնում եմ հետևյալ հարցին։ Պետք է հայտնեմ, որ յես ավելին եյի սպասում այն պատգամավորներից, որոնք այստեղ խոսեցին։ Ռուսաստանում հաշվվում է 22 ծայրամասեր, ըստ որում, ծայրամասերից մի քանիսը արդյունաբերական տեսակետից խիստ զարգացած են և արդյունաբերական կողմով քիչ բանով են տարբերվում Ռուսաստանից, մյուսները դեռ չեն անցել կապիտալիզմի ստադիան և հիմնովին տարբերվում են

Կենտրոնական Ռուսաստանի իրականությունից, մնացածները միանգամայն յետամնաց են։ Թեզիսներում անհնար է ընդգրկել ծայրամասերի այս բոլոր տարակերպությունները իրենց կոնկրետ ձևերով։ Չի կարելի պահանջել, որ ամբողջ կուսակցության համար նշանակություն ունեցող թեզիսները կրեին միայն թուրքեստանյան բնույթ, միայն ադրբեջանյան կամ միայն ուկրաինական բնույթ։ Անհրաժեշտ է՝ բոլոր յերկրների համար ընդհանուր բնորոշիչ գծերը վերցնել և մուծել թեզիսների մեջ, խուսափելով մանրամասնություններից. թեզիսներ մշակելու ուրիշ մեթոդներ գոյություն չունեն։ Վելիկոռուսական ազգություններն անհրաժեշտ է բաժանել մի քանի խմբերի, ինչը և արված է թեզիսներում։ Վոչ-ռուս ազգությունները կազմում են մոտ 65.000.000։ Այդ բոլոր վոչ-ռուս ազգությունների համար բնորոշ գիծը կայանում է նրանում, որ նրանք իրենց պետականության զարգացման իմաստով յետ են մնացել Կենտրոնական Ռուսաստանից։ Մեր անելիքը պիտի լինի—ամեն ջանք գործադնել՝ ոգնելու այդ ազգություններին, նրանց պրոլետարական, նրանց աշխատավոր ելեմենտներին, որպեսզի նրանք իրենց մոտ զարգացնեն պետականություն մայրենի լեզվով։ Այդ ընդհանուր բանը նիշված է թեզիսներում, սրանց գործնական մասում։ Այնուհետև, յեթե առաջ գնանք ծայրամասերի առանձնահատկությունների հետագա կոնկրետացման ճանապարհով, ապա պետք է ընդհանուր գումարից զատենք մոտ 65.000.000 վոչ-ռուս ազգություններին, 30 միլիոն թուրքական ազգաբնակչություն, որ չի անցել կապիտալիզմ։ Ընկեր Միքոյանը սխալվում է, ասելով, որ Ադրբեջանը մի շարք կողմերով բարձր է կանգնած ռուսական պրովինցիաներից։ Նա պարզապես շփոթում է Բաղուն Ադրբեջանի հետ։ Բաղուն զարգացել է վոչ թե Ադրբեջանի խորքերից, այլ վերա-

շինված է բարձրից, Նոբելի, Ռոտշիլդի, Վիշաուի (29) և ուրիշների ջանքերով։ Իսկ ինչ վերաբերում է իրեն, Ադրբեջանին, դա մի շատ յետամնաց յերկիր է, ուր դեռ իշխում են նահապետական-ֆեոդալական հարաբերություններ։ Ուստի և յես Ադրբեջանը վերագրում եմ ծայրամասերի այն խմբին, վորոնք չեն անցել կապիտալիզմ և վորոնց նկատմամբ անհրաժեշտ է կիրառել յուրահատուկ մեթոդներ՝ այդ ծայրամասերը խորհրդային տնտեսության հունի մեջ ներս առնելու համար։ Այդ մասին թեզիսներում ասված է։ Այնուհետև կա յերրորդ խումբ, վոր ընդգրկում է վոչ ավել 8 կամ 10 միլիոն. դա մեծ մասամբ խաշնարած ցեղեր են, ուր ցեղական կենցաղը դեռ ապրում է և վորոնք դեռևս չեն անցել յերկրագործական տնտեսության։ Այդ, գլխավորապես, կիրգիզներն են, Թյուրքեստանի հյուսիսային մասը, բաշկիրները, չեչենները, ոսները, ինգուշները։ Ազգությունների այդ խմբին ամենից առաջ հարկավոր է ապահովել անհրաժեշտ հողով։ Այստեղ կիրգիզներին ձայն չտվին, վիճաբանությունները դադարեցրին։ Նրանք ավելի՛ շատ բան կասեին, թե ի՞նչ տանջանքներ է ապրում լեռնային Բաշկիրիան, Կիրգիզիան և լեռնականները, վորոնք առանց հողի մարվում են։ Բայց այն, ինչ այդ առթիվ ասաց Սաֆարովը, դա միայն վերաբերում է ազգությունների մի խմբին, վոր 8-ից մինչև 10 միլիոն է կազմում։ Ուստի և միտք չունի ընկ. Սաֆարովի գործնական առաջարկները տարածել բոլոր ծայրամասերի վրա, վորովհետև վոչ-ռուս ազգությունների մնացած մասի (դրանց թիվը 55 միլիոն է) համար այդ ուղղումները վոչ մի նշանակություն չունեն։ Ահա թե ինչու յես չառարկելով, վոր ազգությունների վորոշ խմբերին վերաբերող առանձին կետերը կոնկրետացվեն, լրացվեն, յես պետք է ասեմ, վոր չի կարելի այդ ուղղումներն ընդհանրացնել։ Այնուհետև, յես պետք է նկատո-

դություն անեմ ընկեր Սաֆարովի մի ուղղումի առթիվ։ Նրա ուղղումներից մեկի մեջ ապրդել է մի ֆրազա «ազգային կուլտուրական ինքնորոշման» մասին... (կարդում է)։ Ցես պետք է ասեմ, որ այդ ուղղումն ընդունել չեմ կարող, որովհետև նրանից բունդիզմի հոտ է փչում։ Դա— բունդական ձևակերպում է՝ ազգային-կուլտուրական ինքնորոշում։ Մենք վաղուց ենք ձեռք քաշել ինքնորոշման մշուշոտ լոզունգներից. դրանք վերականգնել պետք չե։ Ըստ որում այդ ֆրազան կազմում է բառերի ամենաանբնական զուգորդումն։

Այստեղ յես ստացել եմ մի տոմսակ այն մասին, որ մենք կոմունիստներս՝ բելոռուսական ազգությունը իբր թե ստեղծում ենք արվեստական կերպով։ Այդ սխալ է, որովհետև գոյություն ունի բելոռուսական ազգություն, որն ունի իր լեզուն, որը տարբերվում է ռուսականից, այդ պատճառով էլ բելոռուսական կուլտուրան բարձրացնել կարելի յե միայն նրանց մայրենի լեզվով։ Հենց այսպիսի ճառեր էին լսվում 5 տարի առաջ Ուկրաինայի մասին, ուկրաինական ազգության մասին։ Իսկ նորերս դեռ խոսում էին այն մասին, որ Ուկրաինայի հանրապետությունը և ուկրաինական ազգությունը գերմանացիների հնարած բանն է։ Մենչդեռ պարզ է, որ ուկրաինական ազգությունը գոյություն ունի, և նրա կուլտուրայի զարգացումը կազմում է կոմունիստների պարտականությունը։ Չի կարելի պատմության դեմ գնալ։ Պարզ է, որ յեթե Ուկրաինայի քաղաքներում մինչև այժմ դեռ գերիշխում են ռուսական տարրեր, ապա ժամանակի ընթացքում այդ քաղաքներն անխուսափելիորեն պիտի ուկրաինացվեն։ 40 տարի առաջ Ռիգան իրենից ներկայացնում եր գերմանական քաղաք, բայց որովհետև քաղաքները ստեղծվում են գյուղերի հաշվին, իսկ գյուղը հանդիսանում է ազգայնության պահպանիչ, ապա այժմ

Ռիգան—զուտ լատիշական քաղաք է. 50 տարի առաջ Վենդրիայի բոլոր քաղաքները գերմանական բնույթ ունեին, այժմ դրանք մաղյարացված են։ Նույնը կլինի և Բելոռուսիայի հետ, վորի քաղաքներում դեռևս գերակշռում են վոչ-բելոռուսները։

Վերջացնելով յեզրափակման խոսքս, առաջարկում եմ ընտրել մի կոմիսիա, ուր պետք է մտնեն շրջանների ներկայացուցիչները ավելի կոնկրետացնելու համար թեզիսների այն կոնկրետ առաջարկները, վորոնք հետաքրքրում են մեր բոլոր ծայրագավառներին։ (Ծափահարություններ)։

(Համագումարը ընկ. Ստալինի թեզիսներն ընդունում է հիմք և ընտրում կոմիսիա)։

——

ԱԶԳԱՅԻՆ ՄՈՄԵՆՏՆԵՐԸ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՅԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ.

(Համ. Կ. Կ. (բ.) XII Համագումարին արած զեկուցումը՝ 23 ապրիլի 1923 թ.).

Ընկերներ! Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո յերրորդ անգամն է, որ մենք քննում ենք ազգային հարցը. առաջին անգամ—VIII համագումարում, յերկրորդ անգամ—X համագումարում և յերրորդ անգամ—XII համագումարում։ Արդյոք դա նշա՞ն է այն բանի, որ ազգային հարցի նկատմամբ մեր ունեցած հայացքների մեջ սկզբունքային ինչ-ինչ փոփոխություն է կատարվում։ Վո՛չ, ազգային հարցի նկատմամբ ունեցած մեր սկզբունքային հայացքը մնացել է նույնը, ինչ եր—մինչև Հոկտեմբեր և Հոկտեմբերից հետո։ Բայց X-րդ համագումարի ժամանակից մինչև այժմ փոխվել են միջազգային հանգամանքները՝ հեղափոխության այն ծանր պահեստների տեսակարար կշռի իմաստով, ինչպիսիք այժմ ներկայացնում են Արևելքի յերկրները։ Նախ՝ այդ։ Իսկ յերկրորդ՝ X համագումարի ժամանակից մեր կուսակցության ներսում կատարվել են նույնպես մի քանի փոխոխություններ՝ նեպի հետ կապված։ Այդ բոլոր նոր գործոնները պետք է հաշվի առնել, դրանց մի հայտարարի բերել։ Այդ իմաստով՝ XII համագումարում կարելի յե խոսել ազգային հարցի նոր ձևակերպման մասին։

Ազգային հարցի միջազգային նշանակությունը։ Ընկերներ! Զեզհայտնի յե՝ թե մենք ինչ ենք ներկայացնում։

Մենք, Խորհրդային Ֆեդերացիան, այժմ պատմական բախտի կամքով ներկայացնում ենք համաշխարհային հեղափոխության առաջավոր գունդը։ Ձեզ հայտնի է, որ առաջինը մենք ճեղքեցինք ընդհանուր-կապիտալիստական ֆրոնտը՝ հայտնվելով ամենքից առաջ։ Ձեզ հայտնի է, որ մենք մեր առաջխաղացման միջոցին անցանք մինչև Վարշավա, իսկ հետո նահանջեցինք, ամրանալով այն դիրքերում, որ մենք ավելի ամուր համարեցինք։ Այդ մոմենտից մենք անցանք նեպին, և այդ մոմենտից մենք հաշվի առանք միջազգային հեղափոխական շարժման տեմպի դանդաղումը, այդ մոմենտից մեր քաղաքականությունը դարձավ արդեն ոչ թե հարձակողական, այլ պաշտպանողական։ Առաջ անցնել այն դեպքից հետո, երբ մենք Վարշավայի տակ անհաջողություն կրեցինք (չպետք է ճշմարտությունը թաղցնել), առաջ անցնել մենք չէինք կարող, քանի որ մենք ռիսկ արած կլինեինք մեր թիկունքից կտրվել, իսկ մեր այդ թիկունքը—գյուղացիական է, և, վերջապես, մենք ռիսկ արած կլինեինք՝ չափազանց առաջ անցնելու հեղափոխության պահեստներից,—արևմտյան և արևելյան պահեստներից։ Ահա թե ինչու մենք ձեռնարկեցինք շեղապտույտ գործել յերկրի ներսում՝ նեպին անցնելու և դրսում՝ առաջխաղացը դանդաղացնելու իմաստով, վճռելով, որ պետք է դադար առնել՝ բուժելու համար մեր վերքերը՝ պրոլետարիատի առաջավոր գնդի վերքերը, գյուղացիական թիկունքի հետ կոնտակտի մեջ լինել, աշխատանք տանել այն պահեստներում, որոնք մեզնից յետ են մնացել—արևմտյան պահեստներում և արևելյան ծանր պահեստներում, որոնք կազմում են կապիտալիզմի հիմնական թիկունքը։ Ահա այդ պահեստների, արևելյան ծանր պահեստների (որոնք միաժամանակ կազմում են համաշխարհային կապիտալիզմի թիկունքը) մասին է խոսքը, երբ քննում ենք ազգային հարցը։

Երկուսից մեկը,—կամ իմպերիալիզմի խորը թիկունքը՝ արևելյան գաղութային և կիսագաղութային յերկրները՝ մենք կշարժենք, կհեղափոխականացնենք և դրանով կարագացնենք իմպերիալիզմի անկումը, և կամ այդ մեզ չի հաջողվի անել—ու դրանով կամրացնենք իմպերիալիզմը և դրանով կթուլացնենք մեր շարժման ուժը։ Այսպես է դրված հարցը։

Բանը նրանումն է, վոր մեր Հանրապետությունների Միության վրա ամբողջ Արևելքը նայում է վորպես փորձնական դաշտի վրա։ Կամ մենք այդ Միության սահմաններում ուղիղ կվճռենք ազգային հարցը՝ սրա գործնական կիրառումով, կամ մենք այստեղ, Միության սահմաններում, ժողովուրդների միջև կսահմանենք իսկական յեղբայրական հարաբերություններ, իսկական աշխատակցություն,—և այն ժամանակ ամբողջ Արևելքը կտեսնի, վոր հանձինս մեր Ֆեդերացիայի նա ունի ազատագրության դրոշակ, ունի առաջավոր գունդ, վորի շավղով նա պիտի ընթանա, և այդ կլինի՝ համաշխարհային իմպերիալիզմի կրախի սկիզբը։ Կամ մենք այստեղ, ամբողջ Ֆեդերացիայի կազմի մեջ, թույլ կտանք սխալ, կխախտենք անցյալում ճնշված ժողովուրդների հավատը դեպի Ռուսաստանի պրոլետարիատը, Արևելքի աչքում Հանրապետությունների Միությունից խլելով այն քարշող ուժը, վոր նա ունի,—և այն ժամանակ կհաղթանակի իմպերիալիզմը, տանուլ կտանք մենք։

Դրանումն է ազգային հարցի միջազգային նշանակությունը։

Ազգային հարցը մեզ համար նշանակություն ունի նաև ներքին դրության տեսակետից վոչ միայն նրա համար, վոր նախկին գերիշխող ազգը քանակով կազմում է 75 միլիոն, իսկ մնացած ազգությունները—65 (դա համենայն դեպս քիչ չե), և վոչ միայն նրա համար, վոր

անցյալում ճնշված ազգությունները բռնում են տնտեսական զարգացման համար ավելի պետական ռայոններ և, ռազմական ստրատեգիայի տեսակետից, ավելի կարևոր պունկտեր,—վո՛չ միայն դրա համար, այլ ամենից առաջ նրա՛ համար, վոր այս յերկու տարվա ընթացքում մենք մտցրինք այսպես ասած նեպը, իսկ դրա շնորհիվ ռուսական նացիոնալիզմը սկսեց աճել, ուժեղանալ, առաջ յեկավ ամենովեխովյան իդեյան, վխտում են ցանկությունները՝ խաղաղ ճանապարհով կառուցել այն, ինչը չհաջողեց կառուցել Դենիկինը, այսինքն՝ ստեղծել այսպես ասած միասնականը և անբաժանելին։

Յեվ այդպիսով, նեպի շնորհիվ մեր ներքին կյանքում յերևան ե գալիս նոր ուժ—վելիկոռուսական շովինիզմ, վոր բուն ե դրել մեր հիմնարկությունները, թափանցելով վոչ միայն խորհրդային, այլև կուսակցական հիմնարկությունները, վխտալով մեր Ֆեդերացիայի բոլոր անկյուններում և տանելով դեպի այն դրությունը, վոր յեթե մենք այդ նոր ուժին վճռական հակահարված չտանք, յեթե մենք դրան արմատից չկտրենք,—իսկ նեպական պայմանները դրան սնուցանում են,—մենք ոչիսկ արած կլինենք կանգնելու նախկին գերիշխող ազգության պրոլետարիատի և անցյալում ճնշված ազգությունների գյուղացիների միջև յեղած կապի խզման պատկերի առաջ, վորպիսի հանգամանքը հավասար ե պրոլետարիատի դիկտատուրայի խախտման։

Բայց նեպը սնուցանում ե վոչ միայն ռուսական շովինիզմը, նա սնուցանում ե նաև տեղական շովինիզմները, մանավանդ ա՛յն հանրապետությունների մեջ, վորոնք ունեն մի քանի ազգություններ։ Յես նկատի ունեմ Վրաստանը, Ադրբեջանը, Բուխարան, մասամբ կարելի յե ասել և Թուրքեստանի մասին, ուր կան մի քանի ազգություններ, վորոնց առաջավոր տարրերը գուցե շուտով կսկսեն

իրար մեջ մրցել առաջնության համար։ Տեղական այդ շովինիզմները, իհարկե, իրենց ուժով չեն ներկայացնում այն վտանգը, որ ներկայացնում է վելիկոռուսական շովինիզմը։ Բայց դրանք համենայն դեպս վտանգ են ներկայացնում՝ սպառնալով մի քանի հանրապետություններ դարձնել ազգային գժտության ասպարեզ, այնտեղ խախտել ինտերնացիոնալիզմի կապերը։

Այսպես են միջազգային և ներքին բնույթի հիմունքները, որոնք ընդհանուր առմամբ և առանձնապես ներկա մոմենտին վկայում են ազգային հարցի կարևոր, առաջնագույն նշանակության մասին։

Ինչո՞ւմն է կայանում ազգային հարցի դասակարգային եյությունը։ Ի՞նչ է ազգային հարցը։ Ազգային հարցի դասակարգային նշանակությունը կայանում է (մեր խորհրդային պայմաններում) նախկին գերիշխող ազգի պրոլետարիատի և անցյալում ճնշված ազգությունների գյուղացիության միջև ուղիղ հարաբերություններ ստեղծելու մեջ։ Ամբչկայի հարցն այստեղ ավելի քան բավարար քննվեց, բայց ընկ. Կամենևի, Կալինինի, Սոկոլնիկովի, նույնիսկ ընկ. Ռիկովի ու ընկ. Տրոցկու զեկուցումների առթիվ ամբչկայի հարցը քննելիս նկատի առնվեց գլխավորապես ռուս պրոլետարիատի հարաբերությունը դեպի ռուս գյուղացիությունը։ Այստեղ հարցը վերաբերում է ուղիղ փոխհարաբերություններ սահմանելուն՝ նախկին գերիշխող ազգի պրոլետարիատի, որ մեր ամբողջ Ֆեդերացիայի պրոլետարիատի ավելի կուլտուրական խավն է ներկայացնում, և գյուղացիության, գլխավորապես անցյալում ճնշված ազգությունների գյուղացիության միջև։ Դրանումն է ազգային հարցի դասակարգային եյությունը։ Յեթե պրոլետարիատին հաջողվի այլազգերի գյուղացիության նկատմամբ սահմանել այնպիսի հարաբերություններ, որ կարող լինեն վերացնել անհավասարության բոլոր մնացորդ-

նները դեպի այն ամենը ինչ ռուսական է, այն անվստահությունը, որ տասնյակ տարիներով անուցվել ու խորացվել է ցարիզմի քաղաքականությամբ. յեթե ռուս պրոլետարիատին հաջողվի, ե՛լ ավելին, ձգտել և հասնել փոխադարձ լրիվ հասկացողության և վստահության, իսկական միություն սահմանել վոչ միայն ռուս պրոլետարիատի և ռուս գյուղացիության միջև, այլև ուրիշ ազգությունների պրոլետարիատի և գյուղացիության միջև, ապա խնդիրը վճռված կլինի։ Դրա համար անհրաժեշտ է, որ պրոլետարիատի իշխանությունը ուրիշ ազգությունների գյուղացիության համար նույնքան հարազատ լինի, ինչպես և ռուս գյուղացիության համար։ Յեվ որպեսզի Խորհրդային իշխանությունը հարազատ դառնա նաև ուրիշ ազգությունների գյուղացիության համար, անհրաժեշտ է, որ դա հասկանալի լինի նրա համար, որ դա գործե մայրենի լեզվով, որ դպրոցներն ու իշխանության որգանները կառուցվեն տեղական մարդկանցով, լեզուն, բարքերը, սովորությունները, կենցաղը գիտցող մարդկանցով։ Միայն այդ դեպքում Խորհրդային իշխանությունը, որ մինչև վերջին ժամանակներս հանդիսանում եր ռուսական իշխանություն, կդառնա իշխանություն վո՛չ միայն ռուսական, այլև միջազգայնության, անցյալում ճնշված ազգությունների գյուղացիության համար հարազատ, յերբ այդ յերկրների հանրապետությունների մեջ հիմնարկությունները ու որգանները կխոսեն ու կգործեն մայրենի լեզվով։ Դրանումն է կայանում ընդհանուր առմամբ ազգային հարցի հիմքերից մեկը, առանձնապես խորհրդային միջավայրում։

Ներկայումս, 1923 թվին, ինչո՞ւմն է կայանում ազգային հարցի լուծման բնորոշ գիծը։ Ազգային գծով լուծումն պահանջող հարցերը ի՞նչ ձև յեն ընդունել 1923 թվին։ — Մեր ֆեդերացիայի ժողովուրդների միջև՝ տնտեսական գծով, ռազմական գծով, քաղաքական գծով՝ աշ-

խատակցության սահմանման ձև։ Ցես նկատի ունեմ միջազգայնական հարաբերությունները։ Ազգային հարցը, որը իր հիմքում ունի նախկին գերիշխող ազգի պրոլետարիատի և ուրիշ ազգությունների գյուղացիության միջև ուղիղ հարաբերություններ սահմանելու խնդիրներ, ներկայումս ընդունում է ժողովուրդների աշխատակցության սահմանման ու յեղբայրական կենակցության հատուկ ձև, ժողովուրդների, որոնք առաջ անջատված եյին և որոնք այժմ համախմբվում են միասնական պետության շրջանակներում։ Ահա ազգային հարցի եյությունը այն ձևով, որը նա ընդունել է 1923 թվին։ Պետական այդ համախմբման կոնկրետ ձևը ներկայացնում է Հանրապետությունների այն Միությունը, որի մասին մենք խոսել ենք դեռ անցյալ տարվա վերջը՝ Խորհրդային Համագումարում, և որին մենք ձեռք զարկեցինք այն ժամանակ։

Այդ միության հիմքն է—կամավորությունը և Միության անդամների իրավահավասարությունը։ Կամավորություն և հավասարություն—այդ նրա համար, որ մեր ազգային ծրագրի յելակետն է հանդիսանում այն կետը, որով ազգություններին տրվում է ինքնուրույն պետական գոյության իրավունք, այն, ինչ առաջ կոչվում եր ինքնորոշման իրավունք։ Յելնելով դրանից, մենք պետք է որոշակի ասենք, որ ժողովուրդների վո՛չ մի միություն, ժողովուրդների վոչ մի միացում՝ միասնական պետության մեջ՝ չի կարող լինել հաստատուն, յեթե այդ միությունը հիմնված չե լրիվ կամավորության վրա, յեթե տվյալ ժողովուրդը, յեթե իրենք ժողովուրդները չեն ցանկանում միանալ։ Յերկրորդ հիմունքը—իրավահավասարությունն է այն ժողովուրդների, որոնք մտած են Միության կազմի մեջ։ Յեվ դա հասկանալի յե։ Ցես չեմ խոսում փաստական հավասարության մասին. այդ մասին յես կխոսեմ հետագայում, քանի որ փաստական հավասարության սահ-

մանումը առաջ անցած ազգությունների և յետամնաց ազգությունների միջև շատ բարդ, շատ դժվար գործ է, որ պահանջում է մի շարք տարիներ։ Ցեռ այստեղ ի նկատի ունեմ իրավակա՛ն հավասարությունը։ Հավասարությունն այստեղ արտահայտվում է նրանում, որ բոլոր հանրապետությունները, տվյալ դեպքում չորս հանրապետությունները — Անդրկովկասը, Բելոռուսիան, Ուկրայինան և ՌՍՖԽՀ, որ մտնում են Միության կազմի մեջ, միակերպ են ոգտվում Միության բարիքներից և միաժամանակ միակերպ հրաժարվում են անկախության իրենց մի քանի իրավունքներից՝ հոգուտ Միության։ Ցեթե ՌՍՖԽՀ, Ուկրայինան, Բելոռուսիան, Անդրկովկասյան հանրապետությունները չեն ունենալու Արտաքին Գործոց Ժողովրդական Կոմիսարիատ, ապա պարզ է, որ այդ Արտգործժողկոմատները վերացնելով և ընդհանուր Արտգործժողկոմատ ստեղծելով, Հանրապետությունների Միության մեջ տեղի կունենա մի քիչ սահմանափակումն այն անկախության, որ ունեին այդ հանրապետությունները և որը հավասարաչափ է սահմանափակված Միության մեջ մտած բոլոր հանրապետությունների համար։ Պարզ է, որ ցեթե առաջ այդ հանրապետություններն ունեին իրենց Արտաքին գործերը, իսկ այժմ այդ Արտաքին գործերը վերացվում են՝ թե ՌՍՖԽՀ և թե այլ հանրապետությունների մեջ՝ նրա համար, որպեսզի ստեղծենք ընդհանուր Արտաքին գործերի Միության կից,—ապա այստեղ ևս կատարվում է մի քիչ սահմանափակումն այն անկախության, որ առաջ տեղի ուներ լրիվ կերպարանքով և որն այժմ կրճատվեց հոգուտ ընդհանուր Միության, և այլն, և այլն։ Վերանք զուտ-սքոլաստիկական հարց են տալիս—և ի՞նչ, միանալուց հետո հանրապետությունները արդյո՞ք անկախ չեն մնում։ Այդ հարցը սքոլաստիկական է։ Նրանց անկախությունը սահմանափակ-

վում է, քանի որ ամեն տեսակի միացում—մի քիչ սահմանափակումն է միացողների՝ առաջուց ունեցած իրավունքների։ Բայց այստեղ անկախության տարրերն, անպայման, վերապահվում են ամեն մի հանրապետության, քանի որ յուրաքանչյուր հանրապետություն իրավունք ունի Միության կազմից դուրս գալու։ Ահա՛ թե որտեղ են անկախության տարրերը, ահա՛ անկախության մաքսիմումը պրոտենցիայում, որ պահպանում է Միության մեջ մտած ամեն մի հանրապետություն և որը նա միշտ կարող է իրագործել։

Յեվ այսպես, ազգային հարցի կոնկրետ ձևը մեր պայմաններում ներկայումս դարձել է ժողովուրդների տնտեսական, արտաքին-քաղաքական և ռազմական աշխատակցության սահմանման հարց։ Մենք այդ հանրապետությունները պետք է այդ գծերով միացնենք ի մի միություն—ԽՍՀՄ։ Ազգային հարցի կոնկրետ ձևերը ներկայումս ահա այդպես են։

Բայց ասելը հեշտ է, կատարելը՝ դժվար։

Բանը նրանումն է, որ մեր պայմաններում մենք ունենք մի շարք գործոններ, որոնք ոչ միայն նպաստում են ժողովուրդների միացմանը ի մի պետություն, այլև դժվարացնում են այդ միացումը։

Նպաստող գործոնները ձեզ հայտնի յեն.—ամենից առաջ՝ ժողովուրդների տնտեսական մերձեցումը, որ սահմանված է յեղել դեռ մինչև Խորհրդային Իշխանությունը և ամրապնդված է Խորհրդային Իշխանությամբ, աշխատանքի մասնակի բաժանումն ժողովուրդների միջև, որ սահմանված է յեղել մեզնից առաջ և ամրապնդված է մեր շնորհիվ—Խորհրդային Իշխանությամբ,—դա հանդիսանում է հիմնական գործոնը, որ նպաստում է հանրապետությունների միացմանը մեր Միության մեջ։ Միացմանը նպաստող յերկրորդ գործոնը պետք է համարել Խոր-

հրդային Իշխանության բնությունը։ Դա—հասկանալի է։ Խորհրդային Իշխանությունը—բանվորների իշխանությունն է, պրոլետարիատի դիկտատուրան, վորը իր քարակտերով տրամադրում է, վոր Միության մեջ մտնող Հանրապետությունների ու ժողովուրդների աշխատավոր ելեմենտները փոխադարձ բարեկամական հարաբերությունների մեջ գտնվեն։ Դա—հասկանալի է։ Յեվ յերրորդ գործոնը, վոր նպաստում է միացմանը, դա—իմպերիալիստական ոդակումն է, վոր կազմում է այն միջավայրը, վորի պայմաններում ստիպված է գործել Հանրապետությունների Միությունը։

Բայց կան նաև այնպիսի գործոններ, վորոնք արգելք են հանդիսանում այդ միացմանը, այդ միացումը դժվարացնում։ Հիմնական ուժը, վոր դժվարացնում է հանրապետություններին մտնելու միասնական միության մեջ, դա—այն ուժն է, վորը, ինչպես յես արդեն ասացի, նեպի պայմաններում ծայր է առնում մեզ մոտ, դա—վելիկոռուսական շովինիզմն է։ Ամենևին պատահական չէ, ընկերներ, վոր ամենովեխովցիները բազմաթիվ կողմնակիցներ են ձեռք բերել Խորհրդային չինովնիկների շրջանում։ Այդ ամենևին պատահական բան չէ։ Պատահական չէ և այն, վոր պարոնայք ամենովեխովցիները գովաբանում են կոմունիստ-բոլշևիկներին, կարծես ասելով.—դուք բոլշևիզմի մասին ինչքան ուզում եք խոսեցեք, ձեր ինտերնացիոնալ տենդենցների մասին ինչքան ուզում եք դուրս տվեք, իսկ մենք գիտենք, վոր այն, ինչը չհաջողեց անել Դենիկինը, այդ կանեք դուք, և վոր Մեծ Ռուսաստանի մեծ իդեյան դուք, բոլշևիկներդ, վերականգնեցիք, կամ դուք այդ, բայց և այնպես, կվերականգնեք։ Այդ բոլորը պատահական չէ։ Պատահական չէ և այն, վոր այդ իդեյան թափանցել է նույնիսկ մեր կուսակցական մի քանի հիմնարկությունները։ Յես վկա յեմ յեղել այն բանին, թե

ինչպես փետրվարյան պլենումին, ուր առաջին անգամ դրվեց յերկրորդ պլատի հարցը, կկ կազմից լավեցին կոմունիզմին չհամապատասխանող ճառեր, այնպիսի ճառեր, վորոնք վոչ մի ընդհանուր բան չունեն ինտերնացիոնալիզմի հետ։ Այդ բոլորը—ժամանակի հատկանիշ է, ախտ է։ Հիմնական վտանգը, վոր բղխում է այստեղից, այն վտանգը, վոր բղխում է այն բանից, վոր նեպի շնորհիվ մեզ մոտ վոչ թե որերով, այլ ժամերով է աճում մեծապետական շովինիզմը, ամենակոպիտ նացիոնալիզմն է, վոր ջանում է ջնջել այն ամենը ինչ ռուսական չէ, ջանում է կառավարման բոլոր թելերը հավաքել ռուսական սվզբունքի շուրջը և ճնշել վոչ-ռուսականը։ Հիմնական պատճառը կայանում է նրանում, վոր այդպիսի քաղաքականության դեպքում մենք ռիսկ արած կլինենք կորցնելու անցյալում ճնշված ժողովուրդների կողմից դեպի ռուսական պրոլետարները տածած այն վստահությունը, վոր նրանք ձեռք բերին Հոկտեմբերյան որերին, յերբ ռուս պրոլետարները դեն շպրտեցին կալվածատերերին, ռուս կապիտալիստներին, յերբ նրանք, ռուս պրոլետարները, ջնջեցին ազգային կեղեքումը, դուրս բերին զորքերը Պարսկաստանից, Մոնղոլիայից, հայտարարեցին Ֆինլանդիայի, Հայաստանի անկախությունը և առհասարակ ազգային հարցը բոլորովին նոր հիմքերի վրա դրեցին։ Այն վստահությունը, վոր մենք ձեռք բերինք այն ժամանակ, կարող ենք միանգամայն կորցնել, յեթե մենք բոլորս չզինվենք այդ նոր, կրկնում եմ, մեծապետական շովինիզմի դեմ, վորն անդեմ, անկերպարան սողում է, կաթիլ առ կաթիլ ծծվելով մեր աշխատողների ականջներում ու աչքերում, կաթիլ առ կաթիլ փոխելով նրանց վոգին, նրանց ամբողջ հոգին այնպես, վոր այդ աշխատողներին միանգամայն չճանաչելու վտանգ է սպառնում։ Ահա այդ վտանգը, ընկերներ, մենք պետք է՝ ինչ գնով էլ լինի՝ վերացնենք, այլապես մեզ

սպառնում է անցյալում ճնշված ժողովուրդների բանվորների ու գյուղացիների վստահությունը կորցնելու պերսպեկտիվը, մեզ սպառնում է այդ ազգությունների և ռուսական պրոլետարիատի միջև յեղած կապի խզման պերսպեկտիվը, և հենց դրանով մեզ վտանգ է սպառնում թույլ տալու մի ճեղք՝ մեր դիկտատուրայի սիստեմում։ Մի՛ մոռացեք, ընկերներ, վոր յերբ մենք բացված դրոշակներով գնացինք Կերենսկու դեմ և տապալեցինք ժամանակավոր կառավարությունը,—դա, ի միջի այլոց, այն պատճառով եր, վոր այնտեղ, մեր թիկունքում, մենք ունեյինք վստահությունը ճնշված ժողովուրդների, վորոնք ռուս պրոլետարներից ազատագրություն եյին սպասում։ Մի՛ մոռացեք այնպիսի պահեստների մասին, ինչպիսին են՝ կեղեքված ժողովուրդները, վորոնք լռում են, բայց իրենց լռությամբ ճնշում են և շատ բան են վճռում։ Հաճախ դա չի զգացվում, բայց նրանք, այդ ժողովուրդները, ապրում են, նրանք կան, և նրանց մասին չի կարելի մոռանալ։ Այո՛, ընկերներ, վտանգավոր է նրանց մասին մոռանալ։ Մի՛ մոռացեք, վոր յեթե մենք Կոլչակի, Դենիկինի, Վրանգելի և Յուդենիչի (30) թիկունքում չունենայինք այսպես կոչված «այլազգիներ», չունենայինք անցյալում կեղեքված ժողովուրդներ, վորոնք դեպի ռուս պրոլետարներն ունեցած իրենց լուռ համակրությամբ վտանգում եյին այդ գեներալների թիկունքը,—ընկերներ, այդ առանձնահատուկ գործոն է մեր զարգացման մեջ՝ լուռ համակրանքը, դրան վոչ վոք չի տեսնում ու չի լսում, բայց դա վճռում է ամեն ինչ,—յեթե չլիներ այդ համակրանքը, մենք չեյինք կարող հաղթել այդ գեներալներից և վոչ մեկին։ Այն միջոցին, յերբ մենք նրանց վրա եյինք գնում, նրանց թիկունքում սկսվեց քայքայվում։ Ինչո՞ւ։ Վորովհետև այդ գեներալները հենվում եյին կոլոնիզատորական ելեմենտների—կոզակների վրա, իսկ կեղեքված ժողովուրդները

դրանց մեջ տեսնում էին իրենց հետագա կեղեքման պերսպեկտիվը, և ճնշված ժողովուրդները ստիպված էին մեր գիրկը ընկնելու, քանի որ մենք պարզել էինք այդ ճնշված ժողովուրդների ազատագրության դրոշը։ Ահա՛ թե ինչը վճռեց այդ գեներալների բախտը, ահա այն գործոնները, որոնք պաշտպանություն գտան մեր գորքերի հաջողություններից, բայց և որոնք ի վերջո վճռեցին ամեն ինչ։ Այդ մոռանալ չի կարելի։ Ահա՛ թե ինչու մենք պարտավոր ենք խիստ վարվել՝ նոր շովինիստական տրամադրությունների դեմ պայքարելու իմաստով՝ և նախատինքի սյունին գամենք մեր հիմնարկությունների այն չինովնիկներին ու կուսակցական այն ընկերներին, որոնք մոռանում են Հոկտեմբերյան մեր նվաճումների մասին, անցյալում ճնշված ժողովուրդների վստահության մասին, ժողովուրդների, որոնց մենք պետք է թանգ գնահատենք։

Այս է առաջին և ամենավտանգավոր գործոնը, որ դժվարացնում է ժողովուրդներին ու հանրապետություններին միասնական միության մեջ աունելու գործը։ Պետք է հասկանալ, որ այնպիսի ուժ, ինչպիսին վելիկոռուսական շովինիզմն է, կփթթի ու կծավալվի,—վոչ մի վստահություն անցյալում ճնշված ժողովուրդների կողմից չի լինի, միասնական միության մեջ մենք վոչ մի աշխատակցություն չենք հաստատի, և մեզ մոտ վոչ մի Հանրապետությունների Միություն չի լինի։

Յերկրորդ գործոնը, ընկերներ, որ արգելք է հանդիսանում անցյալում ճնշված ժողովուրդներին խմբվելու ռուս պրոլետարիատի շուրջը, դա—այն փաստական անհավասարությունն է, որ մենք ժառանգել ենք ցարիզմի շրջանից։

Իրավական հավասարությունը մենք հայտարարել ենք և դա կկիրառենք, բայց իրավական հավասարությունից, որ ինքնին մեծագույն նշանակություն ունի Խորհրդային

հանրապետությունների զարգացման պատմության մեջ, մինչև փաստական հավասարությունը՝ բայց և այնպես հեռու չե։ Բոլոր յետամնաց ազգությունները և բոլոր ցեղերը մեր Ֆեդերացիայի կազմի մեջ ձևականորեն ունեն նույնքան իրավունքներ, ինչքան և առաջ անցած բոլոր մյուս ազգությունները։ Բայց ցավը նրանումն է, որ մի քանի ազգություններ չունեն իրենց պրոլետարիատը, արդյունաբերական զարգացում չեն անցել և նույնիսկ չեն սկսել, կուլտուրապես սարսափելի յետամնաց են և միանգամայն ի վիճակի չեն ոգտագործելու այն իրավունքները, որ նրանց տվել է հեղափոխությունը։ Դա, ընկերներ, ավելի կարևոր գործոն է, քան դպրոցների հարցը։ Այստեղ մեր ընկերներից վոմանք կարծում են, որ առաջ մղելով դպրոցների ու լեզվի հարցը, հենց դրանով կարելի յե քակել հանգույցը։ Սխալ է, ընկերներ, միայն դպրոցներով այստեղ վոչինչ անել չես կարող, դրանք, նույն այդ դպրոցները ծաղկում են, լեզուն ևս զարգանում է, բայց փաստական անհավասարությունը—դա հիմք է բոլոր դժգոհությունների և բոլոր գժտությունների։ Այստեղ դպրոցներով և լեզվի խնդրով վերքը չես բուժի, այստեղ մեր կողմից անհրաժեշտ է իրական, սիստեմատիկ, անկեղծ, իսկական ոգնություն ցույց տալ կուլտուրական և տնտեսական տեսակետից յետամնաց ազգությունների աշխատավոր մասսաներին։ Անհրաժեշտ է, որ բացի դպրոցներից և լեզվից, Ռուսաստանի պրոլետարիատը ձեռք առնի ամեն միջոց, որ ծայրամասերում, կուլտուրապես յետամնաց հանրապետությունների մեջ,—իսկ նրանք յետ են մնացել վո՛չ իրենց մեղքով, այլ այն պատճառով, որ առաջ նրանց վրա նայել են վորպես հում մթերքի աղբյուրի վրա,—անհրաժեշտ է ձգտել և հասնել այն բանի, որ այդ հանրապետություններում կառուցվեն արդյունաբերության ոջախներ։ Այդ ուղղությամբ մի շարք փորձեր կատարվել

են։ Վրաստանը Մոսկվայից վերցրել է մի ֆաբրիկա, և դա, հավանական է, շուտով կգործի։ Բուխարան վերցրել է մեկ ֆաբրիկա, թեև կարող եր վերցնել չորս ֆաբրիկա։ Թուրքեստանը վերցնում է մեկ մեծ ֆաբրիկա, և, այդպիսով, կան բոլոր տվյալները, վոր տնտեսական տեսակետից յետամնաց և պրոլետարիատից զուրկ այդ հանրապետությունները պետք է իրենց մոտ, ռուս պրոլետարիատի ոգնությամբ, արդյունաբերության ոջախներ հիմնեն, թեկուզ փոքր ոջախներ, այնպես վոր այդ ոջախներում լինեն տեղական պրոլետարների խմբեր, վորոնք կարողանան ծառայել վորպես փոխանցող կամուրջ՝ ռուս պրոլետարիատի ու գյուղացիների և այդ հանրապետությունների աշխատավոր մասսաների միջև։ Ահա այդ բնագավառում մենք պետք է լուրջ աշխատենք, և այստեղ միմիայն դպրոցներով ու լեզվի հարցով շատ բանի չես հասնի։

Բայց կա նաև յերրորդ գործոնը, վոր դժվարացնում է հանրապետություններին միանալ մեր Միության մեջ, դա—առանձին հանրապետությունների մեջ գոյություն ունեցող նացիոնալիզմն է։ Նեպը ազդում է վոչ միայն ռուս բնակչության վրա, այլև վոչ-ռուսական բնակչության վրա։ Նեպը ուժ է տալիս մասնավոր առևտրին և արդյունաբերությանը վո՛չ միայն Ռուսաստանի կենտրոնում, այլև առանձին հանրապետություններում։ Ահա հենց այդ նեպը և դրա հետ կապված մասնավոր կապիտալը սնուցանում, մեծացնում են նացիոնալիզմը Վրաստանում, Ադրբեջանում, Ուզբեկստանում և այլն։ Ի հարկե, յեթե չլիներ վելիկոռուսական շովինիզմը, վորը հանդիսանում է հարձակողական, վորովհետև նա ուժեղ է, վորովհետև նա առաջ ել ուժեղ եր, և ճնշելու ու սեղմելու ունակությունները նա դեռ պահպանել է,—յեթե չլիներ վելիկոռուսական շովինիզմը, ապա, շատ կարելի յե, վոր տեղական շովինիզմը, վորպես պատասխան վելիկոռուսական շովի-

նիզմին, գոյություն ունենար, այսպես ասած, մինիմալ չափով, մինիատյուր տեսքով, վորովհետև հակառուսական շովինիզմը վերջին հաշվով—ռուսական նացիոնալիզմի հանդիպ, ռուսական շովինիզմի հանդեպ պաշտպանողական մի ձև է, պաշտպանվելու մի տեսակ այլանդակ ձև։ Յեթե այդ նացիոնալիզմը լիներ միայն պաշտպանողական, դրա համար դեռ ևս կարելի յեր աղմուկ չբարձրացնել։ Կարելի կլիներ մեր գործողությունների և մեր պայքարի ամբողջ ուժը կենտրոնացնել վելիկոռուսական շովինիզմի վրա, հուսալով, վոր քանի այդ ուժեղ թշնամին շուտ տապալվի, դրա հետ միասին կտապալվի նաև հակառուսական շովինիզմը, վորովհետև դա, այդ նացիոնալիզմը, կրկնում եմ, վերջին հաշվով հանդիսանում է ռեակցիա՝ վելիկոռուսական նացիոնալիզմից բղխող, սրան վորպես պատասխան, սրանից պաշտպանվելու վորոշ արտահայտություն։ Այո՛, այդ այդպես կլիներ, յեթե տեղերում հակառուսական նացիոնալիզմը ռուսական նացիոնալիզմից բղխող ռեակցիայից ավելի հեռուն չգնար։ Բայց ցավը նրանումն է, վոր մի քանի հանրապետությունների մեջ պաշտպանողական այդ նացիոնալիզմը դարձել է հարձակողական։

Վերցնենք Վրաստանը։ Այստեղ կա 30% վոչ-վրացական բնակչություն։ Դրանց թվում—հայեր, աբխազցիներ, աջարցիներ, ոսետիններ, թուրքեր։ Դրանց գլխավորում են վրացիները։ Վրացի կոմունիստների մի մասի մեջ հղացել է և ծայր է առնում այս իդեյան—շատ չպետք է ուշադրություն դարձնել այդ մանր ազգությունների վրա, նրանք ավելի քի՛չ կուլտուրական են, ավելի քի՛չ են զարգացած, ուստի և նրանց կարելի յե և ուշադրության չառնել։ Այդ շովինիզմ է, ֆնասակար և վտանգավոր շովինիզմ, քանի վոր նա կարող է վրացական փոքրիկ հանրապետությունը դարձնել գժտությունների ասպարեզ, և նա այդ արդեն դարձրել է գժտությունների ասպարեզ։

Ադրբեջանը. հիմնական ազգությունը կազմում են ադրբեջանցիները, բայց այնտեղ կան նաև հայեր։ Ադրբեջանցիների մի մասի մեջ ևս զոյություն ունի նման տենդենց, յերբեմն շատ չքողարկված, վոր ասում է՝ ա՛յ, մենք ադրբեջանցիներ ենք, հիմնական ազգությունն ենք կազմում, իսկ նրանք՝ հայերը յեկվորներ են։ Զի՞ կարելի արդյոք այդ պատճառով նրանց մի քիչ յետ մղել, նրանց շահերը հաշվի չառնել։ Դա՛ ևս շովինիզմ է։ Դա խախտում է ազգությունների այն հավասարությունը, վորի հիման վրա կառուցվում է Խորհրդային Իշխանությունը։

Բուխարան. այնտեղ, Բուխարայում կան յերեք ազգություններ—ուզբեկներ (հիմնական ազգությունը), թուրքմեններ (բուխարական շովինիզմի տեսակետից՝ «նվազ կարևոր» ազգություն) և կիրգիզներ. սրանցից այնտեղ քիչ կան, և դրանք «նվազ կարևոր» են։

Խորեզմայում՝ նույնն է,—թուրքմեններ և ուզբեկներ։ Ուզբեկները—հիմնական ազգությունն են կազմում, իսկ թուրքմենները—«նվազ կարևոր» ազգություն։

Այս բոլորը տանում է դեպի կոնֆլիկտները, դեպի Խորհրդային Իշխանության թուլացում։ Տեղական շովինիզմի այդ տենդենցն ևս նույնպես պետք է արմատախիլ արվի։ Իհարկե, վելիկոռուսական շովինիզմի (վոր ազգային հարցի ընդհանուր սիստեմում կազմում է ամբողջի յերեք քառորդը) համեմատությամբ, տեղական շովինիզմը այնքան ել կարևոր չէ, բայց տեղական աշխատանքի համար, տեղական մարդկանց համար, հենց ազգային հանրապետությունների խաղաղ զարգացման համար այդ շովինիզմը առաջնակարգ նշանակություն ունի։

Այդ շովինիզմը յերբեմն սկսում է շատ հետաքրքիր եվոլյուցիա կրել։ Ցես նկատի ունեմ Անդրկովկասը։ Դուք գիտեք, վոր Անդրկովկասը բաղկացած է յերեք հանրապետություններից, վորոնք պարունակում են 10 ազգություն-

ներ։ Անդրկովկասը դեռ շատ վաղուց ներկայացրել է ջարդի ու գժտությունների ասպարեզ, իսկ հետո, մենշևիզմի և նացիոնալիստների որոք—պատերազմի ասպարեզ։

Ձեզ հայտնի յե հայ-վրացական պատերազմը։ Ջարդը՝ 1904 թվի սկզբին և 1905 թվի վերջին՝ ձեզ նույնպես հայտնի յե։ Ցեսս կարող եմ հիշատակել մի շարք շրջաններ, ուր հայերը ազգաբնակչության մնացած բոլոր մասին՝ թուրքերին՝ կոտորեցին,—որինակ՝ Զանգեզուրը։ Կա այնպիսի շրջան, ուր մեծամասնություն են կազմում հայերը, այդտեղ ևս նրանք կոտորեցին բոլոր թուրքերին։ Կարող եմ հիշատակել նաև ուրիշ պրովինցիա—Նախիջևանը։ Այնտեղ թուրքերը գերակշռում էին, և նրանք կոտորեցին բոլոր հայերին։ Այդ կատարվեց Հայաստանի և Վրաստանի՝ իմպերիալիզմի լծից ազատվելու հենց նախորյակին։ (Ձայն տեղից—«Իրենց կերպ են լուծել ազգային հարցը»)։ Դա՛ ևս, իհարկե, ազգային հարցի լուծման վորոշ ձև է։ Բայց դա—լուծման խորհրդային ձև չե։ Ազգային փոխադարձ թշնամանքի այդ մթնոլորտում ռուսներն, իհարկե, գործ չունեն, քանի վոր կռվում են թուրքերն ու հայերը՝ առանց ռուսների։ Ահա՛ թե ինչու Անդրկովկասում անհրաժեշտ է հատուկ որգան, վորը կարողանար կանոնավորել փոխհարաբերությունները ազգությունների միջև։ Կարելի յե համարձակ ասել, վոր փոխհարաբերությունները նախկին միապետական Ռուսաստանի պրոլետարիատի և մնացած բոլոր ազգությունների աշխատավորության միջև ներկայացնում են ամբողջ ազգային հարցի յերեք քառորդը։ Սակայն այդ հարցի մի քառորդը պետք է բաժին թողնել անցյալում ճնշված ազգությունների միջև գոյություն ունեցող փոխադարձ հարաբերություններին։

Ցեվ ահա փոխադարձ անվստահության այս մթնոլորտում, յեթե Խորհրդային Իշխանությունը չկարողանար Անտում, յեթե

դրկովկասում հիմնել ազգային խաղաղության որդան,— ընդհարումները-կոնֆլիկտները հարթող որդան,—մենք վերադարձած կլինեյինք ցարիզմի եպոխային կամ դաշնակցների, մուսաֆաթիստների, մենշևիկների եպոխային, յերբ մարդիկ այրում ու մորթում եյին միմյանց։ Ահա՛ թե ինչու Կենտրոնական Կոմիտեն յերբեց հաստատեց Անդրկովկասյան ֆեդերացիայի պահպանման անհրաժեշտությունը, վորպես ազգային խաղաղության որդանի։

Այստեղ կար և մնում է վրացի - կոմունիստների մի խումբ, վորը չի առարկում այն բանին, վոր Վրաստանը մտնի Հանրապետությունների Միության մեջ, բայց առարկում է այն բանին, վոր այդ միացումը անցնի Անդրկովկասյան ֆեդերացիայի միջոցով։ Նրանք, տեսնո՞ւմ եք, ուզում են ավելի մոտ լինել Միությանը, իբր թե, պետք այդ պատնեշը մեր՝ վրացիների և Հանրապետությունների Միության միջև՝ Անդրկովկասյան ֆեդերացիայի կերպարանքով, և իբր հարկավոր չե ֆեդերացիա։ Դա կարծես թե հնչում է շատ հեղափոխական։ Բայց այստեղ ուրիշ միտք է թաղնված։ Նախ՝ այդ հայտարարությունները վկայում են այն մասին, վոր Վրաստանում ազգային հարցի բնագավառում վերաբերմունքը դեպի ռուսները յերկրորդական նշանակություն ունի, վորովհետև այդ ուկլոնիստ-ընկերները (նրանց այդպես են կոչում) վոչինչ դեմ չունեն, վոր Վրաստանը ուղղակի կապվի Միության հետ, այսինքն՝ չեն վախենում վելիկոռուսական շովինիզմից, ընդունելով, վոր դա, այսպես թե այնպես, տաշված է և կամ վճռական նշանակություն չունի։ Նրանք, պարզ է, շատ ավելի վախենում են Անդրկովկասյան ֆեդերացիայից։ Ինչո՞ւ։ Ինչո՞ւ Անդրկովկասում ապրող 3 ժողովուրդներ, վորոնք այսքան ժամանակ կռվում եյին իրար հետ, մորթում եյին իրար, պատերազմում իրար հետ,—ինչո՞ւ այդ ժողովուրդները այժմ, յերբ, վերջապես, Խորհրդային Իշխանությունը

յեղբայրական միության կապեր և հաստատել դրանց միջև, ինչպես Ֆեդերացիան է, յերբ այդ Ֆեդերացիան տվել է փոխադարձ բարեկամության իր պտուղները, ինչո՞ւ կտրել Ֆեդերացիայի այդ կապերը։ Բանը ինչո՞ւմն է, ընկերներ։ Բանը նրանումն է, վոր Անդրկովկասի Ֆեդերացիայի կապերը Վրաստանը զրկում են այն արտոնյալ դրությունից, վոր նա կարող եր ունենալ աշխարհագրական իր դիրքի շնորհիվ։ Ինքներդ դատեցեք։ Վրաստանն ունի իր նավահանգիստը—Բաթումը, վորտեղից մուծվում են ապրանքներ Արևմուտքից. Վրաստանն ունի յերկաթուղագծի այնպիսի հանգույց, ինչպիսին Թիֆլիսն է, վորն անհրաժեշտ է հայերին, վորն անհրաժեշտ է իր ապրանքը Բաթումից ստացող Ադրբեջանին։ Յեթե Վրաստանը առանձին հանրապետություն լիներ, յեթե նա չմտներ Անդրկովկասյան Ֆեդերացիայի մեջ, նա կարող եր վորոշ փոքրիկ ուլտիմատում դնել և՛ Հայաստանին, վորը առանց Թիֆլիսի չի կարող յոլա գնալ, և՛ Ադրբեջանին, վորը առանց Բաթումի չի կարող յոլա գնալ։ Այդ դեպքում վորոշ ոգուտներ կլինեյին։ Դա պատահականություն չե, ընկերներ, վոր կորդոնի վերաբերյալ վայրենի դեկրետը մշակվում է հատկապես Վրաստանում։ Այժմ այդ մեղքը բարդում են Սերեբրյակովի վրա։ Թո՛ղ տանք։ Բայց չե՞ վոր նա Վրաստանում է ծնվել և վոչ թե Ադրբեջանում ու վոչ ել Հայաստանում։ Դա պատահականություն չե, վոր այդպիսի դեկրետ է յեղել, վորով կամենում եյին կանոնավորել ազգաբնակչության հարաբերությունները նրա համար, վորպեսզի մի բան վերապահեն հոգուտ Վրաստանի և Վրաստանին հնարավորություն տան ոգտագործելու աշխարհագրական այն ձեռնտու դիրքը, վոր նա անպայման ունի և վորը նա, հանձինս ուկլոնիստների, կորցնել չի ցանկանում։ Այնուհետև այստեղ կա նաև ուրիշ պատճառ։ Թիֆլիսը Վրաստանի մայրաքաղաքն է, բայց

նրանում վրացիները վոչ ավել 25% են, հայերը՝ վոչ պակաս 35%, մնացածը—ուրիշ ազգություններ են։ Ահա՛ ձեզ և Վրաստանի մայրաքաղաքը։ Իսկ յեթե Վրաստանը իրենից ներկայացներ առանձի՛ն հանրապետություն, ապա այստեղ կարելի յեր ազգաբնակչության վորոշ տեղափոխություն կատարել, որինակ, հայերին Թիֆլիսից հեռացնել։ Ձե՞ վոր յեղել է այդպիսի դեկրետ, վորի մասին ընկ. Մախարաձեն հայտարարեց, վոր դա ուղղված եր հայերի դեմ։ Կարելի յե վորոշ տեղափոխությունը կատարել այնպես, վոր Թիֆլիսում հայերը տարեց-տարի ավելի քիչ լինեյին, քան վրացիները, և այդպիսով Թիֆլիսը դարձնել իսկական վրացական մայրաքաղաք։ Ցես կարծում եմ, վոր գաղթեցնելու վերաբերյալ դեկրետը նրանք յետ են վերցրել։ Բայց նրանք ունեն շատ հնարավորություններ, շատ այնպիսի ձևեր, որինակ՝ «պարպում», վորի ոգնությամբ կարելի կլինի, պահպանելով ինտերնացիոնալիզմի արտաքին տեսքը, բանն այնպես սարքել, վոր Թիֆլիսում հայերը քիչ լինեն։ Ահա՛ այն ոգուտներն աշխարհագրական տեսակետից, վորոնք ուկլոնիստները կորցնել չեն ցանկանում, ահա՛ Վրաստանի աննպաստ դրությունը հենց Թիֆլիսի մեջ, ուր վրացիներ ավելի քիչ կան, քան հայերը, մեր ուկլոնիստներին ստիպում է պայքարել ֆեդերացիայի դեմ։ Մենշևիկները հայերին և թուրքերին ուղղակի վռնդում եյին Թիֆլիսից։ Բայց այժմ, Խորհրդային կարգերում, այդպես վարվել չի կարելի, ուստի և հարկավոր է չմտնել ֆեդերացիայի մեջ, և այն ժամանակ կլինեն իրավաբանական հնարավորություններ՝ ինքնուրույն կերպով կատարելու համար նման վորոշ ոպերացիաներ, վորոնք կունենան այն հետևանքը, վոր վրացիների նպաստավոր դրությունը լիովին ոգտագործված կլինի հանդեպ Ադրբեջանի և Հայաստանի։

Այս բոլորի հետևանքով Անդրկովկասում վրացիների

համար արտոնյալ դրություն կկազմվեր։ Դրանումն է ամբողջ վտանգը։ Մենք կարո՞ղ ենք արդյոք, անտես առնելով ազգային խաղաղությունը Անդրկովկասում, մենք կարող ենք արդյոք ստեղծել այնպիսի պայմաններ, վոր վրացիները Հայաստանի և Ադրբեջանի հանրապետությունների նկատմամբ գտնվեին արտոնյալ վիճակում։ Վոչ, մենք այդ թույլ տալ չենք կարող։

Գոյություն ունի վարչության հատուկ սիստեմ, յերբ բուրժուական իշխանությունը դեպի իրեն և մերձեցնում մի քանի ազգություններ, նրանց տալիս է արտոնություններ, իսկ մնացած ազգություններին նվաստացնում է, չցանկանալով նրանց հետ գործ ունենալ։ Այդպիսով մեկ ազգությանը առաջ քաշելով, նա նրա միջոցով ճնշում է մյուս ազգություններին։ Այսպես են կառավարել, որինակ, Ավստրիայում։ Ամենքը հիշում են ավստրիական մինիստր Բեյստի հայտարարությունը, յերբ նա կանչեց վենգրիական մինիստրին և ասաց. «Դու քո հորդաները կառավարիր, իսկ յես իմ հորդաների հախիցը կգամ»,—դու, վորքան կարող ես, նեղիր ու ճնշիր քո ազգություններին Վենգրիայում, իսկ յես կճնշեմ ի՛մ ազգություններին։ Դու և յես—արտոնյալ ազգեր ենք, իսկ մյուսներին պետք է ճնշել։ Նույնը կատարվեց նաև լեհերի հետ հենց Ավստրիայի ներսում։ Ավստրիացիները առաջ քաշեցին լեհերին, նրանց տվին արտոնություններ, վորպեսզի լեհերը ավստրիացիներին ոգնեն ամրապնդելու նրանց դիրքերը Լեհաստանում, և ի տրիտուր դրան՝ լեհերին հնարավորություն տվին խեղդելու Գալիցիային։ Դա հատուկ, զուտ-ավստրիական սիստեմ է՝ առաջ քաշել մի քանի ազգությունների և նրանց արտոնություններ տալ, վորպեսզի այնուհետև մնացած ազգությունների հախիցը գալ։ Բյուրոկրատիայի տեսակետից, դա—կառավարելու դյուրին ձև է նրա՛ համար, վոր այս դեպքում գործ ես ունենում մեկ

ազգության հետ, բայց քաղաքական տեսակետից՝ դա — հավատի մահ է, քանի որ ազգությունների հավասարության պրինցիպները խախտել և որևէ ազգության համար արտոնություններ թույլ տալ,— դա նշանակում է մահվան դատապարտել իր ազգային քաղաքականությունը։

Ճիշտ նույն կերպ է ներկայումս կառավարվում Հնդկաստանը։ Վորպեսզի՝ բյուրոկրատիայի տեսակետից՝ ավելի դյուրին լինի հաշիվ տեսնել Հնդկաստանի ազգությունների ու ցեղերի հետ, Անգլիան Հնդկաստանը բաժանել է՝ Բրիտանական Հնդկաստանի (240.000.000 բնակչություն) և բուն Հնդկաստանի (72.000.000)։ Ի՞նչ հիման վրա։ Այն հիման վրա, որ Անգլիան ցանկացել է մի խումբ ազգությունների առաջ քաշել և նրանց տալ արտոնություններ, վորպեսզի դրանով ավելի հարմար լինի կառավարել մյուս ազգություններին։ Միայն Հնդկաստանում կան վոչ պակաս 800 ազգություններ, և Անգլիան վճռել է փոխանակ 800 առանձին ազգությունների հետ գործ ունենալ, ավելի լավ է ընտրել և առաջ քաշել մի քանի ազգություններ, նրանց տալ մի քանի արտոնություններ և նրանց միջոցով կառավարել մնացածներին, վորովհետև, նախ՝ վերջին ազգությունների անբավականությունը այդ դեպքում ուղղված կլինի արտոնյալ ազգությունների դեմ, և վոչ թե Անգլիայի դեմ, իսկ յերկրորդ՝ ավելի եժան կնստի «գործ ունենալ» յերկու-յերեք ազգությունների հետ, քան 800-ի։

Այդ ևս կառավարելու սիստեմ է,—անգլիական սիստեմ։ Դրա հետևանքով, ճիշտ է, ապարատը ավելի եժան է նստում, սակայն, ընկերներ, յեթե չհաշվենք բյուրոկրատական հարմարությունները, ահա այստեղ մահ է սպասում անգլիական տիրապետությանը Հնդկաստանում, այս սիստեմի հետևանքով, ինչպես յերկու անգամ յերկու չորս, անգլիական ամբողջ սիստեմն ու անգլիա-

կան տիրապետությունը հավատի կործանման են դատապարտված։

Մեզ դեպի այդ վտանգավոր ուղին են դրդում մեր վրացի-ընկերները, քանի վոր նրանք պայքար են մղում ֆեդերացիայի դեմ՝ խախտելով կուսակցության բոլոր որենքները, քանի վոր նրանք ցանկանում են դուրս գալ ֆեդերացիայից, վորպեսզի պահպանեն նպաստավոր դիրքը։ Նրանք մեզնից պահանջում են մի քանի արտոնություններ՝ ի հաշիվ Հայաստանի և Ադրբեջանի հանրապետությունների։ Մենք այդ ուղիով գնալ չենք կարող, վորովհետև դա կնշանակի հավատի մահ՝ մեր ամբողջ քաղաքականության և Խորհրդայինիշխանությանը Կովկասում։

Պատահականություն չե, վոր այդ վտանգը զգացել են մեր ընկերները Վրաստանում։ Վրացական այդ շովինիզմը, վոր անցել ե հարձակման՝ հայերի և ադրբեջանցիների դեմ ուղղված, վրդովեցրեց Վրաստանի կոմկուսակցությանը։ Պատահականություն չե, վոր Վրաստանի կոմկուսակցությունը, վորն իր լեզալ գոյության որից յերկու համագումար ե ունեցել, ամեն անգամ միահամուռ կերպով մերժել ե ուկլոնիստ-ընկերների պոզիցիան, վորովհետև առանց Անդրկովկասյան ֆեդերացիայի Կովկասում խաղաղություն պահպանել չի կարելի, հավասարություն հաստատել չի կարելի։ Չի՛ կարելի թույլ տալ, վոր մի ազգություն արտոնված լինի, իսկ մյուսը—վոչ։ Այդ զգացի՛ն մեր ընկերները։ Ահա թե ինչու յերկու տարվա պայքարի ընթացքում Մդեվանիի կողմնակիցները ներկայացնում են մի փոքրիկ խմբակ, վոր տապալվեց հենց Վրաստանում։

Նույնպես պատահական չե, վոր ընկ. Լենինը այնպես շտապում եր և պնդում, վոր ֆեդերացիան կիրառվի անհապաղ։ Պատահական չե և այն, վոր մեր Կ. Կոմ. յերիցս հաստատեց ֆեդերացիայի անհրաժեշտությունը Անդրկով-

կասում, վորն ունի իր ԿԳԿ և իր գործադիր իշխանությունը, վորի վորոշումները պարտադիր են հանրապետությունների համար։ Պատահական չե այն, վոր յերկու հանձնաժողովները ևս — և՛ ընկ. Ջերժինսկու, և՛ ընկ. Կամենևվինը (Կույբըշևի հետ) գալով Մոսկվա, ասացին, վոր առանց ֆեդերացիայի յոլա գնալ չի կարելի։

Վերջապես, պատահական չե և այն, վոր «Սոցիալիստական Վեստնիկ»-ի մենշևիկները գովաբանում են մեր ուկլոնիստ-ընկերներին՝ ֆեդերացիայի դեմ նրանց մղած պայքարի համար, ձեռքերի վրա յեն բարձրացնում նրանց. — «ձկնորսը ձկնորսին աեսնում ե հեռվից»։

Անցնում եմ, ընկերներ, քննությանը այն միջոցների, այն ուղիների, վորոնց ոգնությամբ մենք պետք ե հաղթահարենք այս յերեք հիմնական գործոնները, վորոնք դժվարացնում են միացումն՝—վելիկոռուսական շովինիզմը, փաստական անհավասարությունը և տեղական նացիոնալիզմը, մանավանդ այն դեպքում, յերբ նա դառնում ե շովինիզմ։ Այս ամբողջ ժառանգությանը, ժողովուրդների մերձեցումը դժվարացնող այս հին ժառանգությանը անցավագինորեն վերջ տալու միջոցներից յես կհիշեմ միայն յերեքը։

Առաջինը.—ձեռք առնել ամեն միջոց, վորպեսզի Խորհրդային Իշխանությունը հանրապետությունների մեջ դառնա հասկանալի և հարազատ, վորպեսզի Խորհրդային Իշխանությունը մեզ մոտ լինի վոչ միայն ռուսական, այլև միջազգայնական։ Դրա համար անհրաժեշտ ե՝ վոր վոչ միայն դպրոցները, այլև բոլոր հիմնարկությունները, բոլոր որգանները - թե կուսակցական և թե Խորհրդային—քայլ առ քայլ ազգայնացվեն, վորպեսզի նրանք գործեն մասսաներին հասկանալի լեզվով, վորպեսզի նրանք գործեն տվյալ ժողովրդի կենցաղին համապատասխան պայմաններում։ Միայն այդ դեպքում ե, վոր մենք հնարավորություն կունենանք Խորհրդային Իշխանությունը ռուսակա-

նից դարձնել միջազգայնական, մերձավոր, հասկանալի և հարազատ՝ բոլոր հանրապետությունների աշխատավոր մասսաների համար, մանավանդ նրա՛նց համար, վորոնք տընտեսական և կուլտուրական տեսակետից յետ են մնացել։

Յերկրորդ միջոցը, վոր կարող ել մեր գործը դժվարացնել՝ ցարիզմից և բուրժուազիայից մեզ մնացած ժառանգությունը վերացնելու, դա—Հանրապետությունների Միության մեջ կոմիսարիատների այնպիսի կոնստրուկցիան է, վորը հնարավորություն տար գոնե գլխավոր ազգություններին իրենց կոլեգիաների մեջ ունենալու իրենց մարդկանց և վորը ստեղծեր այնպիսի դրություն, վոր առանձին հանրապետությունների կարիքներն ու պահանջները անպայման բավարարվեյին։

Յերրորդ միջոցը.—անհրաժեշտ է, վոր մեր բարձրագույն որգանների կազմում լինի նաև մեկ այնպիսի որգան, վորն անդրադարձներ, առանց բացառության, բոլոր հանրապետությունների ու ազգությունների կարիքներն ու պահանջները։ Յես ցանկանում եմ ձեր ուշադրությունը գրավել հատկապես այս վերջինի վրա։

Յեթե մենք կարողանայինք Միութենական ԿԳԿ-ի կազմի մեջ հաստատել յերկու պալատ, վորոնցից մեկը ընտրվեր Խորհրդային Միութենական Համագումարում, ազգություններից անկախ, իսկ մյուսը ընտրվեր հանրապետությունների ու շրջանների կողմից (հանրապետությունները՝ հավասարաչափ, ազգային շրջանները՝ նույնպես հավասարաչափ) և հաստատվեյին նույն այդ Հանրապետությունների Միության Խորհուրդների Համագումարի կողմից,—յես կարծում եմ, վոր մենք այն ժամանակ մեր բարձրագույն հիմնարկությունների կազմի մեջ կունենայինք, առանց բացառության, բոլոր պրոլետարական խմբավորումների վոչ միայն դասակարգային շահերի, այլև զուտ - ազգային պահանջների անդրադարձումը։ Մենք

կունենայինք մի որգան, վորը կանդրադարձներ Հանրապետությունների Միության տերրիտորիայի վրա ապրող ազգությունների, ժողովուրդների և ցեղերի առանձնահատուկ պահանջները։ Չի՛ կարելի, ընկերներ, մեր պայմաններում, յերբ Միությունը ընդհանուր առմամբ ընդգրկում է 140 միլիոն մարդ, վորոնցից 65 միլիոնը վոչ-ռուսներ՝ են,—այդպիսի պետության մեջ չի կարելի կառավարել՝ մոտդ, Մոսկվայում, բարձրագույն որգանում չունենալով այդ ազգությունների առաքյալներին, վորոնք անդրադարձնեյին վոչ միայն ամբողջ պրոլետարիատի համար ընդհանուր շահերը, այլև ազգային առանձնահատուկ, սպեցիֆիկ շահերը։ Առանց դրան, ընկերներ, կառավարել չի կարելի։ Մեր ձեռքում չունենալով այդ բարոմետրը, չունենալով այն մարդկանց, վորոնք ընդունակ են ձևակերպելու առանձին ազգությունների այդ հատուկ կարիքները,—կառավարել չի կարելի։

Յերկիրը կառավարելու յերկու ձև կա.—մի ձևն այն է, յերբ ապարատը պարզացրած է, և վերևում բազմած է, ասենք, մի խումբ կամ մեկ մարդ, վորը տեղերում ունի ձեռքեր ու աչքեր՝ հանձինս նահանգապետների։ Դա—կառավարելու շատ հասարակ ձև է, ըստ վորում յերկրի գլուխը յերկիրը կառավարելով, ստանում է ա՛յն տեղեկությունները, վոր ստանալ կարելի յե նահանգապետներից, և գլուխը իրեն մխիթարում է այն հույսով, վոր ինքը ազնիվ և ուղիղ է կառավարում։ Այնուհետև ծագում են ընդհարումներ, ընդհարումները դառնում են կոնֆլիկտներ, կոնֆլիկտները—ապստամբություններ։ Այնուհետև ապստամբությունները ճնշվում են։ Կառավարման այդպիսի սիստեմը—մեր սիստեմը չե, բացի այդ, դա չափազանց թանկ ել է, թեև պարզ է։ Մենք Խորհրդային յերկրում պետք է ընդունենք կառավարման այնպիսի սիստեմ, վորն հնարավորություն և տալիս ճշտորեն նախագուշակելու բոլոր փոփոխություն-

ները, բոլոր հանգամանքները՝ և՛ գյուղացիների միջև, և՛ ազգությունների միջև, և՝ այսպես ասած՝ այլազգիների միջև, և՛ ռուսների միջև, վորպեսզի մեր բարձրագույն որգանների սիստեմում լինեն մի շարք բարոմետրներ, վորոնք դուշակեն ամեն մի փոփոխություն, հաշվի առնեն ու կանխեն և՛ բասմայական շարժում(32), և՛ բանդիտական, և՛ կրոնշդատ(33), և՝ ամեն տեսակի հնարավոր փոթորիկ ու ձախորդություն։ Դա—կառավարման խորհրդային սիստեմ է։ Դրա՛ համար է, վոր նա կոչվում է Խորհրդային Իշխանություն, ժողովրդական իշխանություն, վոր հենվելով ցածի խավերի վրա, նա ամենից շուտ է ըմբռնում ամեն մի փոփոխություն, ձեռք է առնում համապատասխան միջոցներ և ժամանակին է շտկում գիծը՝ յեթե դա ծռված է լինում, ինքն իրեն քննադատում է և գիծը շտկում։ Կառավարման այդ սիստեմը—խորհրդային սիստեմ է, և դա պահանջում է, վոր մեզ մոտ բարձրագույն որգանների սիստեմում լինեն այնպիսի որգաններ, վորոնք անդրադարձնեին ազգային կարիքներն ու պահանջները լիովին։

Առարկում են, վոր դա կբարդացներ կառավարման ամբողջ սիստեմը, վոր դա նոր որգաններ կավելացներ։ Այդ—ուղիղ է։ Մինչև այժմ մենք ունեյինք ՌՍՖՍՀ ԿԳԿ, հետո ստեղծեցինք Միության ԿԳԿ, այժմ Միության ԿԳԿ-ն, ինչպես յերևում է, ստիպված ենք բաժանելու յերկու մասի։ Ուրիշ յելք չկա։ Ցեսնիշեցի, վոր կառավարման ամենապարզ ձևն է՝ մի մարդ կարգել և նրան տալ նահանգապետներ, բայց Հոկտեմբերից հետո այդպիսի եքսպերիմենտներով զբաղվել չի կարելի։ Սիստեմը բարդացել է, բայց դա դյուրացնում է կառավարելը և ամբողջ կառավարումը դարձնում է իսկական խորհրդային։ Ահա՛ թե ինչու յես կարծում եմ, վոր համագումարը պետք է վորոշում կայացնի հիմնել մի հատուկ որգան—

յերկրորդ պալատ՝ Միության ԿԳԿ-ի կազմի մեջ, որպես միանգամայն անհրաժեշտ որգան։

Ցես չեմ ասի, որ դա—Միության ժողովուրդների միջև աշխատակցությունը կանոնավորելու կատարյալ ձևն է, չեմ ասի, որ դա—գիտության վերջին խոսքն է. վո՛չ յերբեք։ Ազգային հարցը մենք կրկին կքննենք, որովհետև ազգային և միջազգային պայմանները փոխվում են և ելի կարող են փոխվել։ Ցես նույնիսկ ընդունում եմ, որ կարող է պատահել մենք ստիպված լինենք մի քանի կոմիսարիատները, որ մենք ձուլում ենք հանրապետությունների Միության կազմի մեջ, հետո անջատելու՝ յեթե փորձը ցույց կտա, որ կոմիսարիատներից վոմանք՝ ձուլվելով՝ բացասական արդյունք են տվել։

Բայց մի բան պարզ է, որ տվյալ պայմաններում և տվյալ հանգամանքներում ավելի լավ մեթոդ և ուրիշ՝ ավելի համապատասխան որգան մեր տրամադրության տակ չկա։ Լավագույն միջոց և ուրիշ ճանապարհ՝ ստեղծելու համար այնպիսի որգան, որ կարող լինի անդրադարձնել առանձին հանրապետությունների ներսում տեղի ունեցող բոլոր տատանումները և բոլոր փոփոխությունները,—մենք առայժմ չունենք լավագույն միջոց՝ քան յերկրորդ պալատ հիմնելն է։ Ինքնին հասկանալի յե, որ յերկրորդ պալատում պետք է ներկայացվեն վոչ միայն այդ չորս հանրապետությունները, որոնք միացել են, այլև բոլոր ժողովուրդները, որովհետև խոսքը վոչ միայն ձևականորեն միացած (թվով 4) հանրապետությունների մասին է, այլև բոլոր ժողովուրդների ու ազգությունների մասին։ Ուստի և մենք պետք է ընտրենք այնպիսի ձև, որը անդրադարձներ բոլորի, առանց բացառության, բոլոր ազգությունների և հանրապետությունների պահանջները։

Ցես յեզրափակում եմ, ընկերներ։ Ուրեմն՝ ազգային հարցի կարևորությունը վորոշվում է միջազգային դրու-

թյան մեջ յեղած նոր սիտուացիայով, նրանով, որ մենք պետք է այստեղ՝ Ռուսաստանում, մեր ֆեդերացիայում ազգային հարցը վճռենք ուղիղ, որինակելի, որպեսզի որինակ տանք Արևելքին, որ ծանր պահեստներ է ներկայացնում մեր հեղափոխության համար, և դրանով ուժեղացնենք նրանց վստահությունը, նրանց ձգտումը դեպի մեր ֆեդերացիան։

Ցես արդեն ասացի, որ ազգային հարցի էությունը դա—ուղիղ հարաբերությունների սահմանումն է՝ նախկին գերիշխող ազգի պրոլետարիատի և նախկին վոչ-գերիշխող ազգերի գյուղացիության միջև, և որ, այդ տեսակետից, ազգային հարցի կոնկրետ ձևը տվյալ մոմենտում արտահայտվում է նրանում, որ ուղիներ գտնենք, միջոցներ գտնենք՝ կանոնավորելու ժողովուրդների աշխատակցությունն ու միասնակեցությունը Հանրապետությունների Միության մեջ, միասնական պետության մեջ։

Ցես խոսեցի նաև այն գործոնների մասին, որոնք նպաստում են ժողովուրդների այդպիսի մերձեցմանը, յես խոսեցի այն գործոնների մասին, որոնք դժվարացնում են այդպիսի միացումը։ Ցես հատուկ կանգ առա վելիկոռուսական շովինիզմի վրա, որպես ամրացնող ուժի վրա։ Այդ ուժը հանդիսանում է հիմնական վտանգ, որ կարող է խախտել անցյալում ճնշված ժողովուրդների վստահությունը դեպի ռուսական պրոլետարիատը։ Դա—մեր ամենավտանգավոր թշնամին է, որին պետք է տապալենք, որովհետև՝ յեթե մենք այդ տապալենք, ապա $^{9}/_{10}$-ով տապալած կլինենք և այն նացիոնալիզմը, որ պահպանվել է, և որը ծավալվում է առանձին հանրապետություններում։

Այնուհետև։ Մենք կանգնած ենք այնպիսի վտանգի առաջ, որ մի շարք ընկերներ կարող են մեզ հրել մի ճանապարհի վրա, որը պահանջում է մի քանի ազգություններին տալ արտոնություններ՝ ի վնաս մյուսների։ Ցես

ասացի, որ մենք այդ ճանապարհի վրա կանգնել չենք կարող, որովհետև դա կնշանակե—տեղական նացիոնալիզմի զարգացում՝ ամենատգեղ ձևի, ամենաշովինիստական ձևի, որովհետև դա կարող է խախտել ազգային խաղաղությունը և սպանել ռտարազգիների մասսաների հավատը դեպի Խորհրդային Իշխանությունը։

Ես ասացի նաև, որ հիմնական միջոցը, որ մեզ հնարավորություն կտա ավելի դյուրին ճանապարհով վերացնելու միացմանը խանգարող այդ գործոնները, հանդիսանում է ԿԳԿ կազմում յերկրորդ պալատ հիմնելը, որի մասին յես ավելի բացարձակ խոսեցի Կ. Կոմ. փետրվարյան պլենումին և որի մասին թեզիսներում խոսվում է ավելի քողարկված ձևով, որպեսզի հնարավորություն տրվի ընկերներին, թերևս, նիշելու, գտնելու ուրիշ՝ ավելի ճկուն ձև, ուրիշ՝ ավելի համապատասխան որդան, որ կարողանա անդրադարձնել ազգությունների շահերը։ Ահա այսպես են յեզրակացությունները։

Ես կարծում եմ, որ կանգնելով այդ ճանապարհի վրա, մեզ կհաջողվի ուղիղ լուծել ազգային հարցը, մենք կհասնենք այն վիճակին, որ լայն կպարզենք պրոլետարական հեղափոխության դրոշակը և դրա շուրջը կհավաքենք համակրությունն ու վստահությունն Արևելքի, որ մեր հեղափոխության համար ծանր ռեզերվներ են ներկայացնում և կարող են վճռական դեր խաղալ պրոլետարիատի ու իմպերիալիզմի ապագա բախումների մեջ։ (Ծափահարություններ)։

ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆԻ ՑԵԶՐԱՓԱԿՄԱՆ ԽՈՍՔԸ.

(Ապրիլի 25-ին 1923 թ.)

Ընկերնե՛ր, թույլ տվեք ինձ նախ յերկու կետի մասին առարկելու այն ճառախոսներին, որոնք իմ զեկուցման

առթիվ այստեղ արտահայտվեցին։ Դա կխլի ընդամենը 20 րոպե, վոչ ավելի։

Առաջին հարցը—դա այն մասին է, վոր մի խումբ ընկերներ՝ Բուխարինի և Ռակովսկու գլխավորությամբ, չափազանց ուռցրին ազգային հարցի նշանակությունը, չափազանցրին այդ և ազգային հարցի պատճառով հարկավոր ուշադրություն չդարձրին սոցիալական հարցի, բանվոր դասակարգի իշխանության վերաբերող հարցի վրա։

Մինչդեռ մեզ՝ կոմունիստներիս համար պարզ է, վոր մեր ամբողջ աշխատանքի հիմքն է հանդիսանում բանվորների իշխանության ամրապնդման աշխատանքը և դրանից հետո մեր առաջ ծառանում է ուրիշ հարց՝ շատ կարևոր հարց, սակայն առաջինին յենթակա՝ ազգային հարցը։ Մեզ ասում են, վոր չի կարելի ազգություններին վիրավորել։ Դա միանգամայն ուղիղ է. յես դրան համաձայն եմ,—նրանց չպետք է վիրավորել։ Բայց դրանից ստեղծել նոր թեորիա այն մասին, վոր վելիկոռուսական պրոլետարիատին պետք է դնել նախկին ճնշված ազգությունների նկատմամբ վոչ-իրավահավասարի դրության մեջ,—դա նշանակում է՝ անհարմար բան ասել։ Այն, ինչ Լենինի հոդվածում վոճի դարձվածք է կազմում, ընկեր Բուխարինը դարձրեց մի ամբողջ լոզունգ։ Մինչդեռ պարզ է, վոր պրոլետարական դիկտատուրայի քաղաքական հիմքը հանդիսանում են ամենից առաջ և գլխավորապես՝ կենտրոնական, արդյունաբերական ռայոնները, և վոչ թե ծայրագավառները, վորոնք իրենցից ներկայացնում են գյուղացիական յերկրներ։ Յեթե մենք առավելություն տանք գյուղացիական ծայրագավառներին, ի վնաս պրոլետարական ռայոնների, ապա կարող է պրոլետարիատի դիկտատուրայի սիստեմում ճեղք գոյանալ։ Դա վտանգավոր է, ընկերներ։ Քաղաքականության մեջ չպետք է չափազանցությունների մեջ ընկնել, ինչպես և չպետք է յետ մնալ։

Անհրաժեշտ է չմոռանալ, որ բացի ժողովուրդների ինքնորոշման իրավունքից, գոյություն ունի նաև բանվոր դասակարգի իրավունքը՝ իր իշխանությունը ամրապնդելու, և այս վերջին իրավունքին յենթակա յե ինքնորոշման իրավունքը։ Լինում են դեպքեր, յերբ ինքնորոշման իրավունքը հակասական է դառնում ուրիշ՝ բարձրագույն իրավունքին, իշխանությունն իր ձեռքը վերցրած բանվոր դասակարգի իրավունքին, այդ դասակարգի այն իրավունքին, որ պետք է ամրապնդե իր իշխանությունը։ Այդպիսի դեպքերում,—դա պետք է պարզ ասել,—ինքնորոշման իրավունքը չի կարող և չպետք է արգելք հանդիսանա բանվոր դասակարգի իրավունքին՝ իր դիկտատուրան իրականացնելու։ Առաջինը յերկրորդի դիմաց պետք է նահանջի։ Այդպես եր, որինակ, 1920 թվին, յերբ մենք ստիպված եյինք հոգուտ բանվոր դասակարգի իշխանության պահպանման, գնալ Վարշավայի վրա։

Ուստի չպետք է մոռանալ, որ ազգություններին խոստումներ անելով, ազգությունների ներկայացուցիչների առաջ ռեվերանսներ անելով,—ինչպես այդ արեցին ներկա համագումարում մի քանի ընկերներ,—չպետք է մոռանալ, որ ազգային հարցի գործողության սֆերան և նրա՝ այսպես ասած՝ կոմպետենցիայի սահմանները մեր արտաքին և ներքին պայմաններում սահմանափակվում են «բանվորական հարցի» սֆերայով ու գործողությամբ, մի հարցի, որ բոլոր հարցերից հիմնականն է։

Այստեղ շատ-շատերը հենվեցին Վլադիմիր Իլյիչի տողերի և հոդվածների վրա։ Ցես չեյի ցանկանա մեջբերումներ անել իմ ուսուցչից, ընկեր Լենինից, քանի որ նա այստեղ չե, և յես վախենում եմ՝ մի գուցե սխալվեմ և վոչ պատեհ մեջբերում անեմ։ Բայց և այնպես՝ յես ստիպված եմ հիշատակել վոչ մի առարկություն չվերցնող, վոչ մի թյուրիմացության տեղիք չտվող յերկու տող, որպես-

զի ընկերները չասարակուսեն ազգային հարցի տեսակարար կշռի մասին։ Քննելով Մարքսի նամակն ազգային հարցի մասին, ընկեր Լենինը ինքնորոշման մասին գրած իր հոդվածում հանգում է այս յեզրակացության.—«բանվորական հարցի համեմատությամբ, ազգային հարցի յենթակա դրությունը Մարքսի համար կասկածից դուրս է»։ Այստեղ միայն յերկու տող է, բայց դրանք վճռում են ամեն ինչ։ Ահա սա պետք է իրենց ականջին ող անեն անտեղի յեռանդցույց տվող մեր ընկերներից վոմանք։

Յերկրորդ հարցը—վելիկոռուսական շովինիզմի և տեղական շովինիզմի մասին է։ Այստեղ արտահայտվեցին ընկեր Ռակովսկին, և մանավանդ ընկեր Բուխարինը, վորը առաջարկեց դուրս գցել այն կետը, ուր խոսվում է տեղական շովինիզմի վնասակարության մասին։ Իբր թե կարիք չկա զբաղվելու այնպիսի ճիճուի հետ, ինչպիսին տեղական շովինիզմն է, յերբ կա այնպիսի «Գողիաթ», ինչպիսին վելիկոռուսական շովինիզմն է։ Ընդհանրապես ընկեր Բուխարինը զղջացող տրամադրություն ուներ։ Դա հասկանալի յե.—տարիներով նա մեղանչել է ազգությունների հանդեպ՝ ժխտելով ինքնորոշման իրավունքը,—ժամանակ է վերջապես նաև զղջալու։ Բայց, զղջալով, նա ընկավ մյուս ծայրահեղության մեջ։ Զվարճալի յե, վոր ընկ. Բուխարինը կոչ է անում կուսակցությանը հետևել իր որինակին և նույնպես զղջալ, թեև ամբողջ աշխարհը գիտե, վոր կուսակցությունը այս խնդրում զղջալու վոչինչ չունի, վորովհետև նա իր գոյության հենց սկզբից (1898 թվին) ընդունած է ինքնորոշման իրավունքը։ Բանը նրանումն է, վոր ընկ. Բուխարինը չի հասկացել ազգային հարցի եությունը։ Ցերը ասում են, վոր ազգային հարցում պետք է գլխավոր տեղ տալ վելիկոռուսական շովինիզմի դեմ մղվող պայքարին, դրանով ցանկանում են շեշտել կոմունիստի պարտականությունը, դրանով ցանկա-

նում են ասել, որ ռուս կոմունիստը պարտավոր է ինքը պայքար մղելու ռուս շովինիզմի դեմ։ Յեթե վոչ-ռուս, այլ Թուրք կամ վրացի կոմունիստները ձեռնարկեին պայքարելու ռուսական շովինիզմի դեմ, ապա դրանց այդ պայքարը կվորակեին վորպես հակառուսական շովինիզմ։ Դա կփչացներ ամբողջ գործը և կամրապնդեր վելիկոռուսական շովինիզմը։ Միայն ռուս կոմունիստները կարող են իրենց վրա վերցնել պայքարը վելիկոռուսական շովինիզմի դեմ և դա հասցնել մինչև վերջը։

Իսկ ի՞նչ են ուզում ասած լինել, յերբ առաջարկում են պայքարել տեղական հակառուսական շովինիզմի դեմ։ Դրանով ուզում են շեշտել տեղական կոմունիստների պարտականությունը, վոչ-ռուս կոմունիստների պարտականությունը՝ պայքարելու իրենց շովինիզմի դեմ։ Միթե կարելի՞ յե ժխտել, որ Թեքու�։ներ դեպի հակառուսական շովինիզմը՝ կան։ Չե՞ որ ամբողջ համագումարը պարզապես տեսավ, որ տեղական, վրացական, բաշկիրիական և այլն շովինիզմ գոյություն ունի, և որ դրա դեմ պետք է պայքարել։

Ռուս կոմունիստները չեն կարող պայքարել Թուրքական, վրացական, բաշկիրիական շովինիզմի դեմ, որովհետև յեթե ռուս կոմունիստը իր վրա վերցնի Թուրքական կամ վրացական շովինիզմի դեմ պայքարելու ծանր խնդիրը, ապա նրա այդ պայքարը կվորակվի վորպես վելիկոռուսական շովինիզմի պայքար՝ Թուրքերի և վրացիների դեմ։ Դա կփչացներ ամբողջ գործը։ Միայն Թուրք, վրացի և այլն կոմունիստները կարող են պայքարել Թուրքական, վրացական և այլն շովինիզմի դեմ, միայն վրացական կոմունիստները կարող են հաջողությամբ պայքարել իրենց վրացական նացիոնալիզմի կամ շովինիզմի դեմ։ Դա—վոչ-ռուս կոմունիստների պարտականությունն է։ Ահա Թե ինչու անհրաժեշտ է Թեզիսներում շեշտել ռուս

կոմունիստների (յես նկատի ունեմ պայքարը վելիկոռուսական շովինիզմի դեմ) և վոչ-ռուս կոմունիստների (յես նկատի ունեմ պայքարը հակահայկական, հակաթուրքական, հակառուսական շովինիզմի դեմ) այդ կրկնակի խնդիրը։ Առանց դրան թեզիսները դուրս կգան միակողմանի, առանց դրան՝ վո՛չ մի ինտերնացիոնալիզմ՝ վոչ պետական և վոչ էլ կուսակցական շինարարության մեջ՝ չի կարելի ստեղծել։

Յեթե մենք պայքար մղենք միայն վելիկոռուսական շովինիզմի դեմ, ապա այդ պայքարի տակ հովանավորություն կգտնեն թուրքական և այլ շովինիստների պայքարը, վորը տեղերում ծավալվում է և վորը վտանգավոր է մանավանդ այժմ՝ նեպի պայմաններում։ Մենք չենք կարող պայքար չմղել յերկու ֆրոնտի վրա, վորովհետև միայն յերկու ֆրոնտի վրա պայքարելու (վելիկոռուսական շովինիզմի դեմ, վորը հիմնական վտանգ է հանդիսանում մեր շինարարական աշխատանքում, և տեղական շովինիզմի դեմ) պայմանով կարելի կլինի հաջողություն ունենալ, վորովհետև առանց այդ յերկկողմանի պայքարի վո՛չ մի զոդումն չի լինի ռուս բանվորների ու գյուղացիների և ոտար ազգությունների միջև։ Հակառակ դեպքում կարող է ստացվել տեղական շովինիզմի խրախուսանք, տեղական շովինիզմը պարգևատրելու քաղաքականություն, ինչը մենք թույլ տալ չենք կարող։

Թույլ տվեք, այստեղ ևս մի քանի տող հիշատակել ընկ. Լենինից։ Յես այդ չեյի անի, բայց վորովհետև մեր համագումարում կան շատ ընկերներ, վորոնք ընկ. Լենինից մեջբերումներ են անում ծուռ ու շիտակ, նրան աղավաղելով, թույլ տվեք կարդալ մի քանի խոսք ընկեր Լենինի՝ բոլորիդ հայտնի մի հոդվածից.

«Պրոլետարիատը պետք է պահանջի «իր» ազգի կողմից կեղեքվող գաղութների և ազգերի քաղաքական ան-

ջատում։ Հակառակ դեպքում պրոլետարիատի ինտերնացիոնալիզմը կմնա դատարկ հնչյուն. կեղեքվող և կեղեքող ազգի բանվորների միջև հնարավոր չի լինի վոչ վստահություն, վոչ էլ դասակարգային համերաշխություն»։

Սա, այսպես ասած, գերիշխող կամ նախկին գերիշխող ազգի պրոլետարների պարտականությունն է։ Այնուհետև նա խոսում է անցյալում կեղեքված ազգությունների պրոլետարների կամ կոմունիստների պարտականության մասին.

«Մյուս կողմից, կեղեքող ազգության սոցիալիստները առանձնապես պետք է պաշտպանեն և կյանքում կիրառեն կեղեքված ազգության բանվորների լրիվ և անպայման—այդ թվում նաև կազմակերպչական—միաբանությունը՝ կեղեքող ազգի բանվորների հետ։ Առանց դրան հնարավոր չէ պաշտպանել պրոլետարիատի ինքնուրույն քաղաքականությունը և նրա դասակարգային համերաշխությունը ուրիշ յերկրների պրոլետարիատի հետ՝ բուրժուազիայի բոլոր և ամեն տեսակի գործարքների, դավաճանությունների և սրիկայությունների դեպքում, վորովհետև կեղեքված ազգերի բուրժուազիան ազգային ազատագրության լոզունգները շարունակ ծառայեցնում է բանվորներին խաբելու համար»։

Ինչպես տեսնում եք, յեթե պետք է գնանք ընկ. Լենինի ցույց տված ճանապարհով,—իսկ այստեղ ընկերներից վոմանք յերդվեցին նրա անունով,—ապա ուրեմն անհրաժեշտ է յերկու թեզիսներն ևս, թե՛ վելիկոռուսական շովինիզմի դեմ պայքարելու մասին, և թե՛ տեղական շովինիզմի դեմ պայքարելու մասին թողնել ռեզոլյուցիայում, վորպես մեկ յերևույթի յերկու կողմեր, վորպես թեզիսներ՝ ընդհանրապես շովինիզմի դեմ պայքարող։

Ցեսս սրանով վերջացնում եմ իմ առարկություններն այն ճառախոսների դեմ, վորոնք այստեղ արտահայտվեցին։

ԼԵՆԻՆԻԶՄ ՅԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԸ*).

Այս թեմայից յես վերցնում եմ յերկու գլխավոր հարց՝ ա) հարցի դրումը և բ) ճնշված ժողովուրդների ազատագրական շարժումը և պրոլետարական հեղափոխությունը։

1. Հարցի դրումը։ Վերջին յերկու տասնամյակում ազգային հարցը յենթարկվել է մի շարք լուրջ փոփոխությունների։ Ազգային հարցը II Ինտերնացիոնալի շրջանում և ազգային հարցը լենինիզմի շրջանում—բնավ միևնույն բանը չե։ Դրանք խոր կերպով իրարից տարբերվում են վոչ միայն իրենց ծավալով, այլև իրենց ներքին բնույթով։

Առաջ ազգային հարցը սահմանափակվում եր, սովորաբար, խնդիրների նեղ շրջանակով, վորոնք գլխավորապես վերաբերում եյին «կուլտուրական» ազգություններին։ Իռլանդացիներ, վենգրացիներ, լեհեր, ֆիններ, սերբեր և Յեվրոպայի մի քանի ուրիշ ազգություններ,—ահա շրջանն այն թերիրավասուն ժողովուրդների, վորոնց բախտով հետաքրքրվում եյին II Ինտերնացիոնալի հերոսները։ Տասնյակ և միլիոնավոր ասիական և աֆրիկական ժողովուրդները, վորոնք տանում եյին ամենակոպիտ և վայրագ ձևի ազգային ճնշումը, նրանց հայեցողության շրջանակից սովորաբար դուրս եյին մնում։ Սպիտակներին և սևերին, «կուլտուրականներին» և «անկուլտուրականներին» չեյին համարձակվում դնել մի մակարդակի վրա։

---

*) Այս հատվածը Ստալինի «Լենինի և Լենինիզմի մասին» գրքում խորագրված է՝ «Ազգային հարց»։

Յերկու-յերեք դատարկ և կիսաքաղցր-կիսաթթու բանաձևեր, վորոնք աշխատում եյին խուսափել գաղութների ազատագրության հարցից, ահա այն ամենը, ինչով կարող եյին հպարտանալ II Ինտերնացիոնալի գործիչները։

Այժմ այդ յերկվությունն ու թերատությունը ազգային հարցում պետք է համարել լիկվիդացիայի յենթարկված։ Լենինիզմը բացեց այդ աղաղակող անհամապատասխանությունը, քանդեց սպիտակների և սևերի, յեվրոպացիների և ասիացիների, իմպերիալիզմի «կուլտուրական» և «անկուլտուրական» ստրուկների միջև ընկած պատը, և այդպիսով կապեց ազգային հարցը գաղութային հարցին։ Յեվ այդպիսով, ազգային հարցը մասնավոր, պետության ներքին հարցից վերածվեց մի ընդհանուր և միջազգային, կախում ունեցող և գաղութային յերկրների ճնշված ազգությունների՝ իմպերիալիզմի լծից ազատագրվելու համաշխարհային հարցի։ Սովորաբար առաջ սխալ եր բացատրվում ազգերի ինքնորոշման սկզբունքը, հաճախ դա սահմանափակելով ազգերի ավտոնոմիա ստանալու իրավունքով։ II Ինտերնացիոնալի մի քանի լիդերներ հասան նույնիսկ այն բանին, վոր ինքնորոշման իրավունքը փոխարինեցին կուլտուրական ավտոնոմիայի իրավունքով, այսինքն՝ ճնշված ազգերի իրավունքով՝ ունենալու իրենց կուլտուրական հիմնարկությունները, թողնելով ամբողջ քաղաքական իշխանությունը տիրող ազգի ձեռքը։ Այդ հանգամանքը տանում եր այն բանին, վոր ինքնորոշման գաղափարը վտանգվում եր անեկսիայի դեմ պայքարի զենք ծառայելուց վերածվելու անեկսիայի արդարացման գործիքի։ Այժմ այդ խառնաշփոթությունը պետք է հաղթած համարել։ Լենինիզմը լայնացրեց ինքնորոշման հասկացողությունը, բացատրելով այն, վորպես կախում ունեցող յերկրների և գաղութների ժողովուրդների լիակատար բաժանման իրավունք, վորպես ազգի ինքնուրույն պետա-

կան գոյության իրավունք։ Այդպիսով, ինքնորոշման իրավունքը վորպես ավտոնոմիայի իրավունք մեկնաբանելու ճանապարհով վերացվեց անեկսիաները արդարացնելու հնարավորությունը։

Այդպիսով ինքնորոշման սկզբունքը մասսաներին խաբելու գործիքից,—ինչպես ենսանկասած հանդիսանում եր սոցիալ-շովինիստների ձեռքին իմպերիալիստական պատերազմի ժամանակ,—վերածվեց բոլոր և ամեն տեսակ իմպերիալիստական ցանկությունների և շովինիստական մախինացիաների մերկացման գործիքի, մասսաներին ինտերնացիոնալիզմի վոգով քաղաքականապես լուսավորելու գործիքի։

Առաջ ճնշված ազգությունների հարցը քննվում եր, սովորաբար, վորպես զուտ իրավական հարց։ «Ազգային իրավահավասարության» հանդիսավոր ազդարարումը, բազմաթիվ դեկլարացիաները «ազգերի հավասարության» մասին,—ահա թե ինչով եյին ժամանակ վատնում II Ինտերնացիոնալի կուսակցությունները, վորոնք սքողում եյին այն փաստը, վոր «Ազգերի հավասարությունը» իմպերիալիզմի ժամանակ, յերբ ազգերի մի խումբ (փոքրամասնություն) ապրում է ի հաշիվ ազգերի մի ուրիշ խմբի շահագործման, մի ծաղր է հանդիսանում ճնշված ժողովուրդների նկատմամբ։

Այժմ այդ բուրժուաիրավական տեսակետն ազգային հարցում պետք է մերկացած համարել։ Լենինիզմն ազգային հարցը փքուն, մեծադղորդ դեկլարացիաների բարձունքներից ցած իջեցրեց գետին, հայտարարելով, վոր «ազգերի հավասարության» մասին յեղած դեկլարացիաները յեթե պրոլետարական կուսակցությունների կողմից ամրապնդված չեն ճնշված ազգերի ազատագրական պայքարի ուղղակի պաշտպանությամբ, հանդիսանում են դատարկ և կեղծ դեկլարացիաներ։ Այդպիսով և ճնշված ազգերի հարցը դարձավ այդ ազգերի իմպերիալիզմի դեմ վարած պայ-

քարի պաշտպանության, մշտական և իսկական ոգնության մի հարց, պայքարի, որ մղում են այդ ազգերը իսկական հավասարության, իրենց ինքնուրույն պետական գոյության համար։

Առաջ ազգային հարցը քննվում եր ռեֆորմիստորեն, որպես առանձին, ինքնուրույն հարց, կապիտալի իշխանության, կապիտալիզմի խորտակման, պրոլետարական հեղափոխության վերաբերող ընդհանուր հարցից անկախ։ Լենինն յենթադրվում եր, որ Յեվրոպայում պրոլետարիատի հաղթանակը հնարավոր է, առանց ուղղակի դաշնակցության՝ գաղութների ազատագրական շարժման հետ, որ ազգային - գաղութային հարցի լուծումը կարող է կատարվել առանձին, մեկուսացրած, պրոլետարական հեղափոխության մեծ ճանապարհից անջատված, առանց հեղափոխական պայքարի՝ իմպերիալիզմի դեմ։ Այժմ այդ հակահեղափոխական տեսակետը պետք է համարել մերկացած։ Լենինիզմը ապացուցեց, իսկ իմպերիալիստական պատերազմն ու հեղափոխությունը Ռուսաստանում հաստատեցին, որ ազգային հարցը կարող է լուծվել միայն պրոլետարական հեղափոխության հետ կապված և նրա հողի վրա, որ հեղափոխության հաղթության ուղին Արևմուտքում անցնում է կախում ունեցող յերկրների և գաղութների ազատագրական շարժման հետ՝ իմպերիալիզմի դեմ հեղափոխական դաշն կնքելու միջով։ Ազգային հարցը պրոլետարական հեղափոխության, պրոլետարիատի դիկտատուրայի ընդհանուր հարցի մի մասն է։

Հարցը դրված է այսպես՝ արդյոք ապառվա՞ծ են արդեն բոլոր հեղափոխական հնարավորությունները, որոնք գտնվում են ճնշված յերկրների ազատագրական շարժման խորքերում թե՞ վոչ. և յեթե ապառված չեն,—հույս և հիմք կա՞ արդյոք ոգտագործելու այդ հնարավորությունները պրոլետարական հեղափոխության համար, կախում ունե-

ցող և գաղութային յերկրները դարձնելու իմպերիալիստական բուրժուազիայի ռեգերվից՝ հեղափոխական պրոլետարիատի ռեգերվ, այդ պրոլետարիատի դաշնակից։

Լենինիզմն այդ հարցին պատասխանում է դրականապես. այսինքն՝ ճնշված յերկրների ազգային ազատագրական շարժման խորքերում հեղափոխական ընդունակությունների ճանաչման և նրանց ոգտագործելու հնարավորության վոգով՝ հոգուտ ընդհանուր թշնամու տապալման, հոգուտ իմպերիալիզմի խորտակման։ Իմպերիալիզմի զարգացման մեխանիկան, իմպերիալիստական պատերազմը և հեղափոխությունը Ռուսաստանում ամբողջովին հաստատում են լենինիզմի յեզրակացություններն այդ մասին։

Այստեղից ել բղխում է ճնշված և կախում ունեցող ժողովուրդների ազգային ազատագրական շարժման վճռական և ակտիվ պաշտպանության անհրաժեշտությունը պրոլետարիատի կողմից։

Այդ չի նշանակում, վոր պրոլետարիատը պետք է պաշտպանի ամեն մի ազգային շարժում՝ ամենուրեք և ամեն ժամանակ բոլոր առանձին կոնկրետ դեպքերում։ Խոսքը վերաբերում է այնպիսի ազգային շարժման պաշտպանությանը, վոր ուղղված է իմպերիալիզմի թուլացման, խորտակման դեմ և վոչ թե հոգուտ նրա ամրապնդման և պահպանման։ Պատահում են դեպքեր, յերբ առանձին ճնշված յերկրներում ազգային շարժումն ընդհարվում է պրոլետարական շարժման զարգացման շահերի հետ։ Ինքնին հասկանալի յե, վոր այդպիսի դեպքերում խոսք չի կարող լինել պաշտպանության մասին։ Ազգի իրավունքների հարցը մի չեզոքացած և ինքնամփոփ հարց չե, այլ պրոլետարական հեղափոխության հարցի մի մասն է, վոր յենթարկված է ընդհանուր հարցին և պահանջում է իրեն ծննել ընդհանուր հարցի մոտեցման տեսակետից։ Մարքսն

անցյալ դարի 40-ական թվականներին կողմնակից եր լեհերի և վենգրերի ազգային շարժմանը, վոր ուղղված եր չեխերի և հարավային սլավոնների ազգային շարժման դեմ։ Ինչո՞ւ։ Վորովհետև չեխերը և սլավոնները, այն ժամանակ «ռեակցիոն ժողովուրդներ» եյին, ռուսական առաջավոր դիրքերն եյին Յեվրոպայում, աբսոլյուտիզմի առաջավոր դիրքերը, այնինչ լեհերը և վենգրերը հանդիսանում եյին «հեղափոխական ժողովուրդներ», վորոնք պայքարում եյին աբսոլյուտիզմի դեմ։ Վորովհետև չեխերի և հարավային-սլավոնների ազգային շարժման պաշտպանությունը նշանակում եր ցարիզմի, յեվրոպական հեղափոխական շարժման ամենավտանգավոր թշնամու կողմնակի պաշտպանությունը։

«Դեմոկրատիայի առանձին պահանջները,—ասում է Լենինը,—նույն թվում և ինքնորոշումը,—աբսոլյուտ չե, այլ համաշխարհային համադեմոկրատական (այժմ՝ համասոցիալիստական) շարժման մասնիկն է. հնարավոր է, վոր առանձին կոնկրետ դեպքերում մասնիկը հակասի ընդհանուրին, այն ժամանակ նրանից պետք է հրաժարվել»։ (Տես Լենինի յերկերի XIX հատոր, «Դիսկուսիայի արդյունքները»)։

Ահա այսպես է դրված առանձին ազգային շարժման հարցի մասին, այդ շարժումների հնարավոր ռեակցիոն բնույթի մասին, յեթե, իհարկե, գնահատել նրանց վոչ ձևական, վոչ իրավունքի աբստրակտ տեսակետից, այլ կոնկրետ կերպով, հեղափոխական շարժման շահերի տեսակետից։

Նույնը պետք է ասել ընդհանրապես ազգային շարժման հեղափոխական բնույթի մասին։ Ազգային շարժումների խոշոր մեծամասնության անկասկածելի հեղափոխականությունը նույնքան հարաբերական է և ինքնահատուկ, վորքան հարաբերական և ինքնահատուկ է մի քանի ազգային շարժումների հնարավոր ռեակցիոներականությունը։

Իմպերիալիստական ճնշման պայմաններում ազգային շարժման հեղափոխական բնույթը չե յենթադրում պրոլետարական տարրերի պարտադիր գոյությունը շարժման մեջ, շարժման հեղափոխական կամ հանրապետական ծրագրի գոյությունը, շարժման դեմոկրատական հիմքերը։ Ավղանիստանի Եմիրի պայքարը Ավղանիստանի անկախության համար, ոբյեկտիվորեն հանդիսանում է հեղափոխական պայքար, չնայած Եմիրի և նրա արքայակների միապետական հայացքներին, վորովհետև նա թուլացնում է, կազմալուծում է, մաշում է իմպերիալիզմը, այն ինչ, որինակ, այնպիսի «մոլի» դեմոկրատների և «սոցիալիստների», «հեղափոխականների» և հանրապետականների, ինչպես, որինակ, Կերենսկու և Ցերեթելու (34), Ռենոդելի (35) և Շեյդեմանի(36), Զերնովի (37) և Դանի (38), Հենդերսոնի (39) և Կլայնսի (40), պայքարն իմպերիալիստական պատերազմի ժամանակ՝ ռեակցիոն պայքար եր, վորովհետև նրա հետևանքը յեղավ իմպերիալիզմի շպարավորումը, ամրապնդումը, նրա հաղթանակը։ Յեգիպտոսի վաճառականների և բուրժուական ինտելլիգենտների պայքարը Յեգիպտոսի անկախության համար նույն պատճառներով հանդիսանում է ոբյեկտիվորեն հեղափոխական, չնայած յեգիպտական ազգայինշարժման լիդերների բուրժուական ծագմանը և բուրժուական կոչմանը, չնայած վոր նրանք սոցիալիզմին դեմ են, այն ինչ Անգլիայի բանվորական կառավարության պայքարը՝ Յեգիպտոսը կախման դրության մեջ պահելու համար, նույն պատճառներով հանդիսանում է ռեակցիոն պայքար՝ չնայած վոր այդ կառավարությունների անդամները պրոլետարական ծագում ունեն, պրոլետարական կոչում, չնայած այն բանին, վոր նրանք սոցիալիզմի «կողմնակից» են։ Յես այլևս չեմ խոսում ազգային շարժման մասին գաղութային և կախում ունեցող ավելի խոշոր յերկրներում, վորպիսիքն են Հնդկաստանն ու Չինաստանը,

վորոնց ամեն մի քայլն ազատագրության ճանապարհին, յեթե նա նույնիսկ խախտում է նորմալ դեմոկրատիայի կարգը, շոգեմուրճի հարված է իմպերիալիզմի գլխին, այսինքն՝ անկասկած հեղափոխական քայլ է։ Լենինը ճշմարիտ է, ասելով, վոր ճնշված յերկրների ազգային շարժումը պետք է գնահատել վոչ թե ֆորմալ դեմոկրատիայի տեսակետից, իմպերիալիզմի վարած պայքարի ընդհանուր հաշվեկշռի փաստական հետևանքների տեսակետից, այսինքն «վոչ թե չեզոքացած, այլ համաշխարհային մասշտաբով» (տես նույն տեղը)։

2. Ճնշված ժողովուրդների ազատագրական շարժումը յեվ պրոլետարական հեղափոխությունը։ Ազգային հարցը լուծելու ժամանակ լենինիզմը յելնում է հետևյալ դրությունների.

ա) Աշխարհը բաժանված է յերկու բանակի.— մի բուռն քաղաքակրթված ազգերի բանակ, վոր տիրապետում է ֆինանսական կապիտալին և շահագործում է յերկրագնդի ազգաբնակչության հսկա մեծամասնությունը, և գաղութների, կախում ունեցող յերկրների շահագործված և ճնշված ժողովուրդների բանակ, վոր կազմում է այդ մեծամասնությունը։

բ) Գաղութները և կախում ունեցող յերկրները, վոր ճնշվում և շահագործվում են ֆինանսական կապիտալի կողմից, ամենահսկայական ռեզերվները և իմպերիալիզմի ուժերի ամենալուրջ աղբյուրներն են կազմում։

գ) Գաղութային և կախում ունեցող յերկրների ճնշված ժողովուրդների հեղափոխական պայքարը իմպերիալիզմի դեմ, շահագործումից և ճնշումից ազատվելու միակ ճանապարհն է հանդիսանում։

դ) Ամենագլխավոր գաղութային և կախում ունեցող յերկրներն արդեն մտել են այդ ազգային ազատագրական շարժման ճանապարհը, վորը չի կարող առաջ չբերել համաշխարհային կապիտալիզմի կրիզիս։

ե) Պրոլետարական շարժման շահերը զարգացած յերկրներում և ազգային ազատագրական շարժումը գաղութներում, պահանջում են հեղափոխական շարժման այդ յերկու տեսակների միացում՝ ի մի ընդհանուր ֆրոնտ, ընդհանուր թշնամու՝ իմպերիալիզմի դեմ։

զ) Բանվոր դասակարգի հաղթանակը զարգացած յերկրներում և ճնշված ժողովուրդների ազատագրումն իմպերիալիզմի լծից՝ անհնարին է առանց ընդհանուր հեղափոխական ֆրոնտի կազմակերպության և նրա ամրապնդման։

ը) Ընդհանուր հեղափոխական ֆրոնտի կազմակերպությունն անհնարին է՝ յեթե ճնշող ազգերի պրոլետարիատը ուղղակի և վճռական ազդեցություն չի ցույց տալիս ճընշված ազգերի ազատագրական շարժմանը ընդդեմ «հայրենական» իմպերիալիզմի, վորովհետև «չի կարող ազատ լինել մի ժողովուրդ, վոր ճնշում է ուրիշ ժողովուրդների»։ (Մարքս)։

թ) Այդ աջակցումը նշանակում է պաշտպանել, ոգնել, կյանքում իրականացնել այն լոզունգը, վոր ազգերը իրավունք ունեն անջատվելու, ինքնուրույն պետություն կազմելու։

ժ) Առանց այդ լոզունգի իրականացման, անհնարին է ազգերի աշխատակցությունն ու միությունը կարգի բերել մի ընդհանուր համաշխարհային տնտեսության մեջ, վոր սոցիալիզմի հաղթանակի նյութական հիմքն է կազմում։

ի) Այդ միությունը կարող է լինել միայն կամավոր, փոխադարձ վստահության և ժողովուրդների յեղբայրական փոխհարաբերության հիմունքներով։

Այստեղից ազգային հարցում նկատվում է յերկու կողմ, յերկու տենդենց, մեկը՝ վոր տանում է դեպի քաղաքական ազատագրումը իմպերիալիստական կապանքներից, և ազգային ինքնուրույն պետության կազմակերպությունը, վոր ծագում է իմպերիալիստական ճնշման և գա-

դութային շահագործման հիման վրա, մյուս տենդենցը՝ վոր տանում է դեպի ազգերի տնտեսական մերձեցումը, վոր առաջ է գալիս համաշխարհային շուկայի և համաշխարհային տնտեսության առաջ գալու շնորհիվ։

«Զարգացող կապիտալիզմը,—ասում է Լենինը,—ազգային հարցում գիտե յերկու պատմական տենդենցներ։ Առաջին—ազգային կյանքի և ազգային շարժումների զարթոնքը, պայքար ամեն մի ազգային ճնշման դեմ, ազգային պետությունների կազմակերպվելը։ Յերկրորդը—ազգերի մեջ ամեն տեսակի հարաբերությունների զարգացումը և արագացումը, անջրպետների վերացումը, կապիտալի միջազգային միության, ընդհանրապես տնտեսական կյանքի, քաղաքականության, գիտության և այլ ստեղծումը։ Այդ յերկու տենդենցները կապիտալիզմի համաշխարհային որենքն են։ Առաջինը գերակշռում է նրա զարգացման սկզբում, յերկրորդը բնորոշում է հասուն կապիտալիզմը, վոր գնում է դեպի սոցիալիստական հասարակակարգի փոխվելը»։ (Տես Լենին, XIX հատոր «Քննական դիտողություններ»)։

Իմպերիալիզմի համար այդ յերկու տենդենցները անհաշտեցնելի հակասություններ են, վորովհետև իմպերիալիզմը չի կարող ապրել առանց գաղութների շահագործման և բռնի ներփակման՝ «միասնական միության» շրջանակում, վորովհետև իմպերիալիզմը կարող է ազգերին իրար մերձեցնել միայն անեկսիայի և գաղութների գրավման ճանապարհով, առանց վորոնց նրան (կապիտալիզմը), ընդհանրապես ասած, չի կարելի պատկերացնել։

Կոմունիզմի համար, ընդհակառակը, այդ տենդենցները հանդիսանում են լոկ միևնույն գործի, իմպերիալիզմի լծից ճնշված ժողովուրդների ազատագրության գործի յերկու կողմերը, վորովհետև կոմունիզմը գիտե, վոր ժողովուրդների միությունը մի ընդհանուր համաշխարհային

տնտեսության մեջ հնարավոր է միայն փոխադարձ հավատի սկզբունքների և կամավոր համաձայնության հիման վրա, վոր ժողովուրդների կամավոր միացման ուղին ընթանում է «միասնական» իմպերիալիստական «ամբողջությունից» գաղութների անջատման և նրանց ինքնուրույն պետությունների փոխվելու միջով։

Այստեղից բղխում է տիրող ազգությունների այն «սոցիալիստների» (Անգլիա, Ամերիկա, Ֆրանսիա, Իտալիա, Ցապոնիա և այլն) մեծապետական շովինիզմի դեմ համառ, անդադար և վճռական պայքար մղելու անհրաժեշտությունը, «սոցիալիստների» վորոնք չեն ցանկանում պայքարել իրենց իմպերիալիստական պետությունների դեմ, վորոնք չեն ցանկանում պաշտպանել «նրանց» գաղութների ճնշված ժողովուրդների ազատագրական պայքարը, վոր մղվում է ճնշումից ազատվելու, պետական անջատման համար։

Առանց այդպիսի պայքարի անհնարին է տիրող ազգի պրոլետարիատի դաստիարակությունն իսկական ինտերնացիոնալիզմի վոգով, գաղութների և կախում ունեցող յերկրների աշխատավորական մասսաների մերձեցման վոգով, պրոլետարական հեղափոխության իսկական նախապատրաստման վոգով։ Հեղափոխությունը Ռուսաստանում չեր հաղթի և Կոլչակն (41) ու Դենիկինը (42) չեյին պարտվի, յեթե ռուսական պրոլետարիատը նախկին ռուսական իմպերիայի ճնշված ժողովուրդների համակրությունն և աջակցությունը չգրավեր։ Բայց այդ ժողովուրդների համակրությունը և աջակցությունը ձեռք բերելու համար՝ նա նախ և առաջ պետք է փշրեր ռուսական իմպերիալիզմի շղթաները և ազատեր այդ ժողովուրդներին ազգային ճնշումից։ Առանց դրան անհնարին կլիներ ամրապնդել Խորհրդային Իշխանությունը, սերմանել իսկական ինտերնացիոնալիզմ և ստեղծել ազգերի աշխատակցության այն

աքանչելի կազմակերպությունը, որը կոչվում է Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների Միություն և որը հանդիսանում է կենդանի պատկերը ժողովուրդների ապագա միության՝ համաշխարհային միասնական տնտեսության մեջ։

Այստեղից բղխում է պայքարի անհրաժեշտությունը ազգային նեղության, առանձնացման, ճնշված յերկրների սոցիալիստների փակվածության դեմ, սոցիալիստների, որոնք չեն ցանկանում վեր բարձրանալ իրենց ազգային մասշտաբից և չեն հասկանում իրենց յերկրի ազատագրական շարժման կապը տիրող յերկրների պրոլետարիատի շարժման հետ։

Առանց այդպիսի պայքարի անհնարին է ճնշված ազգերի պրոլետարիատի ինքնուրույն քաղաքականության պաշտպանությունը տիրող յերկրների պրոլետարիատի հետ—ընդհանուր թշնամուն՝ իմպերիալիզմը կործանելու համար մղվող պայքարում, առանց այդպիսի պայքարի ինտերնացիոնալիզմը կլիներ անհնարին։

Ահա այդպես է տիրող և ճնշված ազգերի աշխատավոր մասսաներին հեղափոխական ինտերնացիոնալիզմի վոգով դաստիարակելու ճանապարհը։

Ահա թե ի՞նչ է ասում Լենինը՝ բանվորներին ինտերնացիոնալիզմի վոգով դաստիարակելու գործում տարվելիք կոմունիզմի այդ յերկկողմանի աշխատանքի մասին.

«Այդ դաստիարակությունը կարո՞ղ է արդյոք լինել կոնկրետ կերպով միանման թե՛ մեծ և ճնշող, և թե՛ փոքր ու ճնշվող, անեկսիայի յենթարկող և թե անեկսիայի յենթարկվող ամեն մի ազգի համար։

«Ակներև է, որ—վո՛չ։ Ճանապարհը դեպի մի նպատակ—դեպի բոլոր ազգերի լրիվ իրավահավասարությունը, ամենասերտ մերձեցումը և հետագա ձուլումը գնում է, ակներև կերպով, տարբեր կոնկրետ ուղիներով,—այնպես, ինչ-

պես ուղին և գնում դեպի այն կետը, որ գտնվում է գրքի տվյալ յերեսի կենտրոնում, գրքի մի յեզրից դեպի ձախ և դեպի աջ՝ հակառակ յեզրից։ Յեթե մեծ, ճնշող, անեկսիայի յենթարկող ազգի սոցիալիստը ընդհանրապես հավատալով ազգերի ձուլմանը, կմոռանա գոնե մի րոպե այն մասին, որ «նրա» Նիկոլայ II-ը, «նրա» Վիլհելմ II-ը, Գևորգը, Պուանկարեն և ուրիշները նույնպես կողմնակից են մանր ազգությունների ձուլման (անեկսիայի ճանապարհով),—Նիկոլայ II-ը կողմնակից է Գալիցիայի «միացմանը», Վիլհելմ II-ը կողմնակից է Բելգիայի «ձուլման» և այլն, ապա նման սոցիալիստը վոչ այլ ինչ է, յեթե վոչ՝ թեորիայում ծիծաղելի դոքտրինյոր և պրակտիկայում—իմպերիալիզմի ոգնող։

«Ճնշող յերկրներում բանվորների ինտերնացիոնալիստական դաստիարակության ծանրության կենտրոնը, անխուսափելի կերպով, պետք է կայանա ճնշվող յերկրների անջատման և ազատության պաշտպանման ու քարոզի մեջ։ Առանց դրան ինտերնացիոնալիզմ չկա։ Մենք իրավունք ունենք և պարտավոր ենք ճնշող յերկրի ամեն մի սոցիալիստին անարգել վորպես իմպերիալիստի և սրիկայի, յեթե նա այդպիսի պրոպագանդ չի մղում։ Դա անպայման պահանջ է՝ նույնիսկ յեթե անջատումն հնարավոր և «իրականալի» լինի մինչև սոցիալիզմը 1000-ից մեկ դեպքում։ Ընդհակառակը, վոչքը ազգի սոցիալիստն իր ագիտացիայի ծանրության կենտրոնը պետք է տեղափոխի մեր ընդհարուր ֆորմուլայի յերկրորդ մասի՝ «ազգի ինքնակամ միության» վրա։ Նա կարող է, չխախտելով իր պարտականությունները, վորպես ինտերնացիոնալիստ, կողմնակից լինել թե իր ազգի քաղաքական անկախության և թե նրա միացմանը հարևան x, y, z և այլ պետության հետ։ Բայց բոլոր դեպքերում նա պետք է պայքարի մանր մասնատման դեմ, մեկուսացման դեմ՝ ազգային սահմանափակության դեմ,

հոգուտ մասնավոր շահերի յենթարկմանը ընդհանուրի շահերին։

«Մարդիկ, լավ չիսորանալով հարցի մեջ, «հակասական են գտնում այն, որ ճնշող ազգի սոցիալիստները «անջատման ազատության» կողմնակից կարող են լինել, իսկ ճնշված ազգի սոցիալիստները — «միացման ազատության» կողմնակից։ Բայց մի փոքրիկ խորհրդածությունը ցույց է տալիս, որ ուրիշ ճանապարհ դեպի ինտերնացիոնալիզմը և ազգերի ձուլումը, ուրիշ ճանապարհ դեպի այդ նպատակը տվյալ դրության մեջ չկա և չի կարող լինել»։ (Տես «Դիսկուսիայի արդյունքները», Լենին, յերկերի ժողովածու, հատոր XIX)։

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԸ ՀԱՐԱՎ-ՍԼԱՎԻԱՅՈՒՄ.

(Ծառ՝ արտասանած Կ. Ի. Գ. Կ.-ի Հարավ-Սլավյան հանձնաժողովում, 1925 թ. մարտի 30-ին)։

Ընկերներ! Ցեռ կարծում եմ, վոր ընկ. Սեմիչը (43) թերի յե ըմբռնել ազգային հարցի՝ բոլշևիկյան ձևակերպման եյությունը։ Բոլշևիկներն ազգային հարցը յերբեք չեն անջատել հեղափոխության ընդհանուր հարցից, վո՛չ մինչև Հոկտեմբերը, վոչ ել Հոկտեմբերից հետո։ Բոլշևիկների՝ դեպի ազգային հարցն ունեցած մոտեցումի հիմնական եյությունն այն է, վոր բոլշևիկներն ազգային հարցը միշտ քննել են հեղափոխական պերսպեկտիվի հետ նրա ունեցած անխզելի կապն աչքի առաջ ունենալով։

Ընկ. Սեմիչը ցիտատներ բերեց Լենինից, ասելով, վոր Լենինը ձգտում եր ազգային հարցին վորոշ լուծումն տալ սահմանադրության մեջ։ Դրանով, յերևի, նա, ընկ. Սեմիչն, ուզում եր ասել, վոր իբր թե Լենինը ազգային հարցը սահմանադրական հարց եր համարում, այսինքն՝ վոչ թե հեղափոխության հարց, այլ բարենորոգումների հարց։ Այդ բոլորովին ուղիղ չե։ Լենինը յերբեք չեր տարված և չեր ել կարող տարվել սահմանադրական իլլյուզիաներով։ Բավական է միայն աչքի անցնել նրա գրվածքները, վորպեսզի համոզվեք դրանում։ Ցեթե Լենինը խոսում եր սահմանադրության մասին, նա ինկատի ուներ ազգային հարցի լուծման վոչ թե սահմանադրական ուղին, այլ հեղափոխական ուղին, այսինքն՝ նա սահմանադրու-

թյունը համարում եր իբրև հեղափոխության հաղթանակի հետևանք։ Մենք էլ սահմանադրություն ունենք ԽՍՀՄ մեջ, և նա արտացոլում է ազգային հարցի վորոշ լուծումը։ Սակայն այդ սահմանադրությունը ստեղծվեց վոչ վորպես հետևանք բուրժուազիայի հետ ունեցած գործարքի, այլ վորպես հետևանք հաղթական հեղափոխության։

Ընկ. Սեմիչն այնուհետև հիշատակում է Ստալինի հայտնի բրոշյուրն ազգային հարցի մասին, վոր գրված է 1912թ., ճգնելով այնտեղ գտնելու գեթ մի կողմնակի ապացույց իր արդարացի լինելուն։ Սակայն այդ հիշատակումն ապարդյուն մնաց, վորովհետև նա չգտավ և չի էլ կարող գտնել վոչ միայն ցիտատները, այլ նույնիսկ մի հեռավոր ակնարկ, վորը փոքր ի շատե արդարացնել կարողանար դեպի ազգային հարցն ունեցած նրա սահմանադրական մոտեցումը։ Իբրև ապացույց դրան յես կարող եյի հիշեցնել ընկ. Սեմիչին՝ Ստալինի բրոշյուրից այն հայտնի տեղը, վորտեղ ազգային հարցի լուծման ավստրիական մեթոդը (սահմանադրական) հակադրվում է ռուսական մարքսիստների մեթոդին (հեղափոխական մեթոդին)։ Ահա այդ տեղը[1]).—

«Ավստրիացիք մտածում են «ազգությունների ազատությունն» իրականացնել մանր բարենորոգումների միջոցով, դանդաղ քայլերով։ Առաջարկելով ազգային ավտոնոմիա, իբրև գործնական միջոց, նրանք ամենևին հույս չեն դնում արմատական փոփոխության վրա, դեմոկրատիկ-ազատագրական շարժման վրա, վորը նրանք չունեն իրենց պերսպեկտիվում։ Մինչդեռ ռուսական մարքսիստներն «ազգությունների ազատության» հարցը կապում են հավանական արմատական փոփոխության հետ, դեմոկրատիկ-ազատագրական շարժման հետ, հիմք չունենալով բարենորոգումների վրա հույս դնելու։ Իսկ դա եյական կերպով փոխում է բանը Ռուսաստանում ազգերի հավանական վիճակի իմաստով»։

Կարծեմ պարզ է։

1) Տես գրքիս «Մարքսիզմ և ազգային հարցը»։ Ծան. խմբ.

Եվ դա վոչ թե Ստալինի անձնական տեսակետն է, այլ ռուսական մարքսիստների ընդհանուր տեսակետը, վորոնք ազգային հարցը քննում են և քննել են աչքի առաջ ունենալով նրա ունեցած անխզելի կապը հեղափոխության ընդհանուր հարցի հետ։

Առանց խեղաթյուրելու կարելի յե ասել, վոր ազգային հարցի ձևակերպումը ռուսական մարքսիզմի պատմության մեջ յերկու ստադիա յե ունեցել,—առաջինը, այսինքն՝ մինչհոկտեմբերյան, և յերկրորդը—հոկտեմբերյան։ Առաջին ստադիայում ազգային հարցը քննվում եր վորպես բուրժուական-դեմոկրատիկ հեղափոխության ընդհանուր հարցի մի մասը, այսինքն՝ վորպես պրոլետարիատի և գյուղացիության դիկտատուրայի հարցի մի մասը։ Յերկրորդ ստադիայում, յերբ ազգային հարցը լայնացավ և դարձավ գաղութային հարց, յերբ ազգային հարցը միջպետական հարց լինելուց համաշխարհային հարց դարձավ,—ազգային հարցը քննվում եր արդեն վորպես պրոլետարական հեղափոխության ընդհանուր հարցի մի մասը, վորպես պրոլետարիատի դիկտատուրայի հարցի մի մասը։ Թե այնտեղ և թե այստեղ, մոտեցումն, ինչպես տեսնում եք, յեղել է զուտ հեղափոխական։

Ինձ թվում է, վոր ընկ. Սեմիչն այս բոլորը դեռ թերի յե ըմբռնել։ Դրա հետևանքն է, վոր նա փորձ է անում ազգային հարցը սահմանադրական հողի վրա փոխադրելու, այսինքն՝ քննելու այն իբրև բարենորոգման հարց։

Նրա այդ սխալմունքից հետևում է մի այլ սխալմունք, վորը կայանում է նրանում, վոր նա ազգային հարցը չի ցանկանում քննել իբրև ըստ բանի եյության գյուղացիական հարց։ Վոչ թե ագրարային, այլ գյուղացիության հարց, քանի վոր դրանք յերկու տարբեր բաներ են։ Բոլորովին պարզ է, վոր ազգային հարցը չի կարելի նույնացնել գյուղացիության հարցի հետ, վորովհետև ազգա-

յին հարցը, բացի դյուղացիության հարցերից, պարունակում է նաև ազգային կուլտուրայի, ազգային պետականության և այլն հարցեր։ Սակայն, անկասկած է և այն, վոր ազգային հարցի հիմքը, նրա ներքին էությունը այնուամենայնիվ դյուղացիական հարցն է կազմում։ Հենց դրանով է բացատրվում, վոր ազգային շարժման հիմնական բանակը դյուղացիությունն է կազմում, վոր առանց դյուղացիական բանակի չի լինում և չի էլ կարող լինել զորեղ ազգային շարժում։ Ահա հենց այդ ի նկատի ունեն, յերբ ասում են, վոր ազգային հարցը ըստ բանի էության դյուղացիական հարց է։ Ինձ թվում է, վոր ընկ. Սեմիչի՝ այդ ֆորմուլան չընդունելու ցանկության մեջ թաղնված է ազգային շարժման ներքին ուժի թերագնահատումն և ազգային շարժման խորապես ժողովրդական, խորապես հեղափոխական քարակտերը չհասկանալը։ Այդ թերագնահատումն և այդ չհասկանալը ահագին վտանգ են ներկայացնում, վորովհետև գործնականում նրանք նշանակում են այն ներքին պոտենցիալ ուժի թերագնահատումն, վորը թաղնված է, որինակ, խորվատների ազգային ազատագրման շարժման մեջ, թերագնահատումն՝ վոր շատ լուրջ բարդություններ է պարունակում ամբողջ Հարավ-սլավյական կոմկուսակցության համար։

Դրանումն է կայանում ընկ. Սեմիչի յերկրորդ սխալը։

Անպայման սխալ պետք է համարել ընկ. Սեմիչի նաև այն փորձը, վոր ձգտում է մեկնաբանել ազգային հարցը Հարավ-Սլավիայում՝ անկախ միջազգային դրությունից և հավանական պերսպեկտիվից Յեվրոպայում։ Ընկ. Սեմիչն յելնելով նրանից, վոր ներկա մոմենտին խորվատների և սլովենների մեջ լուրջ ժողովրդական շարժում չկա ազատության համար, գալիս է այն յեզրակացության, վոր ազգերի անջատվելու իրավունքի հարցը ակադեմիական հարց է և համենայն դեպս—վոչ ակտուալ։ Դա, իհարկե,

ճիշտ չե։ Յեթե նույնիսկ համաձայնվենք, վոր այդ հարցը ներկա մոմենտին ակտուալ չե, ապա նա կարող ե լիովին ակտուալ դառնալ՝ յեթե պատերազմ սկսվի կամ յերբ պատերազմը սկսվի, յեթե Յեվրոպայում հեղափոխություն բռնկի կամ յերբ նա բռնկի։ Իսկ թե պատերազմն անխուսափելիորեն կսկսվի և վոր Ռուսիմ այնտեղ անպայման իրար ծվատելու յեն, դրանում կասկած չի կարող լինել՝ յեթե ինկատի առնենք իմպերիալիզմի բնույթն ու զարգացումը։

1912 թ. յերբ մենք, ռուսական մարքսիստներս, գծում եյինք ազգային ծրագրի առաջին նախագիծը, Ռուսաստանի կայսրության և վոչ մի ծայրամասում մենք դեռ չունեյինք անկախության լուրջ մի շարժում։ Այնուամենայնիվ մենք անհրաժեշտ համարեցինք մեր ծրագրի մեջ մտցնել ազգերի ինքնորոշման իրավունքին վերաբերյալ կետը, այսինքն՝ յուրաքանչյուր ազգության անջատվելու և պետականորեն ինքնուրույն գոյություն ունենալու իրավունքին վերաբերյալ կետը։

Ինչո՞ւ։

Վորովհետև մենք ղեկավարվում եյինք վոչ միայն նրանով, ինչ այն ժամանակ գոյություն ուներ, այլև նրանով, ինչ վոր զարգանում եր և մերձենում՝ միջազգային հարաբերությունների ընդհանուր սիստեմի մեջ, այսինքն՝ մենք այն ժամանակ հաշվի եյինք առնում վոչ միայն ներկան, այլև ապագան։ Յեվ մենք գիտեյինք, վոր յեթե վորևե ազգություն անջատումն պահանջեր, ապա ռուսական մարքսիստները պայքարելու են, վորպեսզի յուրաքանչյուր այդպիսի ազգության համար անջատման իրավունքն ապահովված լինի։ Ընկեր Սեմիչը քանիցս հիշատակում ե իր ճառում Ստալինի բրոշյուրն ազգային հարցի մասին։ Ահա թե ինչ ե ասում այդ բրոշյուրի մեջ Ստալինը ինքնորոշման և անկախության մասին.—

«Իմպերիալիզմի աճումն Եվրոպայում—պատահական չէ։ Կապիտալի համար Եվրոպան արդեն նեղ է և նա ձգտում է դեպի ոտար յերկրներ, փնտռելով նոր շուկաներ, եժանագին բանվորներ, նոր հարակետեր։ Իսկ դա տանում է դեպի արտաքին բարդություններ և պատերազմ։ Լիովին հնարավոր է արտաքին և ներքին կոնյունկտուրների այնպիսի զուգակցություն, վորի ժամանակ Ռուսաստանի այս կամ այն ազգությունը կարևոր կհամարի իր անկախության հարցը դնել և վճռել։ Եվ, իհարկե, այդպիսի դեպքերում մարքսիստների գործը չէ խոչընդոտներ հարուցելը»։

Սա գրված է դեռ 1912 թ.։ Դուք գիտեք, վոր դա ամբողջովին ճշտվեց հետագայում, թե պատերազմի ժամանակ և թե պատերազմից հետո, մանավանդ Ռուսաստանում պրոլետարիատի դիկտատուրայի հաղթանակից հետո։

Եվ ավելի մեծ հիմունքով պետք է հաշվի առնել այդ տեսակ հնարավորությունները Եվրոպայում ընդհանրապես և Հարավ-Սլավիայում մասնավորապես, նամանավանդ այժմ՝ կեղեքված յերկրներում ազգային - հեղափոխական շարժման խորացումից հետո և Ռուսաստանում հեղափոխության հաղթանակից հետո։ Պետք է նկատի առնել նաև այն հանգամանքը, վոր Հարավ-Սլավիան ամբողջովին անկախ յերկիր չէ, վոր նա կապված է իմպերիալիստական վորոշ խմբավորումների հետ և վոր, հետևաբար, նա չի կարող խուսափել ուժերի այն մեծ խաղից, վորը կատարվում է Հարավ-Սլավիայից դուրս։ Եվ յեթե դուք ուզում եք Հարավ-Սլավիական կուսակցության ազգային ծրագիրը կազմել—իսկ ներկա դեպքում հարցը հենց դրան է վերաբերում—ապա չպետք է մոռանալ, վոր ծրագիրը պետք է հենվի վոչ միայն նրա վրա, ինչ կա ներկա մոմենտին, այլև նրա վրա, ինչ զարգանում է և անխուսափելիորեն տեղի կունենա շնորհիվ միջազգային հարաբերությունների։ Ահա թե ինչու, իմ կարծիքով, ազգերի ինքնորոշման իրա-

վունքի հարցը պետք է ակտուալ, կենսատրոփ հարց համարել։

Այժմ դառնանք ազգային ծրագրին։ Ազգային ծրագրի յելակետը պետք է լինի Խորհրդային հեղափոխության սկզբունքը Հարավ-Սլավիայում, այն սկզբունքը, վոր առանց բուրժուազիային տապալելու և հեղափոխության հաղթանակի, ազգային հարցը չի կարող փոքրիշատե գոհացուցիչ լուծում ստանալ։ Իհարկե, բացառություններ հնարավոր են։ Պատերազմից առաջ, որինակ, այդպիսի բացառություն եր Նորվեգիայի անջատումը Շվեցիայից, վորի մասին մանրամասն խոսում է իր հոդվածներից մեկում Լենինը։ Բայց դա պատերազմից առաջ եր և բացառիկ բարեհաջող հանգամանքներում։ Պատերազմից հետո և մանավանդ Ռուսաստանում խորհրդային հեղափոխության հաղթանակից հետո, այդպիսի դեպքեր հազիվ թե հնարավոր լինեն։ Համենայն դեպս այդ տեսակ հնարավորությունների շանսերն այնքան քիչ են այժմ, վոր կարելի յե նրանց գերոյի հավասարել։ Իսկ յեթե այդ այդպես է, ապա ուրեմն պարզ է, վոր մենք չենք կարող մեր ծրագիրը գերոյի հավասար մեծությունների վրա հիմնել։ Ահա թե ինչու ազգային ծրագրի յելակետը պետք է կազմի հեղափոխության սկզբունքը։

Այնուհետև ազգային ծրագրի մեջ անպայման պետք է մտցնել ազգերի ինքնորոշման, մինչև իսկ պետականորեն անջատման իրավունքի վերաբերյալ մի հատուկ կետ։ Ցեսարդեն վերևն ասել եմ, թե ինչու չի կարելի զանց առնել այդ կետը արդի ներքին և միջազգային պայմաններում։

Վերջապես, ծրագրում պետք է լինի նաև ազգային-տերիտորիալ ավտոնոմիային վերաբերյալ մի հատուկ կետ Հարավ-Սլավիայի այն ազգությունների համար, վորոնք կարևոր չեն համարի անջատվել Հարավ-Սլավիայից։ Իրա-

վացի չեն նրանք, որոնք կարծում են թե այդ տեսակ մի կոմբինացիա պետք է տեղի չունենա։ Դա սխալ է։ Որոշ պայմաններում, Հարավ-Սլավիայում Խորհրդային հեղափոխության հաղթանակի հետևանքով միանգամայն հնարավոր է, որ մի քանի ազգություններ չեն ցանկանա բաժանվել, այնպես, ինչպես, այդ տեղի ունեցավ մեզ մոտ, Ռուսաստանում։ Հասկանալի է, որ այդպիսի դեպքի համար անհրաժեշտ է ծրագրի մեջ ավտոնոմիային վերաբերյալ հատուկ կետ ունենալ, նկատի ունենալով Հարավ-Սլավյան պետության վերակազմությունը իբրև ազգային ավտոնոմ պետությունների ֆեդերացիա՝ խորհրդային հիմքերի վրա։

Այդպես ուրեմն, անջատվելու իրավունք՝ այն ազգությունների համար, որոնք կցանկանան անջատվել, և ավտոնոմիայի իրավունք՝ այն ազգությունների համար, որոնք կգերադասեն մնալ Հարավ-Սլավյան պետության շրջանակներում։

Թյուրիմացությունների տեղիք չտալու համար պետք է ասեմ, որ անջատվելու *իրավունքը* չպետք է հասկանալ *իբրև պարտականություն*, անջատվելու պարհակ։ Ազգությունը կարող է ոգտագործել այդ իրավունքը՝ անջատվելու իմաստով, բայց նա կարող է և չոգտագործել այդ իրավունքը։ Եվ յեթե նա այդ չի ցանկանա—այդ նրա բանն է, և այդ չի կարելի հաշվի չառնել։ Մի քանի ընկերներ անջատվելու իրավունքը դարձնում են պարտականություն, պահանջելով, որինակ, որ խորվատները ինչ եղ որ լինի՝ անջատվեն։ Այդ սխալ պոզիցիա՝ յե. և դա պետք է դեն ձգել։ Չի՛ կարելի իրավունքը շփոթել պարտականության հետ։

«Բոլշևիկ», № 7 1925 թ.

ԴԱՐՁՅԱԼ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ.

(Ընկեր Սեմիչի հոդվածի առթիվ)

Կարելի չե միայն վողջունել, վոր ընկ. Սեմիչն այժմ Հարավ-Սլավյան հանձնաժողովում տեղի ունեցած դիսկուսիայից հետո իր հոդվածում լիովին և ամբողջովին հարում է Ռ.Կ.Կ. դելեգացիայի (Կոմինտերնում) պոզիցիային։ Սակայն այդ հիման վրա սխալ կլիներ կարծել, վոր, մի կողմից՝ Ռ. Կ. Կ. դելեգացիայի և մյուս կողմից՝ ընկեր Սեմիչի միջև տարաձայնություններ չկային Հարավ-Սլավյան հանձնաժողովում տեղի ունեցած դիսկուսիայից առաջ կամ հենց դիսկուսիայի ժամանակ։ Ընկեր Սեմիչն յերևի տրամադիր է հենց այդպես էլ հասկանալ ազգային հարցին վերաբերյալ տարաձայնությունները, ճգնելով դրանք համարել թյուրիմացություններ։ Բայց նա, դրժբախտաբար, խորապես սխալվում է։ Իր հոդվածում նա պնդում է, վոր նրա դեմ մղած բանակռիվը հիմնված է «մի շարք թյուրիմացությունների» վրա, վոր ծագել են Հարավ-Սլավյան հանձնաժողովում իր արտասանած «մի ճառի թերի թարգմանության» շնորհիվ։ Այլ կերպ ասած, դուրս է գալիս, վոր այստեղ մեղավոր է «ստրելոչնիկը», վորը ընկ. Սեմիչի հոդվածը լրիվ չի թարգմանել։ Հոգուտ ճշմարտության, յես ստիպված եմ հայտարարելու, վոր ընկ. Սեմիչի այդ պնդումը ամենևին չի համապատասխանում իրականության։ Իհարկե, ավելի լավ կլիներ, յեթե ընկեր Սեմիչն ապացուցեր իր այդ հայտարարությունը՝ ցիտատ-

ներ առաջ բերելով Հարավ-Սլավյան հանձնաժողովում արտասանված իր ճառից, վորը պահվում է Կոմինտերնի արխիվում։ Բայց նա այդ չարեց, չգիտեմ ինչու։ Ուստի և յես ստիպված եմ կատարելու ընկեր Սեմիչի փոխարեն այդ, վոչ այնքան հաճելի, բայց բոլորովին անհրաժեշտ պրոցեդուրան։

Դա առավել ևս անհրաժեշտ է նրա համար, վոր նույնիսկ այժմ, յերբ ընկեր Սեմիչն ամբողջապես համերաշխ է հայտարարում իրեն Ռ.Կ.Կ. դելեգացիայի պոզիցիայի հետ, այնուամենայնիվ բավականաչափ մութ կետեր կան նրա բռնած ներկա դիրքում։

Հարավ-Սլավյան հանձնաժողովում արտասանած ճառում յես խոսում եյի յերեք հարցի վերաբերմամբ գոյություն ունեցող տարաձայնությունների մասին.—(տես «Բոյլշևիկ» № 7).—1) ազգային հարցի լուծման ուղիների մասին, 2) ազգային շարժման ներքին սոցիալական բովանդակության մասին ներկա պատմական եպոխայում, և 3) այն մասին, թե ինչ դեր է կատարում միջազգային մոմենտը ազգային հարցում։

Առաջին հարցի վերաբերմամբ յես պնդում եյի, վոր ընկեր Սեմիչը «թերի յե ըմբռնել ազգային հարցի՝ բոյլշևիկյան ձևակերպման եյությունը», վոր նա զատում է ազգային հարցը հեղափոխության ընդհանուր հարցից, վոր նա այդպիսով կանգնում է այնպիսի ուղիյի վրա, վոր ազգային հարցը դարձնում է սահմանադրական հարց։

Ճշմարիտ է արդյոք այս բոլորը։

Կարդացեք Հարավ-Սլավյան հանձնաժողովում ընկեր Սեմիչի արտասանած ճառի (30 մարտի, 1925 թ.) հետևյալ տեղերը և ինքներդ դատեցեք։

«Կարելի՞ յե արդյոք ազգային հարցը վերածել սահմանադրական հարցի։ Ամենից առաջ, մի թեորետիկ ձևակերպում։ Ցենթադրենք, վոր մի X պետության մեջ ապ-

ում են յերեք ազգեր, A, B և C. այդ յերեք ազգերը ցանկություն են հայտնում, վոր իրենք ուզում են ապրել մի պետության մեջ։ Այդ դեպքում ել ինչի՞ մասին է խոսքը։ Իհարկե,—այդ պետության մեջ ներքին հարաբերությունները կանոնավորելու մասին։ Նշանակում է, հարցը սահմանադրական բնույթ ունի։ Այդ թեորետիկ դեպքում ազգային հարցը վեր է ածվում սահմանադրական հարցի... Եթե մենք այդպիսի թեորետիկ դեպքում ազգային հարցը վեր ենք ածում սահմանադրականի, ապա պետք է ասել,—և յես այդ միշտ շեշտել եմ,—վոր ժողովուրդների ինքնորոշումը, մինչև իսկ լիովին անջատումը, հանդիսանում է վորպես սահմանադրական հարցի լուծման պայման։ Եվ միայն այդպիսի մակարդակի վրա յեմ յես դնում սահմանադրական հարցը»։

Ինձ թվում է, վոր ընկեր Սեմիչի ճառի այդ տեղերը ավելորդ մեկնաբանության կարիք չունեն։ Պարզ է, վոր նա, ով ազգային հարցը համարում է պրոլետարական հեղափոխության ընդհանուր հարցի բաղկացուցիչ մի մասը, նա չի կարող դա վերածել սահմանադրական հարցի։ Եվ ընդհակառակը. միայն նա, ով ազգային հարցը անջատում է պրոլետարական հեղափոխության ընդհանուր հարցից, միայն նա՛ կարող է դա վերածել սահմանադրական հարցի։

Ընկեր Սեմիչի ճառում ցուցմունք կա այն մասին, վոր ազգային ինքնորոշման իրավունքը չի կարող ձեռք բերվել առանց հեղափոխական պայքարի։ Ընկեր Սեմիչն ասում է.—«Հասկանալի յե, վոր այդ տեսակ իրավունքներ կարելի յե ձեռք բերել միմիայն հեղափոխական պայքարով։ Նրանք չեն կարող ձեռք բերվել պարլամենտական ճանապարհով, այլ միմիայն մասսայական հեղափոխական գործողություններով»։ Իսկ ի՞նչ է նշանակում «հեղափոխական պայքար» և «հեղափոխական գործողություններ»։ Կարելի՞ յե, արդյոք, նույնացնել «հեղափոխական պայքարն» ու «հեղափոխական գործողությունները» տիրապետող դասակարգի անկման հետ, իշխանությունը բռնագրավելու հետ, հեղափոխության հաղթանակի՝ վոր-

պես ազգային հարցի լուծման պայմանի հետ։ Իհարկե, չի կարելի։ Ուրիշ բան է, երբ խոսում ես հեղափոխության հաղթանակի մասին, որպես ազգային հարցի լուծման հիմնական պայմանի մասին, և բոլորովին այլ բան է, երբ ազգային հարցի լուծման պայման ես դնում «հեղափոխական գործողություններն» ու «հեղափոխական պայքարը»։ Անհրաժեշտ է նկատել, որ բարենորոգումների ուղին, սահմանադրական ուղին ամենևին չեն կասեցնում «հեղափոխական գործողություններն» ու «հեղափոխական պայքարը»։ Այս կամ այն կուսակցության հեղափոխական կամ ռեֆորմիստական քաղաքականությունը որոշելիս վճռական պետք է համարել ոչ թե «հեղափոխական գործողություններն»ինքնին, այլ այն քաղաքականությունները ու խնդիրները, հանուն որոնց դիմում են նրանց և որոնք ոգտագործվում են կուսակցության կողմից։ Ռուսական մենշևիկները 1906 թ., առաջին Դումայի ցրվելուց հետո, ինչպես հայտնի է, առաջարկում էին «ընդհանուր գործադուլ» կամ նույնիսկ «զինված ապստամբություն» կազմակերպել։ Բայց դա ամենևին չէր խանգարում՝ որպեսզի նրանք մենշևիկներ մնային։ Ել ինչի՞ համար էին առաջարկում նրանք այն ժամանակ այդ բոլորը։ Իհարկե, ո՛չ ցարիզմը տապալելու և հեղափոխության կատարյալ հաղթանակը տանելու համար, այլ նրա համար, որպեսզի ցարական իշխանության վրա «ճնշում գործ դնեն» բարենորոգումներ ձեռք բերելու նպատակով, սահմանադրությունը» լայնացնելու նպատակով, «լավագունած» Դումա հրավիրելու նպատակով։ «Հեղափոխական գործողություններ»՝ հին կարգերը բարենորոգելու համար, ընդ ամին իշխանությունը թողնելով տիրապետող դասակարգի ձեռքին.— դա ուրիշ բանե, դա սահմանադրական ուղի է։ «Հեղափոխական գործողություններ»՝ հին կարգերը քանդելու համար, տիրապետող դասակարգը տապալելու համար—դա էլ այլ

բան է, դա—հեղափոխական ուղի չէ, դա—հեղափոխության կատարյալ հաղթանակի ուղի չէ։ Այստեղ տարբերությունը արմատական է։

Ահա թե ինչու, ինձ թվում է, վոր ընկ. Սեմիչի հիշատակությունը «հեղափոխական պայքարի» մասին, ընդ ամին ազգային հարցը միաժամանակ սահմանադրական հարց դարձնելով վոչ թե չի հերքում, այլ միայն հաստատում է իմ ասածն այն մասին, վոր ընկ. Սեմիչը «թերի չէ ըմբռնել ազգային հարցի բոլշևիկյան ձևակերպման հիմնական էությունը», քանի վոր նա չի ըմբռնել, վոր ազգային հարցը պետք է քննել վոչ թե առանձին վերցրած, այլ հեղափոխության հաղթանակի հարցի հետ անխզելիորեն կապված, իբրև հեղափոխության ընդհանուր հարցի մի մասը։

Պնդելով այս բանի վրա, չես ամենևին չեմ ուզում ասել, վոր մի նոր բան եմ հայտնում ընկեր Սեմիչի՝ այս հարցի նկատմամբ ունեցած սխալի մասին։ Ամենևին։ Ընկեր Սեմիչի այդ սխալի մասին դեռ Կոմինտերնի V կոնգրեսին խոսել է ընկ. Մանուիլսկին, հայտնելով, վոր՝

«Ընկեր Սեմիչը Հարավ-Սլավյան կոմունիստական կուսակցության որգան «Радник»-ում հրատարակած իր «ազգային հարցը մարքսիստական մեկնաբանությամբ» բրոշյուրի և մի շարք հոդվածների մեջ առաջարկում է կոմկուսակցության համար իբրև գործնական լոզունգ՝ առաջ քաշել սահմանադրության վերաքննման պայքարը, այսինքն՝ ազգերի ինքնորոշման հարցը փաստորեն փոխադրում է բացառապես սահմանադրական հողի վրա»։ (Տես V կոնգրեսի ստենոգրամը, էջ 596)։

Նույն սխալի մասին խոսել է նաև ընկեր Զինովյեվը, Հարավ-Սլավյան հանձնաժողովում, հայտնելով, վոր—

«Ընկեր Սեմիչի պերսպեկտիվում դուրս է գալիս վոր միայն մի չնչին բան է պակասում—«հեղափոխությունը», և վոր ազգային հարցը «հեղափոխական պրոբլեմ է, և վոչ թե սահմանադրական»։ (Տես «Правда» № 83).

Չի կարող լինել, վոր Ռ.Կ.Կ.-ի ներկայացուցիչների (Կոմինտերնում) այս բոլոր նկատողություններն ընկեր Սեմիչի սխալի մասին պատահական և անհիմն լինեն։

Ծուխն առանց կրակի չի լինում։

Սա ընկեր Սեմիչի առաջին, հիմնական սխալն է։

Նրա մնացած սխալներն անմիջապես բղխում են այս հիմնական սխալից։

Յերկրորդ հարցի վերաբերմամբ, յես իմ ճառում պնդում եյի (տես նախորդ հոդվածը), վոր ընկեր Սեմիչը «ազգային հարցը չի ուզում քննել իբրև ըստ բանի եյության գյուղացիական հարց»։

Ուղի՞ղ է արդյոք այդ։

Կարդացեք ընկեր Սեմիչի՝ Հարավ-Սլավյան հանձնաժողովում արտասանած ճառի հետևյալ տեղը և ինքներդ դատեցեք—

«Ինչո՞ւմն է կայանում—հարցնում է ընկեր Սեմիչը—ազգային շարժման (Հարավ-Սլավիայում) սոցիալական իմաստը»։ Յեվ այնտեղ ել պատասխանում է.—«Այդ սոցիալական իմաստը կայանում է, մի կողմից՝ սերբիական կապիտալի, և մյուս կողմից՝ կրոատական և սլովենական կապիտալի միջև յեղած կոնկրետ պայքարում»։ (Տես ընկեր Սեմիչի ճառը՝ Հարավ-Սլավյան հանձնաժողովում)։

Վոր սլովենական և կրոատական բուրժուազիայի պայքարը սերբիական բուրժուազիայի դեմ չի կարող այստեղ վորոշ դեր չկատարել,—դրանում, իհարկե, կասկած չի կարող լինել։ Բայց նույնչափ անկասկած է և այն, վոր նա, վորը ազգային շարժման սոցիալական իմաստը գրտնում է զանազան ազգությունների բուրժուազիայի կոնկրետ պայքարի մեջ, այդպիսի մարդը չի կարող համարել ազգային հարցը իբրև ըստ բանի եյության գյուղացիական հարց։ Ինչո՞ւմն է կայանում ազգային հարցի եյությունն այժմ, յերբ ազգային հարցը տեղական, միջպետական հարց լինելուց դարձել է համաշխարհային հարց,

գաղութների և կախյալ ազգությունների՝ իմպերիալիզմի դեմ մղվող պայքարի հարց։ Ազգային հարցի եությունը այժմ կայանում է այն պայքարում, վոր մղում են գաղութների և կախյալ ազգությունների ժողովրդական մասսաները այն ֆինանսական եքսպլոատացիայի դեմ, այն քաղաքական ստրկացման և կուլտուրականապես դիմազուրկ անելու դեմ, վոր գործադրում է տիրապետող ազգի իմպերիալիստական բուրժուազիան այդ գաղութների և ազգությունների նկատմամբ։ Ի՞նչ նշանակություն կարող է ունենալ ազգային հարցի այս տեսակ ձևակերպման դեպքում զանազան ազգությունների բուրժուազիայի իրար դեմ մղած կոնկրետ պայքարը։ Անշուշտ, վոչ վճռական, իսկ վորոշ դեպքերում նույնիսկ՝ վոչ կարևոր նշանակություն։ Բոլորովին ակներև է, վոր խոսքն այստեղ գլխավորապես վոչ թե նրա մասին է, վոր մի ազգության բուրժուազիան հաղթում է կամ կարող է կոնկրետ պայքարում հաղթել մյուս ազգության բուրժուազիային, այլ ա՛յն մասին է, վոր տիրապետող ազգության իմպերիալիստական խմբակը կեղեքում և եքսպլոատացիայի յե յենթարկում հիմնական մասսաներին և ամենից առաջ գաղութների և կախյալ ազգությունների գյուղացիական մասսաներին, իսկ կեղեքելով և եքսպլոատացիայի յենթարկելով նրանց, նա հենց դրանով էլ նրանց առաջ է քաշում՝ իմպերիալիզմի դեմ մղվող պայքարի մեջ և նրանց դարձնում պրոլետարական հեղափոխության դաշնակից։ Ազգային հարցը չի կարելի քննվել իբրև ըստ բանի եության գյուղացիական հարց, յեթե ազգային շարժման սոցիալական իմաստը տանում է դեպի զանազան ազգությունների բուրժուազիայի կոնկրետ պայքարը։ Յեվ ընդհակառակը.—ազգային շարժման սոցիալական իմաստը չի կարելի տեսնել զանազան ազգությունների բուրժուազիայի մրցման պայքարի մեջ, յեթե ազգային հարցը վեր-

ցնում ես իբրև ըստ բանի եյության դյուղացիական հարց։ Վոչ մի հնարավորություն չկա հավասարության նշան անցկացնելու այս յերկու ֆորմուլաների միջև։

Ընկեր Սեմիչը հիշատակում է Ստալինի «Մարքսիզմ և ազգային հարցը»*) (վոր գրված է 1922 թ. վերջը) բրոշյուրից մի տեղ։ Այնտեղ ասված է, վոր «ազգային պայքարը հանդիսանում է իբրև բուրժուական դասակարգերի փոխադարձ պայքար»։ Դրանով նա, յերևի, փորձում է ակնարկել, վոր տվյալ պատմական պայմաններում ազգային շարժման սոցիալական իմաստի իր տված ֆորմուլան ուղիղ է։ Բայց Ստալինի բրոշյուրը գրված է իմպերիալիստական պատերազմից առաջ, յերբ ազգային հարցը մարքսիստների աչքում դեռ համաշխարհային նշանակություն ունեցող հարց չեր հանդիսանում, յերբ մարքսիստների հիմնական պահանջը՝ ինքնորոշման իրավունքի մասին՝ գնահատվում եր վոչ թե իբրև պրոլետարական հեղափոխության մի մասը, այլ իբրև բուրժուական-դեմոկրատիկ հեղափոխության մի մասը։ Ծիծաղելի կլիներ չնկատել, վոր այն ժամանակից հետո միջազգային դրությունը արմատականապես փոխվել է, վոր, մի կողմից՝ պատերազմը, իսկ մյուս կողմից՝ Հոկտեմբերյան հեղափոխությունը Ռուսաստանում, ազգային հարցը բուրժուական դեմոկրատիկ հեղափոխության մասնիկ լինելուց դարձրին պրոլետարական - սոցիալիստական հեղափոխության մասնիկ։ Դեռ 1916 թվի հոկտեմբերին, Լենինն իր «Ինքնորոշման վերաբերյալ դիսկուսիայի արդյունքները» հոդվածում ասում եր, վոր ազգային հարցի հիմնական կետը ինքնորոշման իրավունքի մասին, դադարել է համադեմոկրատիկ շարժման մասը կազմելուց, վոր նա արդեն դարձել է համապրոլետարական, սոցիալիստական հեղափոխության բաղկացուցիչ մասը։ Ես դեռ չեմ խոսում թե

*) Տես գրքի առաջին հոդվածը։

Լենինի և թե՛ ռուսական կոմունիզմի այլ ներկայացուցիչների մյուս աշխատությունների մասին ազգային հարցի վերաբերմամբ։ Այս բոլորից հետո ի՞նչ նշանակություն կարող է ունենալ այն, որ ընկ. Սեմիչը հիշատակում է Ստալինի բրոշյուրից այն հայտնի տեղը, որը գրված է Ռուսաստանի բուրժուական-դեմոկրատիկ հեղափոխության պերիոդում. ի՞նչ նշանակություն կարող է ունենալ այժմ, յերբ մենք պատմական նոր պարագաների շնորհիվ մուտք ենք գործում նոր եպոխա, համաշխարհային պրոլետարական հեղափոխության եպոխա։ Դա կարող է միմիայն այն նշանակությունն ունենալ, որ ընկեր Սեմիչը քաղվածքներ է առաջ բերում՝ տարածությունից և ժամանակից դուրս, կենդանի պատմական պարագաներից անկախ, — դրանով խախտելով դիալեկտիկայի տարրական պահանջները և հաշվի չառնելով այն, որ յեթե մի բան ուղիղ է որոշ պատմական պարագաներում, նույն բանը կարող է սխալ լինել ուրիշ պատմական պարագաներում։ Յես արդեն ասացի Հարավ-Սլավյան հանձնաժողովում իմ արտասանած ճառի մասին, որ ազգային հարցի՝ ռուսական բոյշևիկների ձևակերպման մեջ պետք է տարբերել յերկու ստադիա — մինչհոկտեմբերյան ստադիա, յերբ խոսքը վերաբերում եր բուրժուական-դեմոկրատիկ հեղափոխությանը, իսկ ազգային հարցը համարվում եր իբրև համադեմոկրատիկ շարժման մի մասը, և Հոկտեմբերյան ստադիա, յերբ խոսքն արդեն վերաբերում եր պրոլետարական հեղափոխության, իսկ ազգային հարցը դարձել եր պրոլետարական հեղափոխության բաղկացուցիչ մի մասը։ Հարկիվ թե կարիք կա ապացուցելու, որ այս տարբերությունը վճռական նշանակություն ունի։ Վախենում եմ, որ ընկ. Սեմիչը դեռևս ըմբռնած չլինի յերկու ստադիաների միջև յեղած այս տարբերության իմաստն ու նշանակությունը ազգային հարցի ձևակերպման խնդրում։

Ահա թե ինչու ինձ թվում է, վոր ընկ. Սեմիչի՝ ազգային շարժումը վոչ իբրև ըստ բանի եյության գյուղացիական հարց, այլ իբրև տարբեր ազգությունների բուրժուազիայի մրցման հարց համարելու փորձի մեջ—«թագնված է ազգային շարժման կորովի թերագնահատումն և նրա խորապես ժողովրդական, խորապես հեղափոխական քաղաքակտերի անըմբռնումն»։ (Տես նախորդ հոդվածը)։

Ահա այսպես է ընկ. Սեմիչի յերկրորդ սխալը։

Բնորոշ է, վոր ընկ. Սեմիչի այս յերկրորդ սխալի մասին ընկ. Զինովյեվը նույնն է ասում իր ճառի մեջ Հարավ-սլավյան հանձնաժողովում, հայտնելով.

«Սխալ է ընկ. Սեմիչի հաստատումը, իբր թե Հարավ-Սլավիայում գյուղացիական շարժման գլուխ է կանգնած բուրժուազիան, և այդ պատճառով էլ այդ շարժումը հեղափոխական չէ»։ (Տես «Правда» № 83)։

Պատահակա՞ն է արդյոք այս զուգադիպությունը։ Իհարկե, վոչ!

Վերջապես,—ծուխն առանց կրակի չի լինում։

Վերջապես, յերրորդ հարցի վերաբերմամբ յես պընդել եմ, վոր ընկ. Սեմիչը «փորձում է Հարավ-Սլավիական ազգային հարցը մեկնաբանել անկախ միջազգային դրությունից և Յեվրոպայի հավանական պերսպեկտիվներից»։

Ուղի՞ղ է արդյոք այդ։

Այո, ուղիղ է։ Քանի վոր իր ճառում ընկ. Սեմիչը նույնիսկ ամենահեռավոր ակնարկ անգամ չի անում այն մասին, վոր արդի պայմաններում միջազգային պարագաները, մանավանդ Հարավ-Սլավիայի նկատմամբ, ամենակարևոր գործոնն են հանդիսանում ազգային հարցի լուծման խնդրում։ Այն փաստը, վոր հենց Հարավ-Սլավյան պետությունը գոյացել է իբրև հետևանք յերկու հիմնական իմպերիալիստական կոալիցիաների ընդհարման, վոր Հարավ-Սլավիան չի կարող դուրս ցատկել ուժերի այն մեծ

խաղից, վոր տեղի ունի իմպերիալիզմի շրջապատող պետությունների մեջ—այդ բոլորն ընկ. Սեմիչի հայեցադաշտից դուրս է մնացել։ Ընկ. Սեմիչի հիշատակությունն այն մասին, թե նա լիովին հնարավոր է համարում վորոշ փոփոխումներ միջազգային դրության մեջ, վորոնց հետևանքով ինքնորոշման հարցը կարող է դառնալ ակտուալ-գործնական հարց,—այդ հիշատակությունն այժմ արդի միջազգային պարագաներում, արդեն անբավարար պետք է համարել։ Բանն այժմ ամենևին նրանում չէ, վորպեսզի միջազգային պարագաների հնարավոր և հեռավոր ապագայի վորոշ փոփոխումների դեպքում ընդունեն ազգերի ինքնորոշման իրավունքի հարցի ակտուալականությունը,—այդ կարող են այժմ, կարիքի դեպքում, ընդունել նույնիսկ բուրժուական դեմոկրատները։ Բանն այժմ դրանում չէ, այլ նրանում, վորպեսզի պատերազմի և բրոնությունների հետևանքով գոյացած Հարավ-Սլավյան պետության ներկա սահմանները չդարձնեն ազգային հարցի լուծման որինական բազա և յելակետ։ Յերկուսից մեկը.—կամ ազգային ինքնորոշման հարցը, այսինքն Հարավ-Սլավիայի սահմանների արմատական փոփոխման հարցը հանդիսանում է իբրև հեռավոր ապագայի աղոտ նշմարվող ազգային ծրագրի ավելաքաշ, և կամ հանդիսանում է իբրև ազգային ծրագրի հիմք։ Համենայն դեպս պարզ է, վոր ինքնորոշման իրավունքի վերաբերյալ կետը չի կարող միաժամանակ թե ավելաքաշ և թե հիմք լինել Հարավ-Սլավիական կոմկուսակցության ազգային ծրագրի համար։ Վախենում եմ, վոր ընկ. Սեմիչը դեռևս շարունակում է ինքնորոշման իրավունքն իբրև ազգային ծրագրի պերսպեկտիվային ավելաքաշ համարել։

Ահա թե ինչու յես կարծում եմ, վոր ընկ. Սեմիչն ազգային հարցը անջատում է միջազգային պարագաների ընդհանուր հարցից, վորի պատճառով ինքնորոշման հարցը,

այսինքն՝ Հարավ-Սլավիայի սահմանների փոփոխման հարցը նրա մոտ հանդիսանում է վոչ թե ըստ բանի եյության ակտուալ հարց, այլ ակադեմիական։

Ահա այսպես է ընկ. Սեմիչի յերրորդ սխալը։

Բնորոշ է, վոր ընկ. Մանուիլսկին, ընկ. Սեմիչի այդ սխալի մասին նույնն է ասում իր զեկուցման մեջ Կոմինտերնի V Կոնգրեսին.—

«Ազգային հարցի ամբողջ ձևակերպման հիմնական նախադրյալն, ըստ ընկ. Սեմիչի, հանդիսանում է այն միտքը, վոր պրոլետարիատը պետք է բուրժուական պետությունը վերցնի այն սահմանցներում, վոր գոյացվել են նրա մեջ մի շարք պատերազմների յեվ բռնությունների շնորհիվ*)։ (Տես Կոմինտերնի V Կոնգրեսի ստենոգրամը, եջ 597)։

Կարելի՞ յե արդյոք այս զուգադիպությունը պատահական զուգադիպություն համարել։ Իհարկե, չի կարելի!

Միանգամ ևս.—ծուխն առանց կրակի չի լինում։

«Բոլշևիկ» № 11—12, 30 հունիսի, 1925 թ.

---

*) Ընդգծումն իմն է։ Ի. Ստ.։

ԱՐԵՎԵԼՔԻ ԱՇԽԱՏ. ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ (КУТВ) ԽՆԴԻՐՆԵՐԸ ԱՐԵՎԵԼՔԻ ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՅԵՎ ԿԱԽՅԱԼ ՅԵՐԿՐՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ*).

Անցնենք յերկրորդ հարցին, այն հարցին, թե ինչ անելիքներ ունի ԱԱԿՀ Արևելքի գաղութային և կախյալ յերկրների նկատմամբ։

Վորո՞նք են այդ յերկրների գաղութային ու զարգացման բնորոշ առանձնահատկությունները, ի տարբերություն Արևելքի Խորհրդային հանրապետություններից։

Առաջին՝ այն, վոր բոլոր այդ յերկրները ապրում ու զարգանում են իմպերիալիզմի ճնշման տակ։

Յերկրորդ՝ այն, վոր կրկնակի ճնշումը, ներքին ճնշումը, (սեփական բուրժուազիայի) և արտաքին ճնշումը (ոտար իմպերիալիստական բուրժուազիայի), այդ յերկրներում սրում ու խորացնում է հեղափոխական ճգնաժամը։

Յերրորդ՝ այն, վոր այդ յերկրներից մի քանիսում, որինակ, Հնդկաստանում կապիտալիզմն աճում է ուժեղ թափով, առաջ բերելով և ձևակերպելով տեղական պրոլետարների բավական մեծաքանակ մի դասակարգ։

Չորրորդ՝ այն, վոր հեղափոխական շարժման աճման հետ միասին, այդ յերկրների ազգային բուրժուազիան պատակտվում է յերկու մասի՝ հեղափոխական (մանր բուր-

*) *Ստալինի՝ «Արևելքի Համալսարանի քաղաքական խնդիրների մասին» արտասանած ճառի (ԱԱԿՀ ուսանողների ժողովում, 1925 թ. մայիսի 18-ին) վերջին մասն է, վոր արտատպում ենք Հ. Հ. Կ. Կ. Կ. Կ. Ագիտ-Բաժնի հրատարակությունից։*

ժուազիա) և համաձայնողական (խոշոր բուրժուազիա), վորոնցից առաջինը շարունակում է հեղափոխական պայքարը, իսկ յերկրորդը բլոկ է կազմում իմպերիալիզմի հետ։

Հինգերորդ՝ այն, վոր իմպերիալիստական բլոկի կողքին այդ յերկրներում կազմվում է մի այլ բլոկ, բանվորների և հեղափոխական մանր բուրժուազիայի բլոկը, հակաիմպերիալիստական մի բլոկ, վոր հետապնդում է իմպերիալիզմից լիովին ազատագրվելու նպատակներ։

Վեցերորդ՝ այն, վոր այդպիսի յերկրներում, պրոլետարիատի հեգեմոնայի և ժողովրդական մասսաները համաձայնողական ազգային բուրժուազիայի ազդեցության տակից ազատելու հարցն որեցոր ավելի կենսական բնույթ է ընդունում։

Յոթերորդ՝ այն, վոր այդ հանգամանքը նկատելի չափերով դյուրացնում է այդպիսի յերկրների ազատագրական ազգային շարժման և արևմուտքի առաջավոր յերկրների պրոլետարական շարժման շաղկապման գործը։

Սրանից յերեք հետևություն է բղխում.

1. Առանց հաղթական հեղափոխության, հնարավոր չէ գաղութային և կախյալ յերկրներն իմպերիալիզմից ազատագրել. ձրի անկախություն չես ստանա։

2. Հեղափոխությունն առաջ շարժելը և կապիտալիստականորեն զարգացած գաղութների ու կախյալ յերկրների լիակատար անկախություն նվաճելն անկարելի յե առանց համաձայնողական ազգային բուրժուազիային մեկուսացնելու, առանց մանր բուրժուական հեղափոխական մասսաներին այդ բուրժուազիայի ազդեցության տակից հանելու, առանց պրոլետարիատի հեգեմոնիա ստեղծելու, առանց բանվոր դասակարգի առաջավոր տարրերին ինքնուրույն կոմունիստական կուսակցության մեջ կազմակերպելու։

3. Գաղութային և կախյալ յերկրներում, յերկարատև ու հաստատուն հաղթանակ տանել անկարելի յե՝ առանց այդ

յերկրների ազատագրական շարժման և արևմուտքի առաջավոր յերկրների պրոլետարական շարժման ուժալ շաղկապման։

Գաղութային և կախյալ յերկրների կոմունիստների հիմնական անելիքն այն պիտի լինի, վոր նրանք իրենց հեղափոխական աշխատանքների ընթացքում յելակետ ունենան այս հետևությունները։

Այս հանգամանքների հետևանքով ի՞նչ հերթական անելիքներ ունի գաղութների և կախյալ յերկրների հեղափոխական շարժումը։

Գաղութների և կախյալ յերկրների յուրահատկությունը տվյալ մոմենտում այն է, վոր այլևս բնության մեջ միացյալ և համայնապարփակ Արևելք չկա։ Առաջներում գաղութային Արևելքը պատկերացնում եյին ինչպես մի տեսակ միացյալ և միորինակ յերկիր։ Այժմ այդ պատկերացումն արդեն իրականությանը չի համապատասխանում։ Մենք ներկայումս ունենք, համենայն դեպս, յերեք կատեգորիայի գաղութային և կախյալ յերկրներ։

Առաջին՝ Մարրոկոյի պես յերկրները, վորոնք չունեն կամ համարյա թե չունեն իրենց պրոլետարիատը և արդյունաբերական տեսակետից միանգամայն հետամնաց են։

Յերկրորդ՝ Չինաստանի և Յեգիպտոսի պես յերկրները, վորոնք արդյունաբերական տեսակետից քիչ են զարգացած և համեմատաբար փոքրաքանակ պրոլետարիատ ունեն։

Յերրորդ՝ Հնդկաստանի պես յերկրները, վորոնք կապիտալիստականորեն քիչ թե շատ զարգացած են և ունեն քիչ թե շատ բազմաքանակ ազգային պրոլետարիատ։

Պարզ է, վոր վոչ մի հնարավորություն չկա բոլոր այս յերկրները մի տախտակի վրա դնելու։

Այնպիսի յերկրների համար, ինչպես Մարրոկոն է, վորտեղ ազգային բուրժուազիան դեռևս հիմք չունի հեղափոխական և համաձայնողական կուսակցությունների պառակտվելու, կոմունիստական տարրերի անելքը պիտի

լինի այն, վոր ձեռք առնեն բոլոր միջոցներն իմպերիալիզմի դեմ միացյալ ազգային ճակատ ստեղծելու համար։

Այդպիսի յերկրներում կոմունիստական տարրերին զատելը և նրանցից միասնական կուսակցություն ստեղծելը կարող է տեղի ունենալ միայն իմպերիալիզմի դեմ պայքար մղելու ընթացքում, հատկապես իմպերիալիզմի դեմ հաղթական հեղափոխական պատերազմ մղելուց հետո։

Այնպիսի յերկրներում, ինչպես Յեգիպտոսն ու Չինաստանն են, վորտեղ ազգային բուրժուազիան արդեն պառակտվել է հեղափոխական և համաձայնողական կուսակցությունների, սակայն վորտեղ բուրժուազիայի համաձայնողական մասը դեռևս չի կարող դադրել իմպերիալիզմի հետ, կոմունիստներն արդեն չեն կարող իրենց նպատակ դնել իմպերիալիզմի դեմ միացյալ ազգային ճակատ կազմելը։

Այդպիսի յերկրներում կոմունիստները պետք է միացյալ ազգային ճակատ կազմելու քաղաքականությունից անցնեն բանվորների ու մանր բուրժուազիայի հեղափոխական բլոկ կազմելու քաղաքականությանը։ Այդպիսի յերկրներում այդ բլոկը կարող է ընդունել միացյալ կուսակցության՝ բանվորա-գյուղացիական կուսակցության ձև, ինչպես «Գոմինդան»(44) կուսակցությունն է. այն պայմանով սակայն, վոր այդ յուրահատուկ կուսակցությունն իրականում յերկու ուժերի,—Կոմունիստական կուսակցության և հեղափոխական մանր բուրժուազիայի կուսակցության բլոկ ներկայացնի։ Մերկացնել ազգային բուրժուազիայի թերատությունն (половинчатость) ու անհետևողականությունը և վճռական պայքար մղել իմպերիալիզմի դեմ,—սրանք պիտի լինեն այդ բլոկի անելիքները։

Այսպիսի յերկկազմ կուսակցությունը հարկավոր է ու նպատակահարմար, յեթե նա չի կապում կոմկուսակցության վոտքերն ու ձեռքերը, չի կաշկանդում նրան,

եթե նա չի ճնշում կոմկուսակցության ագիտացիոն և պրոպագանդիստական աշխատանք կատարելու ազատությունը, եթե նա արգելքներ չի հարուցանում պրոլետարներին կոմկուսակցության շուրջը համախմբելու աշխատանքներին, եթե նա դյուրացնում է կոմկուսակցության կողմից հեղափոխական շարժումը փաստորեն ղեկավարելու գործը։

Այսպիսի յերկկազմ կուսակցությունը հարկավոր չէ և վոչ էլ նպատակահարմար, եթե նա չի համապատասխանում բոլոր այս պայմաններին, վորովհետև նա կարող է միայն նպաստել, վոր կոմունիստական տարրերը լուծվեն բուրժուազիայի շարքերում, վոր կոմկուսակցությունը կորցնի պրոլետարական բանակը։

Մի քիչ այլ կերպ է դրությունը այնպիսի յերկրներում, ինչպես Հնդկաստանն է։ Հնդկաստանի պես յերկրների գոյության պայմաններում նկատվող հիմնական և նոր յերևույթը վոչ միայն այն է, վոր ազգային բուրժուազիան պատակվել է հեղափոխական և համաձայնողական կուսակցությունների, այլ, ամենից առաջ այն, վոր այդ բուրժուազիայի համաձայնողական մասն արդեն կարողացել է հիմնականում ընդհանուր լեզու գտնել իմպերիալիզմի հետ։

Հեղափոխությունից ավելի շատ վախենալով, քան իմպերիալիզմից, իր գրպանի շահի մասին ավելի շատ հոգալով, քան իր սեփական հայրենիքի շահերի մասին, բուրժուազիայի այդ մասը, վոր ամենից հարուստն ու ազդեցիկն է, յերկու վոտքով կանգնում է հեղափոխության անհաշտ թշնամիների բանակում, բլոկ կնքելով իմպերիալիզմի հետ՝ ընդդեմ իր սեփական յերկրի բանվորների ու գյուղացիների։ Առանց այդ բլոկը չախչախելու՝ հեղափոխության հաղթանակի չի կարելի հասնել։ Սակայն, վորպեսզի կարելի լինի այդ բլոկը չախչախել, հարկավոր

և կրակը կենտրոնացնել համաձայնողական ազգային բուրժուազիայի դեմ, մերկացնելով նրա դավաճանական դերը, ազատելով աշխատավոր մասսաներին նրա ազդեցությունից և սիստեմատիկաբար պրոլետարիատի հեգեմոնայի համար անհրաժեշտ պայմաններ նախապատրաստել։

Այլ կերպ ասած, խոսքն այն մասին է, որ այնպիսի գաղութներում, ինչպես Հնդկաստանն է, պրոլետարիատին պետք է նախապատրաստել ազատագրական շարժման առաջնորդի դեր կատարելու համար, քայլ առ քայլ այդ պատվավոր դիրքից հեռացնելով բուրժուազիային ու նրա մունետիկներին։ Պետք է ստեղծել հեղափոխական հակաիմպերիալիստական բլոկ և այդ բլոկում ապահովել պրոլետարիատի հեգեմոնիան — այսպես է դրված խնդիրը։ Այդ բլոկը չպետք է միացյալ բանվորա-գյուղացիական այնպիսի կուսակցության ձև ընդունի, որը կապակցված է ձևականորեն միասնական պլատֆորմայով։ Այդպիսի յերկրներում կոմկուսակցության ինքնուրույնությունը պետք է կոմունիզմի առաջավոր տարրերի հիմնական լոզունգը լինի, որովհետև պրոլետարիատի հեգեմոնիան նախապատրաստել ու կիրառել կարող է միայն Կոմունիստական կուսակցությունը։ Սակայն կոմկուսակցությունը կարող է և պետք է բայց բլոկ կազմի բուրժուազիայի հեղափոխական թևի հետ, որպեսզի այդպիսով չեզոքացնելով համաձայնողական ազգային բուրժուազիային, իմպերիալիզմի դեմ մղվելիք պայքարում իր յետևից տանի քաղաքի ու գյուղի մանր բուրժուազիայի բազմամիլիոն մասսաներին։

Այստեղից բղխում են կապիտալիստականորեն զարգացած գաղութների ու կախյալ յերկրների հեղափոխական շարժման հետևյալ հերթական խնդիրները.

1. Բանվոր դասակարգի լավագույն տարրերին կոմունիզմի կողմը գրավելը և ինքնուրույն կոմունիստական կուսակցություններ ստեղծելը։

2. Համաձայնողական ազգային բուրժուազիայի և իմպերիալիզմի բլոկի դեմ՝ բանվորների, գյուղացիների և հեղափոխական ինտելլիգենցիայի ազգային-հեղափոխական բլոկ ստեղծելը։

3. Այդ բլոկում պրոլետարիատի հեգեմոնիայի ապահովումը։

4. Քաղաքի ու գյուղի մանր բուրժուազիային համաձայնողական ազգային բուրժուազիայի ազդեցությունից ազատելու համար մղելիք պայքարը։

5. Ագրարային շարժման և առաջավոր յերկրների պրոլետարական շարժման շաղկապի ապահովումը։

Ահա այս յերեք խումբ հերթական խնդիրներն են, վոր ծառացած են Արևելքի գաղութային և կախյալ յերկրների ակտիվ աշխատավորների առաջ։

Այդ խնդիրներն առանձնապես լուրջ բնույթ և կարևոր նշանակություն են ստանում, յեթե նրանց քննության առնենք ներկա միջազգային կացության լույսի տակ։ Միջազգային դրությունը տվյալ մոմենտում բնորոշվում է հեղափոխական շարժման ժամանակավոր հանդարտման շրջանով։ Սակայն ի՞նչ է հանդարտումը, ի՞նչ կարող է նա նշանակել տվյալ մոմենտում։ Նա կարող է նշանակել միայն Արևմուտքի բանվորների, Արևելքի գաղութների և ամենից առաջ, Խորհրդային Միության նկատմամբ ճնշման ուժեղացում։ Ասում եմ ամենից առաջ Խորհրդային Միության նկատմամբ, վորովհետև նա նկատվում է վորպես բոլոր յերկրների հեղափոխական շարժումների դրոշակակիր։ Կասկածելու տեղիք չի կարող լինել, վոր իմպերիալիստների շարքերում Խորհրդային Միության նկատմամբ ճնշում գործ դնելու նախապատրաստական աշխատանքներն սկսված են։ Եստոնիայի ապստամբության(45) հետևանքով սկսված գրպարտողական կամպանիան, Սոֆիայի պայթյունի(46) հետևանքով Խորհրդային Միության դեմ

սրիկայաբար դավեր նյութելը, բուրժուական մամուլի ընդհանուր արշավը մեր յերկրի դեմ,—այս բոլորը հարձակման անցնելու նախապատրաստական ետապն է։ Այս՝ հասարակական կարծիքի հրետանային նախապատրաստություն է, վորը նպատակ ունի քաղքենիներին վարժեցնել Խորհրդային Միության դեմ ձեռնարկելիք հարձակումներին և միջամտության համար բարոյական նախադրյալներ ստեղծել։

Ի՞նչ դուրս կգա ստի ու զրպարտանքի այս կամպանիայից. կհամարձակվե՞ն արդյոք իմպերիալիստները լուրջ հարձակման դիմել,—մենք դեռ կտեսնենք։ Բայց, վոր այդ հարձակումները վոչինչ լավ բան չեն խոստանում գաղութներին, դրանում կասկածելու վորևե հիմք չկա։ Այդ պատճառով իմպերիալիզմի կողմից սպասվող հավանական հարվածի դեմ հեղափոխության միացյալ ուժերի հակագրոհ նախապատրաստելու հարցը որվա անխուսափելի հարցն է։

Ահա թե ինչու գաղութներում ու կախյալ յերկրներում, հեղափոխական շարժման հերթական խնդիրների անշեղ իրագործումը տվյալ մոմենտում՝ առանձնապես կարևոր նշանակություն է ստանում։

Բոլոր այս հանգամանքների հետևանքով ի՞նչ միտիա ունի կատարելու Արևելքի ժողովուրդների Համալսարանը՝ գաղութային և կախյալ յերկրների նկատմամբ։ Նրա միտիան հետևյալն է. նա պետք է հաշվի առնի այդ յերկրների հեղափոխական զարգացման բոլոր առանձնահատկությունները և այդ յերկրներից յեկած կադրերին դաստիարակի այնպիսի ուղղությամբ, վորն ապահովել է վերոհիշյալ բազմատեսակ հերթական խնդիրների իրագործումը։

Արևելքի ժողովուրդների Համալսարանում կան գաղութային և կախյալ յերկրներից յեկած ունկնդիրների մոտ 10 տարբեր խմբակ։ Բոլորին հայտնի յե, վոր այդ ընկերները ծարավի յեն լույսի և գիտության։ Արևելքի ժողովուրդների Համալսարանի անելիքն այն պիտի լինի,

վոր նրանցից իսկական հեղափոխականներ կոփի, այնպիսի հեղափոխականներ, վորոնք զինված լինեն լենինիզմի թեորիայով, ունենան լենինիզմի գործնական փորձառություն և ընդունակ լինեն խղճի մտոք իրագործելու գաղութների և կախյալ յերկրների ազատագրական շարժման հերթական խնդիրները։

Ընդամին անհրաժեշտ է ի նկատի ունենալ այն հանգամանքը, վոր գաղութային Արևելքի ակտիվ աշխատավորների գործնականում յերկու շեղում կա, վորոնց դեմ պայքարելն անհրաժեշտ է իսկական հեղափոխական կադրեր դաստիարակելու համար։

Առաջին շեղումն ազատագրական շարժման հեղափոխական հնարավորությունների թերագնահատումն է և գաղութներում ու կախյալ յերկրներում միացյալ համայնապարփակ ազգային ճակատի իդեայի գերգնահատումը, անկախ այդ յերկրների վիճակից ու զարգացման աստիճանից։ Այս՝ շեղում է դեպի աջ, վորը հղի յե հեղափոխական շարժման նվաստացման և կոմունիստական տարրերի՝ բուրժուական նացիոնալիստների ընդհանուր հոսանքի մեջ լուծվելու վտանգով։ Այդ շեղումի դեմ վճռական պայքար մղելն Արևելքի ժողովուրդների Համալսարանի ուղղակի պարտականությունն է։

Յերկրորդ շեղումն ազատագրական շարժման հեղափոխական հնարավորությունների գերագնահատելն է, և իմպերիալիզմի դեմ ուղղված բանվոր դասակարգի և հեղափոխական բուրժուազիայի դաշինքի գործի թերագնահատելը։ Այս շեղումով տառապում են, կարծեմ, ճավայի կոմունիստները, վորոնք վերջերս իրենց յերկրի համար սխալմամբ առաջադրել էին Խորհրդային իշխանության լոզունգը։ Այս՝ շեղում է դեպի ձախ, վորը հղի յե մասսաներից կտրվելու և կոմկուսակցությունները սեկտաներ դարձնելու վտանգով։ Այս շեղումի դեմ վճռական պայքար

մղելը—Արևելքի դաղութների և կախյալ յերկրների համար իսկական հեղափոխական կադրեր դաստիարակելու անհրաժեշտ պայմանն է։

Ընդհանուր առմամբ սրանք են Արևելքի ժողովուրդների Համալսարանի քաղաքական խնդիրները խորհրդային և դաղութային Արևելքի ժողովուրդների նկատմամբ։

Հուսանք, վոր Արևելքի ժողովուրդների Համալսարանը կկարողանա պատվով իրագործել այս խնդիրները։

ՉԻՆԱՍՏԱՆԻ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ*).

(Ընկ. Ստալինի ճառը Կոմինտերնի Գործկոմի Չինական հանձնաժողովում. 1926 թ. նոյեմբ. 30).

Ընկերներ. Նախքան այս հարցին անցնելը, հարկավոր եմ համարում հայտարարել, որ չինական հարցի առթիվ յես ոչ մի նյութեր չունեմ, որոնք անհրաժեշտ են Չինաստանում տեղի ունեցող հեղափոխության լրիվ պատկերը ծավալելու համար։ Այս պատճառով յես հարկադրված եմ սահմանափակվելու սկզբունքային բնույթ կրող մի քանի այնպիսի ընդհանուր նկատողություններով, որոնք ուղղակի առնչություն ունեն չինական հեղափոխության հիմնական ուղղության հարցի հետ։ Չինական հարցի վերաբերյալ յես իմ ձեռքի տակ ունեմ ընկ. Պետրովի և ընկ. Միֆի թեզիսները, ընկ. Տան-Պին-Սյանի յերկու զեկուցումը և ընկ. Ռաֆեսի դիտողությունները։ Յես կարծում եմ, որ բոլոր այս դոկումենտները, չնայելով իրենց արժանիքներին, այն մեծ պակասությունն ունեն, որ անտես են առնում Չինաստանում տեղի ունեցող հեղափոխության մի ամբողջ շարք արմատական հարցեր։ Յես կարծում եմ, որ ամենից առաջ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այս թերությունների վրա։ Այս պատճառով իմ դիտողությունները միաժամանակ և քննադատական բնույթ են կրելու։

---

*) «Խոր. Հայ.», № 30.

1. ՉԻՆԱՍՏԱՆԻ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԲՆՈՒՅԹԸ.

Լենինն ասել է, որ չինացիները շատ շուտով ունենալու յեն իրենց 1905 թիվը։ Վորոշ ընկերներ այս բառերն այնպես են հասկացել, որ Չինաստանում կետ առ կետ պետք է կրկնվի նույնը, ինչ որ տեղի յե ունեցել մեզանում, Ռուսաստանում 1905 թվին։ Այս ճիշտ չե ընկերներ։ Լենինն ամենևին չի ասել, թե չինական հեղափոխությունը 1905 թվին Ռուսաստանում տեղի ունեցած հեղափոխության պատճենն է լինելու։ Լենինն այն է ասել միայն, որ չինացիներն ունենալու յեն իրենց 1905 թիվը։ Այս նշանակում է, որ 1905 թվի հեղափոխության ընդհանուր գծերից բացի, չինական հեղափոխությունն ունենալու յե և իր սպեցիֆիկ առանձնահատկությունները, վորոնք պետք է իրենց հատուկ կնիքը դնեն Չինաստանի վողջ հեղափոխության վրա։

Ի՞նչ առանձնահատկություններ են դրանք։

Առաջին առանձնահատկությունն այն է, որ չինական հեղափոխությունը, բուրժուական-դեմոկրատական հեղափոխություն լինելով հանդերձ, միաժամանակ ազգային ազատագրական հեղափոխություն է, որ իր սուր ծայրով ուղղված է ռաբերկրյա իմպերիալեզմի՝ Չինաստանում տիրապետելու դեմ։ Ամենից առաջ, սրանով է նա տարբերվում 1905 թվին Ռուսաստանում տեղի ունեցած հեղափոխությունից։ Բանն այն է, որ իմպերիալիզմի տիրապետությունը Չինաստանում արտահայտվում է վոչ միայն նրա ռազմական հզորությամբ, այլ, ամենից առաջ նրանով, որ Չինաստանի արդյունաբերության հիմնական թելերը—յերկաթուղիները, գործարանները, հանքերը, բանկերը և այլն—գտնվում են ռաբերկրյա իմպերիալիստների տնորինության ներքո։

Սակայն սրանից հետևում է, որ ռաբերկրյա իմպերիալիզմի և նրանց չինական ագենտների դեմ պայքարը

մղելու հարցերը չեն կարող գերակշռող դեր չխաղալ չինական հեղափոխության մեջ։ Դրանով իսկ չինական հեղափոխությունը միանում է բոլոր յերկրների պրոլետարների կողմից իմպերիալիզմի դեմ ուղղված հեղափոխություններին։

Այս առանձնահատկությունից բղխում է չինական հեղափոխության յերկրորդ առանձնահատկությունը, այն, որ խոշոր ազգային բուրժուազիան վերին աստիճանի թույլ է Չինաստանում, որ նա անհամեմատ ավելի թույլ է, քան 1905 թվի ռուսական բուրժուազիան։ Այս հասկանալի յե։ Քանի որ արդյունաբերության հիմնական թելերը կենտրոնացած են ոտարերկրյա իմպերիալիստների ձեռքում, Չինաստանի խոշոր ազգային բուրժուազիան չի կարող թույլ և յետամնաց չլինել։ Այս տեսակետից ընկեր Մաոի այն դիտողությունը, որ ազգային բուրժուազիան Չինաստանում թույլ է, որպես չինական հեղափոխության բնորոշ փաստերից մեկը, միանգամայն ճիշտ է։ Սակայն սրանից հետևում է, որ չինական հեղափոխության նախաձեռնողի և ղեկավարի դերը, չինական գյուղացիության ղեկավարի դերն անխուսափելիորեն պետք է ընկնի չին պրոլետարիատի ձեռքը, որն ավելի յե կազմակերպված և ավելի ձեռներեց, քան չինական բուրժուազիան։

Չպետք է մոռացության տալ չինական հեղափոխության յերրորդ առանձնահատկությունն ևս, այն, որ Չինաստանի կողքին գոյություն ունի ու զարգանում է Խորհրդային Միությունը, որի հեղափոխական փորձն ու ոգնությունը չեն կարող չդյուրացնել չին պրոլետարիատի կողմից իմպերիալիզմի և Չինաստանի ավատական-միջնադարյան մնացորդների դեմ մղվող պայքարը։

Սրանք են չինական հեղափոխության այն հիմնական առանձնահատկությունները, որ վորոշում են նրա բնույթն ու նրա ուղղությունը։

2. ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԸ ՅԵՎ ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԻՆՏԵՐՎԵՆՑԻԱՆ ՉԻՆԱՍՏԱՆՈՒՄ.

Ներկայացված թեզիսների առաջին թերությունն այն է, որ նրանք անտես են առնում կամ թերագնահատում են Չինաստանի իմպերիալիստական ինտերվենցիայի հարցը։ Յեթե մի լավ կարդանք թեզիսները, կարելի յե կարծել, որ ներկա մոմենտում, եյապես ասած, Չինաստանում իմպերիալիստական ինտերվենցիա չկա, այլ կա հյուսիսայինների ու հարավայինների միջև կամ մի խումբ գեներալների կողմից մի այլ խումբ գեներալների դեմ մղվող պայքար։ Ըստ այսմ, ինտերվենցիա ասելով, տրամաղիր են հասկանալու մի այնպիսի կացություն, յերբ չինական տերրիտորիան ոտարերկրյա զորք մտցնելու փաստ կա, իսկ յեթե այդպիսի փաստ չկա, նշանակում է և ինտերվենցիա չկա։ Այս չափազանց մեծ սխալ է, ընկերներ։

Ինտերվենցիան ամենևին չի սպառվում զորք մտցնելով և զորք մտցնելը ամենևին ինտերվենցիայի հիմնական հատկությունը չի կազմում։ Կապիտալիստական յերկրներում տեղի ունեցող հեղափոխական շարժման ներկա պայմաններում, յերբ ուղղակի կերպով ոտարերկրյա զորք մտցնելը կարող է տեղիք տալ մի շարք բողոքների և կոնֆլիկտների, ինտերվենցիան ավելի ճկուն բնույթ և ավելի քողարկված ձև ունի։

Այժմյան պայմաններում իմպերիալիզմը գերադասում է ինտերվենցիայի դիմել՝ կախյալ վիճակում գտնվող յերկրի ներսում քաղաքացիական պատերազմ կազմակերպելու, հեղափոխության դեմ գնացող հակահեղափոխական ուժերին ֆինանսավորելու և հեղափոխության դեմ աշխատող իր չին ագենտներին բարոյական ու ֆինանսական աջակցություն ցույց տալու միջոցով։

Դենիկինի և Կոլչակի, Յուդենիչի և Վրանգելի կողմից Ռուսաստանի հեղափոխության դեմ ուղղված պայ-

քարն իմպերիալիստները որամադիր եյին պատկերացնելու, վորպես բացառապես ներքին պայքար։ Սակայն մենք բոլորս գիտեյինք, և վոչ միայն մենք, այլ և ամբողջ աշխարհը գիտեր, վոր ռուսական այս հակահեղափոխական գեներալների թիկունքում կանգնած են Անգլիայի ու Ամերիկայի, Ֆրանսիայի ու Ճապոնիայի իմպերիալիստները, առանց վորոնց աջակցության Ռուսաստանում լուրջ քաղաքացիական պատերազմը միանգամայն անկարելի կլիներ։ Նույնը պիտի ասել և Չինաստանի մասին. Ու-Պեյ-Ֆույի և Սուն-Չուան-Ֆանի, Չան-Ցո-Լինի և Չան-Ցուն-Չանի կողմից Չինաստանի հեղափոխության դեմ մղվող պայքարն անկարելի կլիներ, յեթե այս հակահեղափոխական գեներալներին չվոգևորեյին բոլոր յերկրների իմպերիալիստները, յեթե նրանք ֆինանսներ, զենք, հրահանգիչներ, «խորհրդատուներ» և այլն չտրամադրեյին նրանց։

Վո՞ւր և Կանտոնի գործքերի ուժը։ Այն, վոր նրանք ունեն իդեյա, պաթոս, վորով վոգևորվում են իմպերիալիզմից ազատվելու համար պայքար մղելիս. այն, վոր նրանք ազատագրում են բերում Չինաստանին։

Վո՞ւր և Չինաստանի հակահեղափոխական գեներալների ուժը։ Այն, վոր նրանց թիկունքում կանգնած են բոլոր յերկրների իմպերիալիստները, Չինաստանի բոլոր և ամեն տեսակ յերկաթուղիների, կոնցեսիաների, գործարանների, բանկերի և առևտրական գրասենյակների տերերը։ Այս պատճառով եյականը վոչ միայն, կամ նույնիսկ վոչ այնքան ռտարերկրյա զորք մտցնելն է, այլ այն աջակցությունը, վոր բոլոր յերկրների իմպերիալիստները ցույց են տալիս Չինաստանի հակահեղափոխությանը։ Ինտերվենցիա ուրիշների ձեռքով—այս է այժմ իմպերիալիստական ինտերվենցիայի արմատը։

Այս պատճառով իմպերիալիստական ինտերվենցիան Չինաստանում անկասկածելի փաստ է, վորի դեմ է և

ուղղված իր սուր ծայրով չինական հեղափոխությունը։

Այս պատճառով, ով անտեսում կամ թերագնահատում է Չինաստանի իմպերիալիստական ինտերվենցիայի փաստը, նա անտեսում կամ թերագնահատում է ամենագլխավորն ու ամենահիմնականը Չինաստանում։

Ասում են, թե ճապոնական իմպերիալիստները դեպի կանտոնականները և ընդհանրապես դեպի չինական հեղափոխությունը «տրամադրվելու» վորոշ նշաններ են ցույց տալիս։ Ասում են, թե ամերիկական իմպերիալիստներն այս տեսակետից հետ չեն մնում ճապոնական իմպերիալիստներից։ Այս ինքնախաբեություն է, ընկերներ։ Պետք է կարողանալ իմպերիալիստների, վորոնց թվում և ճապոն-ամերիկյան իմպերիալիստների քաղաքականության էությունը նրա քողարկումից տարբերել։ Լենինը հաճախ է ասել, թե հեղափոխականներին դժվար է ձեռք գցել դագանակով, բռունցքով, բայց նրանց յերբեմն շատ հեշտությամբ ձեռք են գցում սիրալիրությամբ։ Լենինի ասած այս ճշմարտությունը յերբեք չպետք է մոռանալ, ընկերներ։ Համենայն դեպս, պարզ է, վոր ճապոն-ամերիկյան իմպերիալիստները բավական լավ են ըմբռնել այս ճշմարտության նշանակությունը։ Այս պատճառով հարկավոր է խստիվ իրարից տարբերել կանտոնականների հասցեին ուղղված սիրալիրությունն ու գովասանքը և այն փաստը, վոր սիրալիրության համար առավել առատաձեռն իմպերիալիստներն ավելի պինդ են կպած Չինաստանում ունեցած «իրենց» կոնցեսիաներին ու յերկաթուղիներին, վորոնցից վոչ մի գնով համաձայն չեն «զատվելու»։

3. ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ ՉԻՆԱՍՏԱՆՈՒՄ.

Ներկայացված թեզիսների առթիվ իմ անելիք յերկրորդ դիտողությունը վերաբերում է Չինաստանի հեղափոխական բանակի հարցին։ Բանն այն է, վոր թեզիսների

մեջ բանակի հարցն անտես է առնվում կամ թերագնահատվում է։ (Զայն տեղից՝ «ճիշտ է»)։ Այս է նրանց յերկրորդ թերությունը։ Կանտոնականների առաջխաղացումը դեպի հյուսիս սովորաբար վոչ թե չինական հեղափոխության ծավալում են նկատում, այլ վորպես Կանտոնի գեներալների կողմից Ու-Պեյ-Ֆուի և Սուն-Չուան-Ֆանի դեմ մղվող պայքար, վորպես առաջնության համար մի խումբ գեներալների կողմից մի ուրիշ խումբ գեներալների դեմ ուղղված պայքար։ Այս խոշոր սխալ է, ընկերներ։

Չինաստանի հեղափոխական բանակները չին բանվորների ու գյուղացիների կողմից իրենց ազատագրման համար մղվող պայքարի կարևորագույն ֆակտոր են հանդիսանում։ Մի՞թե այս պատահականություն է, վոր մինչև այս տարվա մայիսը կամ հունիսը Չինաստանում տիրող կացությունը գնահատվում եր վորպես Ֆուն-Յու-Սյանի բանակների պարտությունից հետո վերահաս ռեակցիայի տիրապետություն, իսկ հետո, այս տարվա ամրանը, բավական եր կանտոնականների հաղթական զորքերին առաջխաղալ դեպի հյուսիս և գրավել Հուբեյը, վորպեսզի պատկերն արմատապես փոխվեր հոգուտ հեղափոխության։ Վոչ, այս պատահականություն չէ, վորովհետև կանտոնականների առաջխաղացումը նշանակում է՝ հարվածել իմպերիալիզմին, հարվածել իմպերիալիզմի՝ Չինաստանում գործող ագենտներին և ժողովների, գործադուլների, մամուլի ու կազմակերպությունների ազատություն տալ Չինաստանի բոլոր հեղափոխական տարրերին, մասնավորապես բանվորներին։ Ահա թե վո՛րն է Չինաստանի հեղափոխական բանակի առանձնահատկությունն ու կարևորագույն նշանակությունը։

Առաջ, 18 և 19-րդ դարերում հեղափոխություններն այնպես եյին սկսվում, վոր սովորաբար ապստամբում եր մեծ մասամբ անգեն կամ վատ զինված ժողովուրդը, և

դարձնել կարելի յե միայն քաղաքական աշխատանքն ուժեղացնելու և նրանց վերաբերմամբ հեղափոխական վերհսկողություն սահմանելու միջոցով։ Առանց սրան բանակը կարող է ամենածանր դրության մեջ ընկնել։

Յերկրորդ՝ չին հեղափոխականները, որոնց թվում և կոմունիստները, պետք է, ինչպես հարկավոր է, սկսեն ուսումնասիրել ռազմական գործը. նրանք չպետք է ռազմական գործի վրա նայեն որպես յերկրորդական խնդրի վրա, որովհետև ներկայումս Չինաստանում ռազմական գործը չինական հեղափոխության կարևորագույն ֆակտորն է։ Չին հեղափոխականները, նշանակում է և կոմունիստները, պետք է ռազմական գործն ուսումնասիրեն, որպեսզի կամաց-կամաց առաջանան և հեղափոխական բանակում այս կամ այն ղեկավար դիրքը գրավեն։

Այս է այն բանի գրավականը, որ Չինաստանի հեղափոխական բանակը կընթանա ուղիղ ճանապարհով, ուղղակի դեպի իր նպատակը։ Առանց սրան՝ ցնցումներն ու տատանումները բանակում կարող են անխուսափելի դառնալ։

Սրանք են չինական կոմկուսակցության անելիքները հեղափոխական բանակի հարցում։

4. ՉԻՆԱՍՏԱՆԻ ԱՊԱԳԱ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԲՆՈՒՅԹԸ.

Յերրորդ դիտողությունը վերաբերում է նրան, որ թեզիսների մեջ հաշվի չի առնված կամ անբավարար չափով է հաշվի առնված այն հարցը, թե ի՞նչ բնույթ և ունենալու Չինաստանի ապագա հեղափոխական իշխանությունը։ Այս հարցն իր թեզիսներում ընկ. Միֆը մոտիկից շոշափել է, և այս է նրա մատուցած ծառայությունը։ Սակայն մոտիկից շոշափելով, նա մի ինչ որ բանից վախեցել է և չի համարձակվել գործն իր վախճանին հասցնել։

Ընկ. Միֆը կարծում է թե Չինաստանի ապագա հեղափոխական իշխանությունը հեղափոխական մանր-բուր-

դարձնել կարելի յե միայն քաղաքական աշխատանքն ուժեղացնելու և նրանց վերաբերմամբ հեղափոխական վերհսկողություն սահմանելու միջոցով։ Առանց սրան բանակը կարող է ամենածանր դրության մեջ ընկնել։

Յերկրորդ՝ չին հեղափոխականները, որոնց թվում և կոմունիստները, պետք է, ինչպես հարկավոր է, սկսեն ուսումնասիրել ռազմական գործը. նրանք չպետք է ռազմական գործի վրա նայեն որպես յերկրորդական խնդրի վրա, որովհետև ներկայումս Չինաստանում ռազմական գործը չինական հեղափոխության կարևորագույն ֆակտորն է։ Չին հեղափոխականները, նշանակում է և կոմունիստները, պետք է ռազմական գործն ուսումնասիրեն, որպեսզի կամաց-կամաց առաջանան և հեղափոխական բանակում այս կամ այն ղեկավար դիրքը գրավեն։

Այս է այն բանի գրավականը, որ Չինաստանի հեղափոխական բանակը կընթանա ուղիղ ճանապարհով, ուղղակի դեպի իր նպատակը։ Առանց սրան՝ ցնցումներն ու տատանումները բանակում կարող են անխուսափելի դառնալ։

Սրանք են չինական կոմկուսակցության անելիքները հեղափոխական բանակի հարցում։

4. ՉԻՆԱՍՏԱՆԻ ԱՊԱԳԱ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԲՆՈՒՅԹԸ.

Յերրորդ դիտողությունը վերաբերում է նրան, որ թեզիսների մեջ հաշվի չի առնված կամ անբավարար չափով է հաշվի առնված այն հարցը, թե ի՞նչ բնույթ և ունենալու Չինաստանի ապագա հեղափոխական իշխանությունը։ Այս հարցն իր թեզիսներում ընկ. Միֆը մոտիկից շոշափել է, և այս է նրա մատուցած ծառայությունը։ Սակայն մոտիկից շոշափելով, նա մի ինչ որ բանից վախեցել է և չի համարձակվել գործն իր վախճանին հասցնել։

Ընկ. Միֆը կարծում է թե Չինաստանի ապագա հեղափոխական իշխանությունը հեղափոխական մանր-բուր-

ժուազիայի իշխանություն է լինելու պրոլետարիատի ղեկավարությամբ։ Ի՞նչ է այս նշանակում։

1917 թվի փետրվարյան հեղափոխության ժամանակ մենշևիկներն ու եսերները նույնպես մանր-բուրժուական կուսակցություններ էին և վորոշ չափով հեղափոխական։ Նշանակո՞ւմ է այս, արդյոք, վոր Չինաստանի ապագա հեղափոխական իշխանությունն եսերական - մենշևիկյան է լինելու։ Վո՛չ, չի նշանակում։ Ինչո՞ւ. վորովհետև եսերական-մենշևիկյան իշխանությունն իմպերիալիստական իշխանություն եր, մինչդեռ Չինաստանի ապագա հեղափոխական իշխանությունը չի կարող հակաիմպերիալիստական իշխանություն չլինել։

Այստեղ արմատական տարբերություն կա։ Մակդոնալդի կառավարությունը նույնիսկ «բանվորական» իշխանություն եր, բայց նա միևնույն ժամանակ իմպերիալիստական եր, վորովհետև նա հենվում եր Անգլիայի իմպերիալիստական իշխանությունը՝ ասենք՝ Հնդկաստանում և Եգիպտոսում պահպանելու վրա։

Չինաստանի ապագա հեղափոխական իշխանությունն այն առավելությունն է ունենալու Մակդոնալդի կառավարության հանդեպ, վոր նա հակաիմպերիալիստական իշխանություն է լինելու։ Եյականը՞ վոչ միայն այն է, վոր ապագա համաչինական հեղափոխական իշխանությունը՞ սաղմ հանդիսացող Կանտոնի իշխանությունը բուրժուական-դեմոկրատական բնույթ է կրում, այլ ամենից առաջ, այն, վոր այդ իշխանությունը հակաիմպերիալիստական իշխանություն է և չի կարող չլինել այդպիսին, և վոր իշխանության ամեն մի առաջխաղացումը նշանակում է՝ հարվածել համաշխարհային իմպերիալիզմին, հետևաբար՝ և հարվածել հոգուտ համաշխարհային հեղափոխական շարժման։

Լենինն իրավացի յե յեղել, յերբ ասել է, թե, յեթե առաջ, մինչև համաշխարհային հեղափոխության եպոխայի

սկսվելը, ազգային-ազատագրական շարժումն ընդհանուր-դեմոկրատական շարժման մի մասն էր կազմում, ապա այժմ, նրանից հետո, յերբ Ռուսաստանում խորհրդային հեղափոխությունը հաղթանակել է և սկսվել է համաշխարհային հեղափոխության եպոխան, ազգային-ազատագրական շարժումը համաշխարհային պրոլետարական հեղափոխության մի մասն է կազմում։

Այս առանձնահատկությունն ընկ. Մաֆը հաշվի չի առել։

Յես կարծում եմ, վոր Չինաստանի ապագա հեղափոխական իշխանությունն իր բնույթով այնպիսի իշխանություն է հիշեցնելու, վորի մասին մեզանում խոսվել է 1905 թվին, այսինքն պրոլետարիատի և գյուղացիության դիկտատուրա, այն տարբերությամբ սակայն, վոր այդ առավելապես հակաիմպերիալիստական իշխանություն է լինելու։ Այդ լինելու յե Չինաստանը դեպի վոչ-կապիտալիստական, ավելի ճիշտ, դեպի սոցիալիստական զարգացում տանող մի անցողիկ իշխանություն։

Ահա թե ինչ ուղղությամբ պիտի ընթանա Չինաստանի հեղափոխությունը։

Հեղափոխության զարգացման այս ուղին դյուրանում է յերեք հանգամանքով։

Նախ՝ նրանով, վոր Չինաստանի հեղափոխությունը, վորպես ազգային-ազատագրական հեղափոխություն, իր սուր ծայրով ուղղված է լինելու իմպերիալիզմի և նրա չինական ագենտների դեմ։

Յերկրորդ՝ նրանով, վոր խոշոր ազգային բուրժուազիան Չինաստանում թույլ է, ավելի թույլ, քան 1905 թվականի ռուսական ազգային բուրժուազիան, վորպիսի հանգամանքը դյուրացնում է պրոլետարիատի գերիշխանության գործը, պրոլետարական կուսակցության ղեկավարության գործը չինական գյուղացիության վերաբերմամբ։

Յերրորդ՝ նրանով, որ Չինաստանի հեղափոխությունը զարգանալու յե այնպիսի պայմաններում, որոնք հնարավորություն են տալիս ոգտագործելու Խորհրդային Միության մեջ հաղթանակած հեղափոխության փորձն ու աջակցությունը։

Այս ուղին անպայման կհաղթանակի՞ թե վոչ,— դա կախված է բազմաթիվ հանգամանքներից։ Մի բան համեստ դեպս պարզ է, որ չինական հեղափոխության զարգացման հենց այս ուղիյի համար մղելիք պայքարը չինական կոմունիստների հիմնական խնդիրն է հանդիսանում։

Այստեղից է բղխում Չինաստանի կոմունիստների անելիքն այն հարցում, թե ի՞նչ վերաբերմունք պիտի ցույց տան նրանք Գոմինդանին և Չինաստանի ապագա հեղափոխական իշխանությանը։ Ասում են, թե չին կոմունիստները պետք է Գոմինդանից դուրս գան։ Այս հիմարություն է, ընկերներ։ Չին կոմունիստների Գոմինդանից դուրս գալը խոշորագույն սխալ կլիներ։ Չինական հեղափոխության ամբողջ ընթացքը, նրա բնույթը, նրա հեռանկարներն աներկբայորեն այն են ասում, որ չին կոմունիստները պիտի մնան Գոմինդանի մեջ և այնտեղ իրենց աշխատանքն ուժեղացնեն։ Սակայն կարո՞ղ է արդյոք չինական կոմկուսակցությունը մասնակցել ապագա հեղափոխական իշխանությանը։ Վոչ միայն կարող է, այլև պետք է մասնակցի։ Չինաստանի հեղափոխության ընթացքը, նրա բնույթը, նրա հեռանկարները պերճախոս կերպով այն են ասում, որ չինական կոմկուսակցությունը պետք է մասնակցի Չինաստանի ապագա հեղափոխական իշխանությանը։

Այս այն բանի անհրաժեշտ յերաշխիքներից մեկն է, որպեսզի չին պրոլետարիատի գերիշխանությունն ամբողջապես իրագործվի։

5. ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՉԻՆԱՍՏԱՆՈՒՄ.

Զորբորդ դիտողությունը վերաբերում է Չինաստանի գյուղացիական հարցին։ Ընկ. Միֆն այն կարծիքին է, որ հարկավոր է անմիջապես չինական գյուղում գյուղացիական խորհուրդներ կազմակերպելու լոզունգ նետել։ Ես կարծում եմ, որ այս սխալ է։ Ընկ. Միֆը շատ է առաջ գնում։ Չի կարելի գյուղում խորհուրդներ հիմնել՝ անտես առնելով Չինաստանի արդյունաբերական կենտրոնները։ Առայժմ դեռ հերթի չի դրված Չինաստանի արդյունաբերական կենտրոններում խորհուրդներ կազմակերպելու հարցը։ Բացի դրանից, պետք է ի նկատի ունենալ, որ խորհուրդները գոյություն կարող են ունենալ այն դեպքում, յերբ շրջապատող պայմանները ներում են։ Խորհուրդներ, տվյալ դեպքում գյուղացիական խորհուրդներ կարելի յե կազմակերպել միայն այն դեպքում, յեթե Չինաստանը գոնվեր հինը քանդող և նոր իշխանություն կերտող գյուղացիական շարժման մաքսիմալ վերելքի շրջանում, և յեթե Չինաստանի արդյունաբերական կենտրոններն արդեն ճեղքած լինեյին պատնեշն ու թևակոխած խորհուրդների իշխանություն կազմակերպելու շրջանը։ Կարելի՞ յե արդյոք, ասել, թե չինական գյուղացիությունը և ընդհանրապես չինական հեղափոխությունն արդեն թևակոխել է այդ շրջանը։ Վո՛չ, չի կարելի։ Ուստի խոսել այժմ խորհուրդների մասին՝ նշանակում է՝ շտապել։ Այս պատճառով, ներկայումս հարց պիտի հարուցել վոչ թե խորհուրդներ, այլ գյուղացիական կոմիտեներ կազմակերպելու մասին։ Ես ի նկատի ունեմ գյուղացիներից ընտրված այնպիսի գյուղացիական կոմիտեներ, վորոնք ընդունակ կլինեն ձևավորելու գյուղացիության հիմնական պահանջները և վորոնք բոլոր միջոցները ձեռք կառնեն այդ պահանջները հեղափոխական կարգով իրականացնելու։ Այդ գյուղացիական կոմիտեները պետք է այն

առանցքը լինեն, որի շուրջը պիտի ծավալվի գյուղի հեղափոխությունը։

Յես գիտեմ, որ գոմինդանականների և նույնիսկ չին կոմունիստների շրջանում այնպիսի մարդիկ կան, որոնք հնարավոր չեն համարում գյուղում հեղափոխություն ծավալելը, վախենալով, որ գյուղացիությանը հեղափոխության մասնակից անելով հակաիմպերիալիստական միասնական ճակատը կխախտվի։ Այս խոշոր մոլորություն է, ընկերներ։ Հակաիմպերիալիստական ճակատը Չինաստանում այնքան ավելի ուժեղ ու հզոր կլինի, որքան շուտ ու հնհնավորապես չին գյուղացիությունը մասնակից կդառնա հեղափոխությանը։

Թեզիսների հեղինակները, առանձնապես ընկ. Տան-Պին-Սյանը և Ռաֆեսը միանգամայն իրավացի յեն, պընդելով, որ գյուղացիական մի շարք առավել հասունացած պահանջների անմիջական բավարարումը չինական հեղափոխության հաղթանակի ամենաանհրաժեշտ պայմանն է։ Յես կարծում եմ, որ ժամանակն է վերջ տալ գյուղացիության վերաբերմամբ ցույց տրվող այն անտարբերությանն ու «չեզոքությանը», որ նկատվում են Գոմինդանի վորոշ տարրերի գործողություններում։ Յես կարծում եմ, որ ինչպես Չինաստանի կոմունիստական կուսակցությունը, այնպես և Գոմինդանը, հետևաբար և Կանտոնի իշխանությունը պետք է առանց հապաղելու խոսքից գործի անցնեն և այժմ և յեթ հարց բարձրացնեն գյուղացիության առավել կենսական պահանջները բավարարելու մասին։

Թե այս տեսակետից ի՞նչ հեռանկարներ պիտի ունենանք մենք և թե ի՞նչ սահմանների կարելի յե և պետք է հասնել՝ այդ կախված է հեղափոխության ընթացքից։ Յես կարծում եմ, որ այս գործը, վերջ ի վերջո, պիտի տանի դեպի հողի ազգայնացում։ Համենայն դեպս, մենք

չենք կարող հրաժարվել մի այնպիսի լոզունգից, ինչպես հողի ազգայնացման լոզունգն է։

Վորո՞նք են այն ուղիները ու արահետները, վորոնցով պիտի ընթանան չին հեղափոխականները, նրա՛ համար, վոր Չինաստանի բազմամիլիոն գյուղացիությանը վոտքի հանեն հեղափոխության համար։

Ես կարծում եմ, վոր տվյալ պայմաններում կարելի է խոսել միայն 3 ուղիների մասին։

Առաջին ուղին—այդ՝ գյուղացիության վրա ներգործություն ունենալու համար գյուղացիական կոմիտեներ կազմակերպելու և այդ կոմիտեների մեջ չին հեղափոխականներ մացնելու ուղին է։ (Զայն տեղից՝ «Իսկ գյուղացիական միությունն՞ը»)։ Ես կարծում եմ, վոր գյուղացիական միությունները խմբվելու յեն գյուղացիական կոմիտեների շուրջը, կամ գյուղացիական միությունները դառնալու յեն գյուղացիական կոմիտեներ, ուժված՝ գյուղացիական պահանջները բավարարելու համար անհրաժեշտ այս կամ այն իշխանությամբ։ Այս ուղիի մասին ես արդեն խոսել եմ վերևում...բայց այս ուղին բավական չե։ Ծիծաղելի կլիներ կարծել, վոր Չինաստանը բավարար քանակությամբ հեղափոխականներ կտա այս գործի համար։ Չինաստանում մոտ 400 միլիոն բնակչություն կա։ Դրանից մոտ 350 միլիոնը չինացիներ են, վորոնց 9/10 մասը՝ գյուղացիներ։ Կարծել, վոր մի քանի հազար չին հեղափոխականներ կկարողանան բավարարել այդ ծով գյուղացիությանը, նշանակում է սխալանք գործել։ Նշանակում է, հարկավոր է այլ ուղիներ վորոնել։

Յերկրորդ ուղին—այդ՝ գյուղացիության վրա նոր ժողովրդական - հեղափոխական իշխանության ապարատի միջոցով ներգործություն անելու ուղին է։ Կապարատի միջոցով նեղգործություն անելու ուղին է։ Կանծից դուրս է, վոր նոր ազատագրված նահանգներում կանծից դուրս է, վոր նոր իշխանություն է ստեղծանի իշխանության տիպի նոր իշխանություն է ստեղծ-

վելու։ Կասկածից դուրս է, որ այդ իշխանությունը և այդ իշխանության ապարատը, յեթե նա իրոք ուզում է հեղափոխություն առաջ մղել, պետք է զբաղվի գյուղացիության առավել կենսական պահանջների բավարարումով։ Յեվ ահա Չինաստանի կոմունիստների և ընդհանրապես հեղափոխականների անելիքը պիտի լինի՝ անցնել նոր իշխանության ապարատի մեջ, այդ ապարատը մոտեցնել գյուղացիական մասսաներին և ոգնել նրանց՝ նայած հանգամանքներին՝ բավարարելու իրենց կենսական պահանջները կամ կալվածատիրական հողերը խլելով և կամ հարկերն ու վարձակալական պայմանները թեթևացնելով։

Յերրորդ ուղին՝ հեղափոխական բանակի միջոցով գյուղացիության վրա ներգործելն է։ Յես արդեն ասել եմ, թե ինչ կարևորագույն նշանակություն ունի հեղափոխական բանակը չինական հեղափոխության մեջ։ Չինաստանի հեղափոխական բանակն այն ուժն է, որն առաջինն է անցնում գյուղացիության ամենահոծ մասսաների միջով և նրանով է, ամենից առաջ, գյուղացին դատում նոր իշխանության, նրա լավ ու վատ կողմերի մասին։ Հեղափոխական բանակի վարքից, նրա կողմից գյուղացիությանն ու կալվածատերերին ցույց տալիք վերաբերմունքից, գյուղացիությանը ոգնության գալու նրա պատրաստակամությունից է կախված, ամենից առաջ, այն հանգամանքը, թե ինչ վերաբերմունք ցույց կտա գյուղացիությունը նոր իշխանությանը, Գոմինդանին և ընդհանրապես Չինաստանում տեղի ունեցող հեղափոխությանը։ Յեթե ի նկատի ունենանք, որ Չինաստանի հեղափոխական բանակի մեջ են տողոսկել բավական թվով կասկածելի տարրեր, որ այդ տարրերը կարող են բանակի ֆիզիոնոմիան փոխել դեպի վատ կողմը, այն ժամանակ կարելի յե հասկանալ, թե վորքան խոշոր նշանակություն ունի գյուղացիության աչքում բանակի քաղա-

քական ֆիզիոնոմիան և նրա, այսպես ասած, գյուղացիական քաղաքականությունը։

Այս պատճառով Չինաստանի կոմունիստները և ընդհանրապես Չինաստանի հեղափոխականները պետք է բոլոր միջոցները ձեռք առնեն, որպեսզի կարողանան չեզոքացնել բանակի հակագյուղացիական տարրերին, նրա հեղափոխական վոգին պահպանեն և այնպես անեն, որ բանակն ոգնի գյուղացիներին և նրանց հեղափոխության հանի։

Ասում են, թե Չինաստանում հեղափոխական բանակին գրկաբաց են ընդունում, բայց հետո, յերբ բանակը մի տեղում որոշ ժամանակ մնում է, մի տեսակ հիասթափություն է առաջ գալիս։ Նույնը յեղել է և մեզ մոտ, Խորհրդային Միության մեջ՝ քաղաքացիական պատերազմի ժամանակ։ Այս բացատրվում է նրանով, որ բանակը, նոր նահանգներ ազատագրելով և այնտեղ կանգ առնելով, այսպես թե այնպես հարկադրված է լինում կերակրվել շրջապատող բնակչության հաշվին։ Մեզ, խորհրդային հեղափոխականներիս սովարաբար հաջողվել է այդ մինուսները փոխհատուցել նրանով, որ մենք աշխատել ենք բանակի միջոցով ոգնել գյուղացիներին կալվածատիրական տարրերի դեմ։ Անհրաժեշտ է, որ չին հեղափոխականներն ևս սովորեն այդ մինուսները փոխհատուցել բանակի միջոցով ճիշտ գյուղացիական քաղաքականություն կիրառելով։

Սրանք են այն ուղիները, որոնց միջոցով կարելի կլինի Չինաստանում գյուղացիական ճիշտ քաղաքականություն վարել։

6. ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԸ ՅԵՎ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՀԵԳԵՄՈՆԻԱՆ ՉԻՆԱՍՏԱՆՈՒՄ.

Հինգերորդ դիտողությունը վերաբերում է չին պրոլետարիատի հարցին։ Ես կարծում եմ, որ թեզիսներում բա-

վանականաչափ չի շեշտվում Չինաստանի բանվոր դասակարգի դերն ու նշանակությունը։ Ընկ. Ռաֆեսը հարց է տալիս. ո՞ւմ վրա պիտի հենվեն չին կոմունիստները—ձախերի թե՞ Գոմինդանի վրա։ Տարորինակ հարց։ Ցես կարծում եմ, որ չին կոմունիստները պետք է հենվեն պրոլետարիատի վրա և Չինաստանի ազատագրական շարժման գործիչներին թեքեն դեպի հեղափոխության կողմը։ Միայն այս դեպքում հարցը ճշտությամբ կլինի դրված։ Ցես գիտեմ, որ չին կոմունիստների շրջանում կան այնպիսի ընկերներ, որոնք բանվորների կողմից՝ իրենց նյութական ու իրավական դրության բարելավման համար գործադուլ հայտարարելն անցանկալի յեն համարում և բանվորներին խորհուրդ չեն տալիս գործադուլ անելու։ (Զայն՝ «Այդ տեղի յե ունեցել Կանտոնում և Շանհայում»)։ Այս խոշոր սխալ է, ընկերներ։ Դա Չինաստանի պրոլետարիատի դերի ու տեսակարար կշռի լուրջ թերագնահատում է։ Թեզիսների մեջ այս հանգամանքը պիտի նիշվի որպես անպայման բացասական յերևույթ։

Խոշոր սխալ կլիներ, յեթե չին կոմունիստներն այժմյան նպաստավոր պարագան չոգտագործեյին նրա համար, որ ոգնության գան բանվորներին բարելավելու իրենց նյութական և իրավական դրությունը թեկուզ հենց գործադուլի միջոցով։ Ել ինչի՞ համար է այն ժամանակ Չինաստանի հեղափոխությունը։ Չի կարող հեգեմոն լինել այն պրոլետարիատը, որի գավակներին իմպերիալիզմի ագենտները կոտորում ու խոշտանգում են գործադուլների ժամանակ։ Ամեն կերպ պիտի աշխատել միջնադարյան այս չարիքին վերջ տալ, որպեսզի կարելի լինի Չինաստանի պրոլետարների մեջ ուժի և սեփական արժանապատվության զգացում ծնեցնել և նրանց ընդունակ դարձնել հեղափոխության մեջ հեգեմոն լինելու։

Առանց սրան ավելորդ է նույնիսկ մտածել Չինաս-

տանի հեղափոխության հաղթանակի մասին։ Այդ պատճառով Չինաստանի բանվոր դասակարգի տնտեսական ու իրավական պահանջները, պահանջներ, որ հետապնդում են նրանց դրության լուրջ բարելավման նպատակ, պետք է թեզիսների մեջ պատշաճ տեղ գտնեն։ (Ընկ. Միֆ— «Այդ մասին թեզիսների մեջ ասված է»)։ Այո, այս մասին ասված է թեզիսների մեջ, բայց դժբախտաբար, այս պահանջներն այնքան էլ ցայտուն կերպով չեն առաջադրված։

7. ՑԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՉԻՆԱՍՏԱՆՈՒՄ.

Վեցերորդ դիտողությունը վերաբերում է Չինաստանի յերիտասարդության հարցին։ Տարորինակ է, որ թեզիսների մեջ հաշվի չի առնված այս հարցը։ Իսկ մինչդեռ յերիտասարդության հարցը ներկայումս Չինաստանում չափազանց կարևոր նշանակություն ունի։ Ընկ. Տան-Պին-Սյանի զեկուցումների մեջ այս հարցի մասին խոսվում է, բայց, դժբախտաբար, վոչ այնքան ցայտուն կերպով։ Ներկայումս Չինաստանում յերիտասարդության հարցն առաջնակարգ նշանակություն ունի։ Ուսանող յերիտասարդությունը (հեղափոխական ուսանողները), բանվոր յերիտասարդությունը, գյուղացի յերիտասարդությունը,—այս բոլորն այնպիսի մի ուժ է, որը հակայական թափով առաջ կմղեր հեղափոխությունը, յեթե նրան յենթարկեյինք Գոմինդանի իդեյական և քաղաքական ազդեցությանը։ Հարկավոր է ինկատի ունենալ, որ վոչ վոք այնպես խորը չի զգում իր վրա իմպերիալիստական լուծը և վոչ վոք այնքան մեծ տաղնապով չի զգում այդ լծի դեմ պայքար մղելու անհրաժեշտությունը, վորքան չին յերիտասարդությունը։ Այս հանգամանքը պետք է խորապես հաշվի առնեն չինական կոմկուսակցությունն ու չին հեղափոխականները յերիտասարդության շրջանում աշխա-

տանքն ամեն կերպ ուժեղացնելու իմաստով։ Ցերիտասարդությունը պետք է իր տեղը գտնի չինական հարցի վերաբերյալ թեզիսներում։

8. ՄԻ ՔԱՆԻ ՀԵՏԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

Յես կցանկանայի նիշել յերկու հեռանկար—Չինաստանում գործող իմպերիալիզմի գծով և գյուղացիական հարցի գծով։

Կասկածից դուրս է, վոր չինական կոմկուսակցությունը ներկայումս չի կարող սահմանափակվել անհավասար պայմանագրերը վոչնչացնելու պահանջով։ Այս պահանջն է անում ներկայումս նույնիսկ այնպիսի մի հակահեղափոխական, ինչպես Զան-Սուեն-Լյանն է։ Պարզ է, վոր չինական կոմկուսակցությունը պետք է ավելի հեռուն գնա։ Վորպես հեռանկար, հարկավոր է առաջադրել յերկաթուղիների ազգայնացման հարցը։ Այս անհրաժեշտ է, և պիտի ձգտել սրան։ Այնուհետև, հարկավոր է նկատի առնել առավել կարևոր գործարանների ազգայնացման հեռանկարը։ Ըստ այսմ, չին հեղափոխականների առաջ ամենից առաջ ծառանում է այն ձեռնարկությունների ազգայնացման հարցը, վորոնց տերերն աչքի յեն ընկնում դեպի չին ժողովուրդը ունեցած իրենց առանձնակի թշնամությամբ ու ագրեսիվությամբ։

Այնուհետև հարկավոր է առաջ մղել գյուղացիական հարցը, կապելով դա Չինաստանի հեղափոխության հեռանկարի հետ։ Յես կարծում եմ, վոր վերջիվերջո պիտի ձգտել հողի ազգայնացմանը։

Մնացածն ինքնաստինքյան հասկանալի յե։

Ահա և այն բոլոր դիտողությունները, վոր յես ցանկացա անել, ընկերներ։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

1) Սիոնիզմ— Հրեական բուրժուական հոսանք, որ ձգտում է հրեական պետություն կազմել Պաղեստինում, ուր ներկայումս բնակվում են արաբներ։ Սիոնիզմի պարագլուխները քծնում են իմպերիալիստական պետությունների առաջ, հուսալով՝ նրանց ողնությամբ սեփական սեփականություն ստանալու։

1a) Անտիսեմիտիզմ— Ատելություն դեպի հրեաները. սովորաբար տեղի ունի մանր և միջին բուրժուազիայի շրջաններում, որպես հետևանք այդ դասակարգերի ներսում սրվող մրցության։ Ներկայումս ֆաշիստների կողմից։ Ցարական Ռուսաստանում անտիսեմիտիզմը հանդիսանում էր պետական պրինցիպ, որ կիրառվում էր՝ հրեաների նկատմամբ իրավունքների սահմանափակումներ կատարելով և հրեական ջարդեր կազմակերպելով։ Անտիսեմիտիզմը բուրժուական հասարակության ծնունդն է։ Կապիտալիստական հասարակության մեջ անտիսեմիտիզմի դեմ պայքարելու միջոցն է՝ պրոլետարիատի դասակարգային ինքնագիտակցության զարգացումը, որ ի չիք է դարձնում կրոնական և ազգային ամեն տեսակի խտրանք։

2) Բունդ— «Ընդհանուր հրեական բանվորական Միություն Լիտվայում, Լեհաստանում և Ռուսաստանում»։ Հիմնված է 1897 թվին։ ՌՍ-ԴԲԿ I-ին համագումարին (Մինսկում) Բունդը մտավ նրա շարքերը։ 1903 թվին կուսակցությունից դուրս գալով՝ չենթարկվելով II համագումարի վորոշումներին (կուսակցության շարքերում միասնականության և կազմակերպչական ցենտրալիզմի— Կ. Կոմիտեյի միասնական ղեկավարության—մասին)։ Կրկին մտավ ՌՍ-ԴԲԿ կազմի մեջ 1906 թվին Ստոկհոլմում՝ «Միացուցիչ համագումարում»։ Կուսակցության վերջնական պառակտումից հետո ռեակցիայի տարիներին Բունդը նորից ինքնուրույն դարձավ, սա-

կայն հարելով մենշևիկ - լիկվիդատորներին։ Իմպերիալիստական պատերազմի միջոցին բունդականների մեծամասնությունը պաշտպանողական դիրք էր բռնած, իսկ Փետրվարյան հեղափոխությունից հետո ձեռք մեկնեց մենշևիկներին։ Քաղաքացիական պատերազմի մնջոցին բունդական կազմակերպությունների մեծամասնությունը՝ հրեական բանվորության ճնշման տակ՝ մտավ Ռկկ կազմի մեջ։

3) Ի. Շպրինգեր— Ավստրիական աջ սոցիալիստ, վոր 90-ական թվականներին հանդես յեկավ (սկզբում—Սինոպտիկուս պսեվդոնիմով) ազգային-կուլտուրական ավտոնոմիայի իր թեորիայով։ Նրա իդեյաները (ազգային ինքնավարության մասին՝ կուլտուրական գործերում, տերրիտորիայից անկախ) հաջողություն գտան աջ հրեական, վրացական, ուկրայնական սոցիալիստների շրջանում. Շպրենգերի մանր-բուրժուական նացիոնալիստական իդեյաները խիստ քննադատության յենթարկվեցին Լենինի, Ստալինի և ուրիշների հոդվածներում։ Պատերազմից հետո՝ Շպրենգերը Ավստ. կոալիցիոն կաբինետի մեջ էր մտնում։

4) Ի. Բաուեր— Ավստրիական սոցիալ-դեմոկրատիայի պարագլուխներից մեկը, վոր հարում էր նրա ձախ թևին՝ մինչև պատերազմը. պատերազմի միջոցին զորակոչի յենթարկվելով, դերի ընկավ ռուսների ձեռքը և ուղարկվեց Սիբիր, վորտեղից ազատվեց Կերենսկու կառավարության ժամանակ—Պետերբուրգի Խորհրդի պահանջով։ Ավստրիական՝ 1918 թ. նոյեմբ. հեղափ. հետո —Ավստրիայի հանրապետության կոալիցիոն կառավարության մեջ —պետական քարտուղար արտաքին գործոց։ Լինելով III Ինտերնացիոնալի հակառակորդ, նա լույս ընծայեց մի գիրք ռուսական կոմունիստների և Խորհրդային սիստեմի դեմ։ Կառուցկու համախոհը։ Հանգուցյալ $2^{1}/_{2}$ Ինտերնացիոնալի կազմակերպիչներից մեկը։

5) Սպիրիտուալիզմ— բնազանցական յետադեմ վարդապետություն, ըստ վորի «հոգին» և մարդկային հոգեկան կյանքը մարմնական կյանքից անկախ է։ Սպիրտուալիզմը մարմինը և առհասարակ անշունչ բնությունը ընդունում է, վորպես միայն արդյունք՝ հոգու—Մատերիալիզմի հակառակը։

6) Ի. Շտրասեր— Գերմանական բանվորական շարժման գործիչներից մեկը։

7) Պրոկրուստյան մահիճ— Հունական դիցաբանության մեջ՝ Պրոկրուստ ավազակը իր զոհերին դնում էր իր մահճի վրա, և

յեթե նրանք մահճից յերկար էյին՝ կտրում էր նրանց վոտները, իսկ յեթե կարճ էյին՝ վոտներից ձգում էր՝ մինչև վոր վոսկորները բաժանվում էյին—ձգվում։ Հաճախ գործ է ածվում «դնել պրոկրուստյան մահճի մեջ» արտահայտությունը, վոր նշանակում է—ճգնել բռնի կերպով ցանկացած չափին հասցնել։

8) Գ. Պլեխանով— (1856—1918)— ռուսական մարքսիզմի հիմնադիրը։ Ժամանակակից ամենացայտուն մատերիալիստներից մեկը։ Իր գործունեության ամբողջ ընթացքում ուժեղ պայքար է մղել մարքսիզմի ամեն տեսակի խեղաթյուրումների դեմ։ Փաղաքականության հարցերում, 1903 թվին Լենինի և նրա միջև տարաձայնություն տեղի ունեցավ և Պլեխանովը գնաց մենշևիկների մոտ։ Սակայն 1909—1914 թ. թ. նա Լենինի հետ միասին յեռանդուն պայքար մղեց լիկվիդատորության դեմ։ 1914 թվից Պլեխանովը գլորվեց դեպի սոցիալ-մենշևիզմ։

9) Մեդեմ (1879—1923)—Բունդի ակտիվ գործիչ. Բունդի ազգային ծրագրի հեղինակներից մեկը, Կ. Կոմ. անդամ, պրոպագանդիստ և գրականագետ, կուսակցական հրատարակությունների խմբագիր։ Պատերազմի միջոցին (1914—1918) ծայրահեղ աջ պոզիցիա բռնեց, անցավ Ամերիկա և ապա համարյա հեռացավ քաղաքականությունից։

10) Մանիլովշչինա— ազգայական ծուլություն՝ միացած բարեսրտության, բարի ցանկությունների և ֆանտազիաների հետ, կամքի լիուլի բացակայությամբ։ Կոչումը ստացել է այն կալվածատիրոջ անունից, վոր Գոգոլը դուրս է բերել «Мертвые души» իր յերկում։

11) «Իսկրա» (կայծ)— Սոց.-դեմ. լրագիր, վոր հիմնեց «Աշխատանքի ազատագրության խմբակը»՝ աքսորից վերադարձած, Պետերբուրգի «Պայքարի Միության» անդամ Ն. Լենինի, Լ. Մարտովի և Պոտրեսովի գլխավորությամբ։ Առաջին №-ը լույս տեսավ 1900 թվի նոյեմբերին այս վերտառությամբ— «Իսկրայից» (կայծից) հրդեհ կբռնկի»։ «Իսկրան» յեռանդուն պայքար է մղել թե՛ «լեգալ մարքսիզմի» դեմ և թե «եկոնոմիզմի» դեմ՝ հոգուտ հեղափոխական սոցիալ դեմոկրատիայի, ձգտելով կազմել բանվորական մասսայական շարժման հետ սերտ կապված հեղափոխական մի կուսակցություն։ ՌՍ-ԴԲԿ II համագումարում «Իսկրան» ճանաչվեց կուսակցության կենտրոնական որգան։ Ընկ. Լենինի աշխատակցությամբ լույս տեսավ «Իսկրայի» 51 համար (հին «Իսկրա»)։

1903 թ. նոյեմբերին Լենինը դուրս յեկավ խմբագրության կազմից, և այդ ժամանակից լրագիրը դարձավ մենշիկների որգան՝ մինչև 1905 թ. հեղափոխության սկիզբը, յերբ նա վերջնականապես փակվեց։

12) Մարտով Լ. (Յուրի Ցեդերբաում),—ծն. 1873 թ., մեռ. 1923 թ.։ Մենշիկների պարագլուխը։ 1900 թ. վերջին, Լենինի, Պոտրեսովի, Պլեխանովի, Զասուլիչի և Ակսելրոդի հետ միասին խմբագրում եր «Իսկրան»։ ՌՍ-ԴԲԿ II համագումարին (1903 թ.), կազմակերպչական հարցերում տարակարծիք լինելով համագումարի մեծամասնության հետ, կազմից մենշիկների ֆրակցիա։ Պատերազմ սկսվելու միջոցին Մարտովը գտնվում եր մենշիկ-ինտերնացիոնալիստների շարքերում։ Նա մասնակցեց Ցիմմերվալդի կոնֆերենցիային (կենտրոն)։ Խորհուրդների II համագումարին նա պահանջում եր, որ կառավարությունը կազմվի բոլոր սոցիալիստական կուսակցությունների ներկայացուցիչներից։ Շուտով նա անցնում է Խորհրդային Իշխանության թշնամիների բանակը։ 1921 թվին մեկնում է արտասահման և Գերմանիայում հրատարակում «Социалистический Вестник» թերթը, ուր մի շարք հոդվածներով դուրս և գալիս Խորհրդային Իշխանության դեմ։ Մեռավ 1923 թվին, Գերմանիայում։

13) Բաստիլիա— Պարիզի քաղաքական բանտը, որ ապրատամբած բնակչության կողմից կործանվեց 1789 թվի հուլիսի 14-ին։ Այդ որը մինչև այժմ էլ Ֆրանսիայում համարվում է ազգային տոն։ Փոխադրական իմաստով—Բաստիլն ասելով հասկացվում է յեռադեմ կառավարության քաղաքական ամեն մի մեծ բանտ։

14) Խեոպս— Յեգիպտական թագավոր, ապրում եր Ք. ծն. 3000 տարի առաջ. Մեմֆիս քաղաքի մոտակայքում կառուցեց հսկայական պիրամիդ, 144 մ. բարձրությամբ։

15) Տես ծան. 6։

16) Ցագելլո—Վարշավայի պատգամավորը IV Պետական Դումայում. մանր-բուրժուական սոցիալիզմի կուսակցության (այժմ մարշալ Պիլսուդսկու կուսակցության) անդամ։ IV Պետ. Դումայում սոց.-դեմ. ֆրակցիան ուներ 6 բոլշևիկ և 6 մենշիկ. հետո լիկվիդատորները իրենց կողմը գրավեցին Ցագելլոյին և Իրկուտսկի պատգամավոր Մանկովին (վորին այնուհետև հենց իրենք հեռացրին իրենց կուսակցությունից) և այդպիսով նրանք ֆրակ-

գիայում կազմեցին մեծամասնություն (8 ընդդեմ 6-ի)։ Սկսվեց պայքար, վորի հետևանքով ֆրակցիան 1913 թվին բաժանվեց յերկու մասի։

17) Ցարի տապալումից հետո կազմված կառավարությունը, վոր տևեց մինչև հոկտեմբերյան հեղափոխությունը։

18) Տես ծան. 17։

19) Sorupartier— Ֆինլանդիայի հողազուրկ գյուղացիները։

20) 1917 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո կիևում կազմվեց ռադա (խորհուրդ) ազգային կազմակերպությունների և մասնը-բուրժուական կուսակցությունների ներկայացուցիչներից։ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Ռադան կիրառում էր Խորհրդային Իշխանությանը թշնամական քաղաքականություն և աջակցություն էր ցույց տալիս Դոնի շրջակայքում գոյացած հակա-հեղափոխական կազմակերպություններին։ Բրեստի բանակցությունների միջոցին Կիևի Ռադան, Խորհրդային Իշխանության թիկունքում, պատգամավորություն ուղարկեց և ջանաց հաշտություն կնքել գերմանացիների հետ, պայմանով, վոր վերջիններս ճանաչեն և աջակցեն Ռադայի կառավարությունը։ Այդպիսի պայմանագիր Ռադայի և Գերմանիայի միջև ստորագրվեց 1918 թ. փետրվարին։ Ռադան շուտով տապալվեց ուկրաինական բանվորների ու գյուղացիների կողմից, վորոնք և հայտարարեցին Խորհրդային Իշխանություն։

21) Կալեդին—Հակահեղափոխական գեներալ, վոր գործում էր Ռուսաստանի հարավում։

Կորնիլով—գեներալ. Իմպերիալիստական պատերազմի միջոցին բանակի հրամանատար էր։ Հուլիսյան որերից հետո ժամ. կառավարության կողմից նշանակվեց գլխավոր հրամանատար։ Ֆրոնտում մացրեց մահվան պատիժ։ 1917 թվի ոգոստոսին, համաձայնության գալով Կերենսկու հետ, ֆրոնտից վերցրեց հեծելազորքը և դրանց ուղղեց Պետերբուրգի վրա՝ դեկտատուրա հաստատելու համար։ Գործը անհաջող վախճան ունեցավ։ Կորնիլովը փախավ Դոն, ուր և կազմակերպեց մի շարք ապստամբություններ՝ Խորհրդային Իշխանության դեմ։ 1918 թվին սպանվեց՝ Կարմիր Բանակի հետ ունեցած կռվում։—Կոլչակ, ադմիրալ, Սիբիրի «կառավարության» «հոգին»։ 1918 թվին իրեն հայտարարեց Ռուսաստանի գերագույն կառավարիչ. եսերովյան «ուչրեդիլկայի» կողմնակիցները, հենվելով չեխո-սլովակների վրա, վո-

ընդ գրավել էին Մերձվոլգյան շրջանը և Ուրալը, պաշտպանում էին Կոլչակին, վոր հաստատվել էր Ոմսկում։ Կոլչակը հասավ մինչև Կազան։ Դա ամենածանր ժամանակն էր ՌՍՖԽՀ կյանքում։ Կարմիր բանակի հերոսական ջանքերով Կոլչակը շպրտվեց Սիբիրի խորքերը, ջարդվեց Իրկուտսկի տակ, գերի բռնվեց իր մինիստրների հետ միասին և դատարանի վճռով գնդակահարվեց։ Կոլչակին ոգնում էին ֆրանսական, անգլիական և ամերիկական կառավարությունները։

22) Թուրքեստանը— ներկայումս Թուրքմենիստանի ԽՍՀ մի մասն է կազմում։

23) Հոկտեմբերյան հեղափոխության ազդեցության տակ, հիշատակած յերկրներում ևս կազմվեցին Խորհուրդներ, սակայն իսկույն ավերումի յենթարկվեցին իմպերիալիզմի կողմից։

25) Յերկրորդ Ինտերնացիոնալ—Մարքսի հիմնած Առաջին Ինտերնացիոնալի մահից հետո, 70-ական և 80-ական թվականները մի ժամանակամիջոց եր, յերբ բանվոր դասակարգի քաղաքական կուսակցությունները բոլոր յերկրներում կազմակերպվեցին և ուժեղացան։ Միջազգային սոցիալիստական կոնգրեսում, վոր կայացավ 1889 թ. Փարիզում, կազմվեց բանվորների միջազգային նոր միություն, վոր հայտնի յե Յերկրորդ Ինտերնացիոնալ անունով։ Այդ միության մեջ անարխիստները չընդունվեցին։ Յերկրորդ Ինտերնացիոնալի 25 տարվա գոյության միջոցին գումարվել են միջազգային սոցիալիստական 9 կոնգրես—1889 թվին՝ Պարիզում, 1891 թվին՝ Բրյուսելում, 1893 թվին՝ Ցյուրիխում, 1896 թվին՝ Լոնդոնում, 1900 թվին՝ Պարիզում, 1904 թվին՝ Ամստերդամում, 1907 թվին Շտուտգարտում, 1910 թվին՝ Կոպենհագենում, 1912 թվին՝ Բազելում (Արտակարգ, վոր գումարվեց Բալկանյան պատերազմի առթիվ)։ Ինտերնացիոնալի կազմի մեջ մտած սոցիալիստական կուսակցությունների միջև կապ պահպանելու համար հիմնվեց Միջազգային Սոցիալիստական Բյուրո, վոր գտնվում եր Բրյուսելում (Բելգիա)։ Յերկրորդ Ինտերնացիոնալը սոցիալիստական կուսակցություններին ի մի չկապեց, վորովհետև միջազգային կոնգրեսների վորոշումները առանձին կուսակցությունների համար պարտադիր չեյին։ Յերկրորդ Ինտերնացիոնալի գործունեության մեջ կարելի յե վորոշել յերկու շրջան։ Մինչև 900-ական թվականները (մինչև 1904 թ.) Ինտերնացիոնալի մեջ գերիշխող եր հեղափոխական տեսակետը,—կոնգրեսներում ընդունվում եյին

վորոշումներ այն մասին, վոր անհնար և աշխատել բուրժուազիայի հետ, անթույլատրելի յե մասնակցել բուրժուական կառավարությունների մեջ, բողոքներ՝ միլիտարիզմի և պատերազմի դեմ, սահմանվեց միջազգային տոնակատարություն՝ մայիսի 1-ին։ Բայց հետզհետե, կուսակցությունների մեջ մանր-բուրժուական ելեմենտների մտնելը, ռեֆորմիզմի աճումը, 900-ական թվականներից սկսեցին դիրքը խախտել. և միշտ՝ թերություն կատարվում եր դեպի աջ, II Ինտերնացիոնալը դարձնելով ոպպորտյունիստական կազմակերպություն։ Ինտերնացիոնալում գերիշխում եր ռեֆորմիստ. հոսանքը և ցենտրովիկները (Կաուտսկին և կամպանիան)։

Իմպերիալիստական պատերազմի սկզբին (1904 թ.) ի ցույց բերվեց Ինտերնացիոնալի ամբողջ կրախը.—կուսակցությունների և պրոֆմիությունների մեծ մասը, դասակարգային պայքարից հրաժարվելով, կանգնեց կաղաքացիական հաշտության և հայրենիքի պաշտպանության տեսակետի վրա՝ դավաճանելով հենց իր կոնգրեսների (Շտուտգարտի, Կոպենհագենի և Բազելի) բանաձևերին։ Առանձին պարագլուխները հայտնվեցին հայրենիք պաշտպանող կոալիցիոն մինիստրությունների շարքերում։ Բանվորական շահերի նկատմամբ ցույց տված այդ դավաճանությունը լիուլի հիմք տվեց Ցերկրորդ Ինտերնացիոնալը կոչելու «Դեղին Ինտերնացիոնալ»։ Պատերազմը վերջ տվեց նրա գոյությանը։ Ցերկրորդ Ինտերնացիոնալի կազմի մեջ գտնված հեղափոխական ելեմենտները նախաձեռնեցին հիմնելու պրոլետարիատի իսկական հեղափոխական միություն, վորը և կազմվեց Կոմունիստական (III) Ինտերնացիոնալ անվան տակ։ Սակայն II Ինտերնացիոնալի գլխավոր գործիչները անձնատուր չեղան։ Պատերազմի տարիներին անհնարին եր վորևե կապ հաստատել պատերազմող յերկրների սոցիալիստների միջև, ուստի և պատերազմը վերջանալուց հետո II Ինտերնացիոնալի պարագլուխները փորձեցին վերականգնել գոյություն չունեցող միությունը։ Մի շարք կոնֆերենցիաներ, վոր գումարվեցին 1919—1922 թվերին, ընդգրկեցին միայն վողորմելի մնացորդները սոցիալիստական կուսակցությունների, վորոնք շարունակ կռվում եյին միմյանց հետ և իրենց գլխավոր խնդիրը գտնում եյին կոմունիստների դեմ պայքարելու մեջ։ Մի շարք կուսակցություններ և խմբավորումներ (անգլիական անկախ բանվորական կուսակցությունը, գերմանական անկախները, ֆրանսիական սոցիալիստական կուսակցությունը, ռուսական մենշևիկ-

ները, ձախ եսերները, ավստրիական սոցիալ-դեմոկրատները և ուրիշները), իմպերիալիստական պատերազմին աջակցելու և քաղաքացիական հաշտության հարցերում տարակարծիք լինելով II Ինտերնացիոնալի հետ ու չընդունվելով Կոմինտերնի մեջ, 1921 թ. սկզբին կազմեցին այսպես կոչված «Ցերկուս ու կես» կամ Վեննայի Ինտերնացիոնալը, պաշտոնապես հրապարակելով, վոր դա հանդիսանում է «Սոցիալիստական Կուսակցությունների Միջազգային Միություն»։ Կոմինտերնի հետ նա տարակարծիք եր պրոլետարիատի դիկտատուրայի և հեղափոխական մեթոդների հարցերում։ Վեննայի Ինտերնացիոնալը իր շուրջը խմբեց բոլոր անսկզբունք կուսակցությունները։ Վերջիվերջո 2 և $2^1/_2$ ինտերնացիոնալների միջև տարբերությունը դուրս յեկավ այնքան չնչին, վոր 1923 թվի մայիսին տեղի ունեցավ $2^1/_2$ ինտերնացիոնալի միացումը Ցերկրորդ Ինտերնացիոնալին։

26) Կ. Կաուտսկիյ (ծն. 1854)—Գերմանական սոցիալ դեմոկրատիայի և II Ինտերնացիոնալի թեորետիկը։ Խոշոր պատմաբան եկոնոմիստ։ Խմբագրել է (1887 թվից) «Neue Zeit» (Նոր ժամանակ) գիտական հանդեսը — գերմանական սոցիալ-դեմոկրատիայի որգանը։ Ցերկար ժամանակ նա հանդիսանում եր որթոդոքս մարքսիզմի յեռանդուն պաշտպան՝ ընդդեմ ռեվիզիոնիզմի։ Բայց իմպերիալիստական պատերազմից մի քանի տարի առաջ նա սկսեց իր դիրքերից նահանջել։ Իմպերիալիստական պատերազմի ժամանակ միջին դիրք բռնեց ոբորոնցիների և ինտերնացիոնալիզմի միջև։ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո—դեմոկրատիայի և սոցիալ-համաձայնողականների իդեոլոգը։ Այստեղից և բղխում է նրա բացասական վերաբերմունքը դեպի Խորհրդային իշխանությունը, Կոմունիստական կուսակցությանը խիստ քննադատելը։ Բուրժուական դեմոկրատիայի պաշտպանությունը Կաուտսկուն հասցրեց այնտեղ, վոր նա հրաժարվեց մի շարք այնպիսի դրությունների, վոր հենց ինքն եր առաջադրել մինչև իմպերիալիստական պատերազմը։ Նրա յերկերից կարևորագույնն են—«Երֆուրտի ծրագիրը», «Դասակարգային շահերի պայքարը 1789 թ.», «Մարքսի տնտեսական ուսմունքը», «Գիտական մարքսիզմի նախակարապետները», «Անտիբերնշտեյն», «Ագրարային հարց», «Բարոյախոսությունը և պատմության մատերիալիստական ըմբռնումը», «Թ. Մորը և նրա ուտոպիան», «Սոցիալիստական հե-

դափոխության հաջորդ որը», «Քրիստոնեության ծագումը» և ուրիշ յերկեր։

27) Բաուեր—*տես ծան. 4։* Ռեններ—*աջ սոց.-դեմ. որոշոնեց և համաձայնողական։ 1918 թ. նոյեմբերյան հեղափոխությունից հետո—Ավստրիայի պրեմյեր-մինիստր։*

28) 2 1/2 Ինտերնացիոնալ—*տես ծան. 25-ի վերջը։*

29) Նոբել, Ռոտշիլդ, Վիշաու— *Հեղափոխությունից առաջ՝ նավթի իշխանները Բագվում։*

30) Կոլչակ—*տես 21 ծան. վերջը։* Դենիկին—*ցարական բանակի գեներալ. 1918 թվին ընդունեց «Հարավային Ռուսաստանի զինյալ ուժերի հրամանատարի» պաշտոնը և ղեկավարեց պատերազմը ընդդեմ ՌՍՖԽՀ՝ մինչև 21 մարտի 1920 թ.։ 1919 թվին յենթարկվեց Ռուսաստանի «գերագույն կառավարչին»՝ Կոլչակին (տես ծան. 21)։ Դենիկինին ոգնում եր Ֆրանսիան և մանավանդ Անգլիան։ Մինչև 1919 թիվը ունեցավ հաջողություն, գրավելով Ռուսաստանի ամբողջ հարավային մասը՝ սպառնալով Մոսկվային։ Կուրսկը և Որիոլը գրավելուց հետո, սպիտակ բանակը պարտություն կրեց և շպրտվեց մինչև Ղրիմի հարավային ափերը։ Դենիկինը սպիտակ բանակների հրամանատրությունը հանձնեց Վրանգելին, իսկ ինքը մեկնեց Անգլիա։ Վրանգելը իրեն հայտարարեց «հարավային Ռուսաստ. կառավարիչ» և Ղրիմում կազմեց կադետ. կառավարություն։ 1920 թ. հոկտ. Կարմիր Բանակի վճռական գրոհը կործանեց Վրանգելի բանակը և նոյեմբերին ամբողջ Ղրիմը մաքրվեց սպիտակ-բանակայիններից։ Վրանգելը իր ջարդված բանակի մնացորդներով փախավ Տաճկաստան, իր հետ տանելով ռազմական նավերը։ Այնտեղից բանակն ու նավերը փոխադրվեցին Աֆրիկա։ Հետագայում վատնելով գլված կարողությունն ու նավերը, բանակի մնացորդը (զինվորներին) հանձնեց շահագործողների ձեռքը՝ պլանտացիաներում աշխատեցնելու համար, իսկ ինքը մի բուռն սպաների հետ միասին փոխադրվեց Բուլղարիա, ուր և 1922 թվին մասնակցեց ֆաշիստական հեղաշրջմանը։ Ցուդենիչ—հակահեղափոխական գեներալ, վոր յերկու անգամ ել անհաջող պաշարեց Պետրոգրադը։*

32) Բասմայական շարժում— *բանդիտական շարժում (որինակ՝ Բուխարայում, Ենվեր փաշայի գլխավորությամբ, վոր ուզում եր կործանել Բուխարայի «ազգային խորհրդային իշխանությունը» և Եմիրի իշխանությունը վերականգնել)։*

33) Կրոնշտադտի ապստամբությունը— 1921 թ. խռովությունը, վոր բարձրացրին նավաստիները՝ աղդվելով սպիտակ-գվարդիականների և եսերների պրովակացիայից։ Խռովությունը տեղի ուներ այս լոզունգի տակ՝ «կողմնակից ենք խորհուրդներին, բայց առանց կոմունիստների». դա—մանր-բուրժուական շարժում եր՝ ընդդեմ պրոլետարիատի դիկտատուրայի։ Շարժման գլուխ շուտով անցան հին սպաներ, և ոգնություն ստացան արտասահմանից. բայց Կարմիր Բանակի յեռանդուն գործնեյության շնորհիվ, շուտով լիկվիդացիայի յենթարկվեց։

34) Մերեթելի— մենշևիկ, II Պետական Դումայի անդամ, սոց.-դեմ. ֆրակցիայի լիդեր։ Դումայի ցրումից հետո ամբողջ ֆրակցիայի (65 պատգամավոր) հետ միասին դատապարտվեց տաժանակիր աշխատանքի։ Փետրվարյան հեղափոխությունից հետո Սիբիրից վերադառնալով, մենշևիկների պարագլուխը դարձավ. պնդում եր՝ վոր իմպերիալիստական պատերազմը շարունակվի և կոալիցիա կազմվի բուրժուազիայի հետ։ Առաջին կոալիցիոն կառավարության անդամ (պոստ.-հեռագր. մինիստր) 1917 թվին։

35) Իրնոդել— Ֆրանսական սոցիալիստական կուսակցության լիդերներից մեկը. որորենեց և համաձայնողական։ Ներկայումս—Ֆրանսական սոց. կուսակցության աջ խմբակի պարագլուխ։

36) Ֆ. Շեյդեման— Գերմանական սոց.-դեմ. կուսակցության լիդերներից մեկը։ Պատերազմի միջոցին—սոց.-դեմոկրատիայի աջ թևի լիդեր, պատրիոտ։ Նոյեմբերյան հեղափոխությունից հետո—հանրապետական Գերմանիայի համաձայնողական կառավարության գլուխ, վոր անխնա ճնշեց սպարտակյանների ապստամբությունը։

37) Վ. Զերնով— առաջնորդը և թեորետիկը աջ եսերների կուսակցության։ Քաղաքական գործնեյությունը սկսել է 1893 թվից։ Եսերների կուսակցության Կ. Կոմիտեյի անդամ և կենտ. որգանի խմբագիր։ Փետրվարյան հեղափոխությունից հետո վերադառնալով Ռուսաստան, դարձավ որորենեց և բուրժուազիայի հետ համաձայնություն կնքելու կողմնակից։ Կոալիցիոն կառավարության մեջ յեղավ հող. մինիստր և պայքար մղեց այն գյուղացիների դեմ, վորոնք խլում եյին կալվածատերերի հողերը։ Հոկտեմբերյան հեղափոխության ժամանակ փորձեց գյուղացիներին վոտքի կանգնեցնել Խորհրդային Իշխանության դեմ։ 18 թվին

Վոլգայի շրջանում մասնակցեց Չեխո-Սլովակյան և եսերական ապստամբություններին. փախավ արտասահման, ուր գլխավորեց բոլոր եսերական հակախորհրդային կազմակերպությունները։ Կրոնշտադտի ապստամբության միջոցին յեկավ Ռեվել՝ կազմակերպելու և այդ ապստամբությանը աջակցելու համար։ Խորհրդային Իշխանության դեմ մղած իր պայքարում նա չեր խորշում հիմնել քաղաքական սպանություններ կատարող կազմակերպություններ։

38) Ֆ. Դան (Ֆ. Ի. Գուրևիչ)—ծն. 1871 թ., մենշևիկների լիդեր. 1902 թ. բանտարկվեց և աքսորվեց Սիբիր, վորտեղից փախավ արտասահման։ Խմբագրեց մենշևիկյան մի քանի հրատարակություններ։ 1905 թ. հեղափոխությունից հետո, ռեակցիայի տարիներին, պաշտպանում եր լիկվիդատորներին. պատերազմի միջոցին—յեռանդուն ոբորոնեց։ Փետրվարյան հեղափոխության ժամանակ—համաձայնողական։ Գործն հակառակորդ Խորհրդային Իշխանության և Կոմ. Կուսակցության։

39) Ա. Հենդերսոն— Անգլիայի բանվորական կուսակցության առաջնորդ, պարլամենտի անդամ, II Ինտերնացիոնալի ականավոր գործիչ։ Իմպերիալիստական պատերազմի միջոցին—կոալիցիոն կառավարության անդամ։ Ստոկհոլմում II Ինտերնացիոնալի կոնգրես գումարելու և պատերազմող յերկրներին հաշտեցնելու բանակցություններ սկսելու պատճառով, 1917 թ. կառավարության կազմից հեռանում է։ Նա աջ համաձայնողական է և պատրիոտ։ Մակդոնալդի բանվորական կառավարության միջոցին ներքին գործոց մինիստրի պաշտոնն եր վարում։

40) Կլյանս—անգլիական բանվորական շարժման աջ լիդեր։

41) Կոլչակ— տես ծան. 21։

42) Դենիկին— տես ծան. 30։

43) Սեմիչ—Չեխո-Սլավակիայի Կոմ. Կուսակցության Կ. Կոմիտեյի անդամ։

44) Գո-մին-դան— Չինական մանր-բուրժուական կուսակցություն, վոր իրեն նպատակ է դրել Չինաստանի ազգային ազատագրությունը ոտարյերկրյա կապիտալից և յերկրում հանրապետական-դեմոկրատական հասարակարգի ստեղծումը։ Գո-մին-դան կուսակցությունը հիմնել է չինական հեղափոխական Սուն-Յատ-Սենը, 1900 թվին։

45) Եստոնիայի ապստամբությունը— 1917 թ. վերջին Եստոնիայի աշխատավորությունը հայտարարեց Խորհրդային Իշխանու-

թյուն, բայց 1918 թ. փետրվարին վերջինս տապալվեց Եստոնիայի բուրժուազիայի կողմից, վորին ոգնում էր Գերմանիան։ Գերմանական հեղափոխությունից հետո 1918 թ. նոյեմբերին նորից հայտարարվեց Խորհրդային Իշխանություն. սակայն դա նորից ընկճվում է՝ Եստոնիայի և ֆինն բուրժուազիայի միացյալ դրոհի հանդեպ։ Եստոնիայի բուրժուազիան անողոք քաղաքականություն է բանեցնում բանվորական դասակարգի նկատմամբ, բանտերը լցնելով նրա լավագույն ներկայացուցիչներին։

46) Սոֆիայի պայթյունը— 1925 թ. հեղափոխականները Բելգրադում Պայթեցրին Սոֆիայի տաճարը։ Այդ գործում մեղադրեցին կոմունիստներին, թեև վերջիններս մասնակցություն չունեին։ Պայթյունից հետո սկսվեց ուժեղ հալածանք և սպիտակ տեռոր՝ կոմունիստների դեմ։

ԽՈՐՀՐԴ. ՍՈՑ. ՀԱՆ. ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

— Հայկական սեկցիա —

Մոսկվա, Նիկոլսկի փող. № 10

ԼՈՒՑՍ ԵՆ ՏԵՍԵԼ

	ԳԻՆԸ
ԼԵՆԻՆԻ ՊԱՏԳԱՄՆԵՐԸ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ	15 կ.
ԼԵՆԻՆԻ ՊԱՏԳԱՄՆԵՐԸ ԺՈՂ.ԼՈՒՍ. ՄԱՍԻՆ. Կազմեց Ն.Կրուպսկայա	20 կ.
ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՈՒՂԻՆ և ԲԱՆ.-ԳՅՈՒՂ. ԴԱՇԻՆՔԸ,—Ն.Բուխարին	1ր. 25 կ.
ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՀԱՐՑ, Ի. Ստալին	50 կ.
ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑ, Ի. Ստալին (272 եջ)	1 ր. 75 կ.
1905 թ. ՄԵՐ I ԲԱՆ.-ԳՅՈՒՂ. ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ, Ի.Ֆլերովսկիյ	70 կ.
ԻՆՉ ՎՈՐՈՇԵՑ ԿՈՒՍ. XIV ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ, Ն. Ելիզարով	30 կ.
ԻՆՉ ՎՈՐՈՇԵՑ ԿՈՒՍ. XV ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱՆ,—Գ. Ռըկլին	20 կ.
ԱՆԴՐԿՈՎԿԱՍԸ 1905-ԻՆ,—Ա. Կարինյանի	60 կ.
ԻՆՉՊԵՍ ԱՇԽՈՒԺԱՑՑԵԼ ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ,—Զ. Լավրենտև	30 կ.
ԿԼԱՐԱ ՑԵՏԿԻՆ)կենսագր.), Զ. Բոյարսկայայ	15 կ.
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶՐՈՒՑՑՆԵՐ (Կոմս. հմբ.), ըստ Վիրգանսկու, պրակ I,	50 կ.
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶՐՈՒՑՑՆԵՐ „ „ պրակ II,	50 կ.
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶՐՈՒՑՑՆԵՐ „ „ պրակ III,	50 կ.
ՄԱՐԴՈՒ և ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ,—Դ. Ագոլ	35 կ.
ԻՆՉՊԵՍ Ե ԱՌԱՋ. և ՉԱՐԳ. ԿՅԱՆՔԸ ՅԵՐԿՐԻ ՎՐԱ, Մ.Գրեմյացկիյ	50 կ.
ԻՆՉՊԵՍ Ե ՍԱՐՔՎԱԾ ՏԻՑԵԶԵՐՔԸ, Ակադեմիկոս Դ. Գրավե	50 կ.
ՎՈՐՈՏ, ԿԱՑԾԱԿ և ԵԼԵՔՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, Մ. Գրեմյացկիյ	40 կ.
ԱՐԵՎԸ, ՆՐԱ ՎՈՐԴԻՆԵՐԸ և ԹՈՌՆԵՐԸ,—Բ. Սեմեյկին	40 կ.
ՄԱՐԴՈՒ ԱՆՏԵՍԱՆԵԼԻ ԹՇՆԱՄԻՆԵՐՆ ՈՒ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԸ.	15 կ.
ՄԱՐԴԿԱՑԻՆ ԲՆԱԿԱՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ,—Վ. Յազվիցկիյ	15 կ.
ԹԵ ԻՆՉՊԵՍ ԿԱՐԵԼԻ ՑԵ ԳՅՈՒՂ. ԵԼԵՔՏՐԱԿԱՆՈՒԹ. ԱՆՑԿԱՑՆԵԼ	20 կ.
ՏԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ և ՍՆԱՀԱՎԱՏՈՒԹՅՈՒՆԸ,—Վ. Դմիտրիյեվա	15 կ.
ԳԵՂ ԿԱՆԳՆԻ—ԳԵՐԱՆ ԿԿՈՏՐԻ (կոոպերացիան գյուղում), Լ. Ի.	30 կ.
ԱՍՏԾՈՒ ԿԱՄՔԸ, ԹԵ ԳՅՈՒՂԱՏՆՏ. ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ,—Ի. Պ.	20 կ.
ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐՈՒԹ. ԱՅԲՈՒԲԵՆԸ	30 կ.
ՀՈՂԻ ՄՇԱԿՈՒՄԸ ՅԵՐԱՇՏԻ ԺԱՄԱՆԱԿ,—Պ. Վլասով,	40 կ.
ԳՈՄԱՂԲԸ,—Ի. Տեր-Ներսիսյան	20 կ.
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԿԸ,—Մ. Լիվինսկիյ	20 կ.
ԱՌԱՋԻՆ ՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՎԱՆԴ ԿԵՆԴԱՆՈՒՆ,—Ա. Սկոմորոխով	17 կ.
ԸՆՏԱՆԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	17 կ.
ԻՆՉՊԵՍ ԸՆՏՐԵԼ ԿԱԹՆԱՌԱՏ ԿՈՎ,—Բ. Սկոմորոխով	12 կ.
ԹԵ ԻՆՉՊԵՍ ԳԵՐՄ. ՍՏԻՊԵՑ, ՎՈՐ ԿՈՎԸ ՏԱՐԻՆ 2 ԱՆԳԱՄ ԾՆԻ.	15 կ.
ԽՈՋԸ ԳՅՈՒՂԱՑՈՒ ԿԵՐԱԿՐՈՂՆ Ե,—Լիխաչև	18 կ.
ՄՈՐ ԱՅԲԵՆԱՐԱՆԸ,—Գ. Սպերանսկիյ	16 կ.
ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ,—Բ. Գինսբուրգ	30 կ.

ՔՈՍ, և ԻՆՉՊԵՍ ԿՌՎԵԼ ՆՐԱ ԴԵՄ,—Ք. Նաղելյին 20 կ.
ՎԵՆԵՐԱԿԱՆ ԱԽՏԵՐ,—Վ. Բրոններ 25 կ.
ԹՈՔԱԽՏ,—Ն. Սեմաշկո 25 կ.
ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԸ և ԴՊՐՈՑԸ,—Ն. Տյուրյակուլով 40 կ.
ԳՅՈՒՂԱՑ. ՊԱՀԱՆՋՆԵՐԸ և ԽՈՐՀՐԴ. ԴՊՐՈՑԻ ԾՐԱԳՐՆԵՐԸ 12 կ.
ԳԵՂՋԿՈՒՀԻՆ և ՑԵՐԵԽԱՆԵՐԸ 25 կ.
ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ I ԱՍՏԻՃ. ԴՊՐՈՑՈՒՄ, Բ. Ժավորոնկով 65 կ.
ՊԱՏԱՆԻ ՊԻՈՆԵՐ (ժողովածու) 60 կ.
ՊԻՈՆԵՐ, ՊԱՀՊԱՆԻՐ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԴ,—Յև. Ռաղին 10 կ.
ՊԻՈՆԵՐ՝ ՀԵՏԵՎԻՐ ԼԵՆԻՆԻ ՊԱՏԳԱՄՆԵՐԻՆ 15 կ.
ԼԻՆԻՆՔ ԱՌՈՂՋ և ՈՒԺԵՂ,—Ն. Ֆայլկներ. մաս I, 40 կ.
ԼԻՆԻՆՔ ԱՌՈՂՋ և ՈՒԺԵՂ „ մաս II, 45 կ.
ՄԵՐ ԱՎԱԳ ՑԵՂԲԱՅՐՆԵՐԸ—ԿՈՄՑԵՐԻՏԱԿԱՆՆԵՐԸ 20 կ.
ԹԵ ԻՆՉՊԵՍ ՍԱՓՈՆ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՑԻՆ ԴԱՐՁԱՎ—Կրավչենկո 35 կ.
ԿԱՐՄՐԱՄՈՐԹՆԵՐԸ,—Պ. Խլեբնեկով 45 կ.
ՑԵՐԿՐԻ ԽՈՐՔԵՐՈՒՄ,—Ա. Կուպրին 18 կ.
ՔԻՄԻԿՈՍ ԿՈՒՋԿԱՆ,—Պ. Ոբլովեց 28 կ.
ՃԱՄԲՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԱՅԵՐՈՊԼԱՆՈՎ,—Պ. Ոբլովեց 22 կ.
ՄՈԾԱԿԻ և ԱՐՋԻ ՄԱՍԻՆ (հեքիաթ)—Դ. Մամին-Սիբիրյակ 15 կ.
ԻՆՉՊ. ԵՑԻՆ ԱՊՐՈՒՄ ՏԻԿՆԻԿՆԵՐԸ և ԻՆՉ ԱՐԵՑ ԱՐՃԻՃԵ ՋԻՆՎՈՐԸ 16 կ.
ՄԻՆԻՍՏՐ ՄԵԿ ԺԱՄՈՎ,—Ֆր. Ֆոկս 18 կ.
ԱՆՁՆՎԵՐ ՏՂԱՆ,—Եդմոնդո Դամիչիս 12 կ.
ՓՈՔՐԻԿ ՀԵՐՈՍՈՒՀԻՆ,—Ուլյդա 12 կ.
ԹՌՁՈՒՆՆԵՐ (գունատիպ այլբոմ յերեխանների համար) 25 կ.
ՑԵՐԻՏԱՍԱՐԴ ԳՐՈՂԸ։ ՄԱՐԴԸ,—Մաքսիմ Գորկի 15 կ.
ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ,—Ա. Սերաֆիմովիչ 45 կ.
ԸՆԿԵՐԸ ՑԵՎ ՈՒՐԻՇ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ,—Մաքսիմ Գորկի 20 կ.
ԱՐՏԱՍՈՎՈՐԸ,—Մաքսիմ Գորկի 40 կ.

ՏՊԱԳՐՎՈՒՄ ԵՆ ՑԵՎ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԵՆ ՏՊԱԳՐ. ՀԱՄԱՐ

ՀՄ. ԿՈՄ. ԿՈՒՍ. (Բ) ՀԱՄԱՌՈՏ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ (15 մամուլ)
ՊԱՏՄԱԿԱՆ ՄԱՏԵՐԻԱԼԻՍՄ (քրեստոմատիա, 15 մամուլ)
ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՑԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՌԳԻՐՔ (10 մամուլ)
ՄԵԹՈԴԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ,—(Ուսուցիչների համար)
ԽՍՀՄ ՑԵՎ ԱՐԵՎԵԼՔԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ
ԿՈՄՑԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԳՅՈՒՂՈՒՄ
ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ (Նկարազարդ), 15 գրքույկ.
ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ ՌՈՒՍ ՆՈՐԱԳՈՒՅՆ ԳՐՈՂՆԵՐԻՑ, 15 գրքույկ.
ՌԱԴԻՈ

ՑԵՎ ՈՒՐԻՇ ԳՐՔԵՐ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0021356

A
II
6827